



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ  
1(105) 2022



Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(105)  
2022

ISBN 1829-1155

## Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,  
Ջ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,  
Ջ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝

Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

## Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

*Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ԿԻՍԱԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՄ ԿԻՍԱԿՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ. ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – **Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Վ. ԹՈՐՈՍՅԱՆ**.....8
- ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՕՐԵՆՍԳՐՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ (CONTRA LEGEM) – **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ** .....19
- ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ – **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ** .....70
- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ – **Գ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ** .....82
- ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՂԹԱՅՈՒՄ – **Լ. ՄԻՆԱՍՅԱՆ** .....106

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

- ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

1(105)2022  
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ - **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**.....124

▪ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ - **Դ. ՀԱԿՈՐՅԱՆ** .....136

▪ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ՈՒ  
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ -  
**Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** .....151

▪ ՄԵՂՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ - **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ** .....166

▪ ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ - **Դ. ՄԻՆԱՍՅԱՆ** .....184

## **II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1622-1627)**

▪ 2021 թվականի մաՅիսի 28-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆՆ  
ԱՋԱԿՑԵԼՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
◆ 1(105)2022

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1622,  
18 հունվարի 2022 թվականի).....195

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....202
- 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
(ՍԴՈ – 1623, 18 հունվարի 2022 թվականի) .....214
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....221
- «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ  
ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1624,  
18 հունվարի 2022 թվականի) .....233
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....240
- 1957 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ

ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ  
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1625,  
 18 հունվարի 2022 թվականի) .....252

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....262

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
 ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ «ՀՈՐԻՋՈՆ ԵՎՐՈՊԱ»  
 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1626,  
 18 հունվարի 2022 թվականի) .....274

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....290

- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
 ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
 ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»  
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ,  
 3-ՐԴ ՄԱՍԻ, 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԻ՝  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
 ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1627,  
 1 փետրվարի 2022 թվականի) .....303

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1(105)2022

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ  
Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....340
  
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 349
  
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա.  
ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....368



**ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր*

**ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ**

*Եվրոպական համալսարանի իրավաբան,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ԿԻՍԱԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՄ ԿԻՍԱԿՐՈՆԱԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ.  
ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Ամփոփագիր.** Գիտական հոդվածը նվիրված է պետության և կրոնի իրավահարաբերություններում պետությունը որպես կիսաաշխարհիկ և կիսակրոնական բնութագրելու հարցերին: Հոդվածի արդիականությունը թելադրված է այն հանգամանքով, որ կրոնն առայսօր շարունակում է մնալ հասարակական գիտակցության վրա ներգործող հզոր միջոց, որի հետ հաշվի նստելով՝ պետությունները որդեգրում են տարատեսակ մոտեցումներ:

Հոդվածի նպատակն է բացահայտել մեր կողմից առաջադրված կիսակրոնական (կիսաաշխարհիկ) պետության հիմնական հատկանիշները՝ արտասահմանյան երկրների իրավահամեմատական վերլուծության համատեքստում: Որպես խնդիր սահմանել ենք պետության և կրոնական կառույցների փոխգործակցության առանձնահատկությունների վերհանումը, պետություններում կրոնական բաղադրատարրերի առկայության վերլուծությունը: Արդյունքում՝ հանգել ենք այն եզրակացության, որ կիսաաշխարհիկ և կիսակրոնական պետությունը միջանկյալ օղակ է աշխարհիկ և կրոնական պետությունների միջև: Այստեղ մի կողմից գործում են պետության և եկեղեցու տարանջատման մասին ավանդական մոտեցումները, մյուս

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

կողմից պետական կառավարման համակարգում եկեղեցուն վերապահվում են որոշակի գործառույթներ:

**Հիմնաքառեր.** պետություն, կրոն, կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետություն, պետություն և եկեղեցի իրավահարաբերություններ, դավանանքի ազատություն:

Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետության առաջադրումը մեր կողմից պայմանավորված է որոշ պետությունների՝ աստվածապետական, աթեիստական, կրոնական կամ աշխարհիկ պետությունների շարքին դասելու անհնարինության հետ: Մեր դիտարկմամբ, կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ պետությունը կրոնի և պետության փոխգործակցության համատեքստում միջանկյալ օղակ է կրոնական պետության և աշխարհիկ պետության միջև:

Կիսաաշխարհիկ պետություններում կրոնական կազմակերպություններից մեկն ունի պաշտոնապես սահմանված կամ փաստացի արտոնյալ դիրք և պետության կողմից արժանանում է որոշակի նախապատվության: Սահմանադրությունում և օրենսդրական ակտերում ամրագրվում է պետության կախվածությունը կրոնական կազմակերպությունից և հակառակը: Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետությունը՝ նման աշխարհիկ պետության, ճանաչում և երաշխավորում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը: Բայց, ի տարբերություն աշխարհիկ պետության, այդպիսի պետությունում գերիշխող կամ տիրապետող եկեղեցին (*established church*) բավական մեծ ազդեցություն ունի պետական կառավարման համակարգում: Պետական կրոնի կարգավիճակով պայմանավորված (եթե այդպիսին գոյություն ունի)՝ կրոնական ծառայությունը համարվում է նաև պետական ծառայություն:

Միաժամանակ, կիսաաշխարհիկ պետությունները նյութական, քաղաքական աջակցություն են ցույց տալիս պաշտոնական կամ տիրապետող կրոնին, երբեմն էլ քաղաքացիներից

գանձում եկեղեցական հարկ<sup>1</sup>: Մասնավոր օրինակի վրա քննարկենք կիսաաշխարհիկ (կիսակրոնական) պետության բնութագիրը:

Այսպես՝ **Դանիայի Թագավորությունում** Ավետարանական-յուրօրրակական եկեղեցին ունի սահմանադրությամբ ամրագրված պաշտոնական կրոնի կարգավիճակ<sup>2</sup>: Եկեղեցու գլուխ կանգնած է միապետը, իսկ նրա կառավարման լիազորությունները տրված են Կրոնի գործերի նախարարությանը (Kirkeministeriet<sup>3</sup>): Թագավորության տարածքը բաժանված է տաս թեմերի, որոնց հոգևոր առաջնորդները՝ եպիսկոպոսները, նշանակվում են միապետի կողմից՝ Կրոնի գործերի նախարարի առաջարկությամբ:

Հարկ է ընդգծել, որ միապետը Սահմանադրության 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն պետք է լինի Ավետարանական-յուրօրրակական եկեղեցու անդամ<sup>4</sup>: Բացի դրանից, Ավետարանական-յուրօրրակական եկեղեցու կանոնադրությունը սահմանվում է առանձին օրենքով:

Հիմնահարցի քննության համատեքստում հետաքրքրական է դիտարկել **Անգլիայի** իրավական փորձը: 1534 թվականին Անգլիայի խորհրդարանի կողմից ընդունած **Գլխավորության մասին ակտով** (Acts of Supremacy<sup>5</sup>) Անգլիկան եկեղեցին անջատվեց Կաթոլիկ եկեղեցուց, և միապետը դարձավ միաժամանակ Անգլիկան եկեղեցու առաջնորդ: Ռեֆորմացիայի դարաշրջանից ի վեր Անգլիկան եկեղեցին պահպանեց պետական կրոնական կառույցի կարգավիճակը:

Արդի ժամանակներում Անգլիկան եկեղեցին հսկայական ազդեցություն ունի պետության քաղաքական և հասարա-

<sup>1</sup> St'u Case of **Bruno v. Sweden** (app. no. 32196/96), 28.08.2001:

<sup>2</sup> St'u Конституция Датского Королевства, 5 июня 1953 г.:

<sup>3</sup> St'u Դանիայի Թագավորության Կրոնի գործերի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքը՝ <http://www.km.dk/ministeren/>:

<sup>4</sup> St'u Конституция Датского Королевства, 5 июня 1953 г.:

<sup>5</sup> St'u **Gillaspie J. Martin**, Henry VIII: Supremacy, Religion, And The Anabaptists, Utah, 2008, p. 11:

կական կյանքում: Այս առումով հատկանշական է այն փաստը, որ Քենթերբերիի և Յորքի արքեպիսկոպոսները, ինչպես նաև 24 եպիսկոպոսներն ի պաշտոնե համարվում են Լորդերի պալատի անդամ: Հավելենք նաև, որ Անգլիկան եկեղեցու հոգևոր առաջնորդը համարվում է Քենթերբերիի արքեպիսկոպոսը, որին վերապահված է միապետի թագադրումը:

Եկեղեցու և պետության փոխհարաբերություններին բնութագրական է նաև պետության փոխադարձ ազդեցությունը ավանդական եկեղեցու գործունեության նկատմամբ՝ հատկապես կանոնական իրավաստեղծման և բարձրագույն հոգևորականների նշանակման գործընթացում: Բանն այն է, որ Անգլիկան եկեղեցու բարձրագույն մարմնի՝ Գլխավոր սինոդի որոշումներն իրավական ուժ են ստանում միայն Պառլամենտի կողմից հաստատվելուց հետո: Ինչ վերաբերում է հոգևոր ծառայության հարցում պետության միջամտությանը, ապա հարկ է նշել, որ եկեղեցու արքեպիսկոպոսներին և թեմական եպիսկոպոսներին վարչապետի առաջարկությամբ նշանակում է միապետը:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նաև ասել, որ պետությունը կայուն երաշխիքներ է սահմանում կրոնական ազատության կենսագործման և կրոնական կառույցների գործունեության ազատության ապահովման համար՝ հնարավորինս դյուրացնելով նրանց ստեղծման և հետագա գործունեության հետ կապված իրավահարաբերությունները: Կրոնական համայնքներն ըստ էության կարիք չունեն գրանցվելու և կարող են կամավոր միավորումների միջոցով արտահայտել իրենց կրոնական շահերը և պահանջմունքները:

Կիսակրոնական (կիսաաշխարհիկ) պետության մեր առաջադրած հատկանիշներին է համապատասխանում նաև **Նորվեգիայի Թագավորությունը**: 1814 թվականին ընդունված Սահմանադրությունը, ճանաչելով յուրաքանչյուրի խղճի ազատության իրավունքը, Ավետարանական-լուսօրեական եկեղեցուն հռչակել էր որպես պետական կրոն: Սակայն, վերջին տարիներին Նորվեգիայում սրընթաց կերպով զարգացող աշխար-

հիկացման գործընթացների արդյունքում կրոնը բավականաչափ զիջել է իր դիրքերը՝ ընդհուպ մինչև Սահմանադրության մեջ պաշտոնական կրոնի վերացման վերաբերյալ փոփոխություն մտցնելը<sup>1</sup>: Այդուհանդերձ, հակված ենք այն մտքին, որ Նորվեգիան շարունակում է մնալ կիսաաշխարհիկ պետություն:

Հատկանշական է, որ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «թագավորը պարտավոր է դավանել Ավետարանական-յուրթերական կրոնը, ցուցաբերել նրան օժանդակություն և հովանավորություն»: Միաժամանակ, Նորվեգիայի Պետական խորհրդի անդամների ընտրական իրավունքը սահմանափակվում է դավանանքով պայմանավորված պահանջներով: Նույն Սահմանադրության 12-րդ հոդվածում ամրագրվում է, որ «Պետական խորհրդի անդամների կեսից ավելին պետք է դավանեն պաշտոնական, պետական կրոնը»: Իսկ ահա 27-րդ հոդվածի երկրորդ մասում՝ որպես վերոհիշյալի տրամաբանական շարունակություն, ասվում է՝ «պաշտոնական-պետական կրոն չդավանող Պետական խորհրդի անդամը չի կարող մասնակցել այն քննարկումներին, որոնք վերաբերում են պետական եկեղեցուն»<sup>2</sup>:

Չնայած Ավետարանական-յուրթերական եկեղեցու՝ պետությունից անջատման փաստին, ազգային եկեղեցու սպասավորները շարունակում են միաժամանակ համարվել պետական ծառայողներ: Ուշագրավ է նաև այն, որ Նորվեգիայի գործադիր իշխանության կառուցվածքում գործում է Մշակույթի և կրոնի գործերի նախարարությունը, որի նախարարը պարտավոր է լինել Ավետարանական-յուրթերական եկեղեցու անդամ:

Ինդրի քննարկման համատեքստում հետաքրքրական է դիտարկել կիսաաշխարհիկ պետություն համարվող **Հունաստանի Հանրապետության** իրավական փորձը, որն իր ինքնա-

<sup>1</sup> Տե՛ս «Նորվեգիան անջատել է եկեղեցին պետությունից» վերտառությամբ հոդվածը, 17-ը մայիսի 2012թ., <http://www.rosbalt.ru/main/2012/05/17/981962.html>:

<sup>2</sup> Տե՛ս Конституция Норвежского Королевства, 17 мая 1814 г.:

տիպ և ինչ-որ տեղ նաև հակասական դրսևորումներով նկատելիորեն առանձնանում է մյուս երկրների շարքում: Պատահական չէ, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի խախտումների մասով Եվրոպական դատարանի կայացրած աղմկահարույց վճիռների մի զգալի մասը վերաբերում է հենց Հունաստանին:

Հունաստանի սահմանադրությունը սկսվում է «Սուրբ, Միասնական և Անբաժանելի Երրորդության» անունից և 3-րդ հոդվածում ամրագրում Հույն ուղղափառ եկեղեցու գերիշխող (դոմինանտ) կարգավիճակը<sup>1</sup>: Հոգևոր սպասավորներն իրենց աշխատավարձն ստանում են պետական բյուջեից: Հույն ուղղափառ եկեղեցու ստորաբաժանումները, ինչպես նաև վանքերն ու եկեղեցիները ճանաչվում են որպես **հանրային իրավունքի սուբյեկտ** և ստեղծվում են Հունաստանի նախագահի հրամանագրով: Բացի դրանից, դոմինանտ եկեղեցու հանրային իրավունքի սուբյեկտի կարգավիճակը վերապահված է նաև մուսուլմանական և հրեական կրոնական կազմակերպությունների: Հատկանշական է, որ Հունաստանում կրոնական ծիսավայր կամ աղոթատուն հիմնելու համար պահանջվում է պետական հատուկ թույլտվություն, որն ի դեպ հակասում է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին<sup>2</sup>: Պետության անմիջական միջամտությամբ են նշանակվում ինչպես գերիշխող եկեղեցու, այնպես էլ հուդայական և մահմեդական համայնքների բարձրատիճան հոգևոր ծառայողները, ինչը երբեմն տարընկալումների և նույնիսկ դատական վեճերի առիթ է հանդիսանում: Նման լարված իրավիճակներ են ստեղծվում, երբ պետությունը չի ճանաչում կրոնական համայնքի կողմից ընտրված հոգևոր առաջնորդի թեկնածությունը և նրան քրեական մեղադրանք է առաջադրում այդ պաշտոնն ապօրինի զբաղեցնելու համար: Եվրոպական դատարանը Հունաստանի դեմ կայացրած վճիռ-

<sup>1</sup> Տե՛ս Հունաստանի սահմանադրություն 3-րդ հոդվածի 1-ին կետ  
<https://legalns.com/download/books/cons/greece.pdf>:

<sup>2</sup> Տե՛ս Case of **Manoussakis and Others v. Greece**, (app. no.18748/91), 26.09.1996:

ներով քանիցս արձանագրել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում՝ նշելով, որ պետությունը ոչ իրավաչափ միջամտություն է կատարել կրոնական համայնքի ներքին գործերին<sup>1</sup>: Պետք է նաև փաստել, որ Հունաստանում վերջին տարիներին նկատվում է եկեղեցին պետությունից անջատելու միտում, որը կարծես թե գործնական հանգուցալուծման ճանապարհին է<sup>2</sup>: Հունական իշխանությունները երբեմն հաշվի չեն նստում պետական եկեղեցու հոգևոր վերնախավի ակնկալիքների հետ, ինչպես դա պատահեց այն ժամանակ, երբ պետությունը ներդրեց էլեկտրոնային անձնագրեր: Հույն ուղղափառ եկեղեցին իր բողոքի ձայնը բարձրացրեց և հորդորեց վերանայել դրանք, քանի որ նույնականացման համարներում երբեմն հանդիպում էր «666» թիվը: Սակայն պետությունն ընդառաջ չգնաց այդ խնդրանքին և պահպանեց «սատանայական վեցյակները»:

Կիսակրոնական (կիսաաշխարհիկ) պետության եզակի օրինակ է **Իսրայելի պետությունը**: Կրոնը պատմականորեն հանդիսացել է հրեա ժողովրդի կենսագոյության պաշտպանական վահանը և հազարամյակներ շարունակ առաջնորդել է նրանց: Պաշտոնական սահմանադրության բացակայության պայմաններում, Իսրայելի իրավական համակարգում առաջնային տեղ են զբաղեցնում Անկախության հռչակագիրը և պետության հիմնական օրենքները: Անկախության հռչակագիրը երաշխավորում է քաղաքացիների խղճի և դավանանքի ազատության իրավունքը, ինչպես նաև նրանց իրավահավասարությունը՝ առանց կրոնի, ռասայի և սեռի խտրականության<sup>3</sup>:

Թեև հուդայականությունը պետության մեջ չունի պաշտոնական կրոնի կարգավիճակ և, հետևաբար, պետության գլխի և,

<sup>1</sup> Տե՛ս Case of **Serif v. Greece** (app. no. 38178/97) 14.12.1999, Case of **Agga v. Greece**, (app. no. 50776/99 and 52912/99), 17.10.2002:

<sup>2</sup> Տե՛ս "В Греции определили условия отделения церкви от государства" (6.11.2018), վերստառությամբ հոդվածը, <https://ria.ru/20181106/1532240763.html?in=t>:

<sup>3</sup> Տե՛ս Декларация Независимости Израиля, 14.05.1948, [https://www.knesset.gov.il/docs/ru/megilat\\_ru.htm](https://www.knesset.gov.il/docs/ru/megilat_ru.htm):

առհասարակ, պաշտոնատար անձանց իրավասությունների իրականացման համար չկան դավանական նախապայմաններ, ինչպես վերը թվարկած պետություններում, այնուամենայնիվ հուդայականությունը հսկայական դեր է խաղում հրեաների ինքնագիտակցության և աշխարհընկալման ձևավորման գործում և անգամ պայմանավորում նրանց ազգային պատկանելությունը: Այսպես՝ **«Վերադարձի մասին օրենքի»** համաձայն, հրեա համարվելու իրավապայմաններից մեկն էլ հուդայադավան լինելն է:

Ի տարբերություն կրոնապետությունների, որտեղ կրոնական նորմերը գերակա են աշխարհիկ օրենսդրության նկատմամբ կամ դրանք խիստ միահյուսված են, Իսրայելի պարագայում աշխարհիկ և կրոնական նորմերի հաշվեկշիռը նման առավելություն հօգուտ կրոնական նորմերի չի սահմանում: Բայցևայնպես, զգալի է իրավունքի աղբյուրներում կրոնական իրավունքի (Թորա, Թալմուդ) առկայությունը: Կրոնական իրավունքի կողմից կարգավորվող իրավահարաբերությունների մի զգալի մաս վերաբերում է հրեաների անձնական կարգավիճակին, որն արտահայտվում է, օրինակ քաղաքացիության ձեռքբերման հարցում կրոնական պատկանելությամբ պայմանավորված սահմանափակումներով: Բացի դրանից, Իսրայելի պետությունում քաղաքացիական ամուսնության կառուցակարգեր, որպես այդպիսիք նախատեսված չեն: Հրեաների միջև ամուսնության գրանցման բացառիկ իրավասությունը վերապահված է **Իսրայելի գլխավոր ուսրբիությանը**, որն ամբողջությամբ ֆինանսավորվում է պետության կողմից:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Իսրայելի պետության դատական համակարգում գործող հատուկ կրոնական դատարանների առկայությունը, որոնք բացակայում են աշխարհիկ պետական համակարգերում<sup>1</sup>: Որպես հանրային-իրավական ինստիտուտներ՝ այդ դատարանները ֆինանսա-

<sup>1</sup> Տե՛ս. **Понкин И.В.** Правовые основы светскости государства и образования. – М.: Про-Пресс, 2003. – С. 101:



վորվում են պետության կողմից, իսկ այնտեղ աշխատող դատավորները պետությունից վարձատրվում են նույնչափ, որչափ աշխարհիկ դատավորները<sup>1</sup>:

Ի դեպ, Իսրայելի գործադիր իշխանության մարմիններում գործում է Կրոնի գործերի նախարարություն, որը հոգում է կրոնական համայնքների՝ առավելապես ուղղափառ հուդայական կառույցների հոգևոր պահանջմունքների բավարարմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ՝ ինչպես օրինակ սինագոգների և գերեզմանների կառուցումը, վերանորոգումը, աղոթագրքերի տպագրությունը և այլն: Հատկանշական է, որ հրեական աշխարհիկ օրենսդրության կարգավորման տիրույթում են գտնվում նաև այնպիսի հոգևոր բովանդակության հարցեր, ինչպիսիք են սրբատեղիներում ծեսերի անցկացման, ծիսակարգային սննդի (քաշրութ) արտադրության և վերահսկողության, պետական կրոնական դպրոցներում կրթության ապահովման և մի շարք այլ բնագավառներում առկա իրավահարաբերությունները<sup>2</sup>:

Այսպիսով կարող ենք եզրահանգել, որ կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետությունը պետաեկեղեցական հարաբերություններում առանձին բնութագրիչ է: Որպես կանոն բարձրաստիճան հոգևորականները նշանակվում են պետական իշխանության մարմինների կողմից, անձնական կազավիճակի սահմանման հարցում կրոնական կարգադրագրերին տրվում է որոշակի դերակատարություն, իսկ որոշ պետական պաշտոնների համար սահմանվում են կրոնական համոզմունքներով պայմանավորված իրավական պահանջներ: Այս ամենը փաստում է նման պետություններում պետական կամ դոմինանտ եկեղեցու սահմանափակ ինքնավարության մասին, որը, այդուհանդերձ,

<sup>1</sup> Տե՛ս **Yedidia Z. Ster**, Religion, state, and the Jewish identity crisis in Israel, 2017 Brookings Institution 1775 Massachusetts Avenue, NW Washington, D.C. 20036 U.S.A., p. 8-18:

<sup>2</sup> Տե՛ս, առավել մանրամասն՝ **Կարապետյան Վ.Ս.**, Իսրայելի իրավական համակարգի կրոնական և սահմանադրական հիմքերը, ատենախոսություն ժԲ 00.01 Երևան 2017, էջեր 116-120:

փոխհատուցվում է նրանց տրվող մի շարք արտոնություններով: Այդպիսիք կարող են լինել պետական իշխանությանը բնորոշ այնպիսի գործառույթներ, ինչպես, օրինակ, թաղումների կազմակերպումը, ամուսնությունների գրանցումը և այլ: **Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետությունը, ըստ էության նաև անցումային տիպ է, և դադարելով այսօր զարգացող աշխարհիկացման միտումներից՝ գուցե կգա մի ժամանակ, որ պետության և եկեղեցու փոխազդեցությունների թուլացման հետևանքով դժվար կլինի խոսել այս տիպի պետության գոյության մասին:**

## ПОЛУСВЕТСКОЕ ИЛИ ПОЛУРЕЛИГИОЗНОЕ ГОСУДАРСТВО КАК ХАРАКТЕРИСТИКА ГОСУДАРСТВА: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

### Аннотация

Научная статья посвящена вопросам номинации полусветских, полурелигиозных состояний, характеризующих государство в правоотношениях государство-религия. Актуальность статьи продиктована тем, что религия продолжает оставаться мощным инструментом воздействия на общественное сознание, к которому государства применяют разные подходы.

Цель статьи - выявить основные черты полурелигиозного (полусветского) государства посредством сравнительного анализа зарубежных стран. Нами поставлена задача выявления особенностей взаимодействия государственных и религиозных структур, проведения анализа существования религиозной составляющей в государствах. В результате мы пришли к выводу, что полусветское (полурелигиозное) государство является промежуточным звеном между светскими и религиозными государствами. С одной стороны, существуют традиционные подходы к отделению церкви от

государства, с другой стороны, церковь имеет определенные функции в системе государственного управления.

**Ключевые слова:** государство, религия, полусветское или полурелигиозное государство, государственно-церковные правоотношения, свобода вероисповедания.

## THE SEMI-SECULAR OR SEMI-RELIGIOUS STATE AS A CHARACTERISTIC OF THE STATE: LEGAL COMPARATIVE ANALYSIS

### Annotation

The scientific article is devoted to the issues of nomination of semi-secular and semi-religious states characterizing the state in the legal relations of the state-religion. The urgency of the article is dictated by the fact that religion continues to be a powerful tool for influencing the public consciousness, and the states adopt different approaches in this respect.

The aim of the article is to reveal the main features of the semi-religious (semi-secular) state proposed by us in the context of the comparative analysis of foreign countries. We have set as a task the identification of the peculiarities of the cooperation between the state and religious structures, and the analysis of the existence of religious components in the states. As a result, we have come to the conclusion that the semi-secular (semi-religious) state is an intermediate link between the secular religious states. On the one hand, there are traditional approaches to the separation of church and state, on the other hand, the church has certain functions in the system of public administration.

**Keywords:** state, religion, semi-secular or semi-religious state, state and churchlegal relations, freedom of religion.



**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

*Հայ-ռուսական համալսարանի  
իրավունքի տեսության և  
սահմանադրական իրավունքի  
ամբիոնի վարիչ, իրավաբանական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՕՐԵՆՍՊՐՔԻՆ  
ՀԱԿԱՌԱԿ (CONTRA LEGEM)**

**Ամփոփագիր.** Հոդվածում քննարկվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին (Օրենսգրքին) հակառակ քրեական դատավարության իրավունքի զարգացման (contra legem) տեսական և գործնական նշանակության հարցեր: Հոդվածի առաջին մասում հեղինակը ներկայացրել է 1998թ. և 2021թ. Օրենսգրքում գործաձվող «իրավունքի շահ» հասկացության բովանդակությունը: «Իրավունքի շահ» հասկացության արժեքանական մոտեցումը հեղինակը հնարավոր է համարում միայն լայն իրավաընկալման պայմաններում: Եթե Օրենսգրքի որևէ դրույթ ակնհայտորեն (աղաղակող կերպով) հակադրվում է քրեական դատավարության իրավունքի էությունն արտահայտող իրավական սկզբունքներին, ապա իրավունքի շահով ղեկավարվելու օրենսդրական պահանջի միակ հասցեատերը գործադիր իշխանությունից ինստիտուցիոնալ և գործառութային տեսանկյուններից անկախ դատարանն է (1), որը կարող է գործել Օրենսգրքի կոնկրետ դրույթին հակառակ, սակայն իրավունքի սկզբունքներին համապատասխան(2):

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՊԳԻ

◆ ՍԱՀՄԱՆԱՊՐԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հոդվածի երկրորդ մասում ներկայացվում են ռուս դատավարագետների՝ Ա.Ս. Ալեքսանդրովի և Լ.Վ. Գոլովկոյի՝ իրավունքի մասին ընկալումները, ինչպես նաև քննարկվում է, թե նշված գիտնականներն արդյոք թույլատրելի համարո՞ւմ են դատավարական իրավունքի զարգացումն Օրենսգրքին հակառակ:

Հոդվածի երրորդ մասում նշվում է, որ ՀՀ դատավորները հիմնականում խուսափում են դատական ակտերում ուղիղ նշել, թե իրավունքի զարգացումը ինչ մեթոդաբանությամբ են իրականացրել՝ տարածական մեկնաբանմամբ, թե՛ extra legem կամ contra legem իրավակիրառման եղանակներով: Հեղինակը համառոտ ներկայացնում է օրենքի տարածական մեկնաբանման, օրենքից դուրս (extra legem) և օրենքին հակառակ (contra legem) իրավունքի զարգացման ինստիտուտները միմյանցից սահմանազատելու իր մոտեցումները:

Հոդվածում քննարկվում են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Օրենսգրքին հակառակ քրեական դատավարության իրավունքի զարգացման տարբեր օրինակներ:

**Հիմնաբառեր.** իրավունքի շահ, իրավաբանական, դատավարություն, օրենքի տարածական մեկնաբանում, օրենքից դուրս (extra legem) իրավունքի զարգացում, օրենքին հակառակ (contra legem) իրավունքի զարգացում:

**1. Հանրային գործառույթների իրականացումը իրավունքի շահի հիման վրա**

*1.1.Ընդհանուր դրույթներ:* Contra legem իրավունքի զարգացման դեպքում առկա է օրենքի կոնկրետ կարգավորում, սակայն իրավակիրառ իրավասու մարմինը, ելնելով որոշակի իրավաչափ նպատակներից (օրինակ՝ արդարության կամ իրավունքի այլ սկզբունքների աննահանջ պահանջից), կայացնում է այդ կարգավորմանը հակառակ որոշում: Իրավակիրառ մարմինը contra legem ակտով վերացնում կամ փոփոխում է օրենքի կար-

գավորումները<sup>1</sup>: Քրեական դատավարության օրենսգրքին (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր. հակառակ քրեական դատավարության իրավունքի զարգացման հիմնավորման մեթոդաբանական հիմքը լայն իրավաընկալումն է: Եթե քրեական դատավարության իրավունքը հասկացվի զուտ որպես Օրենսգրքում կամ այլ իրավական տեքստերում ամրագրված կանոնների (ձևակերպումների) համակցություն, ապա դժվար է խոսել Օրենսգրքին հակառակ դատավարական իրավունքի զարգացման մասին:

Քրեական դատավարության իրավունքի *contra legem* զարգացման դոկտրինի տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի «իրավունքի շահ» եզրույթի բովանդակությունը:

1.2. *«Իրավունքի շահ» եզրույթը դատավարական օրենսդրությունում և դատական պրակտիկայում:* ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունում «իրավունքի շահ» եզրույթն օգտագործվել է մրցակցության կամ հանրայնության սկզբունքների համատեքստում: Այսպես՝ 1998թ. ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդվածի (մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում) 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

2021թ. ՀՀ քր. դատ. օր. 15-րդ հոդվածի (վարույթի հանրայնության սկզբունքը) 2-րդ մասում ամրագրված է.

*«Արդարադատությունը, դատախազական հսկողությունը, նախաքննությունը, հետաքննությունը և հանրային այլ գործունեությունն իրականացվում են բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի*

<sup>1</sup> **Ղամբարյան Ա.** Իրավունքի և օրենքի կոլիզիաները իրավունքի փիլիսոփայությունում // Գիտական Արցախ, №1(8), 2021, - էջեր 64-85, *Contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացում // Գիտական Արցախ, № 3 (10), 2021, - էջեր 86-97:

*հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից (ընդգծումը՝ հեղ.)»:*

2021թ. ՀՀ քր. դատ. օր. կարգավորումն աչքի է ընկնում հետևյալ տեսանկյուններից.

Նախ՝ իրավունքի շահով ղեկավարվելու պահանջ ներկայացվում է ոչ միայն դատարանին, այլև հանրային գործառույթներ իրականացնող մյուս սուբյեկտներին՝ դատախազին, քննիչին, հետաքննիչին (հանրային պաշտոնատար անձինք):

Երկրորդ՝ օրենսդիրը հանրային գործառույթների իրականացումը կապել է ոչ թե օրենքի պահպանման (օրինականության) հետ, այլ շատ հստակ և ուղիղ սահմանել է, որ հանրային պաշտոնատար անձինք հանրային գործունեությունն իրականացնում են իրավունքի շահերից ելնելով:

Ինչպե՞ս պետք է մեկնաբանել «հանրային գործունեությունը բացառապես իրավունքի շահերից ելնելով իրականացնել» օրենսդրական ձևակերպումը: «Իրավունքի շահ»-ը բազմաբովանդակ հասկացություն է և կարող է մեկնաբանվել տարբեր կերպ: Օրինակ՝ հանրային գործունեությունը բացառապես իրավունքի շահերից ելնելով իրականացնելու պահանջի մասին օրենսդրական տեքստն ընթերցելիս առաջին տպավորությունն այն է, որ օրենսդիրը դրանով ցանկացել է իրավունքի շահը հակադրել հանրային պաշտոնատար անձանց անձնական շահին և հանրային պաշտոնատար անձանց համար նախատեսել է իմպլիցիտ արգելք. որևէ պարագայում չհետապնդել անձնական շահ:

ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով քրեադատավարական պոզիտիվ իրավունքի կարգավորումները (1998թ. ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդվածի 3-րդ մասը), «իրավունքի շահ» եզրույթը մրցակցության սկզբունքի համատեքստում դիտել է որպես դատավորների անկախության և անկողմնակալության (անաչառության) ապահովման երաշխիք: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 24.07.2007թ. ՍԴՈ-710 որոշմամբ նշել է.

«Դատարանը չպետք է հանդես գա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այլ արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդված): Այս սկզբունքը նպատակատուղված է դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը»:

ՀՀ սահմանադրական դատարանը 12.09.2009թ. ՍԴՈ-827 որոշմամբ «իրավունքի շահ» եզրույթը կրկին օգտագործել է դատավորի անկողմնակալության (անաչառության) և անկախության համատեքստում:

«Կալանավորումը կարող է տեղի ունենալ բացառապես դատարանի որոշմամբ: Այս երաշխիքը պայմանավորված է նրանով, որ դատարանը, լինելով անկախ և անկողմնակալ՝ կոչված լինելով **ներկայացնելու բացառապես իրավունքի շահը**, կարող է օբյեկտիվ և անաչառ գնահատական տալ անձին ազատությունից զրկելու հիմնավորվածությանը» (ընդգծումը՝ հեղ.):

ՀՀ սահմանադրական դատարանը միայն 19.02.2019թ. ՍԴՈ-1446 որոշմամբ փոքր-ինչ ընդլայնեց «իրավունքի շահ» հասկացության բովանդակությունը՝ այն կապելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման հետ: Այս գործով ՀՀ սահմանադրական դատարանը չի համաձայնել դիմողի այն պնդմանը՝ ըստ որի. «Ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելու պայմաններում **մասնավոր շահը չարդարացված կերպով գերակայում է հանրային շահի նկատմամբ**՝ այդպիսով խախտելով



սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ շահերի հավասարակշռությունն ապահովում է դատարանը, որը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված դիրքորոշումների կապակցությամբ նշենք հետևյալ նկատառումները.

Նախ՝ ՀՀ սահմանադրական դատարանը «իրավունքի շահ» ձևակերպումը չի մեկնաբանել ճյուղային օրենսդրությունից ինքնավար: Դատարանն այն դիտարկել է ոչ թե սահմանադրաիրավական, այլ բացառապես քրեական դատավարության պոզիտիվ իրավունքի (ՀՀ քր. դատ.օր. 23-րդ հոդվածի) համատեքստում:

Երկրորդ՝ ՀՀ սահմանադրական դատարանի քննության առարժկայից դուրս է եղել այն հարցը, թե ընդհանուր իրավասության դատարանն իրավունքի շահի և Օրենսգրքի հակադրության դեպքում ինչպե՞ս պետք է վարվի, հատկապես եթե այդ հակադրության լուծման համար բացակայում են սահմանադրական արդարադատությանը դիմելու պայմանները կամ անհրաժեշտությունը: Դատարանում, օրինակ, չի քննարկվել այնպիսի հարց, թե առաջին ատյանի դատարանն արդյո՞ք պարտավոր է ղեկավարվել իրավունքի շահով, եթե Օրենսգրքով սահմանված լինեք, որ դատարանն ինքնաբերաբար (պարտադիր) բավարարում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձին կալանավորելու՝ առաջին անգամ ներկայացված միջնորդությունը: Օրենսդրական նման հիպոթետիկ կարգավորումների պարագայում դատավորն արդյո՞ք պետք է ղեկավարվի իրավունքի շահով և դատավարական իրավունքը զարգացնի Օրենսգրքին հակառակ (եթե բացակայում են (սպառվել են) սահմանադրական արդարադատության ներուժին դիմելու հիմքերը (հնարավորությունը):

ՀՀ վճռաբեկ դատարանը «իրավունքի շահ» եզրույթը գործածել է փոքր-ինչ այլ համատեքստում: Այսպես՝ թիվ

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ 1(105)2022

ԿԴ/0003/11/10 գործով 11.05.2011թ. կայացրած որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը թեև հղում է կատարել ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդվածի 3-րդ մասին, սակայն իրավունքի շահի խախտումը կապել է անորոշ դատական ակտի կայացման հետ: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է.

*«ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանը (...) արտահայտում է միայն իրավունքի շահերը»: Անորոշ դատական ակտ կայացնելու պարագայում դատարանը խախտում է իրավունքի շահը արտահայտելու իրավական պահանջը»:*

Վերը նշվածից պարզ է դառնում, որ «իրավունքի շահ»-ը ընդգրկուն հասկացություն է, և ՀՀ բարձր դատարաններն այն ընթերցել են տարբեր կերպ՝ որպես դատավորի անաչառության և անկախության ապահովման միջոց կամ որպես դատավորի կողմից հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության պահանջ, կամ որպես դատական ակտերի որոշակիության ապահովման միջոց:

ՀՀ բարձր դատարանների կողմից «իրավունքի շահ» եզրույթի՝ այդ համատեքստում օգտագործելը գոյության իրավունք ունի, սակայն նրանցից որևէ մեկը չի արտացոլում այդ հասկացության ամբողջ արժեքանական կողմը:

Նախապես նշենք, որ 2021թ. ՀՀ քր. դատ. օր. 15-րդ հոդվածի 2-րդ մասում գործածվող «իրավունքի շահը» ձևակերպման արժեքանական բովանդակությունը հնարավոր է բացահայտել լայն իրավաբանական (իրավունքի և օրենքի փոխհարաբերակցության) պայմաններում:

1.3. «Իրավունքի շահ» եզրույթի արժեքանական ընկալումը: Սուրբ Ջերոմ Սթրիդոնի երանելին «Vulgata»<sup>1</sup>-ում օգտագործում է «beneficium iuris» հասկացությունը, որը թարգմանվում է

<sup>1</sup> Вульгата (лат. Biblia Vulgata).

«իրավունքի շահ»: Ըստ այդ աղբյուրի՝ իրավունքի շահը պաշտպանել նշանակում է իրավունքն օրենքից վեր դասել, նրա բովանդակությունն ընդունել յուրաքանչյուր մարդու համար, ով չունի իշխանություն, և հետևել բնության ճանապարհին<sup>1</sup>: Այս մեջբերման լատիներեն տեքստում օգտագործվում են «iuris» և «legem» եզրույթները, որոնք համապատասխանում են «իրավունք» և «օրենք» եզրույթներին: Ի դեպ, 2021թ. ՀՀ քր. դատ. օր. 15-րդ հոդվածի 2-րդ մասում կողք կողքի օգտագործվում են «իրավունք» և «օրենք» եզրույթները:

Իրավունքի շահի ապահովման արժեքանական մոտեցումն իրավակիրառողից (հետաքննիչից, քննիչից, դատախազից կամ դատարանից) պահանջում է հանրային գործառույթներն իրականացնելիս որոշակի դեպքերում իրավունքը զարգացնել օրենքի տեքստից դուրս և ոչ թե կուրորեն ու մաթեմատիկական ճշգրտությամբ ղեկավարվել օրենքի տառով: Օրինակ՝ քննիչի կողմից օրենքի և իրավունքի անալոգիային դիմելը, Օրենսգրքի տեքստը տարածական մեկնաբանելը:

Նկատի ունենալով հայկական իրականությունը և դրա ավանդույթները՝ կարելի է նշել, որ ինստիտուցիոնալ կամ գործառութային իմաստներով գործադիր իշխանության մարմինների պաշտոնատար անձինք (ՀՀ ոստիկանը, քննիչը, դատախազը) ամենայն հավանականությամբ կխուսափեն կոնկրետ գործով անմիջապես կատարել իրավունքի շահից բխող գործողություններ (անալոգիային դիմելը, օրենքը տարածական մեկնաբանելը): Այս դեպքում էլ իրավունքի շահն այդ պաշտոնատար անձից կպահանջի Օրենսգրքի տեքստի տառից շեղվող գործողություններ կատարելու անհրաժեշտության հարցը ներկայացնել համապատասխան պետական մարմինների՝ հանրային քաղաքականություն մշակող կոլեգիալ ինստիտուտների (օրինակ՝ ՀՀ դատախազության կոլեգիայում) քննարկմանը:

<sup>1</sup> Beneficium iuris defendere est iuris supra legem extollere, contentum accipere pro unoquoque homine, qui potestatem non habet, et viam naturae sequi// De Sortitione ludicum Apud Athenienses.1894:

Իրավիճակն այլ է, երբ Օրենսգրքի որևէ դրույթ ակնհայտորեն (աղաղակող կերպով) հակադրվում է քրեական դատավարության իրավունքի էությունն արտահայտող իրավական սկզբունքներին (աքսիոմաներին): Այս դեպքում իրավունքի շահով ղեկավարվելու պահանջի միակ հասցեատերը գործադիր իշխանությունից ինստիտուցիոնալ և գործառութային առումով անկախ դատարանն է, որը պետք է գործի Օրենսգրքի կոնկրետ դրույթին հակառակ, սակայն իրավունքի սկզբունքներին համապատասխան<sup>1</sup>: Այլ կերպ ասած՝ դատարանը նման իրավիճակում պետք է հենվի քրեական դատավարության իրավունքի *contra legem* զարգացման դոկտրինի վրա, ինչը նրան հնարավորություն կտա քրեական դատավարության իրավունքը զարգացնել Օրենսգրքի կոնկրետ դրույթին հակառակ, սակայն քրեական դատավարության սկզբունքների հաղորդած ուղղությանը համապատասխան:

Պատահական չէ, որ հենց քրեական դատավարության իրավունքում (2021թ. ՀՀ քր. դատ.օր. 15-րդ հոդվածում) է պետական պաշտոնատար անձանց հատուկ հրամայվում՝ իրենց գործառույթներն իրականացնելիս ղեկավարվել բացառապես իրավունքի շահով: Բանն այն է, որ քրեական դատավարության էությունը պետական իշխանության ինքնասահմանափակումն է<sup>2</sup>, որը կարող է «մարդ-պաշտոնատար անձ» հարաբերություններում մարդուն պաշտպանել պետական կամայականություններից: Բացի այդ, քրեական դատավարությունում, ի տարբերություն, օրինակ, սահմանադրական իրավունքի, քաղաքական իշխանությունն այդ աստիճան ներկայացված չէ, ուստի այդ

<sup>1</sup> Հատկապես հետխորհրդային պետություններում դատավորները հոգեբանորեն կիսուսափեն դատական ակտերում էքսպլիցիտ նշել, որ հակադրվում են օրենքին և անտեսում են օրենքի կոնկրետ դրույթներ: Նրանք իրական երևույթը քողարկելու նպատակով կօգտագործեն տարբեր հասկացություններ՝ օրենքը մեկնաբանել, իրավական տեքստն ընթերցել, իրավունքը զարգացնել և այլն, սակայն չեն վկայակոչի օրենքին հակառակ իրավունքի զարգացման մասին:

<sup>2</sup> **Мизулина Е.Б.** Уголовный процесс: концепция самоограничения государства. - Тарту: Тартуский ун-т, 1991.

իշխանությունը «մարդ-պաշտոնատար անձ» քրեադատավարական հարաբերություններում իրավունքի շահի ներուժի դրսևորման նկատմամբ առավել հանդուրժող է:

Այս իմաստով քրեական դատավարության գիտության կողմից առավել ընկալելի են լայն իրավահասկացողության հնարավորությունները: Տեղին է մեջբերել Ա. Ս. Ալեքսանդրովի հետևյալ միտքը.

«Կա մի ոլորտ, որտեղ նույնիսկ հարմարվողական (conformist) անձը volens nolens կանգնած է ընտրության առջև՝ կա՛մ պայքարել «պեպության» դեմ իրենց կյանքի, ազատության, գույքի համար, կա՛մ հանձնվել: Քրեական դատավարությունը սահմանում է այն եզրը (սահմանը), որից այն կողմ նահանջելու տեղ չկա, մարդուն մնում է կա՛մ վիճել պեպության հետ և անձնական փորձի վրա ստուգել, որ նրա սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կեղծիք չեն, կա՛մ հրաժարվել պայքարից: Քրեական դատավարության տեսությունն անդրադառնում է այս «եզրի» էքզիստենցիալ ընտրությանը: Հենց քրեական դատավարությունն է բացահայտում մարդու և իշխանությունների հարաբերությունների էությունը և հնարավորություն է տալիս ստուգել, թե այս առճակատման մեջ իրավունքը որքանով է իրական: Ահա թե ինչու հենց քրեական դատավարության տեսությունն է (իրավաբանական գիտելիքների մյուս ճյուղերի համեմատությամբ) ավելի նախապատրաստված նոր տեսակի իրավաընկալմանը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Александров А.С., Александрова И.А. Судебный процесс – источник права и справедливости // Правовое государство: теория и практика. 2022. № 1 (67). - С. 15.

## 2. Իրավաբանական ղեկավարագետների հայացքով

**2.1. Ընդհանուր դրույթներ:** Իրավունքի տեսության մասնագետները, ովքեր խորությամբ ուսումնասիրել են իրավաբանական վարույթի (ընթացակարգի) համատեսական հարցերը, եկել են այն եզրակացության, որ օբյեկտիվ իրավունքի հատկանիշներից մեկը դրա ընթացակարգայնությունն է: Ընդ որում, ընթացակարգայնության հատկանիշին նրանք տալիս են նորմատիվության հատկանիշի խորությանը համահավասար նշանակություն<sup>1</sup>:

Իրավաբանական վարույթի՝ որպես օբյեկտիվ իրավունքի էական հատկանիշի մասին վերը նշված մոտեցմամբ, այնուամենայնիվ, իրավունքի ընկալումը չի կապվում իրավաբանական վարույթի (ընթացակարգերի) կամ իրավական վեճերի լուծման կառուցակարգերի հետ, իրավունքի էությունը չի բացահայտվում իրավական ընթացակարգերի միջոցով: Այլ կերպ ասած, այս տեսաբանների մոտեցումները հիմնված չեն այնպիսի իրավաբանական վրա՝ ըստ որի իրավունքն այն կանոններն են, որոնք ստեղծվում են բացառապես իրավաբանական վարույթի (ընթացակարգերի) շրջանակում:

Ռուս առանձին դատավարագետներ, որոնք աչքի են ընկնում լայն մասշտաբի մտածողությամբ, անդրադարձել են իրավաբանական որոշ հարցերին և փորձել են իրավունքի ընկալումը դիտարկել դատավարության շրջանակներում օրենքների ընթերցման (Ա.Ս. Ալեքսանդրով) կամ իրավական վեճերի լուծման կառուցակարգերի (Լ.Վ. Գոլովկո) պրիզմայով:

**2.2. Իրավունքն ընթերցված (մեկնաբանված) օրենքի տեքստին:** Սոցիոլոգիական իրավաբանական իրավունք է համարում ոչ թե պարզապես «թղթե տնակում ապրող» դատողությունների համակցությունը (իրավական տեքստի դրույթները), այլ ընթերցված (այդ թվում՝ իրավական վեճերը լուծելիս) իրական տեքս-

<sup>1</sup> **Протасов В. Н.** Теория государства и права: учебное пособие для вузов. - М.: Изд. «Юрайт», 2018. - С. 186; **Лукьянова Е.Г.** Проблемы теории государства и права: учебник для магистратуры. - М.: Изд. «Норма: ИНФРА-М», 2021. - С. 103.

տերը, որի արդյունքում ձևավորված կանոններն իրականացնում են կարգավորիչ գործառույթ:

Դատավարագետներից Ա.Ս. Ալեքսանդրովը սոցիոլոգիական շեշտադրմամբ ինտեգրատիվ իրավաընկալման շրջանակներում փորձել է ներկայացնել իրավունքի ընկալման այնպիսի տարբերակ, որն իբրև աչքի է ընկնում նորարարությամբ.

*«Իրավունքն օրենքի տեքստն է՝ բազմապատկված որոշակի համատեքստում իր մեկնաբանմամբ, այսինքն՝ իրավունքն «ընթերցված» տեքստն է: Իրավունքը դատավճռի տեքստում իմաստավորված և ամրագրված, օրենքի տեքստի իմաստն է: Սկզբունքորեն նորը, որը ներմուծվում է «իրավունք» հասկացության մեջ, հետևյալն է. ա) մեկնաբանական/մեկնողական տարրին տրվում է ոչ թե օժանդակ, բացատրական, այլ արարչաստեղծագործական նշանակություն, բ) իրավաստեղծողների թվում, օրենքի տեքստի հեղինակի հետ մեկտեղ, ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ներգրաված մարդուն՝ մեկնաբանողին, ներառել»<sup>1</sup>:*

Ա.Ս. Ալեքսանդրովի՝ նորարարության մասին ինքնազնահատականի և դատողությունների վերաբերյալ ունենք երկու անհամաձայնություն:

Նախ՝ չափազանցություն է դատավարագետի միտքն այն մասին, որ իրավունքի վերաբերյալ իր ընկալման մեջ առկա է սկզբունքորեն նոր բան: Շատ վաղուց է հայտնի, որ փիլիսոփայական տեսանկյունից իրավունքն իր բնույթով մեկնաբանելի է, օրենքները պետք է ընթերցվեն<sup>2</sup>: Ավելին՝ իրավաբանական ռեալիզմի ծայրահեղ դրսևորման կողմնակիցները

<sup>1</sup> Александров А.С., Александрова И.А. Судебный процесс – источник права и справедливости // Правовое государство: теория и практика. 2022. № 1 (67). - С. 17.

<sup>2</sup> Дворкин Р. Империя права / пер. с англ. - М., 2020. - С. 480, 482.

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՎԱԿԻՐ 1(105)2022

նույնիսկ նշում են, որ մինչև մեկնաբանումն օրենքի տեքստն ինքնին որևէ նշանակություն չունի, և այն սպասում է մեկնաբանմամբ տրվող նշանակությանը, հենց մեկնաբանողն է որոշում նորմը, որն արտահայտված է տեքստի ձևակերպումներում, իսկ նորմը վավեր է, քանի որ այն ստեղծվել է մեկնաբանման գործընթացում<sup>1</sup>:

Կոմունիկատիվ իրավաբանական իրավական նորմը ոչ թե օրենքի տեքստում արտացոլված տրամաբանական դատողություն է, այլ գործող միջուրբյեկտային նորմն է: Ա.Պոլյակովն իրավական նորմը և իրավական տեքստը չի նույնացնում: Իրավական տեքստն իրավունքի տեղեկության աղբյուրն է, իսկ իրավական նորմը միջուրբյեկտային վարքագծի գործող կանոն է, որը ձևավորվում է փոխգործակցող սուբյեկտների կողմից իրավական տեքստերին տրված մեկնաբանմամբ: Այս իրավաբանական առումով իրավունքն այն է, ինչ մեկնաբանվում է որպես իրավունք, իրավունքը՝ որպես միջուրբյեկտային երևույթ, իրավական տեքստերի մեկնաբանումից դուրս գոյություն չունի<sup>2</sup>:

Այսպիսով, «իրավունքն ընթերցված օրենքի տեքստն է» գաղափարն արտացոլվել է իրավունքի ընդհանուր տեսության մասնագետների և փիլիսոփաների կողմից մշակված սոցիոլոգիական կամ ինտեգրատիվ իրավաբանական տարբեր ուղղություններում:

Երկրորդ՝ Ա.Ս. Ալեքսանդրովը և նրա կողմնակիցները կարծում են, որ իրավական է միայն այն, ինչ դատավարական է, չկա իրավունք առանց դատավարության, իսկ մեկնող-դատավորին համարում են իրավունքի մարգարե<sup>3</sup>: Այո՛, դատավորն իրավական տեքստերի բարձրագույն մեկնաբանողն է, սակայն

<sup>1</sup> **Тропер М.** Реалистическая теория толкования // Сравнительное конституционное обозрение. 2006. № 1(54). - С. 138, 140.

<sup>2</sup> **Поляков А.В., Тимошина Е.В.** Общая теория права: учебник. – СПб.: Изд. дом С. - Петерб. гос. ун-та, 2005. - С. 110-111, 416.

<sup>3</sup> **Александров А.С., Александрова И.А., Терехин В.В.** Шесть критических эссе о праве и правосудии // Постклассическая онтология права: монография / Под общ. ред. И.Л. Честнова. - СПб.: “Алетейя”, 2016. - С. 579.



չպետք է անտեսել այն, որ իրավաբանական վարույթն ավելի լայն է, քան դատավարությունը: Օրինակ՝ վարչական ոչ յուրիս-դիկցիոն վարույթի շրջանակում վարչական մարմինը կոնկրետ գործ լուծելիս նույնպես մեկնաբանում է օրենքի տեքստը և կարող է ձևավորել այնպիսի «կենդանի» իրավունք, որը ենթակա չէ դատական ստուգման:

Օրենսգրքին հակառակ իրավունքի զարգացման հարցի վերաբերյալ Ա.Ս. Ալեքսանդրովի և նրա կողմնակիցների դիրքորոշումը թեև հստակ է, սակայն հատվածային է. նրանք ուղիղ կերպով նշում են, որ որոշ դեպքերում հնարավոր է օրենսդրի կամքին հակառակ ձևավորել իրավունք: Այսպես.

*«Մեկնաբանումը սեփական իմաստներ ծնող ինքնուրույն ոլորտ է, որոնք հետադարձ կարգով վերագրվում են օրենքի տեքստին: Դատական խոսույթը (դիսկուրսը) գեղի հոսքի նման օրենքի տեքստից լվանում է հին իմաստը և իր հետ բերում նոր իմաստներ. երբեմն նա (դիսկուրսը) նոր հուն է դնում իրավունքի համար՝ անգամ օրենսդրի կամքին հակառակ»<sup>1</sup>:*

Թեև հեղինակները խոսում են օրենսդրի կամքին հակառակ իրավունքի զարգացման (հեղինակների ձևակերպմամբ՝ իրավունքի նոր հունի) մասին, սակայն հեղինակների՝ օրենքին հակառակ իրավունքի զարգացման մասին դատողությունը հատվածային (ֆրագմենտար) է, քանի որ նրանք այդ միտքը կապում են միայն հնի և նորի փոխհարաբերությունում նորին նախապատվություն տալու գաղափարի հետ:

2.3. *Իրավունքն իրավական վեճերի լուծման ինստիտուցիոնալ կառուցակարգ է:* Լ.Վ. Գոլովկոն իրավունք է համարում միայն այն, ինչի հիման վրա հնարավոր է լուծել սոցիալ-իրավական

<sup>1</sup> Александров А.С., Александрова И.А., Терехин В. В. Указ. соч. - С. 587- 588.

վեճերը, նա իրավունքը ներկայացնում է զուտ որպես իրավական վեճերի լուծման կառուցակարգ: Ըստ նրա՝

*«Իրավունքը մարդկանց, իրավաբանական անձանց, պետությունների, նորմերի, մարդու և պետության, աշխարհողի և գործարուի և այլոց միջև կոնֆլիկտների լուծման ինստիտուցիոնալ կառուցակարգ է: Իրավունքը ֆունկցիոնալ առումով ոչ մի այլ հատուկ նպատակ չունի, ինչն էլ մեզ համար մեթոդաբանական ելակետ է»<sup>1</sup>:*

Ընդունելի է, երբ իրավունքի ընկալումը կապվում է դրա գործառուօային կողմի հետ, և իրավունք է փնտրվում այնտեղ, որտեղ առկա են իրավաբանական գործերը լուծելու միջոցներ: Այնուամենայնիվ, Լ.Վ. Գոլովկոյի դատողությունների վերաբերյալ ունենք երկու անհամաձայնություն:

Նախ՝ ինչո՞ւ է դատավարագետն իրավունքը կապում բացառապես իրավական վեճերի լուծման կառուցակարգի (իրավունքի պաշտպանիչ գործառույթի) հետ: Դատավարագետն արդյոք հերքո՞ւմ է կարգավորիչ նյութաիրավական կանոնների՝ իրավունք լինելու հանգամանքը, արդյոք իրավունք չե՞ն այն կանոնները, որոնց հիման վրա վարչական մարմինը լուծում է լիցենզիա տալու հարցը (ոչ վիճելի իրավաբանական վարույթներ), արդյոք իրավունք չե՞ն քաղաքացիաիրավական նորմերը, որոնք վեճի բացակայության պայմաններում կարգավորում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների վարքագիծը, արդյոք իրավունք չե՞ն քրեաիրավական արգելող նորմերը, որոնց ներգործությամբ մարդիկ զերծ են մնում հանցագործություն կատարելուց: Նկատի ունենալով Լ. Վ. Գոլովկոյի այն միտքը՝ ըստ որի «առանց կոնֆլիկտի իրավունք գոյություն չունի», «եթե արգելքը խախտված չէ, ապա վարքագծի

<sup>1</sup> Головки Л.В. Постсоветская теория права: трудности позиционирования в историческом и сравнительно-правовом контексте // Проблемы постсоветской теории и философии права: сб. статей. - М.: Юрлитинформ, 2016. - С. 95.

պատճառներն ընդհանրապես նշանակություն չունեն»<sup>1</sup>, ապա կարելի է եզրակացնել, որ նա իրոք իրավունք չի համարում այն բոլոր կարգավորիչ նորմերը, որոնք վեճերի լուծման գործառույթ չեն իրականացնում:

Այսպիսով՝ դատավարագետի՝ իրավունքի ընկալման մեթոդաբանական ելման կետը հնարավորություն չի տալիս մարդկանց հարաբերությունները կարգավորող իրավական դրույթները (նեղ իմաստով՝ կարգավորիչ նորմերը) և դրանց ընթերցումը դիտարկել որպես իրավունք:

*Երկրորդ՝* Լ. Գոլովկոն կարծում է, որ դատավորն իրավական վեճը լուծելիս հենվում է միայն պոզիտիվիստական կամ բնաիրավական տրամաբանության վրա, ուստի իրավունքի հիմնարար տեսություններ է համարում միայն պոզիտիվիստական և բնական իրավունքի դոկտրինները<sup>2</sup>:

Լ.Վ. Գոլովկոն հատկապես քննադատում է ինտեգրատիվ իրավաընկալման ուղղությունները: Նա կարծում է, որ, օրինակ՝ Լ.Ի. Պետրաժիցկոյ՝ իրավունքի հոգեբանական տեսությունն իրավունքին՝ որպես վեճերի լուծման միջոցի, ոչինչ չի տվել: Դատավարագետը թեև վերահաստատում է, որ այն անհերքելի փաստը, որ այս տեսությունը հանգեցրել է իրավաբանական հոգեբանության նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճի, սակայն դա ավելի շատ համարում է հոգեբանական, քան տեսաիրավական հայեցակարգ, որը ոչ միայն չի փոխարինել (դուրս չի մղել), այլև ընդունակ չէ փոխարինելու ո՛չ պոզիտիվիզմին, ո՛չ էլ յուսնատուրալիզմին<sup>3</sup>:

Լ.Վ. Գալավկոն իրավունքի հոգեբանական տեսությունը չի համարում իրավունքի հիմնարար տեսություն, քանի որ այն իրավական վեճերի լուծման մեթոդ չէ: Նա նշում է.

<sup>1</sup> Головки Л.В. Указ. соч. - С. 94-95, 99.

<sup>2</sup> Головки Л.В. Указ. соч. - С. 96.

<sup>3</sup> Головки Л.В. Указ. соч. - С. 98.

«Այս տողերի հեղինակին այդպես էլ չի հաջողվել հայտնաբերել ոչ մի դատական (կամ ամենալայն իմաստով՝ իրավակիրառ ակտ) աշխարհի որևէ երկրում, որտեղ դատարանը որոշում է կայացրել հոգուր կողմի՝ առավել արտահայտված «շարժիչային հուզմունքով» կամ «իմպերատիվ-ստրիկտուրիվային հույզերով», որոնք իմպերատիվ ստրիկտուրիվությանը գերազանցում են նրա դատավարական հակառակորդի հույզերը»<sup>1</sup>:

Լ.Ի. Պետրաժիցկու աշխատությունն ամբողջությամբ ուսումնասիրելու դեպքում պարզ կլիներ, որ նա խոսել է ինտուիտիվ իրավունքի՝ որպես իրավական վեճերի լուծման մասին: Այսպես՝ Լ.Ի. Պետրաժիցկին նշում էր.

«Ինտուիտիվ իրավունքը վճռորոշ նշանակություն է ձեռք բերում, երբ փարաձայնությունների լուծման նպատակով դիմում են ոչ թե պոզիտիվ իրավունքին, այլ երրորդ անձանց, խղճի արբիտրաժային դատարանին և այլոց ինտուիտիվ իրավունքին: Եվ ինտուիտիվ իրավունքի նման որոշիչ նշանակություն ունեցող ոլորտը հավասար պայմաններում պետք է մշակույթի աճին զուգընթաց ընդլայնվի»<sup>2</sup>:

Օրինակ՝ մեղադրյալը եթե որոշում է, որ իր գործով արդարադատություն պետք է իրականացնի երդվյալ ատենակալների դատարանը, այսինքն՝ երդվյալ ատենակալները պետք է որոշեն

<sup>1</sup> Головки Л.В. Указ. соч. - С. 98.

<sup>2</sup> Петражицкий Л.И. Теория права и государства в связи с теорией нравственности. Том II. Изд. второе, исп. и доп. - СПб., 1910. - С. 495.

իր մեղավորության կամ անմեղության հարցը, ապա, ըստ էության, մեղադրյալին իրավական վեճի լուծման համար ընտրում է ոչ թե պոզիտիվ իրավունքը, այլ Լ.Ի. Պետրաժիցկու նշած ինտուիտիվ իրավունքը: Չէ՞ որ երդվյալ ատենակալներն այս վեճը լուծում են ոչ թե քրեական պոզիտիվ իրավունքի, այլ իրենց ինտուիտիվ իրավունքի հիման վրա, նրանք, ի տարբերություն պրոֆեսիոնալ (իրավաբան) դատավորների, իրենց որոշումը (դատական ակտը) չեն պատճառաբանում պոզիտիվ իրավունքի տրամաբանությամբ: Ուստի հարգարժան Լ.Վ. Գոլովկոն որպեսզի պարզեր, թե իրավունքի հոգեբանական տեսությունն արդյոք նախատեսում է իրավական վեճերի լուծման մեթոդաբանություն, աշխարհի դատավարական համակարգերում դատական ակտեր փնտրելու փոխարեն պետք է հարցի պատասխանը որոներ հենց Լ.Ի. Պետրաժիցկու աշխատությունում:

Վերադառնանք contra legem իրավունքի զարգացման դոկտրինին անմիջապես վերաբերող հարցերին: Լ.Վ. Գոլովկոն արդյոք հնարավոր համարո՞ւմ է այնպիսի իրավիճակ, երբ իրավական վեճը կարելի է լուծել օրենքին (պոզիտիվ իրավունքին) հակառակ, սակայն բնական իրավունքի (իրավունքի հիմնարար սկզբունքների<sup>1</sup>) հիման վրա (իրավաչափ վարքագիծ): Դատավարագետը սույն հարցին ուղիղ չի անդրադառնում, սակայն հարցին ըստ էության տալիս է դրական պատասխան՝ վերապահումով, որ իրավունքն օրենքին հակառակ կարող են զարգացնել միայն բարձր ատյանի դատարանները: Նա նշում է.

<sup>1</sup> Լ.Վ. Գոլովկոն 2016թ. աշխատության մեջ իրավունքի հիմնարար սկզբունքները և բնական իրավունքը նույնացնում է (տե՛ս **Головко Л.В.** Постсоветская теория права ..., էջ 96), սակայն հետագայում մեկ այլ աշխատության մեջ բնական իրավունքը և իրավունքի ընդհանուր սկզբունքները միմյանցից տարանջատում է՝ իրավունքի սկզբունքները նույնացնելով իրական աքսիոմաների (անփոփոխելի քրեադատավարական օրինաչափություններ արտահայտող) դրույթների հետ (տե՛ս **Головко Л.В.** Государство и его уголовное судопроизводство: монография. - М.: Изд. дом «Городец», 2022. - էջ 16):

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ

*«Պատրական համակարգի ցածր մակարդակներում տոտալ գերիշխում է պոզիտիվիզմը, սակայն դատական ատյանների աստիճաններով դեպի վեր դեռույուտիվ շարժմանը զուգահեռ մեծանում է բնահրավական փաստարկումների հետ բախվելու հավանականությունը: Երբ հասնում ենք մինչև Սահմանադրական դատարան, առավել ևս՝ ՄԻԵԴ, բնական-իրավական մեթոդն իր հերթին դառնում է տոտալ գերիշխող՝ դուրս մղելով պոզիտիվիզմին»<sup>1</sup>:*

Ռուսական տեսական գրականությունում շատ ավելի վաղ նշվել է, որ օրենքին հակառակ իրավակիրառում կարող են իրականացնել բարձր ատյանների դատարանները, օրինակ՝ ՌԴ սուբյեկտների գերագույն դատարանները, ՌԴ գերագույն դատարանը: Ցածր ատյանի contra legem վերդիկտը պետք է պարտադիր քննարկվի Գերագույն դատարանում, որի արդյունքում վերդիկտը պետք է կա՛մ բեկանվի, կա՛մ հաստատվելու դեպքում այն պետք է հրապարակվի<sup>2</sup>:

Լ.Վ. Գոլովկոն հետազայում իմպլիցիտ խոսել է նաև contra legem իրավունքի զարգացման դոկտրինի համար գոյաբանական նշանակության որոշ հարցերի մասին: Նա կարծում է, որ պետությունը քրեական դատավարություն ստեղծելիս չունի անսահմանափակ ազատություն և կաշկանդված է «բացարձակ, ոչ գաղափարախոսական քրեադատավարական օրինաչափություններով» կամ իրավական հաստատուններով (կոնստանտներով): Նա նկատի ունի այն ավանդական կանոնները, որոնք ուղղակիորեն ծագում են իրավական ասացվածքներից,

<sup>1</sup> **Головко Л.В.** Постсоветская теория права: трудности позиционирования в историческом и сравнительно-правовом контексте // Проблемы постсоветской теории и философии права: сб. статей. - М.: Юрлитинформ, 2016. - С. 104.

<sup>2</sup> **Федотов А.В.** Возможно ли применение contra legem в демократическом правовом государстве? // Журнал российского права. 2002. № 8. - С. 92-99.

հարգված են իրենց պատվավոր տարիքի ուժով, հաճախ ձևակերպված են լատիներեն, ինքնիշխան են, հավերժական են, ընդհանուր են<sup>1</sup>: Խոսքն ըստ էության իրավական արքիոմաների մասին է, որոնք կարող են անվանվել նաև՝ իրավական մարքիմաներ, իրավական հաստատուններ (կոնստանտներ), իսկ ընթերցողի հետ պայմանավորվածության դեպքում՝ նույնիսկ իրավունքի ընդհանուր սկզբունքներ: Օրինակ՝ «lex specialis derogat legi generali» (հատուկ օրենքը վերացնում է ընդհանուր օրենքը), «lex posterior derogat legi priori» (նոր օրենքը վերացնում է հին օրենքը), «ad impossibilia lex non cogit: (օրենքը չի պահանջում անհնարին<sup>2</sup>), «Nemo iudex in sua causa» (ոչ ոք չի կարող իր գործով լինել դատավոր), «lex non deficit in justitia exhibenda» (օրենքը չունի (չպետք է ունենա) բացեր, երբ խոսքը վերաբերում է արդարադատությանը)<sup>3</sup>:

Դատավարագետը, որպես դատավարական օրինաչափություն արտահայտող անսասան կոնստանտի օրինակ, նշում է «lex specialis» կանոնը և այն համեմատելով բազմապատկման աղյուսակի և երկրի ձգողականության ուժի հետ, նշում է, թե ինչպես բազմապատկման աղյուսակը որևէ մեկը չի կարող վերացնել, այնպես էլ՝ այդ դատավարական օրինաչափությունները որևէ մեկը, նույնիսկ՝ օրենսդիրը, իր կամային նորմատիվ որոշմամբ, չի կարող ո՛չ փոփոխել, ո՛չ էլ վերացնել: Այսպես.

*«Կարելի՞ է արդյոք հրաժարվել «lex specialis» կանոնից: Ոչ ավելի, քան բազմապատկման աղյուսակից: Արդյո՞ք դա ամրագրված է կոնվենցիաներում, սահմանադրություններում, օրենք-*

<sup>1</sup> **Головко Л.В.** Государство и его уголовное судопроизводство: монография. - М.: Изд. дом «Городец», 2022. - С. 16-17.

<sup>2</sup> Латинские юридические изречения / Сост. проф. **Темнов Е.И.** - М., 2003. - С. 74.- “Позднейшим законом отменяется более ранний”. “Закон не требует невозможного”. “Никто не может быть судьей по собственному делу”.

<sup>3</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Палашевская И.В.** Аксиологические основания юридического дискурса: аксиомы права // Научный диалог. 2017. № 11. - С. 144-156.

*ներում: Ո՛չ, ամրագրված չէ: Արդյո՞ք այն ամրագրվելու կարիք ունի: Կրկին՝ ոչ ավելի, քան բազմապատկման աղյուսակը. կարելի է ամրագրել, կարելի է և չամրագրել, դրանից ոչինչ չի փոխվի»<sup>1</sup>:*

Դատավարագետի դատողությունների վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ:

*Նախ՝* չափազանցություն է «lex specialis» կանոնը և նման կոնստանտները ներկայացնել որպես քրեական դատավարության օրինաչափություններ արտահայտող կանոններ: Իրավական արքսիոմաներն ունիվերսալ են և արտահայտում են ընդհանուր իրավական համակարգի օրինաչափությունները: Օրինակ՝ «lex posterior derogat legi priori» (նոր օրենքը վերացնում է հին օրենքը) կամ «ad impossibilia lex non cogit» (օրենքը չի պահանջում անհնարինը) վերաբերում են իրավունքի բոլոր ճյուղերին:

*Երկրորդ՝* տեսական-գաղափարախոսական առումով դատավարագետը ճիշտ է, երբ նշում է, որ նման կանոնները «անսասան են և բացարձակ իմունիտետով պաշտպանված են ցանկացած վոլյունտարիստական գործողություններից»<sup>2</sup>, սակայն նա փոքր-ինչ թերագնահատում է հզոր հոբսյան «լեվիաթանի» (սովերեն պետության) հնարավորությունները: Օրինակ՝ ՀՀ օրենսդիրը, տևական ժամանակ (2002-2021թթ.) խախտելով դիալեկտիկական օրենքների վրա հիմնված «lex posterior» արքսիոմատիկ կանոնը, նախատեսել էր, որ հին և նոր նորմերի հակասության դեպքում գործում է հին նորմը («Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մաս, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018թ. ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը<sup>3</sup>): Իրավական համընդհանուր օրինաչափությանը հակասող, սակայն հայկական «լեվիաթանի»

<sup>1</sup> **Головко Л.В.** Государство и его уголовное судопроизводство: монография. - М.: Изд. дом «Городец», 2022. - С. 17.

<sup>2</sup> **Головко Л.В.** Указ. соч. - С. 19.

<sup>3</sup> Օրենսդիրն այս սխալն ուղղեց միայն 19.04.2021թ. ՀՕ-175-Ն օրենքով:



սահմանաձ օրենսդրական այս նորմը երկար տարիներ գործեց և կիրառվեց, թեպետ հայ գիտնականները Հայաստանի դատարաններին առաջարկում էին *contra legem* իրավունքի զարգացման հիման վրա հակադրվել «Իրավական ակտերի մասին» օրենքի այդ կարգավորմանը և հին ու նոր նորմերի հակասությունը լուծել «*lex posterior*» կանոնի հիման վրա<sup>1</sup>: Այնուամենայնիվ, ՀՀ դատարանները նախապատվություն տվեցին ոչ թե իրավական օրինաչափություններ արտահայտող անսասան կոնստանտին, այլ քաղաքական իշխանության անհասկանալի տրամաբանությամբ ներմուծված կանոնին: ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք գործերով դատավարական նորմերի կոլիզիաներ լուծեց այդ կանոնի հիման վրա:

Երրորդ, Լ.Վ. Գոլովկոն ուղիղ չի պատասխանում այն հարցին, թե իրավակիրառողն ինչպես պետք է գործի, եթե քաղաքական իշխանությունն այնուամենայնիվ որոշի սահմանել այնպիսի կանոններ, որոնք կհակասեն քրեադատավարական օրինաչափություններին: Նկատի ունենալով դատավարագետի այն համեմատությունը՝ ըստ որի բազմապատկման աղյուսակից օբյեկտիվորեն հնարավոր չէ հրաժարվել կամ այն փոխել, ուստի կարելի է ենթադրել, որ նման իրավիճակում բարձր ատյանի դատարանները չպետք է ենթարկվեն օրենսդիր իշխանության սահմանաձ՝ դատավարական օրինաչափություններին հակասող կանոններին, այլ պետք է գործեն *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա:

Քրեական դատավարության իրավունքի՝ Օրենսգրքին հակառակ զարգացման տեսությունը զուտ փիլիսոփայություն չէ, այն

<sup>1</sup> **Ղամբարյան Ա., Կուպելյանց Հ.**, Հին և նոր նորմերի հակասության լուծումը. հետևողական անտրամաբանություն կամ անտրամաբանական հետևողականություն // Դատական իշխանություն: 2018, № 05-06 (227-228), էջ 3-10, **Гамбарян А., Купелянц Г.** Разрешение коллизии между старыми и новыми нормами: последовательная нелогичность или нелогичная последовательность // Судебная власть. - Ер., 2018. № 05-06/227-228. - С. 3-10. (на армянском языке). **Гамбарян А.С.** Коллизионное правило "lex posterior" в армянском праве // Вестник Российского университета дружбы народов. Серия: Юридические науки. 2020. Т. 24. № 4. - С. 1224-1239:

կիրառական դոկտրին է, որի գործունակությունը ցույց տալու համար կներկայացվեն մի քանի գործնական օրինակներ, որտեղ ՀՀ բարձր դատարանները քրեական դատավարության իրավունքը փաստացի զարգացրել են այս դոկտրինի հիման վրա: Նախապես նշենք, որ ՀՀ բարձր դատարաններն այս դոկտրինով ղեկավարվել են ոչ թե բացահայտ, այլ իմպլիցիտ եղանակով, այսինքն՝ դատական ակտերում ուղիղ չեն վկայակոչել Օրենսգրքին հակառակ իրավունքի զարգացման մասին: Նման իրավիճակում *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը նույնականացնելու համար կարևորվում է դրան նմանվող ինստիտուտների՝ օրենքի տարածական մեկնաբանման, ինչպես նաև իրավական անալոգիայի (*extra legem* իրավունքի զարգացման) տարբերակման հարցերը:

### **3. Օրենսգրքին հակառակ քրեական դատավարության իրավունքի զարգացման դոկտրինի գործնական կիրառությունը**

#### *3.1. Ընդհանուր դրույթներ*

**3.1.1. Տարածական մեկնաբանման, օրենքից դուրս (*extra legem*) և օրենքին հակառակ (*contra legem*) իրավունքի զարգացման հարաբերակցության ընդհանուր բնութագիրը:** Երբեմն դժվար է սահմանազատել իրավունքի զարգացումն ընթացել է օրենքին հակառակ (*contra legem*), թե՛ տարածական մեկնաբանման կամ օրենքից դուրս (*extra legem*) իրավունքի զարգացման եղանակներով:

Օրենքի տարածական մեկնաբանման և օրենքի անալոգիայի նմանության մասին շատ է նշվել, ուստի չենք կրկնվի, իսկ օրենքին հակառակ իրավունքի զարգացումը հատկապես նման է իրավունքի անալոգիային, քանի որ երկու դեպքում էլ իրավական հարցը լուծվում է իրավական սկզբունքների հիման վրա: Այս ինստիտուտների տարանջատման համար սկզբունքային է դառնում երկու հարց՝ հարաբերությունն արդյո՞ք օրենսդրորեն կարգավորված է, թե՞ ոչ (1), եթե՞ ոչ, ապա այդ չկարգավորվածությունն օրենսդրական սխալի արդյունքում առաջացած օրենս-

դրական բա՛ց է (2.1.), թե՛ օրենսդրի որակյալ (գիտակցված) լրությունն է (2.2.):

Հայաստանի Հանրապետությունում դատավորները հիմնականում խուսափում են դատական ակտերում ուղիղ նշել, թե իրավունքի զարգացումն ինչ մեթոդաբանությամբ են իրականացրել՝ տարածական մեկնաբանմամբ, թե՛ extra legem իրավունքի զարգացմամբ<sup>1</sup>: Դա կարող է բացատրվել առնվազն երկու հանգամանքով:

*Նախ՝* հանդիպել են պատմական ժամանակաշրջաններ, երբ օրենքի տարածական մեկնաբանումը դիտարկվում էր որպես օրենքի խախտում կամ օրենքի շրջանցման միջոց<sup>2</sup>: Նման մոտեցումը կարող է առայսօր կաշկանդել դատարաններին պաշտոնապես իրենց գործողությունը որակելու որպես տարածական մեկնաբանում:

*Երկրորդ՝* տարածական մեկնաբանման և անալոգիայի եղանակով օրենքի բացի լրացման (extra legem իրավունքի զարգացման) տարբերակման վերաբերյալ դոկտրինում առկա են բազում վիճահարույց մոտեցումներ, որոնք այս ինստիտուտների տարանջատման հարցում դատավորների մոտ ավելի շատ անորոշություն, քան որոշակիություն են մտցնում:

Օրենքի տարածական մեկնաբանումը համարում են որպես օրենքի բացի լրացման ինքնուրույն միջոց<sup>3</sup> կամ էլ օրենքի անալոգիան դիտում են որպես մեկնաբանման տեսակ<sup>4</sup> կամ ներմուծում են այնպիսի արհեստական հասկացություններ,

<sup>1</sup> Ինչպես նշվեց, հայ դատավորները կխուսափեն բացահայտ նշել contra legem իրավունքի զարգացման մասին:

<sup>2</sup> Այս մասին տե՛ս **Регельсбергер Ф.** Общее учение о праве. - М., 1897. - С. 159; **Голунский С.А., Строгович М.С.** Теория государства и права. - М., 1940. - С. 265; **Петров А.А., Тихонравов Е.Ю.** Пробелы и коллизии в праве: учебное пособие. 2-е изд., перераб. и доп. - М.: Проспект, 2019. - С. 26.

<sup>3</sup> **Храмов А.А.** Преодоление судебными органами пробелов уголовно-исполнительного законодательства путем толкования: теория и практика // Вестник Томского государственного университета. Право. 2021. № 42. - С. 124-134.

<sup>4</sup> **Ершов В.В.** Судебное толкование трудовых норм // Советская юстиция. 1993. № 20. - С. 19-21.

որոնք առավել բարդացնում են իրավակիրառողի առջև դրված խնդիրները: Օրինակ՝ քաղաքացիական դատավարության առանձին մասնագետներ ներմուծել են «օրենքի ֆորմալ բաց» հասկացությունը, սակայն նշում են, որ այդ տեսակի բացերը, ըստ էության, իրավունքում բացեր չեն և շատ նման են թվացյալ բացերին<sup>1</sup>: Գործնականում իրավակիրառողների համար արդեն իսկ դժվար է օրենքի բացը (իրական բացը) սահմանազատել թվացյալ բացից (օրենսդրի գիտակցված լռությունից), իսկ ֆորմալ բացերի տեսական կազմության (կոնստրուկցիայի) ներմուծման դեպքում իրավակիրառողի առջև դրվում է *իրական, ֆորմալ* և *թվացյալ* բացերն իրարից սահմանազատելու և դրանք համարժեք իրավական գործիքներով հաղթահարելու (իրական բացը՝ անալոգիայով, ֆորմալ բացը՝ տարածական մեկնաբանմամբ, իսկ թվացյալ բացի (օրենսդրի որակյալ լռության) դեպքում՝ օրենքին հակառակ գործելու) գրեթե անլուծելի խնդիր: Մինչդեռ ցանկացած տեսական կազմություն (կոնստրուկցիա) կոչված է դյուրինացնելու իրավակիրառողների աշխատանքը և ոչ թե բարդացնելու:

*Երրորդ*<sup>2</sup>՝ ցարական Ռուսաստանի դոկտրինում նշվում էր տարածական մեկնաբանման և անալոգիայի «կտրուկ» տարբերության մասին<sup>2</sup>, սակայն նման դատողությունների հեղինակ-

<sup>1</sup> **Боннер А.Т.** Избранные труды: в 7 т. Т. II. Источники гражданского процессуального права. - М.: Проспект, 2017. - С. 28-29; 135, **Туманов Д.А.** Пробелы в гражданском процессуальном праве. - М.: Инфра-М, 2008. - С. 111. Ա.Տ. Բոնները նշում է, որ ֆորմալ բացերի դեպքերում չկա օրենք, որն ուղղակի կապատասխանի այս կամ այն հարցին, սակայն դա չի նշանակում, որ չկա որոշակի իրավական նորմ: Պարզապես իրավակիրառն ստիպված է լինում որոշ չափով «վերստեղծել» այն՝ անդրադառնալով օրենսդրության համադրման և մեկնաբանման տարբեր մեթոդներին:

<sup>2</sup> Ցարական Ռուսաստանի Ժամանակաշրջանի նշանավոր իրավաբան Ե.Վ. Վասկովսկին առաջիններից էր, ով, վերլուծելով եվրոպական գրականությունը, նշում էր, որ ըստ անալոգիայի եզրակացությունը և տարածական մեկնաբանումը միմյանց հետ շփոթում են, և դա բացատրվում է այն հանգամանքով, որ դարերի ընթացքում օրենքի հիմքը (ratio) խառնել են օրենքի ներքին իմաստի հետ (mens, sententia): Նա նշում էր, որ անալոգիան իր բնույթով և իմաստով կտրուկ տարբերվում է տարածական մեկնաբանումից. եթե տարածական մեկնաբանումը, բացահայտելով օրենսդրի իրական միտքը, դրան համապատասխան ընդլայնում է նորմի բառային իմաստը,

ները չեն ներկայացրել հստակ չափանիշներ, որոնք թույլ կտան իրավակիրառողին կողմնորոշվելու, թե որ իրավիճակում պետք է դիմեն տարածական մեկնաբանման կամ օրենքի անալոգիային<sup>1</sup>:

Յարական Ռուսաստանի գրականության մեջ, որպես տարածական մեկնաբանման օրինակ, վերարտադրվում էր գերմանացի մասնագետներից մեկի նշած՝ տղամարդու և կնոջ օրինակը<sup>2</sup> ըստ որի եթե օրենսդիրն օրենքում նշել է միայն տղամարդու մասին, մինչդեռ օրենքի իրական իմաստը (օրենսդրի իրական կամքը) ակնհայտորեն վերաբերում է և՛ տղամարդուն, և՛ կնոջը, ապա «տղամարդ» եզրույթը պետք է տարածական մեկնաբանել<sup>3</sup>: Հարց է ծագում՝ եթե օրենքում խոսվել է միայն տղամարդու մասին, ապա օրենքի տեքստում առկա է բառային անկատարություն, որը պետք է վերացնել տարածական մեկնաբանմամբ, թե՛ կնոջ մասով առկա է օրենքի բաց, որը պետք է լրացնել տղամարդու մասին դրույթն անալոգիայի կարգով կանանց նկատմամբ կիրառելով: Անկախ

ապա անալոգիան ավելի հեռուն է գնում և նորմը կիրառում այնպիսի դեպքերի նկատմամբ, որոնք ներառված չեն օրենսդրի իրական մտքի մեջ: Տե՛ս **Васьковский Е.В.** Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и применении гражданских законов. – Одесса, 1901. – էջ 266, 269: Այլ տեսաբաններ, կրկնելով նրա միտքը, նշում են, որ այս երկու ինստիտուտների նույնացումը ոչ բավարար խորությամբ վերլուծելու հետևանք է: Տե՛ս **Михайловский И.В.** Очерки философии права. Том I. – Томск, 1914. – էջ 430:

<sup>1</sup> Ռուսական ժամանակակից դասագրքերից մեկում հեղինակը, տարածական մեկնաբանման և անալոգիայի տարբերակման նպատակով, նշել է, որ օրենքի անալոգիայի դեպքում որոշակի ակտեր ընդգրկված չեն ոչ միայն օրենքի իմաստի, այլ նաև տառի մեջ, **քանի որ օրենսդիրն ընդհանրապես չի նախատեսել համանման հանգամանքներ**: Տե՛ս **Перевалов В.Д.** Теория государства и права: учебник, 5-е изд., перераб. и доп. – М.: Юрайт, 2018. – էջ 240: Հեղինակի առաջարկած տարբերակման չափանիշը ոչ միայն գործնական առումով գործունակ չէ, այլ նաև հակասում է հենց անալոգիայի էությանը, քանի որ եթե որոշակի ակտերի վերաբերյալ օրենսդիրն ընդհանրապես համանման հանգամանք չի նախատեսել (համանման նորմ չի նախատեսել), ապա ինչպե՞ս պետք է օրենքը կիրառել անալոգիայով, որտեղի՞ց պետք է գտնել համանման նորմը:

<sup>2</sup> **Регельсбергер Ф.** Общее учение о праве. – М., 1897. – С. 158.

<sup>3</sup> **Михайловский И.В.** Очерки философии права. Том I. – Томск, 1914. – С. 424; **Трубецкой Е.Н.** Лекции по энциклопедии права. – М., 1917. – С. 143.

տարածական մեկնաբանման և անալոգիայի «կտրուկ» տարբերությունների մասին ընդհանրական դատողությունից՝ պետք է ընդունել, որ գործնական առումով իրավակիրառողը կանգնած է դժվար լուծելի խնդրի առջև:

Տեսական գրականության մեջ նշված տարածական մեկնաբանման կոնկրետ օրինակների ուսումնասիրության արդյունքում ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ տարածական մեկնաբանման տեսակը ներմուծելու հիմնական նպատակը եղել է կա՛մ օրենքի անալոգիայի ինստիտուտը դրանով փոխարինելը, կա՛մ օրենքն անալոգիայով կիրառելու (որը համարում են նաև դատական իրավաստեղծման եղանակ) փաստացի դեպքերը մեկնաբանման ներքո քողարկելը: Այս ենթադրությունն արժանահավատ կարող է լինել հատկապես այն իրավական համակարգերում, որտեղ պաշտոնապես մերժվում է դատական իրավաստեղծման գաղափարը:

Այս իրավիճակում գայթակղությունը մեծ է իրավունքի տեսաբաններին առաջարկելու հրաժարվել մեկնաբանման այնպիսի տեսակից, ինչպիսին տարածական մեկնաբանումն է, իսկ օրենքներում ընդհանուր հասկացության իմաստը սխալ (նեղ) իմաստ արտահայտող տերմինի գործածության դեպքում փաստել, որ օրենքում առկա է բաց, որը պետք է լրացնեն օրենքի անալոգիայի ձևով: Օրինակ՝ ենթադրենք օրենսդիրը որևէ իրավական հետևանքի վրա հասնելու համար «դատական ակտ» հասկացության փոխարեն սխալմամբ գործածել է «դատավճիռ» հասկացությունը, սակայն օրենքի տեքստի նպատակաբանական կամ համակարգային մեկնաբանման արդյունքում պարզվում է, որ օրենսդիրը ցանկացել է, որ նորմում նշված իրավական հետևանքները վրա հասնեն ոչ միայն դատավճռի, այլ գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) ցանկացած դատական ակտ (օրինակ՝ վարույթը կարճելու մասին որոշում) կայացնելու դեպքում, սակայն «դատական ակտ» սեռային հասկացության փոխարեն սխալմամբ օգտագործել է «դատավճիռ» հասկացությունը: Այս իրավիճակում իրավակիրառողը, նկատի ունենա-

լով, որ եզրափակիչ մյուս դատական ակտերի մասով առկա է օրենսդրական բաց, դատավճռի վերաբերյալ նորմը համանմանության կարգով կիրառում է գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) մյուս դատական ակտի նկատմամբ:

Տարածական մեկնաբանման կողմնակիցները նկարագրված խնդիրը կլուծեն այլ կերպ. նորմի հիպոթեզում (փաստակազմում) նշված «դատավճիռ» հասկացությունը կմեկնաբանեն լայն իմաստով՝ այն կվերաձևակերպեն այնպես, որի արդյունքում նորմի դիսպոզիցիան (իրավական հետևանքը) վրա կհասնի եզրափակիչ այլ դատական ակտերի առկայության դեպքում:

Այնուամենայնիվ, գիտակցում ենք, որ տարածական մեկնաբանումից հրաժարվելու առաջարկը նախ՝ իրատեսական չէր լինի, քանի որ տարածական մեկնաբանումը դարերի խորքից եկող փաստ է, որից հեշտ չէ հրաժարվել, երկրորդ՝ նման կայուն ինստիտուտից հրաժարվելու մասին առաջարկ ներկայացնելու նույնիսկ փորձի համար պահանջվում են համալիր և խոր ուսումնասիրություն, համոզիչ հիմնավորումներ, ինչը դուրս է սույն հետազոտության առարկայից:

Տարածական մեկնաբանման գոյության պայմաններում մեկնաբանման այս տեսակի և օրենքի անալոգիայի տարբերակումը քիչ թե շատ կիրառական նշանակություն կարող է ունենալ այն դեպքերում, երբ օրենքում սեռային հասկացության փոխարեն սխալմամբ օգտագործվել է տեսակային հասկացություն, որը և պետք է մեկնաբանել տարածական: Այլ կերպ ասած՝ տարածական մեկնաբանման օգնությանը կարելի է դիմել, եթե օրենսդիրը նորմը ձևակերպելիս ընդհանուր (սեռային) հասկացության փոխարեն սխալմամբ գործածել է առավել նեղ իմաստ արտահայտող կոնկրետ (տեսակային) հասկացություն: Այս մոտեցումը որոշակի չափով հստակ է, քանի որ գործնականում կարելի է վերլուծել և որոշել հասկացությունների տեսակային կամ սեռային լինելը: Սեռային և տեսակային հասկացություններից դուրս ամեն բան պետք է դիտարկել օրենսդրական բացի տիրույթում և այն հաղթահարել օրենքի անալոգիայով:

Եթե իրավիճակն այնպիսին է, որ իրավակիրառողը գալիս է այն եզրակացության, որ առհասարակ բացակայում է մեկնաբանման օբյեկտը<sup>1</sup>, ապա նա պետք է փաստի, որ օրենսդիրն այդ հարցը չի կարգավորել, որի պարագայում մեկնաբանման ինստիտուտը կիրառելի չէ: Այս դեպքում էլ միմյանց հետ կմրցակցեն իրավունքի զարգացման extra legem (անալոգիայի ձևով) և contra legem եղանակները:

Ինչպես նշվեց, հատկապես իրավունքի անալոգիայի ձևով extra legem և contra legem իրավունքի զարգացման սահմանազատման համար սկզբունքային է այն, թե օրենքով այդ հարցը չկարգավորելն օրենսդրական բա՛ց է, թե՞ օրենսդրի որակյալ (գիտակցված) լուրջություն է: Եթե բացակայում են բավարար հիմքեր եզրակացնելու, որ օրենսդիրն այդ հարցը գիտակցաբար չի կարգավորել (օրենսդրի որակյալ լուրջություն), ապա պետք է ելնել այն կանխավարկածից, որ առկա է օրենսդրական բաց, որը պետք է լրացնել իրավունքի սկզբունքի հիման վրա (իրավունքի անալոգիայի ձևով extra legem իրավունքի զարգացում):

Այս ինստիտուտների տարբերակման ընդհանուր տեսական չափանիշները պետք է ներկայացնել կոնկրետ օրինակներով:

**3.1.2. Իրավունքի զարգացումը մեղադրյալի կողմից կառավարվող իրավաբանական անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն առգրավելու ոլորտում:** 1998թ. ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը տառացի ընթերցելու դեպքում պարզ է դառնում, որ օրենսդիրը սահմանել է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող են պահանջվել (առգրավվել) միայն կասկածյալից և մեղադրյալից: Ընդ որում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/0015/07/13 գործով 13.09.2013թ. որոշման մեջ ուղիղ և կատեգորիկ նշել է, որ քրեական գործով վարույթի ընթացքում կարող են բացահայտվել

<sup>1</sup> Սույն աշխատանքում մեկնաբանման «օբյեկտ» և «առարկա» հասկացությունների փոխհարաբերակցությունը չի քննարկվում:



ոչ թե ցանկացած անձի, այլ բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ (որոշման 17-րդ կետ):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ տարի անց՝ թիվ ԵԿԴ/0223 /07/14 գործով 15.09.2014թ. որոշմամբ անդրադարձել է իրավապահ համակարգին երկար տարիներ հուզող՝ մեղադրյալի կողմից կառավարվող *իրավաբանական անձի* բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները ձեռք բերելու իրավաչափությանը և այս անգամ որոշել է, որ ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում ամրագրված դրույթի այն մեկնաբանությունը, որ դատարանի որոշման հիման վրա կարող են ստացվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային տվյալները, օրենսդրական այս դրույթի բովանդակության անհարկի նեղացում է: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է.

*«ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության վերլուծությունը վկայում է, որ խոսքը ոչ թե սոսկ կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ, այլև նրան մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մասին է, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից»:*

ՀՀ վճռաբեկ դատարանը մեղադրյալի կողմից կառավարվող իրավաբանական անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունն առգրավելու հնարավորության մասին դրույթը ի՞նչ

մեթոդաբանությամբ է դուրս բերել. ՀՀ վճռաբեկ դատարանը «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» օրենսդրական ձևակերպումը տարածակա՞ն է մեկնաբանել, թե՞ ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասն անալոգիայի կարգով կիրառել է իրավաբանական անձանց նկատմամբ (*extra legem* իրավունքի զարգացում), թե՞ պարզապես գործել է ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասին հակառակ (*contra legem* իրավունքի զարգացում): ՀՀ վճռաբեկ դատարանն այս կանոնի դուրսբերման մեթոդաբանության մասին ուղիղ գնահատական չի տվել, ավելին՝ դատական ակտի պատճառաբանական մասում բացակայում է բավարար տեղեկատվություն՝ քիչ թե շատ հիմնավոր եզրակացություններ կատարելու համար, ուստի լուծումները կքննարկենք ստորև նշված երեք տարբերակներով (ենթադրական դատողությունների ձևով):

(a) ՀՀ վճռաբեկ դատարանը *Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը մեկնաբանել է տարածական*: Կարելի է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը քննարկվող կանոնը դուրս է բերել ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության տարածական մեկնաբանման արդյունքում, քանի որ օրենսդիրը նպատակ է հետապնդել սահմանելու ոչ միայն մեղադրյալի (կասկածյալի), այլ նաև նրա կողմից կառավարվող իրավաբանական անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ձեռք բերելու հնարավորություն, ուստի «կասկածյալ կամ մեղադրյալ» հասկացությունները պետք է մեկնաբանել տարածական, և դրանց բովանդակության մեջ ներառել նաև նրա կողմից կառավարվող իրավաբանական անձին:

Այս տարբերակն ընդունելի չէ, քանի որ բացակայում է սեռային և տեսակային հասկացությունների հարաբերակցությունը: «Կասկածյալ կամ մեղադրյալ» օրենսդրական հասկացությունները չէին կարող ներառել իրավաբանական անձին բանկային գաղտնիք կազմող տվյալների առգրավման հարցը,

քանի որ օրենսդրությամբ կասկածյալ կամ մեղադրյալ է համարվել բացառապես ֆիզիկական անձը, իսկ «ֆիզիկական անձ» հասկացության ծավալի մեջ որակապես տարբերվող մեկ այլ սուբյեկտի՝ իրավաբանական անձի հասկացությունը չէր կարող ընդգրկվել:

(b) ՀՀ վճռաբեկ դատարանը Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը կիրառել է անալոգիայի ձևով (*extra legem*): Եթե ելնում ենք այն ենթադրությունից, որ մեղադրյալի կողմից կառավարվող իրավաբանական անձի բանկային գաղտնիքը կազմող տեղեկություններն առգրավելու մասով առկա է օրենքի բաց, ապա կարելի է ենթադրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանն այդ բացը փաստացի լրացրել է՝ իրավաբանական անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն առգրավելու նկատմամբ ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասն անալոգիայի կարգով կիրառելով:

Այս մոտեցման խոցելի կողմն այն է, որ «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի<sup>1</sup> 88-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված էր, որ անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են իրավաբանական անձանց իրավունքները, ազատությունները (...): Այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանը չէր կարող այն լրացնել՝ ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասն անալոգիայի կարգով կիրառելու ճանապարհով, քանի որ դրանով սահմանափակվում էին իրավաբանական անձի իրավունքները:

Իսկ եթե, այնուամենայնիվ, ընդունենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավաբանական անձանց նկատմամբ անալոգիայի կարգով կիրառել է ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը, ապա պետք է նաև փաստենք, որ Բարձր դատարանը հակադրվել է «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասին: Եթե նման հակադրությունը հիմնավորվի որևէ իրավական սկզբունքով, ապա կստացվի, որ

<sup>1</sup> «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը 2018թ. ուժը կորցրել է:

ՀՀ վճռաբեկ դատարանն օրենսդրական բացերի լրացման իրավական կարգավորման ոլորտում («Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի կարգավորման ոլորտում) իրավունքը զարգացրել է contra legem եղանակով:

(c) ՀՀ վճռաբեկ դատարանն իրավունքը զարգացրել է Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի կարգավորման հակառակ (contra legem): Ենթադրենք, որ օրենսդիրը գիտակցաբար չի ցանկացել թույլատրել առգրավելու իրավաբանական անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը (որակյալ լուրջություն): Այս դեպքում պետք է եզրակացնել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, նման դիրքորոշում հայտնելով, հակադրվել է ՀՀ քր. դատ. օր. 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի կարգավորմանը:

Նման հակադրությունը contra legem իրավունքի զարգացում որակելու (իրավաչափ վարքագիծ համարելու) համար պետք է կատարել ևս մեկ վարժություն. պետք է պարզել, թե նման դիրքորոշման հիմքում ի՞նչ իրավական սկզբունքներ են դրված: ՀՀ վճռաբեկ դատարանը 15.09.2014թ. որոշման 25-րդ կետում նշել է.

*«Նման մեկնաբանումը չի համապատասխանում քննարկվող քննչական գործողությունների (բանկային գաղտնիք կազմող տեղեկության առգրավման և խուզարկության՝ Ա.Ղ.) առջև դրված խնդիրներին, էականորեն սահմանափակում է դրանց՝ քրեական գործով վարույթի համար ունեցած դերն ու նշանակությունը: Արդյունքում՝ մասնավոր շահը չարդարացված գերակայում է հանցագործությունների բացահայտման (հանցավորության դեմ պայքարի) հանրային շահի նկատմամբ»:*

ՀՀ վճռաբեկ դատարանը թեև իր պատճառաբանության մեջ ուղիղ չի վկայակոչել դատավարական որևէ սկզբունք, սակայն փաստացի՝ իր դիրքորոշման հիմքում դրել է քրեական

դատավարության հանրայնության սկզբունքը, որը պահանջում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռություն և անթույլատրելի է համարում հանրային շահի նկատմամբ մասնավոր շահի չարդարացված գերակայությունը (որոշման 25 կետ): Այս պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հանրայնության սկզբունքի վրա հիմնված վարքագիծը կարելի է որակել որպես դատավարական իրավունքի *contra legem* զարգացում:

**3.1.3. Իրավունքի զարգացումն անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու ոլորտում:** Անչափահասների գործով դատական քննության արագացված կարգ կիրառելու ուղղակի արգելք 1998թ. ՀՀ քր. դատ. օր-ում սահմանված չէ, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՏԴ/0145/01/11 գործով 08.06.2012թ. որոշմամբ, վերլուծելով անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ ապացուցման ենթակա հանգամանքները, ՀՀ մասնակցության միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերի բովանդակությունը և դրանցից բխող «անչափահասի լավագույն շահի» սկզբունքը, դատավարական իրավունքը զարգացրել է՝ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու արգելք սահմանելով: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է.

*«ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված չէ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու ուղղակի արգելք, սակայն օրենսգիրքը չի նախատեսում անչափահասների գործերով ընդհանուր կարգից փարբերակված՝ դատական քննության արագացված կարգի կիրառման հատուկ կանոններ: Անչափահասների գործերով վարույթի իրականացման հատուկ կանոնները լրացուցիչ երաշխիքներ են սահմանում գործի հանգամանքների բազմակողման, լրիվ և*

օբյեկտիվ քննության, հանցագործության կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտման, անչափահասի կողմից իր դատավարական իրավունքների իրականացման, գործի արդարացի քննության համար, ինչպես նաև անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով, որպես անչափահասների իրավունքների երաշխավորման միջոց, նախատեսվում է ապացուցման առարկայի ընդլայնված շրջանակ: Այսինքն՝ ՀՀ քր. դատ. օր. 107-րդ հոդվածում նախատեսված՝ ապացուցման ենթակա ընդհանուր հանգամանքներին զուգահեռ պետք է քննարկման առարկա դարձվեն նաև անչափահասի անձին վերաբերող տեղեկությունները: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ չպետք է կիրառվի»:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի զարգացումն ի՞նչ եղանակով է իրականացվել: ՀՀ վճռաբեկ դատարանն ուղիղ նշել է, որ օրենսդրությամբ սահմանված չէ անչափահասների գործերով արագացված կարգ կիրառելու արգելք, ուստի այս պարագայում բացակայում է օրենքի տարածական մեկնաբանման օբյեկտը՝ նեղ իմաստ արտահայտող համանման օրենսդրական արգելքը: Ի դեպ, ՌԴ գերագույն դատարանի պլենումը (Պլենումը) ավելի վաղ արտահայտել է նույնպիսի դիրքորոշում, որը ռուսական գրականության մեջ գնահատվել է որպես **իրավական մեկնաբանում**: Ռուս դատավարագետներից մեկը նշել է, որ այս մեկնաբանմամբ Պլենումն անցել է իր լիազորությունների սահմանները (превышение полномочий), քանի որ այն չի բխում Օրենսգրքից, իսկ Պլենումը փաստացի

ստեղծել է նոր նորմ<sup>1</sup>: Եթե տվյալ հեղինակը Պլենումի դիրքորոշումը որակում է որպես օրենքի մեկնաբանում, ապա հարց է ծագում՝ Պլենումը ո՞ր նորմն է մեկնաբանել, չէ՞ որ օրենսդրությամբ, նույնիսկ՝ նեղ իմաստ արտահայտող հասկացությամբ, համանման արգելք նախատեսված չէ: Միգուցե հեղինակը մեկնաբանում ասելով նկատի է ունեցել այն ընդհանուր դրույթների մեկնաբանումը, որոնցից դուրս է բերվել անչափահասների գործերով արագացված կարգ կիրառելու արգելքը: Եթե դա այդպես է, ապա դա ոչ թե համանման արգելքի (գոյություն չունեցող արգելքի) տարածական մեկնաբանում է, այլ դատավարական ընդհանուր նորմերի մեկնաբանում, որից դուրս է բերվել այդ արգելքը: Ուստի սույն օրինակում տարածական մեկնաբանումը բացակայում է:

Այս դեպքում սկզբունքային է դառնում այն հարցը, թե Պլենումը և ՀՀ վճռաբեկ դատարանը գործել են օրենսդրի գիտակցված (որակյալ) լուրջա՞ն, թե՞ օրենսդրական բացի պայմաններում: Եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ օրենսդիրը գիտակցաբար չի նախատեսել անչափահասների գործերով արագացված կարգ կիրառելու արգելք (այսինքն՝ ցանկացել է, որ անչափահասների մեղադրանքով նույնպես հնարավոր լինի կիրառել արագացված կարգ), սակայն Բարձր դատարանները, հակադրվելով օրենսդրի կամքին, իրավունքի ընդհանուր դրույթների (սկզբունքների) վերլուծության (մեկնաբանման) հիման վրա ներմուծել են նման արգելք, ապա պետք է եզրակացնել, որ այդ գործով դատավարական իրավունքի զարգացումն ընթացել է *contra legem* իրավակիրառման ձևով:

Եթե բացակայում են բավարար հիմքեր եզրակացնելու, որ օրենսդիրը գիտակցաբար չի նախատեսել անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու արգելք, ապա պետք է ելնել այն կանխավարկածից, որ առկա է

<sup>1</sup> **Победкин А.В.** Постановления Пленума Верховного суда Российской Федерации как форма толкования и преодоления пробелов уголовно-процессуального права // Государство и право. 2008. № 11. - С. 41.

օրենսդրական բաց, որը լրացվել է «անչափահասի լավագույն շահի» սկզբունքի հիման վրա (իրավունքի անալոգիայի ձևով extra legem իրավունքի զարգացում):

3.2. *Դատավարական իրավունքի contra legem զարգացումը*

**3.2.1. Դատավարական իրավունքի զարգացումը մեղադրողի կողմից վճռաբեկ բողոք բերելու արգելքին հակառակ:** 1998թ. ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն քրեական հետապնդման մարմիններից միայն ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները: Այս նորմը սահմանել է, թե քրեական հետապնդման մարմիններից ովքեր կարող են բողոքարկել ՀՀ վերաքննիչ դատարանի ակտերը: Այդ սպառիչ ցանկում մեղադրողին չնախատեսելով՝ օրենսդիրը զրկել է նրան վճռաբեկ բողոք բերելու իրավունքից:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/0002/11/10 գործով 24.02.2011թ. որոշմամբ դատավարական իրավունքը զարգացրել է ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 1-ին մասին հակառակ: Նշված գործով վճռաբեկ բողոքը բերել էր դատախազը (մեղադրողը), իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն այն ընդունել էր վարույթ: Պաշտպանության կողմը հայտնել էր, որ վճռաբեկ բողոքը պետք է առանց քննության թողնվի, քանի որ դատախազը վճռաբեկ բողոք բերելու իրավունք չունի:

ՀՀ վճռաբեկ դատարանը դատավարական իրավունքը, մրցակցության սկզբունքների հիման վրա, զարգացրել է ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 1-ին մասին հակառակ.

*«ՀՀ քր. դատ. օր-ի 23-րդ հոդվածի կարգավորումից բխում է, որ կողմերի մրցակցային իրավունքների, իրենց դիրքորոշումը պաշտպանելու հնարավորությունների սահմանափակումները կարող են հիմնավորվել բացառապես ողջամիտ*

1(105)2022  
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ  
 ◆ ՍԱՀՄԱՆԱՂՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 55



*իրավական շահերով: Մինչդեռ մրցակցային դատավարությունում մեղադրանքի կողմը ներկայացնող հիմնական սուբյեկտին՝ դատախազին, վճռաբեկ բողոքարկման իրավունքով չօժտելը պաշտպանության կողմի բոլոր սուբյեկտներին այդ իրավունքով օժտելու պայմաններում որևէ ողջամիտ իրավական շահով չի հիմնավորվում: Ուստի ՀՀ քր. դատ. օր.-ի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դատախազին վճռաբեկ բողոքարկման իրավունք չտրամադրելու մասով հակասում է ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածին»<sup>1</sup>:*

ՀՀ վճռաբեկ դատարանը մեղադրողի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելը համարել է իրավաչափ և նշել է, որ բողոքն այդ հիմքով չի կարող առանց քննության թողնվել: Նկատենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանը մեղադրողի կողմից վճռաբեկ բողոք բերելը որակել է ոչ թե որպես «օրինական», այլ որպես «իրավաչափ» վարքագիծ (որոշման տեքստում գործածել է «իրավաչափ» եզրույթը):

ՀՀ օրենսդիրը 10.06.2014թ. ՀՀ քր. դատ. օր. փոփոխություններով փորձել է հաղթահարել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ մեղադրողներին վճռաբեկ բողոք բերելու իրավունք վերապահելու դիրքորոշումը և ՀՀ քր. դատ. օր. 407-րդ հոդվածում ավելացրել է 5-րդ մաս՝ ըստ որի վճռաբեկ բողոքն ստորագրում է բողոք ներկայացնող անձի ներկայացուցիչը, **գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը**: Օրենսդիրը, այս դրույթն ավելացնելով, փորձել է վերահաստատել և հստակեցնել իր կամքն առ այն, որ քրեական հետապնդման մարմիններից վճռաբեկ բողոք կարող է բերել բացառապես ՀՀ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Օրենսդրական այս փոփոխությունից հետո գործնականում

<sup>1</sup> ՀՀ վճռաբեկ դատարանն այս կոլիզիան լուծել է «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ « (...) Նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են ընդհանուր մասի դրույթները» կոլիզիոն կանոնի հիման վրա:

մեղադրողները կրկին զրկվեցին օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքից:

Հարց է ծագում՝ ՀՀ քր. դատ. օր. 407-րդ հոդվածում՝ վճռաբեկ բողոքը ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից *ստորագրելու* մասին (տեխնիկական բովանդակությամբ) դրույթ ավելացնելով օրենսդիրն արդյո՞ք կարող էր հաղթահարել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ մրցակցության սկզբունքից բխող դիրքորոշումը (contra legem իրավունքի զարգացումը): Պատասխանը բացասական է: Եթե ՀՀ վճռաբեկ դատարանը մեղադրողի՝ վճռաբեկ բողոք բերելու մասին կոնկրետ կանոնը դուրս է բերել մրցակցության սկզբունքից, ապա օրենսդիրը կա՛մ չէր կարող բողոքն ստորագրելու մասին նորմ նախատեսելով վերացնել սկզբունքից բխող կանոնը, կա՛մ առնվազն պետք է վերանայեր (փոփոխեր) մրցակցության սկզբունքի տեքստուալ ընկալումները (ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդվածի կարգավորումները):

**3.2.2. Դատավարական իրավունքի զարգացումը ՀՀ քր. դատ. օր. 31-րդ և 35-րդ հոդվածներին հակառակ:** ՀՀ քր. դատ. օր. 31-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե մեղադրյալը (...) օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից: Այս նորմից բխում է, որ եթե քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունը հաղթահարված չէ, ապա քրեական վարույթը պետք է կասեցվի: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԳԴ5/0022/01/10 գործով 20.10.2011թ. որոշմամբ սահմանել է, որ դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին իրավասու մարմնի միջնորդությունը մերժելու դեպքում քրեական հետապնդման մարմինը պարտավոր է կարճել քրեական գործի վարույթը<sup>1</sup>:

<sup>1</sup> ՀՀ վճռաբեկ դատարանը 20.10.2011թ. թիվ ԳԴ5/0022/01/10 գործով նշել է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործով վարույթը կարող է կասեցվել մինչև օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվող անձին պատասխանատվության ենթարկելու համաձայնության ստացման հարցի լուծումը:

Ստացվում է, որ ՀՀ քր. դատ. օր. 31-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է դատավորին քրեական հետապնդման անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելու դեպքում կասեցնել վարույթը, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը, գործելով օրենսդրական այս կարգավորմանը հակառակ, նշել է, որ այդ դեպքում վարույթը ոչ թե պետք է կասեցնել, այլ վարույթը պետք է կարճել (քրեական հետապնդումը դադարեցնել):

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման հիմքում ընկած է **կոշտ** contra legem իրավունքի զարգացման դոկտրինը, քանի որ՝

1) օրենքն իրավասու մարմնից հստակ պահանջում է համապատասխան փաստակազմի դեպքում (անձեռնմխելիության առկայության դեպքում) կատարել A գործողությունը (կասեցնել վարույթը), սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է կատարի B գործողությունը (դադարեցնել քրեական հետապնդումը).

2) այդ դիրքորոշման սուբստանցիան դատական իշխանության անկախության և անձեռնմխելիության հիմնարար սկզբունքներն են (որոշման 47-րդ կետ):

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԳԴ5/0022/01/10 գործով ՀՀ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանել և գործն ուղարկել է ՀՀ առաջին ատյանի դատարան, որն ըստ էության պետք է վարույթը կարճեր: Հարց է ծագում՝ ՀՀ առաջին ատյանի դատարանը ի՞նչ հիմքով պետք է կարճեր վարույթը: Բանն այն է, որ ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածում (քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների ցանկում) դատավորին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդության մերժումը որպես քրեական վարույթը կարճելու հիմք նախատեսված չէ: Տվյալ գործով ՀՀ առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ որոշմամբ հաստատված՝ դատավորի նկատմամբ քրեական հետապնդման անհնարինությունը, 17.05.2012թ. որոշմամբ **արդարացման հիմքով** քրեական գործի վարույթը կարճել է և քրեական հետապնդումը դադարեցրել է: Այդ որոշումը կայացնելիս ՀՀ

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածով՝ առանց հստակեցնելու, թե այդ հոդվածի ո՞ր մասով կամ ո՞ր կետով է ղեկավարվել, քանի որ, ինչպես նշվեց, ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածում քրեական հետապնդումը դադարեցնելու նման հիմք նախատեսված չէ: Ուստի բաց է մնում նաև քրեական հետապնդումը հենց **արդարացման** հիմքով դադարեցնելու դիրքորոշման պոզիտիվ-իրավական հիմնավորումը: Փաստորեն, ՀՀ առաջին ատյանի դատարանը քրեական հետապնդումը դադարեցրել է օրենքով չնախատեսված հիմքով:

Նկատի ունենալով, որ օրենսդիրը միևնույն փաստը (դատավորին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժելը) չէր կարող միաժամանակ համարել և՛ վարույթը կասեցնելու հիմք, և՛ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք, ուստի կարող ենք եզրակացնել, որ օրենսդիրը ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածում գիտակցաբար անձեռնմխելիությունը չհաղթահարելը (դրանից զրկելու միջնորդությունը մերժելը) չի համարել քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք: Այս պայմաններում դատարանի կողմից քրեական հետապնդումն արդարացման հիմքով դադարեցնելու որոշումը հիմնված է դատավարական իրավունքի *մեղմ* contra legem զարգացման դոկտրինի վրա:

Քրեական դատավարության տեսության մեջ քննարկվել է ներկայացվածից փոքր-ինչ տարբերվող մեկ այլ հարց, սակայն ի տարբերություն մեր կողմից տրված լուծմանը՝ ռուս տեսաբաններն այն որակել են ոչ թե contra legem, այլ իրավունքի անալոգիայի հիման վրա extra legem իրավունքի զարգացում: Այսպես՝ Ա.Վ. Սմիրնովը դատական պրակտիկայից բերում է օրինակ, երբ հանցագործության հատուկ սուբյեկտին որպես մեղադրյալ է ներգրավել ոչ պատշաճ պաշտոնատար անձը (ով չուներ տվյալ սուբյեկտին որպես մեղադրյալ ներգրավելու լիազորություն): Խախտումը բացահայտվել է նախնական դատական լուծման երկրորդ փուլում:

Մրցակցության սկզբունքի տեսանկյունից տվյալ գործով արդարադատություն չէր կարող իրականացվել, քանի որ օրենքի խախտմամբ առաջադրված մեղադրանքն իրավաբանորեն ան-

վավեր էր, հետևապես, արդարադատության առարկան բացակայում էր: Մյուս կողմից՝ Օրենսգրքով քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի սպառիչ ցանկում մեղադրանքի անվավերությունը (բացակայությունը)<sup>1</sup> որպես քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք, նախատեսված չէ: Տվյալ գործով դատարանն այնուամենայնիվ որոշել է դադարեցնել քրեական հետապնդումը *մեղադրանքի բացակայության հիմքով*: Ա.Վ. Սմիրնովը դատարանի կողմից քրեական հետապնդման դադարեցումը որակել է որպես իրավունքի անալոգիայի կիրառում, այսինքն՝ դատավորն օրենսդրական բացը լրացրել է մրցակցության սկզբունքի հիման վրա<sup>1</sup>:

Նմանատիպ իրավիճակում որպեսզի որոշենք, թե դատավորը դիմել է *մեղմ contra legem*, թե *extra legem* իրավունքի զարգացման դոկտորինին, կրկին պետք է հասկանալ, թե քրեական հետապնդման դադարեցման օրենսդրական հիմքերում մեղադրանքի անվավերության (բացակայության) հիմք չնախատեսելը օրենսդրական բա՛ց է, թե՞ օրենսդրի որակյալ (գիտակցված) լռությունն է: Եթե բացակայում են բավարար հիմքեր եզրակացնելու, որ օրենսդիրը մեղադրանքի անվավերությունը (բացակայությունը) գիտակցաբար չի նախատեսել քրեական հետապնդումը դադարեցնելու օրենսդրական հիմքերի ցանկում (օրենսդրի որակյալ լռություն), ապա պետք է ելնել այն կանխավարկածից, որ առկա է օրենսդրական բաց, որը լրացվել է մրցակցության սկզբունքի հիման վրա (իրավունքի անալոգիայի ձևով *extra legem* իրավունքի զարգացում):

**3.2.3. Դատավարական իրավունքի զարգացումը դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու միասնական կարգին հակառակ:** 1998թ. ՀՀ քր. դատ. օր. 427-րդ հոդվածը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց

<sup>1</sup> Смирнов А.В., Манукян А.Г. Толкование норм права: учебно-практическое пособие. - М.: Проспект, 2008. - С. 124-126.

հետո, եթե այն բողոքարկված չի եղել: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը կատարման է հանձնվում որոշումը կայացրած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կա՛մ վերաքննիչ, կա՛մ վճռաբեկ ստյանից գործը վերադարձվելուց 3 օր հետո:

Սույն հոդվածների տառացի մեկնաբանումից բխում է, որ in personam բարդացված (մի քանի մեղադրյալների մասնակցությամբ) վարույթներով դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, իսկ եթե մեղադրյալներից մեկն այն բողոքարկել է, իսկ մյուսը՝ ոչ, ապա դատավճիռն օրինական ուժի մեջ չի մտնում: Դատավարական օրենսդրությունը in personam բարդացված վարույթներով մի կողմից՝ պահանջում է, որպեսզի դատավճիռը շարադրվի մեկ միասնական փաստաթղթի ձևով, մյուս կողմից՝ չի նախատեսում դատավճռի՝ չբողոքարկած մեղադրյալի մասով օրինական ուժի մեջ մտնելու հնարավորություն: Այս հարցը հատկապես սուր է դրվում, երբ դատավճիռը չբողոքարկած մեղադրյալի փաստացի և իրավական վիճակը պայմանավորված է դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքով: Օրինակ՝ միևնույն գործով A մեղադրյալի նկատմամբ որպես պատիժ նշանակվում է ազատազրկում, սակայն դատարանը որոշում է ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան, իսկ B մեղադրյալի նկատմամբ նշանակվում է «իրական» ազատազրկում, և նա բողոքարկում է միասնական փաստաթղթի ձևով շարադրված դատավճիռը, որի արդյունքում հետաձգվում է նաև A մեղադրյալի մասով դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Դա նշանակում է, որ A մեղադրյալի նկատմամբ դատավճիռը կատարման չի ուղարկվում, և այդ ողջ ժամանակահատվածում նրա փորձաշրջանի ժամկետն իրավաբանորեն չի հոսում: Այս իրավիճակում, բողոքարկված դատական ակտը թեև վերաբերում է B մեղադրյալին, սակայն այդ ակտով նախատեսված և բողոքարկման առարկայի մեջ չներառված իրավա-

կան հետևանքները (մասնավորապես՝ փորձաշրջանի ժամկետի հոսքը) առկախվում են:

Նման իրավիճակ ծագել է թիվ ՇԴ/0126/01/19 գործով. ՀՀ առաջին ատյանի դատարանը (Դատավորը) մեղադրյալներ Դ. Ա.-ի և Տ. Թ.-ի նկատմամբ նշանակել էր ազատազրկում և որոշել էր այն պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով: Մեղադրողը Դ.Ա.-ի նկատմամբ նշանակված պատժի մասով ներկայացրել էր վերաքննիչ բողոք, իսկ Տ.Թ. վերաբերյալ՝ ոչ: Տ.Թ. մասով դատական ակտի բողոքարկման ժամկետը լրացել էր 19.04.2020թ.-ին, սակայն նկատի ունենալով, որ օրենքը նախատեսում է դատավճռի ուժի մեջ մտնելու միասնական կարգ (այդ թվում՝ մի քանի մեղադրյալների դեպքում), ուստի Տ.Թ. վերաբերյալ դատավճիռը, դատավարական օրենքի կարգավորումների տեսանկյունից, օրինական ուժի մեջ չէր մտել և այն կատարման չէր ուղարկվել, որի հետևանքով Տ.Թ. նկատմամբ նշանակված փորձաշրջանի ժամկետն իրավաբանորեն չէր սկսել հոսել:

Մեկ տարի անց Տ.Թ.-ի փաստաբանը դիմել է դատարան՝ խնդրելով արձակել դատավճիռը կատարման հանձնելու կարգադրություն՝ դատավճռով սահմանված փորձաշրջանի ժամկետը հաշվելով 19.04.2020թ.-ից (...):

Դատավորը 03.05.2021թ. որոշմամբ բավարարել է փաստաբանի դիմումը և նշել է.

*«Դատավճիռը դատապարտյալ Տ.Թ.-ի մասով կատարման չի ուղարկվել, և նրա նկատմամբ սահմանված փորձաշրջանը չի իրականացվել Դատավճռի վերաքննիչ բողոքարկման հետևանքով (քրեական գործի նյութերը սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարան): Նման պայմաններում, հիմք ընդունելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների պահպանման առաջնայնու-*

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1(105)2022

*թյունը՝ դատապարտյալ Տ. Թ.-ի նկատմամբ սահմանված՝ մեկ տարի ժամկետով փորձաշրջանի սկիզբը պետք է հաշվել 2020թ. ապրիլի 19-ից և այն համարել ավարտված»:*

Սույն գործով Դատավորը քրեական դատավարության իրավունքը զարգացրել է՝ սահմանելով in personam բարդացված վարույթով դատավճռի (չբողոքարկված և բողոքարկված մասերով) օրինական ուժի մեջ մտնելու տարբերակված կարգ<sup>1</sup>:

Դատավորը դատավարական իրավունքի զարգացումն ի՞նչ դոկտրինի հիման վրա է իրականացրել՝ գործել է extra legem իրավունքի զարգացման տրամաբանությամբ և լրացրել է օրենսդրական բացը, թե՛ գործել է contra legem իրավունքի զարգացման տրամաբանությամբ և վերացրել է օրենքի կարգավորման աղաղակող անարդարությունը: Դատավորը դատական ակտում չի նշել օրենքի բացի և իրավունքի անալոգիայի մասին, ուստի զուտ դատական ակտի հիման վրա չենք կարող եզրակացնել, որ նա գործել է օրենքից դուրս (extra legem) իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա: Դատավորը դատական ակտում չի վկայակոչել նաև օրենքին հակառակ (contra legem) իրավունքի զարգացման դոկտրինը: Ուստի այս գործով նույնպես դատական ակտում առկա տեղեկատվության վերլուծության հիման վրա պետք է փորձել ինքնուրույն հասկանալ, թե՛ դատավորն իրավունքի զարգացման ո՞ր դոկտրինն է հիմք ընդունել, պետք է պատասխանենք այն հարցին, թե՛ in personam բարդացված վարույթներով դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելու տարբերակված կարգ չսահմանելն օրենսդրական բա՛ց է, թե՛ օրենսդրի որակյալ (գիտակցված) լռություն: Նկատի ունենալով, որ հայ օրենսդիրն արդեն մի քանի սերնդի (1961թ., 1998թ., 2021թ. ընդունված) Օրենսգրքերում հետևողականորեն նախատեսել է դատավճռի օրինական ուժի

<sup>1</sup> Contra legem իրավունքի զարգացումը կարող է համարվել հաստատված փաստ, եթե << վճռարեկ դատարանը կհամաձայնի << առաջին ատյանի դատարանի հետ:



մեջ մտնելու միասնական կարգ՝ անկախ վարույթն in personam բարդացված լինելու հանգամանքի, ապա պետք է ենթադրել, որ նա գործել է գիտակցաբար՝ չի ցանկացել սահմանել in personam բարդացված վարույթներով դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելու տարբերակված կարգ: Այս կանխավարկածով շարժվելու դեպքում պետք է ընդունել, որ թիվ ՇԴ/0126/01/19 գործով դատավորը հակադրվել է դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու միասնական կարգի վերաբերյալ օրենսդրի հետևողական կարգավորմանը: Նման հակադրությունը contra legem իրավունքի զարգացում որակելու (իրավաչափ վարքագիծ համարելու) համար պետք է կատարել ևս մեկ վարժություն. պետք է պարզել, թե նման դիրքորոշման հիմքում ի՞նչ իրավական սկզբունքներ են դրված: Դատական ակտի պատճառաբանական մասում պարզապես նշվել է. «հիմք ընդունելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների պահպանման առաջնայնությունը» ձևակերպումը, սակայն չի հստակեցվել, թե մարդու ո՞ր հիմնարար իրավունքի մասին է խոսքը, հղում չկա նաև իրավական որևէ սկզբունքի վրա:

Այս դեպքում Դատավորը կարծես թե գործել է արդարության ինտուիտիվ զգացողության վրա՝ ըստ որի արդարության իրավական սկզբունքը չի կարող հանդուրժել, որ մի անձի սուբյեկտիվ իրավունք իրականացվի մեկ այլ անձի իրավունքների և օրինական շահերի հաշվին, այդ սկզբունքը չի կարող հանդուրժել, որ մեղադրյալի բողոքարկման իրավունքն իրականացվի մեկ այլ մեղադրյալի օրինական շահերի (դատական ակտին օրինական ուժ հաղորդելով իր կարգավիճակը հստակեցնելու, փորձաշրջանի ժամկետի հնարավորինս շուտ հոսելու) հաշվին: Եթե մեղադրյալը չի բողոքարկում դատական ակտը, ապա նա բնականորեն ակնկալում է, որ դատական ակտը հնարավորինս շուտ կմտնի օրինական ուժի մեջ, և այդ փաստով անհապաղ կհստակեցվի իր կարգավիճակը:

Եթե Դատավորը դատական ակտում նշեր և վերլուծեր այն իրավական սկզբունքները (կամ մարդու *կոնկրետ* իրավունք-

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

ները), որոնց հիման վրա հակադրվել էր օրենսդրական կարգավորմանը, ապա հնարավոր կլիներ նշել, որթիվ ՇԴ/0126/01/19 գործով 03.05.2021թ. որոշումը կայացվելիս հիմք է ընդունել դատավարական իրավունքի զարգացման *contra legem* դրկտրինը:

#### 4. Եզրակացություններ

1. ՀՀ բարձր դատարաններն «իրավունքի շահ»-ը եզրույթը մեկնաբանել են տարբեր կեպ, սակայն այդ մեկնաբանումներից որևէ մեկը չի արտացոլում այդ հասկացության ամբողջ արժեքանական կողմը: 2021թ. ՀՀ քր. դատ. օր. 15-րդ հոդվածի (հանրայնության սկզբունքը) 2-րդ մասում գործածվող «իրավունքի շահը» ձևակերպման արժեքանական բովանդակությունը հնարավոր է ըմբռնել և կիրառել լայն իրավաընկալման պայմաններում:

2. Դատավարագետներ Ա.Ս. Ալեքսանդրովի և Լ.Վ. Գոլովկոյի՝ իրավահասկացողության վերաբերյալ դատողություններն աչքի չեն ընկնում սկզբունքային նորարարությամբ, դրանք տեղավորվում են դասական կամ ինտեգրատիվ իրավաընկալման այս կամ այն տիպաբանության շրջանակներում: Նշված դատավարագետներն իրավաընկալման հարցում շեշտադրում են կա՛մ չափազանց մեծ նշանակություն են տալիս դատավարությանը, կա՛մ իրավական վեճերի լուծման կառուցակարգերին:

Նշված դատավարագետները էքսպլիցիտ (Ա.Ս. Ալեքսանդրով) կամ իմպլիցիտ (Լ.Վ. Գոլովկո) հնարավոր են համարում օրենքին հակառակ (*contra legem*) իրավունքի զարգացումը: Ա.Ս. Ալեքսանդրովը, թեև հստակ նշում է Օրենքին հակառակ իրավունքի զարգացման հնարավորության մասին, սակայն նրա մոտեցումը հատվածային է, քանի որ նա օրենքին հակառակ իրավունքի զարգացումը քննարկում է միայն հնի և նորի փոխհարաբերությունում նորին նախապատվություն տալու տեսանկյունից: Լ.Վ. Գոլովկոն թեև նշում է, որ պետությունը քրեական դատավարություն ստեղծելիս բացարձակ ազատ չէ և կաշկանդված է «բացարձակ, ոչ գաղափարախոսական քրեադատավարական

օրինաչափություններով» կամ իրավական հաստատուններով, սակայն ուղիղ չի պատասխանում այն հարցին, թե իրավակիրառողն ինչպես պետք է գործի, եթե քաղաքական իշխանությունն այնուամենայնիվ որոշի սահմանել այնպիսի կանոններ, որոնք կհակասեն քրեադատավարական օրինաչափություններին: Կարելի է միայն ենթադրել, որ ՌԴ բարձր ատյանի դատարանները չպետք է ենթարկվեն օրենսդիր իշխանության սահմանած՝ դատավարական օրինաչափություններին հակասող կանոններին, այլ պետք է գործեն *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա:

3. ՀՀ դատավորները հիմնականում խուսափում են դատական ակտերում ուղիղ նշել, թե իրավունքի զարգացումն ինչ մեթոդաբանությամբ են իրականացրել՝ տարածակա՞ն մեկնաբանմամբ, թե՞ *extra legem* կամ *contra legem* իրավակիրառման եղանակներով:

Օրենքի տարածական մեկնաբանման, օրենքից դուրս (*extra legem*) և օրենքին հակառակ (*contra legem*) իրավունքի զարգացման ինստիտուտներն իրարից սահմանազատելու համար սկզբունքային է երկու հարց՝ հարաբերությունն արդյո՞ք օրենսդրորեն կարգավորված է, թե՞ ոչ, եթե՞ ոչ, ապա այդ չկարգավորվածությունն օրենսդրական բա՞ց է, թե՞ օրենսդրի որակյալ (գիտակցված) լռություն է:

## РАЗВИТИЕ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО ПРАВА РА ВОПРЕКИ ЗАКОНУ (CONTRA LEGEM)

### Аннотация

В статье рассматриваются теоретические и практические вопросы развития уголовно-процессуального права вопреки (*contra legem*) Уголовно-процессуальному кодексу РА (Кодексу).

В первой части статьи автор представил содержание понятия «правовой интерес», которое используется в Кодексах 1998

и 2021 годов. Аксеологический подход к понятию «правовой интерес» автор считает возможным лишь в условиях широкого правопонимания. Если какое-либо положение Кодекса явно (вопиющим образом) противопоставляется правовым принципам, выражающим сущность уголовно-процессуального права, то единственным адресатом законодательного требования руководствоваться интересом права является независимый в институциональном и функциональном плане (1) суд, который может действовать вопреки конкретному положению Кодекса, но в соответствии с принципами права (2).

Во второй части статьи приводятся представления о праве российских процессуалистов А.С. Александрова и Л.В. Головки, а также рассматривается вопрос о том, считают ли указанные ученые допустимым развитие процессуального права вопреки Кодексу.

В третьей части статьи отмечается, что судьи РА, как правило, избегают прямого упоминания в своих судебных актах, по какой методологии они осуществили развитие права - расширительным толкованием, способами правоприменения *extra legem* или *contra legem*. Автор кратко представляет свои подходы относительно разграничения институтов развития права: расширительного толкования закона, вне закона (*extra legem*) и вопреки закону (*contra legem*).

В статье также обсуждаются различные примеры развития уголовно-процессуального права вопреки Кодексу Кассационным Судом РА.

**Ключевые слова:** правовой интерес, правопонимание, судопроизводство, расширительное толкование закона, развитие права вне закона (*extra legem*), развитие права вопреки закону (*contra legem*).

## DEVELOPMENT OF CRIMINAL PROCEDURE LAW CONTRARY TO THE LAW (CONTRA LEGEM)

### Annotation

The article discusses the theoretical and practical significance of the development of criminal procedure law (contra legem) contrary to the criminal procedure Code (Code) of the Republic of Armenia.

In the first part of the article, the author presented the content of the concept of “law (Jus) interest”, which is used in the Codes of 1998 and 2021. The author considers a value-based approach to the concept of “law (jus) interest” possible only in conditions of a broad law understanding. If any provision of the Code is clearly (blatantly) opposed to law principles expressing the essence of criminal procedure law, then the only addressee of the legislative requirement to be guided by the interest of law is an institutionally and functionally (1) independent court which can act contrary to a specific provision of the Code, but in accordance with the principles of law (2).

The second part of the article presents the views of the law of the Russian processualists A.S. Alexandrov and L.V. Golovko, and examines whether these scientists consider the development of procedural law permissible contrary to the Code.

In the third part of the article it is noted that the judges of the Republic of Armenia, as a rule, avoid direct mention in their judicial acts, according to which methodology they carried out the development of law by an expansive interpretation, by means of extra legem or contra legem law development. The author briefly presents his approaches to the differentiation of law development institutions: spatial interpretation of the law, outside

the legislation (extra legem) and contrary to the legislation (contra legem).

The article also discusses various examples of the development of criminal procedure law contrary to the Code by the Cassation Court of the Republic of Armenia.

**Keywords:** law interest, law understanding, judicial procedure, spatial interpretation of the law, development of law outside the legislation (extra legem), development of law contrary the legislation (contra legem).



**ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Երևանի հյուսիսային համալսարանի  
իրավագիտության և հասարակագիտական  
առարկաների ամբիոնի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ**

**Ամփոփագիր.** 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման իրավունքն ամրագրվեց որպես մարդու առանձին հիմնական իրավունք: Այդ իրավունքի սահմանմամբ առարկայացան անձանց առջև հանրային իշխանության իրավական պատասխանատվությունը և դրա պայմանները:

Սույն հոդվածը նվիրված է վնասի հատուցման իրավունքի նշանակության և հանրային իշխանության իրավական պատասխանատվության բովանդակության սահմանադրական հիմունքների ներկայացմանը: Մասնավորապես, հոդվածում փորձ է արվել վեր հանել վնասի հատուցման պարտականությանը (հանրային իշխանության պատասխանատվությանը) վերաբերելի սահմանադրական պահանջները:

Այս հարցերի ներկայացման լույսի ներքո՝ հետագա շարադրանքում անդրադարձ է կատարվել վարչարարության իրականացմամբ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող իրավակարգավորումների սահմանադրականության որոշ հարցերի:

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ

**Հիմնաբառեր.** վնաս, իրավական պատասխանատվություն, հատուցում, վարչարարություն, իրավական պաշտպանության միջոց:

Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը իրավական, ժողովրդավարական պետություն է, որտեղ մարդը բարձրագույն արժեք է, իսկ հանրային իշխանության պարտականությունն է հարգել և պաշտպանել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնցով այն սահմանափակված է որպես անմիջականորեն գործող իրավունք:

Այսպիսով, հանրային իշխանությունը կաշկանդված է մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով (համաձայն Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այդ իրավունքների և ազատությունների միակ հասցեատերն է), իսկ իր գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը հանդիսանում է դրանց պաշտպանությունը և փաստացի իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Ի հակադրումն սրան՝ հաճախ են դեպքերը, երբ հանրային իշխանությունն ինքն է խախտում մարդու իրավունքները և ազատությունները: Այդ պարագայում արդեն առաջ է գալիս խախտված իրավունքները վերականգնելու հրամայականը, ինչը կրկին պետք է դիտարկել որպես մարդու իրավունքները պաշտպանելու հանրային իշխանության պարտականության մաս:

Ինչպես հայտնի է՝ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության եղանակների տակ հասկացվում են օրենքով ամրագրված հարկադրական բնույթի նյութաիրավական միջոցները, որոնց կիրառմամբ իրականացվում է խախտված իրավունքների վերականգնումը և ներգործությունը իրավախախտի վրա<sup>1</sup>: Վնասի հատուցումը հանդիսանում է խախտված իրավունքի պաշտպանության այդպիսի միջոցներից մեկը:

<sup>1</sup> Гражданское право: Том 1. Учебник. Издание пятое, переработанное и дополненное. / Под ред. **А.П. Сергеева, Ю.К Толстого**. - М.: «ПБОЮЛ Л.В. Рожников», 2000. - С. 295.



Իրավունքի խախտման փաստն արձանագրված լինելու դեպքում դրա վերականգնումը (պաշտպանությունը), մեծ հաշվով, իրականացվում է մինչև խախտումը եղած դրությունը նույնությամբ վերականգնելու կամ անձին խախտման հետևանքներին համարժեք հատուցում տրամադրելու միջոցով: Ասվածից կարող ենք եզրակացնել, որ պատճառված վնասը հատուցելու միջոցով իր իսկ կողմից խախտված իրավունքը վերականգնելը հանդիսանում է մարդու իրավունքները պաշտպանելու հանրային իշխանության սահմանադրական պարտականության իրացման դրսևորում:

Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով<sup>1</sup>:

Նշված նորմից հետևում է, որ հանրային իշխանության իրավական պատասխանատվությունը վրա է հասնում մի կողմից ոչ իրավաչափ գործողությունների կատարման (այդ թվում ապօրինի իրավական ակտերի կայացմամբ), մյուս կողմից իրեն վերապահված հանրային գործառույթները, լիազորությունները կամ իրավական այլ պարտականությունները պատշաճ չկատարելու հետևանքով վնասի պատճառման դեպքում:

Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով «վնաս» եզրույթը, ՍԴՈ-1417 որոշմամբ նշել է, որ **«Սահմանադրության 62-րդ հոդվածի բովանդակության վերլուծությունը վկայում է, որ վնասի հատուցման իրավունքի էության հիմքում «վնաս» եզրույթն ունի ընդհանրական իրավական բովանդակություն,**

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության 2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում, հոդվ. 118:

և Սահմանադրության մակարդակում վնասի նյութական և ոչ նյութական տեսակները տարբերակված չեն»<sup>1</sup>:

Սահմանադրության 62-րդ հոդվածում կիրառվող «վնաս» եզրույթի տակ պետք է հասկանալ ցանկացած տեսակի բացասական հետևանք, որն անձը կրում է հանրային իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ նույն հոդվածում նկարագրված վարքագծի արդյունքում: Սահմանադրական մակարդակում վնասների տարանջատում չի կատարվում. անձին վերագրելի ամեն բնույթի և ցանկացած դրսևորում ունեցող բացասական հետևանքները հանրային իշխանության կողմից պետք է արժանանան համարժեք վերաբերմունքի<sup>2</sup>:

Իր մի շարք որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ պետության պատասխանատվությունը վրա է հասնում, եթե «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով նախատեսված որևէ իրավունքի կամ ազատության խախտումը հետևանք է պետության կողմից նույն կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված՝ անձանց իրավունքները և ազատությունները երաշխավորելու պարտականության չկատարման<sup>3</sup>:

Անդրադառնալով անձանց առջև պետության պատասխանատվության բովանդակության հարցերին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի արձանագրումը պետությանը պարտավորեցնում է դադարեցնել այն և հատուցել դրա հետևանքների դիմաց այնպես, որ **առավելագույն հնարավոր չափով վերականգնվի այն դրությունը, որը կար մինչև իրավունքի խախտումը**: Միաժամանակ պետությունները

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 17-ին կայացված ՍԴՈ-1497 որոշում, կետ 4.4.:

<sup>2</sup> Առավել մանրամասն տե՛ս **Գրիգորյան Ա.**, «Վնաս» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը. եզրութաբանական որոշ հարցեր, Դատական իշխանություն, 2020թ., թիվ 9-10, էջեր 11-25:

<sup>3</sup> *Castello-Roberts v. United Kingdom*, 25 march 1993, para 26, Series A. no. 247-C.

սկզբունքորեն ազատ են իրենց նշված պարտականությունը կատարելու միջոցների ընտրության հարցում<sup>1</sup>:

Հնարավոր չէ հետադարձ կարգով հասնել մի իրավիճակի, երբ սուբյեկտիվ իրավունքի արդեն իսկ տեղի ունեցած խախտման արդյունքում պատճառված բացասական հետևանքները երբևիցե վրա չհասնեն, այդ իսկ պատճառով սուբյեկտիվ իրավունքն արդյունավետորեն կարող է վերականգնվել պատճառված վնասը հատուցելու միջոցով: Վնասների հատուցումը կոչված է ամբողջությամբ կամ հնարավոր առավելագույն չափով հարթելու, վերացնելու ի հայտ եկած բացասական հետևանքները՝ դրանով իսկ փորձելով վերականգնել (այնքանով, որքանով հնարավոր է) մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը:

Սահմանադրական նորմի իմաստով «**հատուցել վնասը**» նշանակում է վերացնել իրավունքի խախտման հետևանքներն այնքանով, որքանով ելնելով խախտման բնույթից՝ դա փաստացի հնարավոր է անել: Վնասի հատուցման նպատակը, ինչպես նշվեց, անձի համար առավելագույնս այն դրությունը վերականգնելն է, որը առկա էր մինչև իրավունքի խախտումը:

Վնասը կարող է հատուցվել **ինչպես բնեղենով, այնպես էլ դրա դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու միջոցով**, այս հարցում հանրային իշխանությունն ունի որոշակի հայեցողություն: Ամեն դեպքում ընտրված միջոցի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելիս, մեր պատկերացմամբ, պետք է գնահատել, թե որքանով են հարթվել իրավախախտման արդյունքում ի հայտ եկած հետևանքները: Ասվածից հետևում է, որ վնասի հատուցումը չի հանգում լոկ դրամական փոխհատուցում վճարելուն, **այլ ենթադրում է ի հայտ եկած հետևանքների փաստացի առավելագույնս հարթում, դրանց վերացում:**

Ինչպես հայտնի է, վնասները տարանջատվում են երկու մեծ խմբի՝ նյութական վնաս և ոչ նյութական վնաս: Նյութական

<sup>1</sup> *Iatridis v. Greece*, no. 31107/96, paras 32-33, ECHR 2000-II.

վնասները հնարավոր է ենթարկել դրամական հաշվարկի, իսկ ոչ նյութականն այդ առումով չափելի չէ:

Պատճառված նյութական վնասը կարող է վերացվել դրա չափին համապատասխանող դրամական (նյութական) հատուցում տրամադրելու կամ այն բնեղենով վերացնելու (տրամադրել նույն տեսակի և որակի գույք, վերանորոգել վնասված գույքը և այլն) արդյունքում, որի դեպքում ի հայտ եկող բացասական հետևանքները հարթվում են:

Անկախ իր էությունից՝ ոչ նյութական վնասը նույնպես մեծ հաշվով հարթվում է արդարացի դրամական (նյութական) փոխհատուցում տրամադրելու միջոցով: Տուժող անձի կողմից նյութական արտահայտությունից զուրկ բացասական հետևանքների կրումն (ոչ նյութական վնաս) այլևս անշրջելի իրողություն է, որը փոխել հնարավոր չէ: Դրանց դիմաց նյութական փոխհատուցման տրամադրումը միտված է իրավիճակը մեղմելուն, տուժողին սփոփելուն և նրան պատճառված բացասական հետևանքները հնարավորինս հարթելուն, որոնք խախտված իրավունքների վերականգնման հարցում անտեսվել ուղղակի չեն կարող<sup>1</sup>:

Այսպիսով, պատճառված վնասի հատուցման մասին սահմանադրական պահանջը վերաբերում է հանրային իշխանության կողմից անձին պատճառված բացասական հետևանքների վերացմանը, և դրանց հնարավորինս հարթումն արդեն անձի իրավունքների լիարժեք պաշտպանության անհրաժեշտ նախապայման է: Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը կարող է համարվել իրացված միայն այն պարագայում, եթե ինչպես տրված իրավական կարգավորումների տեսանկյունից, այնպես էլ՝ գործնականում երաշխավորվում է ի հայտ եկած բոլոր բացասական հետևանքների առավելագույնս վերացումը՝ այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև իրավունքի խախտումն առկա դրությունը:

<sup>1</sup> Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից 2013 թվականի նոյեմբերի 5-ին կայացված ՍԴԴ-1121 որոշումը:

Հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման իրավակարգավորումներ պարունակում են ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը. վերջինս կարգավորում է վնասի հատուցման հարաբերությունները, որոնք առնչվում են վարչարարության ոլորտին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1075-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը, բավարարելով վնասի հատուցման պահանջը, գործի հանգամանքներին համապատասխան, պարտավորեցնում է վնասը պատճառելու համար պատասխանատու անձին վնասը հատուցել բնեղենով (տրամադրել նույն տեսակի և որակի գույք, վերանորոգել վնասված գույքը և այլն) կամ հատուցել պատճառված վնասները (17 հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր)<sup>1</sup>:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

Նույն օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:<sup>2</sup>

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998 թվական, ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

<sup>2</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 18 փետրվարի 2004 թ. ընդունված թիվ ՀՕ-41-Ն օրենք, ՀՀՊՏ 2004.03.31/18(317), հոդվ. 413:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 1(105)2022

Նշված նորմերից հետևում է, որ քաղաքացիական օրենսգիրքը վնասի հատուցման եղանակի ընտրությունը թողնում է դատարանի հայեցողությանը, որն էլ որոշում կայացնելիս պետք է առաջին հերթին ղեկավարվի խախտման հետևանքները հնարավորինս վերացնելու սահմանադրական պահանջը երաշխավորելու հրամայականով:

Վարչարարության ոլորտի պարագայում արդեն վնասի հատուցման եղանակներն են հետևանքների վերացումը և դրամական միջոցներով հատուցումը, ընդ որում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ վերջինս կիրառվում է միայն սուբսիդիար, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ «հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը»<sup>1</sup>:

Հետևանքների վերացումը ուղղված է մինչև խախտումը առկա փաստացի (նախնական) դրության վերականգնմանը կամ դրա անհնարինության դեպքում այդ դրությանը համարժեք այլ դրության վերականգնմանը, այսինքն՝ հետևանքների վերացման եղանակը առավելագույնս երաշխավորում է սահմանադրական պահանջի կյանքի կոչումը:

Դրամական փոխհատուցման տրամադրումը աժանցյալ միջոց է, որը պետք է կիրառվի բացառապես այն պարագայում, երբ փաստական կամ վավեր իրավաբանական որևէ խոչընդոտի առկայությամբ պայմանավորված՝ հետևանքների վերացումը կիրառել հնարավոր չէ:

Օրենսդիրը հետևանքների վերացումը կիրառելի չի համարում, մասնավորապես, եթե «հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը» կամ դա «արդյունավետ չէ»:

<sup>1</sup> Հ. Թովմասյան, Օ. Լոխթերիանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմեր, Ռ. Ռուբել, Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, - Եր.: Բավիդ, 2011, էջ 404:

Գտնում ենք, որ նշված ձևակերպումները խնդրահարույց են և գործնականում կարող են հանգեցնել այնպիսի իրավակիրառման, որի պարագայում մինչև խախտումը եղած նախնական դրությունը վերականգնելու հնարավորության առկայության դեպքում անգամ անձը դրան հասնել չկարողանա: Այս պայմաններում վնասի հատուցման իրավունքին վերագրելի սահմանադրական պահանջները չեն պահպանվի, ինչը կհանգեցնի Սահմանադրության խախտմանը:

Հանրային իշխանության պատասխանատվության բովանդակությունը ենթադրում է մինչև խախտումը եղած նախնական դրության՝ հնարավորինս լրիվ վերականգնում: Խախտված իրավունքի միայն առավելագույն հնարավոր վերականգնման պարագայում է կարելի խոսել անձին տրամադրված պաշտպանության միջոցների արդյունավետ լինելու մասին:

Եթե վարչարարության արդյունքում պատճառված հետևանքների վերացման միջոցով փաստացի հնարավոր է վերականգնել մինչև խախտումն առկա նախնական դրությունը, ապա հանրային իշխանությունը որևէ հիմքով չի կարող դրանից խուսափել: Հետևանքների վերացման համար պատճառված գույքային վնասի չափը գերազանցող ծախսեր կատարելու անհրաժեշտության վկայակոչմամբ հանրային իշխանությանը պատասխանատվությունից մասամբ ազատելը չի համապատասխանում իրավական պատասխանատվության բովանդակության վերաբերյալ սահմանադրական պահանջներին և վերջնարդյունքում հանգեցնում է նրան, որ անձի իրավունքները և ազատությունները գործնականում արդյունավետորեն չեն երաշխավորվում:

Ինչ վերաբերում է «պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա (...) անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով» դրույթին («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 98-րդ հոդված, մաս 1-ին), ապա պետք է նշել, որ կրկին հանրային իշխանությունը որևէ հիմքով չի կարող

ազատվել պատշաճ պատասխանատվություն կրելուց, եթե մինչև իրավունքի խախտումը առկա նախնական դրությունը վերականգնել փաստացի հնարավոր է:

Նշված դրույթը իր սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ մեկնաբանելիս, մեր պատկերացմամբ, ելակետ պետք է վերցնել այն, որ անարդյունավետության վերաբերյալ գնահատականները և վնասի հատուցման եղանակի ընտրությունը չեն հենվում վարչարարության տնտեսվարության սկզբունքի կամ միջոցները առավել խնայողաբար ծախսելու նկատառումների վրա:

Այսպիսով, **սահմանադրական իմաստով «հատուցել վնասը»** նշանակում է փաստացի վերացնել իրավունքի խախտման հետևանքներն այնքանով, որքանով ելնելով խախտման բնույթից՝ դա հնարավոր է անել և ձգտել առավելագույնս վերականգնել մինչև խախտումն առկա նախնական դրությունը և այն իր բնույթով շատ ավելի լայն է, քան դրամական համապատասխան փոխհատուցման տրամադրումը: Հանրային իշխանության այս պարտականությունը չի կարող չեղարկվել՝ պայմանավորված այդ նպատակին հասնելու համար հանրային իշխանության վրա՝ ի հայտ եկած հետևանքները գերազանցող լրացուցիչ բեռ դրվելու հանգամանքով: Ցանկացած հակառակ կարգավորում կհանգեցնի նրան, որ ներպետական մակարդակում անձին տրամադրված պաշտպանության միջոցների արդյունավետությունը երաշխավորված չի լինի:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННЫХ ОСНОВ ВОЗМЕЩЕНИЯ ПРИЧИНЕННОГО ВРЕДА

### Аннотация

В результате конституционных поправок 2015 года право на возмещение вреда, причиненного публичной властью,



закрепилось как отдельное основное право. Внедрение этого права привело к применению правовой ответственности в отношении публичной власти.

Данная статья посвящена раскрытию значения права на возмещение вреда и содержания конституционных основ правовой ответственности публичной власти. В частности, в статье предпринята попытка выделить конституционные требования, связанные с обязательством по возмещению вреда (ответственностью публичной власти).

В ходе раскрытия этих вопросов в статье изложены некоторые вопросы конституционности правовых положений о возмещении вреда, причиненного администрированием.

**Ключевые слова:** вред, правовая ответственность, возмещение, администрирование, средство правовой защиты.

## SOME ISSUES CONCERNING CONSTITUTIONAL FOUNDATIONS OF COMPENSATION FOR DAMAGE CAUSED

### Annotation

As a result of the 2015 constitutional amendments, the right to compensation for damage caused by public authorities became enshrined as a separate fundamental human right. The introduction of that right materialized the legal responsibility of public authorities against individuals and its related conditions. This article aims to present the significance of the right to compensation for damage and the constitutional basis of the legal responsibility of public authorities. In particular, this article attempts to highlight the constitutional requirements relating to the obligation to compensate (liability of public authorities) for damage.

In the light of presentation of these issues, the article reflects on some issues concerning the constitutionality of legal regulations relating to compensation for damage caused by administrative action.

**Keywords:** damage, legal responsibility, redress, administrative action, legal remedy.



**ԳԱՌՆԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

*Հայաստանի պետական  
տնտեսագիտական համալսարանի  
հասարակագիտության  
ամբիոնի դոցենտ, իրավաբանական  
գիտությունների թեկնածու*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ**

**Ամփոփագիր.** Հոդվածում առաջին անգամ փորձ է կատարվել ՀՀ գործող օրենսդրության համակարգում սահմանազատել և իրավագիտական բացահայտումներով լուսաբանել տնտեսական օրենսդրության հասկացության, իրավունքի այլ ճյուղերի հետ փոխհարաբերակցության իրավական հիմնախնդիրները:

Բացահայտված են տնտեսական օրենսդրության գոյության օբյեկտիվ օրինաչափությունները, որոնց աղբյուրը նյութական բարիքների արտադրության և վերարտադրության տնտեսական օրենքներն են, որոնք ժամանակակից աշխարհում իրենց իրավական արտացոլումն են գտնում տնտեսական հարաբերություններ կարգավորող իրավական նորմերում:

Հոդվածում սահմանազատված են արտադրական և ապրանքային հարաբերությունների իրավական կարգավորումները, որոնք գործնականում պետական և տնտեսական մարմինների փոխհարաբերություններում դրսևորվում են «հորիզոնական» և «ուղղահայաց» կառավարման և ղեկավարման սկզբունքներով:

Ապրանքանյութական հարաբերություններում պարզեցված են գույքային և ապրանքային արտադրության, բաշխման և տեղաբաշխման քաղաքացիական և տնտեսական օրենսդրության

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՈՐՎԱՆ 1(105)2022

իրավական կարգավորման ոլորտները և առանձնահատկությունները:

**Հիմնաբառեր.** արտադրատնտեսական, ապրանքային, ապրանքանյութական, ապրանքադրամական, տնտեսական, հորիզոնական և ուղղահայաց կառավարում, տնտեսական օրենսդրություն:

Մարդկային հասարակությունը զարգանում է տնտեսական օրենքների օբյեկտիվ օրինաչափությունների գործողության հիման վրա, քանի որ հասարակության գոյության ու զարգացման հիմքը նյութական արտադրությունն է: Ինչպես բնության օրենքներն են գործում օբյեկտիվորեն, այնպես էլ տնտեսական օրենքներն ունեն օբյեկտիվ բնույթ, այսինքն՝ նրանք առաջանում, գործում և անհետանում են մարդկանց կամքից և գիտակցությունից անկախ: Տնտեսական այս կամ այն օրենքի առաջացումը, գործողությունը և անհետացումը կապված է որևէ տիպի արտադրատեղանակի, նրա արտադրական հարաբերությունների առաջացման, գոյության և վերացման հետ: Ցանկացած արտադրատեղանակի համար բնորոշ են հավելյալ արժեքի և այլ տնտեսական օրենքները: Տնտեսական օրենքներն իրենց հերթին կարող են պայմանավորվել փոփոխություններով՝ դադարեցնելով գործող տնտեսական օրենքները կամ առաջ բերելով նոր տնտեսական օրենքներ:

Տնտեսական օրենքներից բացի, մարդկային հասարակությունում գոյություն ունեն նաև տարաբնույթ տնտեսական հարաբերություններ, որոնք նույնպես օբյեկտիվ բնույթ ունեն: Տնտեսական հարաբերությունները բազմաձև են, դրանք գոյություն ունեն կա՛մ բոլոր հասարակական ֆորմացիաներում (աշխատանք, առաջարկ, պահանջարկ, սպառողական արժեք), կա՛մ էլ առանձին հասարակական ֆորմացիաներում: **Ապրանքը և փողն այնպիսի տնտեսական կատեգորիաներ են**, որոնք գոյություն են ունենցել մի շարք արտադրատեղանակների պայմաններում՝ այնտեղ, որտեղ գոյություն ունի ապրանքային արտա-

դրություն: Ընդ որում, այդպիսի տնտեսական կատեգորիաներն ամեն մի արտադրատեղանակի պայմաններում պայմանականորեն յուրահատուկ բնույթ ունեն և յուրահատուկ ձևով են արտահայտում իրենց դերն ու նշանակությունը: Կան նաև այնպիսի տնտեսական կատեգորիաներ, որոնք առանձնահատուկ բնույթ ունեն և հանդես են գալիս միայն տվյալ արտադրատեղանակի պայմաններում, ինչպես օրինակ, հավելյալ արժեք տնտեսական կատեգորիան, հասարակական ներքին արդյունքը, ազգային եկամուտը և այլն: Տնտեսական կատեգորիաները հանդես են գալիս իրենց իրային ձևով (որպես ապրանք, փող և այլն), հասարակության այս կամ այն ֆորմացիայում արտահայտում են տարբեր տիպի արտադրահարաբերություններ:

Արտադրության և փոխանակության հարաբերությունները գնահատելիս պետք է ելնել նրանից, որ ելակետայինը, որոշիչը հենց ինքը արտադրությունն է, որ առաջնայնությունը պատկանում է նրան: Ժամանակակից աշխարհի տնտեսական ուսմունքը շարունակող տեսաբանների մի մասը հանդես է գալիս որպես փոխանակային հայեցակարգի կողմնակից, որոնք արտադրության և փոխանակության հարաբերությունները դիտելիս ելնում են արտադրության նկատմամբ փոխանակության, շուկայի առաջնությունից<sup>1</sup>:

Կարևորելով հատկապես տնտեսության մեջ արտադրատնտեսական (ապրանքադրամական) հարաբերությունների վերարտադրության գործընթացների խիստ անհրաժեշտությունը՝ ժամանակակից տնտեսապես հզոր պետություններում մակրոէկոնոմիկայի պետական կարգավորման համակարգում առանձնահատուկ նշանակություն է տրվում տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորմանը, որը պայմանավորված է վերարտադրության գործընթացում ապրանքայնության արժեքների ստեղծման կարևորությամբ:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Емельянов А.С., Черногор Н.Н.** Финансово-правовая ответственность. - М.: “Финансы и статистика”, 2004. - էջ 5:

Վերարտադրության գործընթացում նյութական և աշխատանքային ռեսուրսների օգտագործումն ուղեկցվում է փողի միջոցների շարժով, որն իրականացվում է պետական և սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպությունների, ինչպես նաև բնակչության դրամական եկամուտների և ծախսերի կազմավորման, բաշխման և օգտագործման հիման վրա:

Փողի միջոցների ձևավորման, բաշխման և օգտագործման հարաբերությունների համակարգում տնտեսաիրավական հարաբերություններն առաջանում են տնտեսության մեջ ստացված **եկամուտների բաշխման և օգտագործման** հարաբերությունների ձևավորման ընթացքում:

Տնտեսական հարաբերությունների օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է ապրանքափողային հարաբերությունների առկայությամբ և պետության տնտեսական գործառույթների իրականացման անհրաժեշտությամբ:

Հետևաբար, տնտեսական կատեգորիաների, ինչպես նաև ֆինանսների էությունը, դրանց ունեցած դերն ու նշանակությունն այսօր որոշվում է տնտեսաիրավական հարաբերությունների բնույթով և դրան համապատասխան պետության գործառույթների (ֆունկցիաների) իրականացման անհրաժեշտությամբ:

Արտադրահարաբերությունների համակարգում ֆինանսները՝ որպես դրամական հարաբերություններ, բխում են տնտեսության բոլոր ճյուղերում հասարակական ներքին արդյունքի շրջապտույտից: Առանց ֆինանսների ապրանքադրամական հարաբերությունների համակարգում անհնար է պատկերացնել ազգային եկամտի ձևավորումը, դրա բաշխումը և օգտագործումը:

Նկատենք, որ ֆինանսաիրավական հարաբերությունները տնտեսական հարաբերությունների տարատեսակ են, որոնք երևան են գալիս պետության և տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված ֆոնդերի ստեղծման, ֆինանսաիրավական նորմերի միջոցով դրանց բաշխման և օգտա-

գործման ընթացքում և ապահովում են համախառն ներքին արդյունքի, այդ թվում նաև՝ ազգային եկամտի ծրագրված բաշխումը և վերաբաշխումը՝ երկրի ընդլայնված վերարտադրության կարիքները և հասարակության աճող պահանջմունքները բավարարելու համար:

Ֆինանսները պետության արտադրատնտեսական հարաբերությունների համակարգի տարրերից են, որը դրսևորվում է ոչ թե հասարակության նյութական և աշխատանքային ռեսուրսներում, այլ, այսպես կոչված, ֆինանսական ռեսուրսներում, որոնք արտահայտվում են դրամի միջոցով: **Ֆինանսները չի կարելի շփոթել դրամ հասկացության հետ: Ֆինանսները դրամ չեն, բայց արտահայտվում են դրամի միջոցով: Դրանք բաշխում և վերաբաշխում արտահայտող հարաբերություններ են, որոնք դրսևորվում են դրամական ձևով՝ որպես դրամական հարաբերությունների համակարգի բաղկացուցիչ՝ իրենց յուրահատուկ պետական իշխանության գործառնությամբ հատկանիշներով:**

Ֆինանսների անհրաժեշտությունն ու էությունը բնորոշվում են երկու փոխադարձաբար միահյուսված նախադրյալներով՝ ապրանքադրամական հարաբերություններով և պետության խնդիրներով ու գործառնյթներով: Ֆինանսների էությունը երևան է գալիս դրա կատարած կոնկրետ գործառնյթների միջոցով, այն ոլորտում, որտեղ դրանք գործում են այն իրավական մեթոդներով ու ձևերով, որոնցով իրագործվում են այդ գործառնյթները:

Պետության և նրա լիազոր մարմինների ֆինանսական գործունեության հիմնական բովանդակությունը հանգում է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի նյութական ու հոգևոր պահանջների առավել լրիվ բավարարմանը, որը պայմանավորում է քաղաքացիների սոցիալական, կուլտուր-կենցաղային այնպիսի պահանջների ապահովումը, ինչպիսիք են լուսավորության, առողջապահության, գիտության և մշակույթի ոլորտների ծառայությունները:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1(105)2022

Ներկայումս ազգային եկամտի բաշխումը բոլոր պետություններում կատարվում է տնտեսաիրավական ակտերի ակտիվ ներազդեցության միջոցով: Հետևաբար, պետական շինարարության ընթացքում պետության տնտեսական գործունեությունն ուղղված է շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանին բնորոշ ապրանքադրամական հարաբերությունների իրավական կարգավորմանը: Ընդ որում, տնտեսության ղեկավարումն իրականացվում է տնտեսական և սոցիալական զարգացման պետական ծրագրերն ամփոփող պլանային-իրավական ակտերում ամրագրված սկզբունքների հիման վրա՝ ակտիվորեն օգտագործելով պետական և տեղական բյուջեները, հարկերը, բանկային վարկը, ինչպես նաև տնտեսական մյուս լծակներն ու խթանները:

Տնտեսության էության, դրա նշանակության լուսաբանումը վկայում է, որ ապրանքանյութական բարիքների արտադրությունն իրականացվում է պետական կարգավորմամբ: Այդ խնդիրների լուծումը շուկայական տնտեսության անցման փուլում առավել կարևոր է՝ կապված տնտեսության կայունացման անհրաժեշտության, ճգնաժամային երևույթների հաղթահարման, բյուջեի պակասորդի կրճատման, ֆինանսաիրավական իրավախախտումների բացահայտման, կոռուպցիայի կանխարգելման և բնակչության կենսապայմանների բարելավման հետ:

Այսօր, պետության տնտեսական գործունեության իրավական կարգավորման հիմնական խնդիրները պետք է նպատակ հետապնդեն.

1) բացահայտել ֆինանսական, հարկային, բանկային օրենսդրությամբ սահմանված պետության ֆինանսական ռեսուրսներն ու դրանց նպատակային և օրինական ծախսման ուղղությունները.

2) տնտեսության ճյուղային օրենսդրության հիման վրա արդյունավետ կազմակերպել պետական բյուջեի, բանկային վարկի բաշխումը, ապահովել այդ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը.



3) մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման խնդիրներին համապատասխան՝ գործող տնտեսական օրենսդրության արդյունավետ իրացման ճանապարհով ապահովել ապրանքանյութական, ֆինանսական ռեսուրսների և ծախսերի միջև հաշվեկշռվածությունն ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին հատվածների ու համայնքների առումով:

Տնտեսության իրավական կարգավորման խնդիրները ներկայումս իրականացվում են արտադրատնտեսական պետական բյուջեի ծախսերի բաշխման, վերաբաշխման և հսկողության, ինչպես նաև տնտեսական գործունեության իրավախախտումների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպման միջոցով:

Տնտեսության պետական կառավարման գործառույթներն առանձնանում են տնտեսական օրենսդրությամբ սահմանված նյութական արտադրության.

1. բաշխման և վերաբաշխման, ինչպես նաև
2. վերահսկողության և հսկողության գործունեությամբ:

Տնտեսական գործունեության ոլորտում ապրանքանյութական արժեքները շուկայական հարաբերություններում բաշխվում և վերաբաշխվում են դրամի՝ որպես վճարման միջոցի, գործառույթի միջոցով: Ֆինանսահրավական ակտերի միջոցով բաշխվում և ապա վերաբաշխվում է հասարակական ներքին արդյունքը (<ՆԱ) և ազգային եկամուտը: Բաշխման գործընթացը հիմնականում տեղի է ունենում տնտեսության իրական հատվածում՝ արտադրության ոլորտում տնտեսվարող սուբյեկտների, կազմակերպությունների միջոցով, ինչի արդյունքում կազմավորվում են կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերը, որոնք ունեն նպատակային ուղղվածություն:

Պետության ֆինանսատնտեսական գործունեությունը կարգավորող տնտեսական և իրավական մեթոդների գործադրման միջոցով տեղի է ունենում ոչ միայն տնտեսության իրական հատվածում ստեղծված ապրանքանյութական արժեքների բաշխումը, այլ նաև ազգային եկամտի վերաբաշխման գործընթացը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

Վերջինս իրացվում է տնտեսական և իրավական մեթոդով: Պետության տնտեսական գործունեության մեթոդներ կարելի է համարել օրենսդրությամբ սահմանված ֆինանսավորման, բյուջետային վարկավորման և փոխատվության, բանկային վարկավորման մեթոդները:

Առաջին մեթոդի էությունը կայանում է նրանում, որ դրամական միջոցները տրամադրվում են անվերադարձելիության, իսկ երկրորդ և երրորդ մեթոդի դեպքում՝ վերադարձելիության սկզբունքով: Առաջին դեպքում վերաբաշխումը կրում է վերջնական բնույթ, իսկ երկրորդ դեպքում՝ միջանկյալ բնույթ: Դրանով էլ պայմանավորված է ֆինանսական և վարկային համակարգերի միջև եղած էական տարբերությունը:

Ինչ վերաբերում է գործող տնտեսական օրենսդրությամբ ամրագրված վերահսկողական և հսկողական գործառույթների բովանդակությանը, ապա պետք է նկատել, որ վերջինս, հանդես գալով որպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների առօրյա իրավական գործունեության միջոց, ամենաակտիվ ներգործությունն ունի ինչպես այդ մարմինների, այնպես էլ առևտրային և ոչ առևտրային բոլոր կազմակերպությունների և քաղաքացիների ֆինանսատնտեսական գործունեության օրինականության գնահատման հարցում: Վերահսկողությունն իրականացվում է ապրանքադրամական ֆոնդերի ձևավորման ու բաշխման ողջ գործընթացում: Վերահսկողության նպատակն է հետևել արտադրանքի արտադրության և իրացման գործընթացին, այն հաշվով, որպեսզի կատարվեն նախատեսված առաջադրանքները, ինչը հնարավորություն է տալիս ժամանակին և լրիվ ծավալով կազմավորել կենտրոնացված դրամական ֆոնդերը, արդյունավետ վերարտադրության գործընթացը, կատարել ֆինանսական պարտավորությունները պետության, առևտրային բանկերի և այլ տնտեսվարող սուբյեկտների հանդեպ: Դրանով իսկ հնարավորություն է ստեղծվում ապահովել ֆինանսական կայունությունը և խուսափել պետու-

թյան տնտեսական գործունեության ոլորտի իրավախախտումներից:

Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական ծառայությունների վերահսկողության կարևորագույն խնդիրներից մեկն էլ ուղղված է ապրանքային արտադրության ոլորտում օրինականության ամրագրմանը:

Մակրոտնտեսական մակարդակում ապրանքների արտադրությունը, բաշխումը և տեղաշարժերն իրականացվում են պետական ֆինանսական մարմինների կողմից ֆինանսաբյուջետային վերահսկողությամբ: Վերջիններս վերահսկողություն են սահմանում, թե արդյոք ժամանակին և լրիվ ծավալով են տնտեսվարող սուբյեկտները կատարում իրենց պարտավորությունները պետական բյուջեի, բանկերի, արժույթային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերի շուկայի հանդեպ, և արդյոք կատարած վճարումները համապատասխանում են իրենց գործունեության արդյունքներին:

Տնտեսական գործունեության պետական վերահսկողության ձևերից մեկն էլ հանդիսանում է բանկային վերահսկողությունը, որն իրականացնում է Կենտրոնական բանկը: Բանկային վերահսկողությունը կատարվում է կազմակերպություններին վարկային ռեսուրսներ տրամադրելու կապակցությամբ: Այս դեպքում վերահսկողությունն իրականացվում է վարկավորման հիմնական սկզբունքների (ժամկետայնության, վերադարձելիության, վճարելիության) պահպանմանը հետևելու ուղով:

Տնտեսական օրենսդրության իրավական հիմքերի լիարժեք բացահայտումները պայմանավորված են ոչ միայն արտադրատնտեսական հարաբերությունների և տնտեսական օրենքների բովանդակության առանձնահատկություններով, այլև տնտեսության պետական կառավարման կազմակերպման ժամանակակից պահանջների իրավական կարգավորման առանձնահատկություններով, որոնք մասամբ արժանացել են իրավագիտական բացահայտումների:

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ

Իրավագետների ճնշող մեծամասնությունը որպես տնտեսական իրավունքի և օրենսդրության ինքնուրույն գոյության փաստերի լուսաբանումների սկզբնաղբյուր ժամանակին և այսօր համարում են «տնտեսական գործունեությունը», որից ծնունդ են առնում բազմաբնույթ տնտեսական հարաբերություններ, որոնց հենքի վրա հիմնախնդրով մտահոգված իրավագետները տնտեսական իրավունքի ճյուղերը և ապա նրա օրենսդրության ինքնուրույնության բանալին համարում են պետության տնտեսական գործունեությունը որոշակի «հորիզոնական» հարթությամբ և վերջիններիս՝ պետական իշխանության մարմինների «ուղղահայաց» կառավարման կազմակերպումը և ղեկավարումը, որոնք իրենց բովանդակությամբ ունեն «տնտեսակառավարչական» բնույթ<sup>1</sup>:

Հայեցակարգային այս դիրքորոշումը հետագայում իրավունքի ճյուղերի համակարգման հարցում տեղիք տվեց իրավունքի համալիր այնպիսի նոր ճյուղերի ձևավորմանը, ինչպիսիք են «քաղաքացիական-տնտեսական» և «վարչական-տնտեսական» իրավունքի ենթաճյուղերը<sup>2</sup>:

Անդրադառնալով «հորիզոնական» և «ուղղահայաց» տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորումների առանձնահատկություններին՝ պարզեցման նպատակով ընդգծենք, որ տնտեսության կառավարման իրական հատվածում վերջիններս անբաժան են, հանդես են գալիս տնտեսական խնդիրների լուծման միասնության սկզբունքով:

Պետության տնտեսական գործունեության ոլորտում ծագող բոլոր հարաբերությունները չեն բացառում, ընդհակառակը՝ գործնականում ընդգծում են հիշատակված հարաբերությունների սեռային առանձնահատկությունները, որոնք իրավունք են վերապահում տնտեսական հարաբերությունները դասակարգել խմբերի:

<sup>1</sup> Տե՛ս մանրամասն **Толстой Ю.К.** Проблемы совершенствования хозяйственного законодательства. - М., 1978. - էջ 31-50:

<sup>2</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Структура советского права. - М.: «Юридическая литература», 1975. - էջ 198, 206:

Այսպես, **առաջին խումբ** տնտեսական հարաբերությունները ձևավորվում են պետական մարմինների կողմից իրականացվող տնտեսական հարաբերություններում, որոնք ծագում են ապրանքային արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման իրավակարգավորումները սահմանելիս:

Այս հարաբերությունների մասնակիցները մեծամասամբ հանդիսանում են առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև ճյուղային կառավարման պետական մարմինները, որոնք ունենում են արտադրության և արտադրողականության արդյունավետության բարձրացման, աշխատանքի որակական ցուցանիշների բարելավման տնտեսական նոր մեթոդներ: Առանձին դեպքերում վերադաս կառավարման մարմինները պլանավորում են ապրանքանյութական արժեքների մատակարարման, ապրանքների՝ ըստ տարածքների բաշխման և վերաբաշխման, ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացները:

Արտադրատնտեսական հարաբերությունների կարգավորմանն ուղղված տնտեսական մեթոդները հավասարապես կիրառվում են ինչպես արտադրության կազմակերպման հորիզոնական, այնպես էլ տնտեսվարման ուղղահայաց կառավարումը կազմակերպելիս:

Տնտեսական հարաբերությունների **երկրորդ խումբն** առաջանում է տնտեսական գործունեության ղեկավարման գործընթացում: Որպես կանոն արտադրության, արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտների տնտեսական գործունեության ղեկավարումն իրականացվում է կառավարման և տնտեսական մարմինների ենթակայության սկզբունքով: Այլ խոսքով՝ այս տնտեսական հարաբերություններն ունեն «տնտեսակառավարչական» բնույթ:

Գործնականում կառավարման բնույթի տնտեսական հարաբերություններում երբեմն չի պահպանվում «ենթակայության» սկզբունքը, քանի որ տնտեսության կառավարման միջճյուղային և հատուկ իրավասության գործադիր իշխանության մարմինները իրավասու են պարտադիր բնույթի հանձնարարություններ տալ

տնտեսվարող կազմակերպություններին: Գործադիր իշխանության տնտեսության ոլորտի կառավարման և ղեկավարման ժամանակակից մեթոդները հուշում են, որ տնտեսական գործունեության ոլորտին ներհատուկ են խորհրդատվության, համաձայնեցման և մի շարք այլ տնտեսվարման մեթոդներ, որոնք ապահովում են ապրանքանյութական արժեքների արտադրության արդյունավետությունը (դոտացիա, սուբվենցիա, սուբսիդիա, բյուջետային վարկավորում, փոխատվություն և այլն):

Տնտեսական հարաբերությունների **երրորդ խումբը**, որը օրենսդրության մշակման և կողմնֆիկացման կարիք ունի, իրենց բնույթով այն տնտեսական հարաբերություններն են, որոնք սկզբնավորվում են ապրանքային արտադրության գործընթացում և բովանդակում են արտադրող առևտրային կազմակերպության և նրա ստորաբաժանումների իրավական փոխհարաբերությունները: Այս տնտեսական հարաբերություններն ըստ էության ներկազմակերպական-արտադրական բնույթ ունեն:

Հետևաբար, ներտնտեսական-կազմակերպական հարաբերություններին նույնպես ներհատուկ են հորիզոնական և ուղղահայաց կառավարման և ղեկավարման սկզբունքները:

Ներկազմակերպական արտադրատնտեսական հարաբերություններն ունեն իրավակարգավորումների որոշակի իրավական առանձնահատկություններ: Այս օղակում ծագող արտադրատնտեսական, ապրանքային հարաբերությունները որպես կանոն բացառապես կարգավորվում են առևտրային կազմակերպությունների ներքին-անհատական իրավական ակտերով, որոնց նույնպես ներհատուկ են պլանային իրավական ակտերի առանձնահատկությունները<sup>1</sup>:

Արտադրական, ապրանքադրամական վերը հիշատակված հարաբերությունների բովանդակային բաղադրիչները բացահայտելու և տնտեսական օրենսդրության գործնական կիրառման ոլորտները քաղաքացիաիրավական օրենսդրությունից սահմա-

<sup>1</sup> Տե՛ս մանրամասն Хозяйственное право /Под. ред. чл.-корр. АН СССР, профессора Лаптева В.В. - М., 1983. - էջ 12-15:

նազատելու նպատակով ընդգծենք, որ տնտեսական գործունեության հանրային իրավական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց առանցքը քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկայից բխող հարաբերությունների իրավական կարգավորման սահմաններից տարբերվում է որպես բարդ դիալեկտիկական գործընթաց և գույքային հարաբերությունների համակարգ: Դրանից էլ ապրանքանյութական բարիքների արտադրության գործընթացը, առավել ևս շուկայական հարաբերությունները պահանջում են սահմանազատել գույքային իրավունքները, վերջիններիս ձևավորման արտադրատնտեսական, ֆինանսավորման, արտադրության գործընթացների պետական հսկողության և վերահսկողության կազմակերպման և կառավարման միջամտությունը: Վերջինիս իրավական կարգավորումն ուղղված է ոչ թե գույքի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանման փոփոխմանը կամ դադարեցմանը, այլ գույքի արտադրության (ստեղծման) գործընթացների կառավարմանը:

Իրավական կարգավորման ոլորտների փոփոխություններն այսօր կարող են առաջ շարժվել մի շարք գործոններով, որոնցով պայմանավորված է ինչպես իրավունքի այս կամ այն ճյուղին վերաբերող օրենսդրության զարգացումը՝ որպես իրավունքի դրսևորման արտաքին ձև, այնպես էլ՝ իրավունքի և օրենսդրության համապատասխան ճյուղի կամ ենթաճյուղի ձևավորումը:

Տնտեսական գործունեությունը կարգավորող օրենսդրությունում ինքնուրույնության անհրաժեշտությունը բխում է իրավունքի զարգացման և կատարելագործման կարևորությունից: Պետական մարմինների՝ հասարակության արտադրական հարաբերությունների վրա ներգործության միջոցների աճը հանգեցնում է իրավական հարաբերությունների ընդլայնմանը, որն էլ իր հերթին իրավաստեղծ գործունեության ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտություն է առաջացնում: Ձևավորվող

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ

իրավունքի զարգացման ընթացքում երևան են գալիս նոր, բնույթով առանձնահատուկ տնտեսական գործունեությունն արտացոլող հասարակական հարաբերություններ, որոնք իրենց հանրային իրավական կարգավորման նորմերով հանդես են գալիս որպես իրավունքի նոր, ինքնուրույն, համալիր օրինական ենթաճյուղ:

Վերոհիշյալ միտքն ամբողջությամբ վերաբերում է տնտեսական գործունեության ոլորտում քաղաքացիաիրավական կարգավորումից զատ հանրային իրավունքի ճյուղերով կարգավորվող այն գույքային հարաբերություններին, որոնք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասով սահմանված վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային հարաբերություններ են: **Այլ խոսքով՝ վերջիններիս նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում:**

Ներկայումս տնտեսական գործունեության ոլորտում ծագող հասարակական հարաբերությունների ռեալ գոյություն ունեցող համակցությունը առևտրատնտեսական համագործակցության բնագավառում այնքան է ընդլայնվել և բարդացել, որ ծայրահեղ անհրաժեշտություն է առաջացել տնտեսական գործունեության հանրային իրավական կարգավորումը ճանաչել որպես իրավունքի ինքնուրույն ենթաճյուղ: Սա է պատճառը, որ տնտեսական գործունեության հանրային իրավական կարգավորման հիմնախնդիրն իրավունքի տեսության մեջ առևտրատնտեսական գործունեության պրակտիկայից բխող անհրաժեշտություն է:

Իրավագիտության ոլորտում խնդիրն այն է, որ պետք է գույքի, ապրանքի, առևտրատնտեսական գործունեության ոլորտում ծավալվող հարաբերությունների հետազոտության միջոցով բացահայտել հիշատակված իրավունքը և դրա օրենսդրությունը՝ որպես ենթաճյուղի առարկայի հասկացություն և այն սահմանազատել քաղաքացիական և մասնավոր իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերություններից:



Ներկայումս, հասարակության զարգացման գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ, գիտության նվաճումները ներդնելով նյութական բարիքների արտադրության գործընթացում՝ նպաստում են ապրանքային արտադրության քանակական և որակական փոփոխությունների, արտադրողականության աճի բարձրացմանը: Ձևավորվում են շուկայական տնտեսության նոր, ապրանքային հարաբերություններ, որոնց մասնակիցների գույքային իրավունքների պաշտպանությունը հանգեցնում է քաղաքացիական միասնական իրավունքի ճյուղի համակարգում նոր՝ «ձեռնարկատիրական», «գործարարական», «առևտրային», «բիզնես», ինչպես նաև «տնտեսական» իրավունքի իրավական ինստիտուտների ի հայտ գալուն:

Անդրադառնալով քաղաքացիական իրավունքի համակարգից գույքային իրավունքների հանրային իրավական սահմանազատմանը՝ որպես համալիր ենթաճյուղի և տնտեսական գործունեության ոլորտում պետական կարգավորում պահանջող արտադրատնտեսական հարաբերությունների ինքնուրույն զանգված, վկայակոչենք տնտեսական օրենսդրության նոր զարգացումները, որոնք բարեփոխումների ճանապարհով ամրագրում են տնտեսության պետական կարգավորման նոր ձևերի և մեթոդների արմատավորման անհրաժեշտությունը:

Այսօր, ավելի քան երբևէ, ակտիվ աշխատանք է տարվում օրենսդրության համակարգման ուղղությամբ: Այս կապակցությամբ կարևոր նշանակություն է ձեռք բերում իրավունքի համակարգի հետ կապված այնպիսի հիմնախնդիրների ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ իրավունքի և օրենսդրության համակարգի միասնականությունը, իրավունքի նոր ճյուղերի և ենթաճյուղերի սահմանազատումը, ինչպես նաև իրավունքի ներքին ճյուղային կառուցվածքի վերադասավորումներին վերաբերող հարցերը:

«Տնտեսական օրենսդրություն» հասկացությունը՝ որպես իրավական կատեգորիա, ինչպես հիշատակվեց, բոլոր ժամանակներում տեսական վեճերի առարկա է: Այսօր էլ իրավա-

գիտության մեջ տնտեսական օրենսդրության կապակցությամբ կարծիքները տարբեր են:

Տնտեսական օրենսդրությունը գործող իրավական օրենսդրության մի մասն է, որին բնորոշ են ընդհանուր օրենսդրության բոլոր սկզբունքները:

Ընդհանրություններով հանդերձ, այն ունի մի շարք առանձնահատկություններ՝ պայմանավորված հասարակական կյանքի տարբեր ոլորտների տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններով: Դրանց ծագման հիմքը արտադրատնտեսական հարաբերությունները, նյութական բարիքների արտադրությունը և բաշխումն են, որոնց իրավական կարգավորումը կազմակերպվում է կենտրոնացված-ուղղահայաց կամ հորիզոնական ներգործության մեթոդներով: Դրանք նպաստում են արտադրության կենտրոնացմանը, պետական միասնական հսկողության իրականացմանը ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր անհատական գործունեության նկատմամբ:

«Տնտեսական օրենսդրություն» հասկացության և դրա բովանդակության ճիշտ ըմբռնմանը մեծապես օգնում է ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրքը», որի 2-րդ հոդվածում, որպես արտադրատնտեսական գործունեության բացատրություն բերված է «Ձեռնարկատիրական գործունեություն» հասկացությունը, ըստ որի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Իրավաբանական գրականության մեջ, հիմք ընդունելով «Ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության հիմնական հատկանիշները, այսօր փորձեր են կատարվում լուսաբանել «Տնտեսական գործունեություն» հասկացությունը:

Տնտեսական գործունեությունը պետք է համարել օրենքով չարգելված ցանկացած գործունեություն, որն ուղղված է եկամտի (շահույթի) ստացմանը՝ անկախ այդ գործունեության արդյունքում օգուտների ստացումից կամ դրանց բացակայությունից:

Հիշատակված ապրանքադրամական արժեքները ձևավորվում, երևան են գալիս ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց տնտեսական գործունեության շնորհիվ: Իրավական հիմքը օրենքները և այլ տնտեսական պայմանագրերն են, որոնք գույքային իրավահարաբերությունների մասնակիցներին ուղղորդում են ընդհանուր նպատակային տնտեսական և սոցիալական նշանակության խնդիրների լուծման:

Քաղաքացիական շրջանառության ոլորտում հասարակական ամբողջական արդյունքը կարող է արտադրվել և բաշխվել ինչպես իշխանակազմակերպական, այնպես էլ կամային-պայմանագրային հարաբերությունների միջոցով, որոնք կարող են դրսևորվել առևտրային կազմակերպությունների փոխադարձ հարաբերություններում՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, հանձնարարությունների կատարման և այլ եղանակներով: Դրանց մի մասը կարգավորվում է տնտեսական գործունեության հանրային իրավական կարգավորման ենթաճյուղի օրենսդրությամբ ամփոփված իրավական նորմերի միջոցով:

Պետության տնտեսական գործունեության ոլորտում ծագող հարաբերությունների առանձնահատկությունների բացահայտումների և վերջիններիս այլ իրավահարաբերություններից սահմանազատելու իրավական բավարար հիմքերը հնարավորություն են ընձեռում վստահորեն խոսել տնտեսական օրենսդրության և դրա ժամանակակից իրավական հայեցակարգերի համապատասխան կողիֆիկացման մասին, որը իրավական տեխնիկայի և մշակույթի գերակա պահանջներից մեկն է:

Անդրադառնալով տնտեսական օրենսդրության իրավագիտական բացահայտումներին՝ փաստենք, որ վերը հիշատակված արտադրատնտեսական հարաբերությունների բացահայտումները բերում են մի համոզման, որ տնտեսական իրավունքի համակարգը օբյեկտիվ երևույթ է, որը ձևավորվում է հասարակական կյանքի ընդհանուր օրինաչափությունների հիմքի վրա: Լինելով իրական գոյություն ունեցող հասա-

րակական հարաբերությունների համակարգի արտացոլումը՝ տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավունքի ճյուղի նորմը կառուցվում է ոչ թե մարդկանց կամայական հայեցողությամբ, այլ օբյեկտիվ իրականության հիման վրա, որի աղբյուրը հասարակության ապահովման նյութական բարիքների արտադրանքի բաշխումը և վերաբաշխումն է: Լայն առումով տնտեսական իրավունքի նորմը իրավաստեղծ մարմինների սուբյեկտիվ գիտակցական կամային գործունեության արդյունքն է: Նեղ իմաստով տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերը դառնում են իրավունքի համակարգի բնական տարրեր միայն հասարակական կյանքի նյութական պահանջմունքների օբյեկտիվ արտացոլման դեպքում՝ հասարակական հարաբերություններում սահմանելով նյութական բարիքների արտադրական ու տնտեսական, ինչպես նաև ապրանքադրամական արտադրության բովանդակությունը: Տնտեսական հարաբերություններ կարգավորող իրավունքի ճյուղի նորմերը, տնտեսական օրենքների (արժեքի օրենք) օբյեկտիվ պահանջներին համահունչ, իրավաստեղծ մարմնի կամքից անկախ միավորվում են նորմերի հարաբերականության ինքնուրույն խմբում, որոնք կարգավորում են արտադրատնտեսական, ապրանքային հարաբերությունները: Հետևաբար, իրավական նորմը անհատական հայեցողությամբ անթույլատրելի է վերագրել իրավունքի այս կամ այն ճյուղին: Եթե նորմը հրապարակվել է տնտեսական հասարակական հարաբերություններ կարգավորելու համար, ապա այն օբյեկտիվորեն մտնում է այդ իրավունքի ճյուղի մեջ, ուղղված է արտադրական, ապրանքադրամական հարաբերությունների կարգավորմանը:

Տնտեսական օրենսդրության համակարգը գործնական կյանքում կառուցվում է այլ սկզբունքով: Դրա ձևավորման համար զգալի տեղ է գրավում գիտատեխնիկական առաջընթացի սուբյեկտիվ գործոնը, որով պայմանավորված են ժամանակակից արտադրական հարաբերությունները, որոնք մարդկային հաղոր-

դակցության փոփոխվող տարատեսակ ձևերի համակցություն են:

Հասարակական կեցության ֆունկցիոնալ հիմքը իրենց բովանդակությամբ տարբեր նյութական և հոգևոր հասարակական հարաբերությունների փոխադարձ կապն ու փոխայամանավորվածությունն է: Հետևաբար, անհնար է հայտնաբերել հասարակական հարաբերությունների այնպիսի մեկուսացված ոլորտ, որտեղ գերիշխի իրավունքի մեկ ճյուղի կողմից կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների միայն մեկ տեսակ: Այսօր գործնական անհրաժեշտություն է առաջանում իրավական կարգավորման մեջ առանձնացնել հասարակական հարաբերությունների այն զանգվածը, որոնք ծագում են տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում:

Պետական իշխանության մարմիններն իրենց իրավաստեղծ գործունեության մեջ պետք է հաշվի առնեն հասարակական կյանքի օբյեկտիվ պահանջները: Նրանք ի զորու չեն փոփոխելու հասարակական հարաբերությունների որոշակի ճյուղի տեսակ կարգավորող իրավական նորմերի բովանդակությունը, ինչը վկայում է տնտեսական իրավունքի նորմերի օբյեկտիվ առկայությունը:

Ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ տնտեսական օրենսդրության համակարգն իրավունքի աղբյուրների ամբողջություն է, որոնք իրավական նորմերի արտահայտման ձև են հանդիսանում: Այդ պատճառով օրենսդրությունից դուրս իրավունք գոյություն չունի: Նրանք հարաբերակցվում են որպես ձև և բովանդակություն. կողիֆիկացված օրենսդրության մեջ իրավական նորմերը և նրանց տարբեր կառուցվածքային կազմավորումները ձեռք են բերում արտաքին դրսևորման հնարավորություն: Այս իմաստով տնտեսական իրավունքի համակարգը և օրենսդրության համակարգը ամբողջությամբ համընկնում են:

◆ 1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՐԱՆ

Իրավունքի ճյուղերի և համանուն օրենսդրության գիտական բացահայտումները հուշում են, որ հատկապես տնտեսական օրենսդրության ոլորտում միևնույն նորմատիվ իրավական ակտը կարող է կարգավորել իրենց բովանդակությամբ տարբեր տեսակի հասարակական հարաբերություններ՝ ներառելով իրավունքի մի քանի ճյուղերի նորմեր: Այդ պատճառով այն չի կարող ունենալ իրավական կարգավորման միասնական առարկա և մեթոդ: Դա բացատրվում է նրանով, որ իրական կյանքում պահանջ է առաջանում նորմատիվ-իրավական մեկ ակտի կամ խմբի միջոցով կարգավորել ոչ թե հասարակական հարաբերությունների մեկ տեսակ, այլ որոշակի ոլորտում գործող մի ամբողջ խումբ բազմատեսակ հարաբերություններ, որոնք ծագում են արտադրական հարաբերությունների գործընթացում և ուղղված են նյութական բարիքների արտադրությանը:

Նյութական արտադրության ոլորտներում ծագող բազմազան փոխկապակցված հարաբերությունները, նրանց արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը պայմանավորում են օրենսդրության համակարգում կառուցվածքային այնպիսի տարրերի ստեղծումը, որոնք չեն համընկնում իրավունքի համակարգի հետ: Այդ պատճառով իրավունքի ճյուղը ոչ միշտ է համապատասխանում օրենսդրության ճյուղին: Խոսքը վերաբերում է տնտեսական իրավունքի ճյուղի և տնտեսական օրենսդրության փոխհարաբերությանը, որն առայսօր իրավագիտության ոլորտում անուշադրության մատնված հիմնախնդիրներից մեկն է, որի ժամանակակից հայեցակարգերի մշակումը մեծ ավանդ կհանդիսանա իրավագիտության մշակույթի համակարգում: Վերլուծությունների հիման վրա տնտեսական օրենսդրությունն ըստ գործողության տարածքի և ժամանակի կարելի է դասակարգել.

ա) համապետական ճյուղային օրենսդրության, որի նորմերը կարգավորում են միայն տնտեսական իրավունքի ճյուղի առարկա հանդիսացող որոշակի տեսակի հասարակական հարաբերություններ (օրինակ բոլոր սոցիալ-տնտեսական

զարգացման պլանային իրավական ակտերը): Այստեղ օրենսդրության ճյուղը համընկնում է իրավունքի ճյուղին (օրինակ՝ հարկաբյուջետային, քաղաքացիական օրենսդրություն)։

բ) ներճյուղային տնտեսական օրենսդրության, որը սահմանում է տնտեսական գործունեության առանձին ոլորտների տնտեսաիրավական կարգավորումները (օրինակ՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսության կազմակերպման և ֆինանսական կարգը)։

գ) համալիր տնտեսական օրենսդրության, որը ներառում է իրավունքի մի քանի ճյուղեր, որոնք կարգավորում են արտադրական և ապրանքադրամական բովանդակությամբ տարբեր հասարակական հարաբերություններ, որոնք կազմում են հասարակական կյանքի համեմատաբար ինքնուրույն ոլորտ (բյուջետային, բանկային, մաքսային, արժութային)։ Պարզաբանման նպատակով ընդգծենք, որ տնտեսական համալիր օրենսդրության կարգավորման առարկան, ի տարբերություն իրավունքի ճյուղերի, ոչ թե հասարակական հարաբերությունների տեսակ է, այլ ոլորտ, որն ընդգրկում է նրանց տարբեր տեսակները։

Տնտեսական օրենսդրությունը՝ որպես օրենսդրության համալիր ճյուղ, իր մեջ ընդգրկում է պետական, վարչական, ֆինանսական, հողային, քրեական, քաղաքացիական և իրավունքի այլ ճյուղեր, որոնք կարգավորում են տնտեսական շինարարության (տնտեսական, արտադրական, ապրանքադրամական) յուրահատուկ կենսագործունեությունը։ Այն կոչված է ապահովելու և կարգավորելու պետության տնտեսական գործունեության ոլորտում արտադրության կազմակերպման, նյութական բարիքների ստեղծման գործընթացում ձևավորվող ապրանքադրամական, ֆինանսական հարաբերությունները։

Տնտեսական օրենսդրությունը պետությունում գործող միասնական օրենսդրության մի մասն է։ Այն արտացոլում է հասարակության տնտեսական և պետական կարգի հիմնական գծերը, ամրապնդում է տվյալ պետության կողմից ընդունված նյութական բարիքների ստեղծման ուսմունքի հիմնական դրույթները։

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏՄՈՒՄ 1(105)2022

Տնտեսական օրենսդրության իրավաբանական հիմքը պետության սահմանադրությունն է, որը հաստատում է նրա տնտեսական կարգը, երաշխավորում սեփականության ձևերը, շրջակա միջավայրի պահպանությունը, սահմանում է շուկայական տնտեսվարումը, մասնավոր սեփականությունը, ինչպես նաև ազատ և մրցակցային տնտեսական գործունեությունը (Սահմանադրության 10, 11, 12-րդ հոդվածներ):

Սահմանադրության հիման վրա ընդունված տնտեսական օրենսդրության ակտերը կարգավորում են տնտեսության ոլորտում ծավալվող արտադրական, արդյունաբերության, ինչպես նաև գյուղատնտեսության արտադրության կազմակերպման և կառավարման ոլորտի ամենատարաբնույթ հարաբերությունները:

Իրավական բացահայտումների արդյունքներով դժվար չէ նկատել, որ տնտեսական օրենսդրությունն այնպիսի հանրային իրավական ակտերի համակցություն է, որոնք սահմանում և կարգավորում են արտադրատնտեսական հարաբերություններից բխող ապրանքանյութական բարիքների արտադրությունը, բաշխումը, վերաբաշխումը, կուտակման և օգտագործման ընթացքում ծագող հարաբերությունները: Այս ամենը դրսևորվում է գույքի կամ նյութական այլ արժեքների ստեղծման գործընթացում և, ըստ անհրաժեշտության, շուկայական հարաբերություններում իրենց վերջնական տեսքով կարող են վերածվել դրամական միջոցների:

## НАУЧНО-ПРАВОВЫЕ ВЫЯВЛЕНИЯ ХОЗЯЙСТВЕННОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА

### Аннотация

В статье впервые сделана попытка выделить хозяйственное законодательство в системе действующего законодательства Республики Армения, на основании научно-правовых выявлений осветить правовые проблемы понятия



хозяйственного законодательства, его соотношения с другими отраслями права.

Автором раскрыты объективные закономерности существования хозяйственного законодательства, источником которого являются экономические законы производства и воспроизводства материальных благ, которые в современном мире находят свое правовое отражение в регулирующих экономические отношения правовых нормах.

Автор разграничил правовые регулирования производственных и товарных отношений, которые на практике в отношениях между органами государственного и хозяйственного управления проявляются по принципам “горизонтального” и “вертикального” управления и руководства.

В товарных отношениях раскрыты особенности сферы правового регулирования гражданским и хозяйственным законодательством распределения и перераспределения имущественного и товарного производства.

**Ключевые слова:** производственно-экономический, товарный, товарно-материальный, товарно-денежный, экономический, горизонтальное и вертикальное управление, хозяйственное законодательство.

## LEGAL AND SCIENTIFIC STUDIES OF ECONOMIC LEGISLATION

### Annotation

This Article is the first to attempt to delineate the concept of economic legislation in the system of current legislation of the Republic of Armenia, as well as to highlight it with the legal standpoint and the main issues of its correlation with other branches of law.

The author reveals the objective regularities of the existence of economic legislation based on the economic laws of production

and reproduction of material goods, which, in the contemporary world, find their legal reflection in the legal norms governing economic relations.

The Article differentiates the legal regulations of production and commodity relations, and in relations between State and economic management bodies, the latter are practically manifested through the principles of “horizontal” and “vertical” management.

The peculiarities of commodity production, distribution and redistribution in commodity-material relations, as well as the scope of legal regulation of civil and economic legislation are clarified in the Article.

**Keywords:** production-economic, commodity, commodity-material, commodity-money, economic, horizontal and vertical management, economic legislation.

**ԼՈՒՍԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ**

*Իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՂԹԱՅՈՒՄ**

**Ամփոփագիր.** Կարևորելով այն հանգամանքը, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը տարբերվում է մարդու դասական հիմնարար իրավունքներից՝ սույն հոդվածում ուսումնասիրության առարկա է դառնում այն տեսությունը, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը ՀՀ իրավական համակարգում առաջին անգամ ձևավորվում է որպես մարդու իրավունքների և սահմանադրական իրավունքների sui generis հիբրիդ՝ հիմք ընդունելով հետևյալ կառուցակարգերը՝ ա) ի տարբերություն մարդու մյուս իրավունքների, որոնց պաշտպանության կանխավարկածն այն է, որ պետությունը, որպես կանոն, չպետք է սահմանափակի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ապա անձնական տվյալները պետք է և ցանկալի է, որ ենթարկվեն մշակման, այդ թվում՝ պետության կողմից, բ) անձնական տվյալների պաշտպանության իրավունքը պաշտպանում է երկու բոլորովին տարբեր արժեքներ, այն է՝ 1) իրենց անձնական տվյալները պաշտպանելու մարդկանց իրավունքը 2) անձնական տվյալները մշակողների՝ ՀՀ տարածքում անձնական տվյալներ մշակելու իրավունքը, հետևաբար, անձնական տվյալների պաշտպանության իրավունքն արդեն իսկ մարմնավորում է տվյալների սուբյեկտների և տվյալների մշակողների իրավունքների և շահերի միջև փոխզիջումը:

**Հիմնաբառեր.** անձնական տվյալներ, անձնական տվյալների պաշտպանության իրավունք, հիմնարար իրավունք, սահմանադրական իրավունք:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(105)2022

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն ավելի ամրապնդեցին մարդու և պետության հարաբերակցությունը՝ լուծելով «մարդակենտրոն» սահմանադրության ստեղծման հիմնախնդիրները: Ոչ թե մարդն է ստեղծված պետության համար, այլ պետությունն է ստեղծված մարդու համար, որն էլ հանդիսանում է այդ հարաբերակցության հիմնարար սկզբունքը: Մարդու առաջնայնությունը պետության առջև թույլ է տալիս բնորոշել մարդու դերը քաղաքացիական հասարակությունում, որը ոչ թե որոշվում է պետության կողմից, այլ անվերապահորեն պատկանում է մարդուն և կենսագործվում է իր հնարավորությունների և նախաձեռնությունների սահմաններում: Այսպես, ՀՀ սահմանադրության 2-րդ գլուխը սահմանում է կարևորագույն սկզբունք՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պետության բարձրագույն արժեքներն են: Այստեղից հետևություն, որ իշխանության բոլոր ճյուղերը, ողջ պետական համակարգը ծառայում են մեկ ընդհանուր նպատակի՝ մարդու իրավական կարգավիճակի ապահովմանը, իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմքը կազմում են անձնական իրավունքներն ու ազատությունները, որոնց մեծամասնությունը կրում են բացարձակ բնույթ, այսինքն՝ ոչ միայն անբաժանելի են, այլև ենթակա չեն սահմանափակման, օրինակ՝ կյանքի իրավունքը, կրոնի, մտքի, խղճի ազատությունը, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը և այլն: Այդ իրավունքների և ազատությունների մի մասն էլ, օրինակ՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, սեփականության իրավունքը, ազատ տեղաշարժվելու իրավունքը և այլն, կարող են սահմանափակվել պետության կողմից, ուստի դրանց իրավական պաշտպանությունը առանձնահատուկ նշանակություն և արդիականություն ունի:

Հետևաբար, առանձնահատուկ կարևորություն է ստանում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ուսում-

նասիրությունը. արդյո՞ք այն հանդիսանում է մարդու իրավունք, սահմանադրական իրավունք, թե՞ մարդու հիմնարար իրավունք:

Գիտական գրականության մեջ տարանջատում է տրվում իրավունքների, սահմանադրական իրավունքների և մարդու իրավունքների միջև<sup>1</sup>: Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Պավլոս Էլեֆսերիադեսի պնդմամբ՝ իրավունքը մարդկանց իրավական պահանջների դրսևորումն է միմյանց նկատմամբ, որը հիմնականում կարգավորում է մասնավոր ոլորտի՝ քաղաքացիների և ձեռնարկատիրությունների միջև հորիզոնական հարաբերություններ: Սովորական իրավունքները կարևոր են, բայց մարդու կյանքի և գործունեության համար կենսական անհրաժեշտություն չունեն, այլ կարգավորում են մարդկանց առօրյան և զանազան տնտեսական բնույթի գործարքներ: Իրավունքներն ամրագրված են օրենքներում և որպես հետևանք՝ համեմատաբար կայուն են, սակայն կարող են փոփոխվել դեմոկրատական գործընթացների արդյունքում<sup>2</sup>:

Սահմանադրական իրավունքները տարբերվում են սովորական իրավունքներից<sup>3</sup>: Հարկ է նշել, որ որոշ սահմանադրական իրավունքներ կարգավորում են այդ թվում՝ հորիզոնական հարաբերություններ, սակայն վերջիններս ի սկզբանե կոչված են կարգավորելու պետության և քաղաքացիների միջև

<sup>1</sup> Մի շարք հայտնի գիտնականներ պարբերաբար քննարկում են «մարդու իրավունքներ» և «բնական իրավունքներ» հասկացությունների տարբերությունները և դրանց հարաբերակցությունը: Ի թիվս այլոց՝ **Tuck R.** Natural Rights Theories: Their Origin And Development, Cambridge, Cambridge University Press 1982, p. 22-26, **Finnis J.**, Natural Law And Natural Right, Oxford, Clarendon Press, 2011, p. 256-314, **Ritchie D. G.** Natural Rights: A Criticism Of Some Political And Ethical Conceptions, London, 2015, Routledge, p. 289-295:

<sup>2</sup> **Eleftheriadis P.** Legal Rights, Oxford, Oxford University Press, 2008, p. 39-43.

<sup>3</sup> **Heringa W., Kiiver P.** Constitutions Compared: An Introduction To Comparative Constitutional Law, Cambridge, Portland, 2012, p. 266-273, **Hardt S., Heringa A. W.** (eds.), Sources of Constitutional Law: Constitutions And Fundamental Legislative Provisions From The United States, France, Germany, the Netherlands and the United Kingdom, including the ECHR and EU Charter of Fundamental Rights, Cambridge: Intersentia, 2014, p. 192, **Dicey A.V.** Lectures on comparative constitutionalism, Oxford, Oxford University Press, 2013, p. 222-246.

ուղղահայաց հարաբերություններ: Սահմանադրական իրավունքներով պաշտպանված արժեքները կենսական են մարդկային արժանապատվության և անձնական ազատության համար, քանի որ կարգավորում են այնպիսի խնդիրներ ինչպիսին են օրինակ՝ մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կամ կարծիքի արտահայտման ազատությունը, սակայն սահմանում են նաև ընթացակարգային կանոններ, որոնք կանոնակարգում են պետության և պետական մարմինների գործունեության առանձնահատկությունները, իշխանությունների տարանջատումը, դեմոկրատական ընտրական ընթացակարգերը և այլն: Այնուհանդերձ, սահմանադրական նորմերը, այդ թվում՝ մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող նորմերը կարող են փոփոխվել, բացառությամբ Գերմանիայի սահմանադրության<sup>1</sup>, սակայն այդ փոփոխությունը բավականին բարդ գործընթաց է և շատ երկրներում պահանջում է հանրաքվե կամ օրենսդիր մարմնի որակյալ մեծամասնության համաձայնությունը<sup>2</sup>: Հետևաբար, Սահմանադրությունն ապահովում է այն հիմքը, որի վրա հիմնվում է ժողովուրդը:

Իսկ ահա, մարդու իրավունքները տարբերվում են սահմանադրական իրավունքներից այնքանով, որ չեն սահմանափակվում անձի ազգությամբ կամ քաղաքացիությամբ, այն դեպքում, երբ սահմանադրական իրավունքներն ավանդաբար վերագրվում են պետության քաղաքացիներին, թեև մարդու իրավունքներն ու սահմանադրական իրավունքները երբեմն համընկնում են, օրինակ՝ անձնական կյանք ունենալու իրավունքը, կարծիքի արտահայտման ազատությունը կամ խտրականության արգելքը: Մարդու իրավունքները սահմանում են այն միջազ-

<sup>1</sup> Basic Law for the Federal Republic of Germany, Deutscher Bundestag, Berlin, 2019 Article 79, <https://www.btg-bestellservice.de/pdf/80201000.pdf>,/03.09.2017/.

<sup>2</sup> **Jackson V. C., Tushnet M.** Comparative constitutional law, St. Paul, MN : Foundation Press, 2014, p. 97-105; **Rosenfeld M., Sajó A.** The Oxford handbook of comparative constitutional law, Oxford University Press, 2012, p. 342; **Murphy W. F., Tanenhaus J.** Comparative constitutional law: cases and commentaries, New York, St. Martin's Press, 1977, p. 156-176.

գայնորեն ճանաչված կենսական արժեքները, առանց որի մարդկային կյանքն անհնար է կամ զուր: Ավանդաբար, մարդու իրավունքները դասակարգվում են երեք տեսակի՝ բացարձակ, սահմանափակվող և որակյալ: Բացարձակ իրավունքները չեն կարող երբևէ սահմանափակվել և անվերապահորեն ենթակա են պաշտպանության պետության կողմից, օրինակ՝ խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը, ստրկության արգելքը, կրոնական կամ ոչ կրոնական հավատք ունենալու իրավունքը: Սահմանափակվող իրավունքները կարող են սահմանափակվել միայն շատ հատուկ հանգամանքներում, հիմնականում, որպեսզի պաշտպանվի մյուսների իրավունքը, օրինակ՝ մարդու անձնական ազատությունը կարող է սահմանափակվել, եթե անձը՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է, կյանքի իրավունքը կարող է սահմանափակվել պատերազմական օրինական գործողությունների ընթացքում: Որակյալ իրավունքները կարող են սահմանափակվել, եթե ոտնձգում են հասարակական շահը կամ այլ անձանց իրավունքները: Դա կախված է խնդրո առարկա հանդիսացող իրավունքից և յուրաքանչյուր գործի հանգամանքներից, թե որ իրավունքն ավելի գերակա կլինի մի քանի շահերի բախման ժամանակ, օրինակ՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, խոսքի ազատությունը, հավաքների ազատությունը և այլն: Ավելին, մարդու իրավունքները կենսագործելու ցանկացած արգելքներ և սահմանափակումներ պետք է թույլատրվեն, միայն եթե դա նախատեսված է օրենքով, ունի օրինական նպատակ (հասարակական անվտանգություն, հանցանքի կանխարգելում) և միջամտությունը համաչափ է հետապնդվող նպատակին (անհրաժեշտ գործողություններից ոչ ավելին<sup>1</sup>):

Մարդու իրավունքները չեն կարող փոփոխվել օրենսդիր

<sup>1</sup> SPICe Briefing, The European Convention on Human Rights in the United Kingdom, 2015 p.4 [https://archive2021.parliament.scot/ResearchBriefingsAndFactsheets/S4/SB\\_1559\\_The\\_European\\_Convention\\_on\\_Human\\_Rights\\_in\\_the\\_United\\_Kingdom.pdf/03.09.2017/](https://archive2021.parliament.scot/ResearchBriefingsAndFactsheets/S4/SB_1559_The_European_Convention_on_Human_Rights_in_the_United_Kingdom.pdf/03.09.2017/):

մարմնի կողմից, ձևավորվել են միջազգային մակարդակում և գերակա են ազգային օրենսդրական համակարգերում: Մարդու իրավունքների դատարանները սովորաբար գործում են որպես վերջին ատյանի դատարաններ<sup>1</sup>:

Սակայն, միջազգային իրավական փաստաթղթերում և գիտական գրականությունում, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը դիտարկվում է ոչ թե որպես սահմանադրական կամ մարդու իրավունք, այլ՝ հիմնարար իրավունք<sup>2</sup>: Օրինակ՝ Եվրոպայում Եվրոպական միության արդարադատության դատարանը իր բոլոր գործերում անձնական տվյալների պաշտպանության իրավունքը դիտարկում է որպես հիմնարար իրավունք՝ պնդելով, որ «անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակ» ասելով երրորդ պետությունները պետք է ապահովեն իրենց ներքին օրենսդրությամբ կամ միջազգային պարտավորություններով ստանձնած անվտանգության այնպիսի մակարդակ, որը Եվրոպական միությունը երաշխավորում է հիմնարար իրավունքների համար<sup>3</sup>:

Այս մոտեցման վերաբերյալ առկա են բազում դիտանկյուններ, որոնք հանգում են երեք հիմնական տեսությունների:

Առաջին տեսության հեղինակները հիմնարար իրավունքները դիտարկում են որպես առավելապես սահմանադրական իրավունքներ: Ընդհանուր մոտեցումն այն է, որ վերջիններս պաշտպանություն են ստանում աշխարհի տարբեր երկրների սահմանադրություններում<sup>4</sup> Բարբադոս, Կոստա Ռիկա, Էլ Սալ-

<sup>1</sup> **Andrew Fagan, Fagan A.** Human Rights: Confronting Myths And Misunderstandings, Cheltenham, Edward Elgar 2011, p. 132-137; **Symonides J.** Human Rights: International Protection, Monitoring, Enforcement, 2017, Routledge, p. 333; **Heffernan L.** Human Rights: A European Perspective, Dublin, Round Hall Press in association with Irish Centre for European Law, 1994, p. 257-259.

<sup>2</sup> ECJ, Coty Germany GmbH v. Stadtsparkasse Magdeburg, Case C-580/13, 16 July 2015, para. 30-31.

<sup>3</sup> ECJ, Schrems v. Data Protection Commissioner, Case C-362/14, 6 October 2015, para.72-73.

<sup>4</sup> Data Protection and Privacy Legislation Worldwide, <https://unctad.org/page/data-protection-and-privacy-legislation-worldwide/03.09.2017/>.



վաղոր, Սուրինամ և այլն, ինչպես նաև Եվրոպական միության խարտիայում<sup>1</sup>, որն ըստ էության հանդիսանում է Եվրոպական միության սահմանադրությունը, քանի որ այն բացի մարդու իրավունքներից, պարունակում է նորմեր, որոնք ավանդաբար համարվել են սահմանադրական<sup>2</sup>: Ավելին, Եվրոպական միության խարտիան Եվրոպայի սահմանադրություն ճանաչելու պայմանագիրը ստորագրել էին Եվրոպական միության 18 պետություններ և միայն չէր վավերացվել Ֆրանսիայի և Գերմանիայի ազգային օրենսդրություններում, հետևաբար, գիտնականների կողմից այն իրավամբ համարվում է Եվրոպական միության սահմանադրություն: Այս կարծիքին են նաև պրոֆեսորներ Ն.Գ. Բելգորոդցևան և Ա.Ս. Ֆեդոսինը, ովքեր «անձնական տվյալների պաշտպանությունը» և «անձնական տվյալների պաշտպանության իրավունքը» դիտարկում էին որպես մարդու սահմանադրական իրավունքների իրավական երաշխիքի տարատեսակ<sup>3</sup>:

«Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է այն եզակի պետություններից, որտեղ անձնական տվյալների պաշտպանության իրավունքն առանձին սահմանադրական կարգավորում է ստացել: Հետևաբար, լիովին հիմնավոր է այն տեսությունը, որ հիմնարար իրավունքները հանդիսանում են նաև սահմանադրական իրավունք:

Երկրորդ տեսության համաձայն՝ կան գիտնականներ, որոնք

<sup>1</sup> Charter of Fundamental Rights of the European Union, 2012/C 326/02, art. 8 <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:12012P/TXT/03.09.2017/>.

<sup>2</sup> **Hijmans H.** The European Union as a Constitutional Guardian of Internet Privacy and Data Protection: the Story of Article 16 TFEU, Amsterdam: University of Amsterdam Dissertation, 2016.

<sup>3</sup> **Белгородцева Н.Г.** Теоретико-правовые аспекты защиты персональных данных: Диссертация кандидата юридических наук. - М., 2012. - С. 10-11; **Федосин А.С.** Защита конституционного права человека и гражданина на неприкосновенность частной жизни при автоматизированной обработке персональных данных в Российской Федерации: Диссертация кандидата юридических наук. - Саранск, 2009. - С. 7.

գտնում են, թե հիմնարար իրավունքները նույն մարդու իրավունքներն են: Բանն այն է, որ «մարդու իրավունքներ» հասկացությունը ժամանակի ընթացքում բավականին ընդլայնվել է: Այսօր, մարդու իրավունքները ներառում են ոչ միայն առաջին սերնդի մարդու իրավունքները՝ քաղաքական և քաղաքացիական, այլև՝ երկրորդ սերնդի՝ սոցիալական և տնտեսական իրավունքները և երրորդ սերնդի՝ ապագա սերունդների, փոքրամասնությունների, բնապահպանական իրավունքները<sup>1</sup> և այլն: Նույնիսկ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որն ամրագրում է միայն առաջին սերնդի իրավունքները, պաշտպանում է նաև երկրորդ և երրորդ սերունդների իրավունքները, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը միաժամանակ պաշտպանում է սեփականության, կրթության, անվան, սեռական ինքնությունը փոխելու, փոքրամասնության անդամ լինելու, մաքուր շրջակա միջավայրի և այլ իրավունքներ<sup>2</sup>: Հայկական իրականությունում անձնական տվյալների պաշտպանության իրավունքն ամրագրվել է ՀՀ սահմանադրության 2-րդ գլխում, որտեղ սահմանված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, հետևաբար, այն որպես մարդու իրավունք դիտարկելը ևս հիմնավորված է:

Եվ, վերջապես, կան իրավագետներ, որոնք որդեգրել են միջին մոտեցում: «Հիմնարար իրավունք» եզրույթն առաջին անգամ հանդիպում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածում՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնարար իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային

<sup>1</sup> **Cornescu A.V.** The Generations Of Human's Rights, Dny práva -2009- Days of Law: the Conference Proceedings, 1. edition. Brno: Masaryk University, 2009, [https://www.law.muni.cz/sborniky/dny\\_prava\\_2009/files/prispevky/tvorba\\_prava/Cornescu\\_Adrian\\_Vasile.pdf](https://www.law.muni.cz/sborniky/dny_prava_2009/files/prispevky/tvorba_prava/Cornescu_Adrian_Vasile.pdf)/03.09.2017/:

<sup>2</sup> **Van Der Sloot B.** Privacy as Personality Right: Why the ECtHR's Focus on Ulterior Interests Might Prove Indispensable in the Age of "Big Data", Utrecht Journal of International and European Law, 2015, p. 80.

դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները: Այս հոդվածի ներառումը Համընդհանուր հոչակագրում նպատակ է ունեցել մեծացնելու հոչակագրի պաշտպանության ծավալը, բայց ոչ թե շնորհելով հավելյալ իրավունքներ, այլ շեշտելով, որ ազգային սահմանադրություններում ամրագրված որոշ կենսական իրավունքներ ներպետական իրավական համակարգերում պետք է առավել արդյունավետ պաշտպանված լինեն: Այդպիսով, սույն հոդվածը պետք է ընդունել որպես habeas corpus-ի տիպի իրավունք<sup>1</sup>: Միջին տեսության կողմնակիցները պնդում են, որ հիմնարար իրավունքները պետք է դիտարկվեն որպես մարդու իրավունքների և սահմանադրական իրավունքների sui generis հիբրիդ:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ հիմնարար իրավունքները նույնական են մարդու իրավունքներին: Հեղինակների մեծ մասը գտնում է, որ հիմնարար իրավունքները պետք է պաշտպանության առավել բարձր մակարդակ ունենան, քան սահմանադրական իրավունքները, քանի որ դրանք օժտված են ավելի բարձր բարոյական արժեքներով, ճիշտ ինչպես մարդու դասական իրավունքները<sup>2</sup>:

Այսպիսով, անձնական տվյալների պաշտպանության իրավունքն իր բնույթով հանդիսանում է ոչ միայն սահմանադրական իրավունք, այլ, ըստ էության, մարդու հիմնարար իրավունք<sup>3</sup>:

Հատկանշական է, որ մի դեպքում ՀՀ օրենսդրությունը բովանդակում է անձնական տվյալների պաշտպանության դրույթներ, որոնք, անկասկած, շոշափում են մարդու հիմնարար իրավունքները և կարող են համարվել կենսական ցանկացած

<sup>1</sup> **Robinson N.** The Universal Declaration of Human Rights: Its Origin, Significance, Application, And Interpretation, New York: World Jewish Congress, 1958, p.123-148; **Verdoordt A.**, Naissance et signification de la Déclaration Universelle des droits de L'Homme, Louvain, Warny, 1964, p. 116-119.

<sup>2</sup> **Perrot D. L.** The logic of Fundamental Rights, John W. Bridge et al. (eds.), Fundamental Rights, London, Sweet & Maxwell, 1973.

<sup>3</sup> **Вельдер И.А.** Система правовой защиты персональных данных в Европейском союзе: диссертация кандидата юридических наук. - Казань, 2006. - С. 33.

ժողովրդավարական հասարակությունում, ինչպիսիք են՝ անձի սեռական կամ քաղաքական կողմնորոշմանը, առողջական վիճակին, ռասային և այլնին վերաբերող հատուկ կատեգորիայի անձնական տվյալների պաշտպանությունը<sup>1</sup>: Նման նախադեպ ունի նաև Եվրոպական միության արդարադատության դատարանը, օրինակ՝ Իռլանդիայի թվային իրավունքներ հայտնի գործը վերաբերում էր Տվյալների պահպանման 2006/24 դիրեկտիվին, որը պետություններին վերապահում էր միլիոնավոր անմեղ օգտատերերի համացանցային գործունեությանը զգուշորեն հետևելու և այդ տեղեկատվությունը պահելու իրավասություն, և դատարանը հստակ ամրագրեց, որ Դիրեկտիվը չէր սահմանում մարդու հիմնարար իրավունքների խախտման թույլատրելի սահմանը պարզ ու հստակ ուրվագծող կանոններ<sup>2</sup>, հետևաբար, քաղաքացիների հաղորդակցությունների մոնիթորինգը՝ առանց որևէ ակնհայտ անհրաժեշտության և առանց բավարար զսպումների և հակակշիռների համակարգի, համարվեց անօրինական գործողություն: Ակնհայտ է, որ նման գործերը պաշտպանում են մարդու անձնական ազատության կարևորագույն և հիմնարար արժեքները:

Մեկ այլ դեպքում, ՀՀ օրենսդրությունում առկա են անձնական տվյալների պաշտպանության կանոններ, որոնք պաշտպանում են ավելի հասարակ շահեր, հետևաբար, դրանք հիմնարար իրավունքներ կոչելն այնքան էլ նպատակահարմար չէ, օրինակ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը անձնական տվյալները մշակողին պարտավորեցնում է մինչև այդպիսի անձնական տվյալները մշակելը, եթե անձնական տվյալներն ստացվել են ոչ տվյալների սուբյեկտից, ապա վերջինիս տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

<sup>1</sup> «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Հ 18.05.2015, N ՀՕ-49-Ն, հոդված 3-րդ, մաս 1-ին, կետ 14-րդ, հոդված 12-րդ:

<sup>2</sup> ECJ, Digital Rights Ireland Ltd v Minister for Communications et al., Cases C-293/12 and C-594/12, 8 April 2014, para 65.

1) մշակողի կամ նրա լիազորած անձի (առկայության դեպքում) անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը) և գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը.

2) անձնական տվյալները մշակելու նպատակը և իրավական հիմքը, մշակվող տվյալների ցանկը.

3) անձնական տվյալների հավանական օգտագործողների շրջանակը.

4) տվյալների սուբյեկտի՝ սույն օրենքով սահմանված իրավունքները:

Այնուհանդերձ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն անձնական տվյալները հավաքելու ընթացքում անձնական տվյալներ մշակողի վերը նշված պարտականություններից հստակ բացառություններ: Արդյունքում, ցանկացած խնջույքի ժամանակ այլ անձանց նկարելը, և այդ նկարները համացանցում հրապարակելը՝ առանց նրանց գրավոր համաձայնության, կարող է որակվել որպես անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության խախտում: Եվ այս դեպքում հարց է առաջանում՝ արդյո՞ք նման առօրեական խնդիրները պետք է համարել հիմնարար կամ մարդու իրավունքների պաշտպանության տակ գտնվող իրավունքներ և արդյո՞ք վերջիններս ունեն նույն արժեհամակարգը, ինչպիսին, օրինակ, արդար դատաքննության իրավունքն է կամ խտրականության արգելքը:

Այսպիսով, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ինստիտուտում առկա են տարրեր, որոնք չեն կարող որակվել որպես հիմնարար իրավունքներ<sup>1</sup>:

Այլ գործոններ ևս վկայում են այն մասին, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը պաշտպանում է արժեքներ, որոնք բավականին տարբերվում են ավանդական մարդու իրավունքներից: ՀՀ անձնական տվյալների պաշտպա-

<sup>1</sup> Van Der Sloot B. The Practical and Theoretical Problems with “balancing”: Delfi, Coty and The Redundancy Of The Human Rights Framework, Maastricht Journal of European and Comparative Law, N3, 2016, p.439-459 <https://bartvandersloot.com/onewebmedia/Balancing.pdf/03.09.2017/>:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ 1(105)2022

նության իրավունքի սահմանադրական նորմի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ անձնական տվյալների պաշտպանության ինստիտուտը նպատակ ունի պաշտպանելու երկու բոլորովին տարբեր արժեքներ՝ իրենց անձնական տվյալները պաշտպանելու մարդկանց իրավունքը («Սահմանադրություն, հոդված 34-րդ, մաս 1-ին») և անձնական տվյալները մշակողների՝ «տարածքում անձնական տվյալներ մշակելու իրավունքը («Սահմանադրություն, հոդված 34-րդ, մաս 2-րդ)»): Այսպիսով, թվում է, թե այս իրավունքն արդեն իսկ ապահովում է տարբեր կողմերի շահերի և իրավունքների միջև փոխզիջումը: Այս համատեքստում այն տարբերվում է մարդու այլ իրավունքներից, որովհետև բովանդակում է ոչ միայն անձի իրավունքներ և ազատություններ, օրինակ՝ «սահմանադրության 26-րդ հոդվածը պաշտպանում է մարդու խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չարժանանալու իրավունքը, իսկ ահա 31-րդ հոդվածն ամրագրում է մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը և չնայած հոդվածի 2-րդ մասը նախատեսում է սահմանափակումներ, այդ իրավունքն ինքնին չի պարունակում փոխզիջում: Անձնական տվյալների պաշտպանության իրավունքն արդեն իսկ մարմնավորում է տվյալների սուբյեկտների և տվյալների մշակողների իրավունքների և շահերի միջև փոխզիջումը: Եթե մարդու մյուս իրավունքների կանխավարկածն այն է, որ պետությունը չպետք է դրանք սահմանափակի, ապա անձնական տվյալների կանխավարկածը սա է՝ ցանկալի է և արդյունավետ, որ դրանք մշակվեն: Մինչ պետությունը սկզբունքորեն չպետք է մարդկանց բնակարան մտնի, այն սկզբունքորեն պետք է մշակի այդ մարդկանց մասին տեղեկատվությունը:

Այս տեսանկյունից թվում է, թե անձնական տվյալների պաշտպանության իրավունքը հիմնորեն տարբերվում է մարդու այլ իրավունքներից: Դրա հիմքում ընկած կարևորագույն կանխավարկածն այն է, որ տվյալների մշակումն ինքնին

օրինական է և անհրաժեշտ ժամանակակից հասարակությունում՝ ձեռնարկությունները, պետությունը և նույնիսկ քաղաքացիները կարիք ունեն մշակելու անձնական տվյալներ: Եթե անձնական տվյալների մշակումը լիներ անօրինական, ապա մարդիկ ընկերների հետ նկարվելու և սոցիալական կայքերում այդ նկարները տեղադրելու իրավունք չէին ունենա, ընկերությունները չէին կարողանա իրենց հաճախորդների անուններն ու հասցեները պահպանել, իսկ պետությունները՝ անկարող կլինեին կադաստրային տվյալների, ավտոմեքենաների կամ ամուսնությունների տվյալների բազաներ ունենալ:

Մարդու իրավունքների դրույթները հիմնականում հիմնված են բացարձակ կամ պայմանական սահմանափակումների վրա: Պետությունը չի կարող խոշտանգել մարդկանց, չի կարող զրկել անձնական ազատությունից, բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և չի կարող սահմանափակել կարծիքի արտահայտման ազատությունը, քանի դեռ դա անհրաժեշտ չէ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության ու բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի, այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Իսկ անձնական տվյալների պաշտպանության իրավունքն իր բնույթով արդեն իսկ փոխզիջում է՝ տեղեկատվության ազատ հոսքի և անձնական տվյալների պաշտպանության միջև:

Այս տարբերություններն ընդգծվում են նաև այն փաստով, որ ժամանակի ընթացքում «անձնական տվյալ» հասկացության շրջանակն ավելի լայնացել է: Կարելի է ասել, որ գրեթե ցանկացած տվյալ կարելի է որակել որպես անձնական տվյալ: Հետևաբար, տեղեկատվությունը ենթակա է անձնական տվյալների պաշտպանության, եթե այն «մշակվում է», ընդ որում մշակել համարվում է գրեթե ցանկացած գործողություն՝ նույնիսկ տվյալ ջնջելը: Ավելին, այն հարցը, թե արդյոք տեղեկատվությունը կարելի է որակել որպես «անձնական տվյալ», ոչ մի ձևով կախված չէ անձի վտանգված անհատական շահերից կամ

◆ 1(105)2022

◆ ՏԵԴԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

դրանց կենսական կարևորությունից, այլ պարզապես այն փաստից, թե կարելի է արդյոք այդ տվյալների հիման վրա նույնականացնել մարդուն: Հետևաբար, նույնիսկ անունն ու հասցեն կարող են որակվել որպես անձնական տվյալ:

Այնուհանդերձ, մարդու իրավունքներն ավանդաբար պաշտպանում են բավական սահմանափակ արժեհամակարգ, որոնք կենսական են մարդու անձնական ազատության համար: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական պրակտիկան հիմնված է *ratione personae*, *ratione materiae* և *the de minimis rule*<sup>1</sup> կոնցեպտների վրա, որից հետևում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շրջանակներում պաշտպանության են ենթակա միայն անձի այն իրավունքները, որոնք հայցվորի անձնական կյանքի կամ շահերի վրա թողել են նշանակալի ազդեցություն: Հետևաբար, նման տրամաբանությունից ելնելով՝ անձնական տվյալների մշակումը չի պաշտպանվի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով, եթե այն վերաբերեր չնչին տվյալների, օրինակ՝ մարդու անվանը, հասցեին կամ եթե տվյալների մշակման գործընթացը համարվեր հասարակ, առօրյա գործունեություն<sup>2</sup>:

Սակայն, ՀՀ սահմանադրական համապատասխան նորմերի մեկնաբանման տեսանկյունից խնդիր է առաջանում, թե որտեղ պետք է լինի սահմանագիծը, որը տարանջատում է այն գործերն ու իրավակարգավորումները, որոնք վերաբերում են անձնական տվյալների պաշտպանության հիմնարար իրավունքի սահմանադրական էությանը և այն գործերն ու իրավակարգավորումները, որոնք չեն վերաբերում: Խնդիրն այն է, որ ՀՀ սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր

<sup>1</sup> ECHR, Article 35 para 3 (b) [http://www.echr.coe.int/Documents/Admissibility\\_guide\\_ENG.pdf](http://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_ENG.pdf) / 07.10.2018/.

<sup>2</sup> ECmHR, *Trouche v France*, application no. 19867/92, 1 September 1993. ECmHR, *Glass v The United Kingdom*, application no. 28485/95, 16 October 1996). ECtHR, *Murray v The United Kingdom*, application no. 14310/88, 10 December 1991.



որ ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Անձնական տվյալների պաշտպանության համար ընդունելիության որևէ շեմ չկա, ինչը սովորական է մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների համար: Ե՛վ կենսական կարևոր, և՛ ոչ կարևոր մարդու անձնական տվյալները ենթակա են պաշտպանության:

Հետևաբար, ցանկացած տվյալ, որքան էլ հասարակ կամ անկարևոր լինի, սահմանադրական պաշտպանություն կստանա՝ որպես հիմնարար իրավունք, և որպես հետևանք, «հիմնարար իրավունքներ» հասկացությունը ժամանակի ընթացքում կկորցնի իր արժեքն ու հատուկ կարգավիճակը՝ որպես ժողովրդական հասարակություններում կենսական առավել կարևոր իրավունքներ:

Ամփոփելով՝ կարել է եզրակացնել, որ անձնական տվյալների պաշտպանության ինստիտուտը հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքների և սահմանադրական իրավունքների հիբրիդ: Թեև անձնական տվյալների պաշտպանության իրավունքը մարդու դասական հիմնարար իրավունքների շրջանակներում չի տեղավորվում, պետք է որդեգրել դրա մեկնաբանման առավել ժամանակակից և լայն մոտեցում, որտեղ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը կընդունվի որպես հիմնարար իրավունք: Այնուհետև անհրաժեշտ է սահմանազատել տարբեր անձնական տվյալները և սահմանադրական պաշտպանություն տալ միայն այն տվյալներին, որոնք կհամարվեն «հատուկ կատեգորիայի» կամ որոնք մարդու շահերի ու իրավունքների վրա ուղիղ և նշանակալի ազդեցություն կունենան: Բացի դրանից, պետք է տարբերակում դնել անձնական տվյալների և տվյալների մշակման գործընթացների զանազան տեսլականների միջև, որի արդյունքում միայն որոշ գործեր և իրավակարգավորումներ կդիտարկվեն որպես մարդու հիմնարար իրավունքներ, իսկ մնացածները՝ կպաշտպանվեն որպես մարդու հասարակ սպառողական իրավունքներ:

Սա նշանակում է, որ «անձնական տվյալ» հասկացությունը

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ 1(105)2022

սկզբունքորեն պետք է փոխվի և հիմնված լինի ոչ միայն այն օբյեկտիվ հարցի վրա, թե արդյոք մարդը կարող է նույնականացվել կամ անհատականացվել այդ տվյալների միջոցով, այլև այն հարցի վրա, թե այդ դեպքում անձնական տվյալների մշակումն ինչպիսի ազդեցություն կունենա մարդու անձնական շահերի ու իրավունքների վրա: Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել «անձնական տվյալ» հասկացության էությունը ՀՀ իրավական համակարգում:

## ОСОБЕННОСТИ ПРАВА НА ЗАЩИТУ ПЕРСОНАЛЬНЫХ ДАНЫХ В ЦЕПОЧКЕ КЛАССИФИКАЦИИ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ

### Аннотация

Обозначивая то обстоятельство, что право на защиту персональных данных отличается от классических основных прав человека, в настоящей статье рассматривается теория о том, что право на защиту персональных данных впервые формируется в правовой системе РА как своеобразный *sui generis* гибрид прав человека и конституционных прав, принимая за основу следующие механизмы: 1) в отличие от других прав человека, презумпция защиты которых состоит в том, что государство, как правило, не должно ограничивать основные права и свободы человека, персональные данные должны быть обработаны, в том числе государством; 2) право на защиту персональных данных защищает две совершенно разные ценности, а именно: а) право людей на защиту своих персональных данных; б) право распорядителей персо-

нальных данных на обработку персональных данных на территории Республики Армения. Следовательно, право на защиту персональных данных уже включает в себя компромисс между правами и интересами субъектов персональных данных и распорядителей данных.

**Ключевые слова:** персональные данные, право на защиту персональных данных, основное право, конституционное право.

## FEATURES OF THE RIGHT TO THE PROTECTION OF PERSONAL DATA IN THE CLASSIFICATION CHAIN OF CONSTITUTIONAL RIGHTS

### Annotation

Considering the fact that the right to the protection of personal data differs from classical fundamental human rights, this article discusses the theory that the right to the protection of personal data is first elaborated in the legal system of the Republic of Armenia as a kind of *sui generis* hybrid of human rights and constitutional rights based on the following mechanisms: (a) unlike other human rights, the protection of which assumes that the state, as a rule, shall not restrict fundamental human rights and freedoms, personal data preferably must be processed also by the state; (b) the right to the protection of personal data protects two completely different values, namely: (1) the right of individuals to the protection of their personal data and (2) the right of personal data processors entitled to process personal data

within the territory of the Republic of Armenia. Therefore, the right to the protection of personal data already embodies a compromise between the rights and interests of personal data subjects and personal data processors.

**Keywords:** personal data, right to the protection of personal data, fundamental right, constitutional law.



## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

### ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Վարչապետի աշխատակազմ,  
Միջազգային իրավական հարցերով  
ներկայացուցչի գրասենյակ, վճիռների  
և որոշումների կատարման վարչություն,  
«Կետական կառավարման  
ակադեմիայի ասպիրանտ»

### ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**Ամփոփագիր.** 2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրապնդվեցին մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրավական երաշխիքները: Նպատակ հետապնդելով վեր հանել գործող Սահմանադրությամբ երաշխավորվող հիմնական իրավունքների և ազատությունների ու միջազգային իրավական պրակտիկայի հարաբերակցությունը՝ սույն հոդվածի շրջանակներում վերլուծվել է բարեփոխված Սահմանադրության 81-րդ հոդվածը: Ուսումնասիրության արդյունքները ստեղծել են բավարար հիմք եզրահանգելու համար հետևյալին՝

- որպես «Վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող մարմին՝ Եվրոպական դատարանի վճիռները հաշվի են առնվում հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս,
- այս գործընթացում, *inter alia*, դրսևորվում է Եվրոպական դատարանի վճիռների *res interpretata* բնույթը,

- հիմնական իրավունքներն ու ազատությունները երաշխավորող դրույթները մեկնաբանելիս առանցքային դեր է վերապահված ՀՀ սահմանադրական դատարանին՝ որպես ՀՀ-ում սահմանադրական արդարադատության երաշխավորի:

**Հիմնաբառեր.** սահմանադրական բարեփոխումներ, Սահմանադրության 81-րդ հոդված, *res interpretata* բնույթ, միջազգային իրավական պրակտիկա, Եվրոպական դատարանի վճիռներ

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, իրացնելով «մարդակենտրոն» սահմանադրության գաղափարը, ոչ միայն անփոփոխելի հոդվածների շարքին է ավելացրել ևս մեկ հոդված՝ 3-րդ հոդվածը, այլ նաև դրանով ուղղակիորեն ամրագրել է հանրային իշխանությունների պարտականությունները հիմնական իրավունքների պաշտպանության առնչությամբ: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:* ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածը փաստացի ամրագրում է հիմնական իրավունքների առնչությամբ հանրային իշխանությանը վերապահված երկու հիմնական գործառույթ՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումը (անթույլատրելի միջամտություններից ձեռնպահ մնալը) և պաշտպանությունը (հանրային իշխանության մարմինների կողմից պոզիտիվ պարտականությունների կատարումը) և դրանցից բխող՝ պետության նեգատիվ և պոզիտիվ պարտականությունները<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, «Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ», Երևան, Տիգրան Մեծ հրատ, 2016թ., էջ 26:

Մարդու հիմնական իրավունքները, որպես հիմնարար նշանակություն ունեցող անհատական շահեր, վայելում են ոչ միայն պետական սահմանադրական իրավունքի պաշտպանությունը, այլ երաշխավորված են նաև վերազգային մակարդակում<sup>1</sup>: Միջազգային իրավունքի համար, որն առաջին հերթին զբաղվում է պետության և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև իրավական հարաբերություններով, մարդու իրավունքներն ինքնուրույն ուսումնասիրման և հետազոտման թեմա են դարձել միայն 2-րդ համաշխարհային պատերազմից հետո<sup>2</sup>:

1945թ. ընդունված ՄԱԿ-ի կանոնադրությունը՝ որպես Միացյալ ազգերի նպատակներից մեկը, սահմանում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչման խրախուսումը և քաջալերումը, որը պետք է խթանվի ինչպես կազմակերպության, այնպես էլ անդամ պետությունների կողմից<sup>3</sup>: Որպես այս ամենին ուղղված առաջին գործնական քայլ՝ առանձնացվում է 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումը, որը հռչակեց յուրաքանչյուր մարդու անհատական իրավունքների ցանկը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերի զարգացման համընդհանուր ստանդարտ: Հետագայում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով երաշխավորված իրավունքների և ազատությունների գործնական կիրառելիության ապահովման և արդյունավետ պաշտպանության հարցում զգալի նշանակություն ունեցավ նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա), որով երաշխավորված իրավունքների դատական պաշտպանության գործառույթը վերա-

<sup>1</sup> **Stern Klaus**, “Nationale Grundrechte und internationale Menschenrechte” Staatsrecht III/2, 1994.

<sup>2</sup> **Միխայել Զաքս**, Սահմանադրական իրավունք II Հիմնական իրավունքներ, Մաս I, Հիմնական իրավունքների տեսություն, Երևան, Տիգրան Մեծ, 2015, էջ 47:

<sup>3</sup> ՄԱԿ-ի կանոնադրության 55-րդ հոդվածի գ կետ, 56-րդ հոդված, նաև 62-րդ, 68-րդ և 76-րդ հոդվածներ:

պահված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին (այսուհետ՝ Եվրոպական դատարան):

Որպես Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագիր՝ Եվրոպական կոնվենցիան հանդիսանում է ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, որի հետևանքով մարդու հիմնական իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների բովանդակային ծավալի բացահայտման առումով կոնվենցիոն դրույթները ներպետական իրավական համակարգում ձեռք են բերում ուղղորդիչ նշանակություն: Ավելին, այս գործընթացում էապես կարևորվում է Եվրոպական դատարանի վճիռների դերը՝ որպես Եվրոպական կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանություններ<sup>1</sup>, որոնցում առավել մասնավորեցվում և հստակեցվում է կոնվենցիոն դրույթների բովանդակությունը:

2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 81-րդ հոդվածը մարդու իրավունքների պաշտպանության հարցում ուղենիշ է դրել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան՝ նպատակ ունենալով սահմանադրական երաշխիքներ ստեղծել մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության բնագավառում միջազգային կազմակերպությունների պրակտիկային ներդաշնակ ներպետական իրավակիրառ պրակտիկայի զարգացման համար:

Ընդ որում՝ մարդու իրավունքներին վերաբերող սահմանադրական նորմերը մեկնաբանելիս Սահմանադրության համապատասխան նորմի պահանջն է՝ հաշվի առնել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում նաև Եվրոպական դատարանի

<sup>1</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 32-րդ հոդվածը, համաձայն որի Դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը:



(ընդգծումը մերն է՝ Ա.Ա.) դատական պրակտիկան: ՀՀ սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետք է իրականացվի միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Նախորդ խմբագրությամբ Սահմանադրության և գործող Սահմանադրության վերը նշված դրույթների համեմատությունը թույլ է տալիս արձանագրել, որ միջազգային իրավական պրակտիկայի և հիմնական իրավունքների ու ազատությունների ներդաշնակության ապահովման առնչությամբ գործող Սահմանադրության կարգավորումն առավել համալիր ու ամբողջական է: Ասվածը հատկապես պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ խմբագրությամբ Սահմանադրության խնդրո առարկա դրույթի շրջանակներից դուրս էին մնում միջազգային իրավունքի սկզբունքներ կամ նորմեր չհանդիսացող, սակայն ոչ պակաս կարևոր իրավական և/կամ իրավամեկնաբանողական արժեք ներկայացնող իրավական դիրքորոշում պարունակող աղբյուրները՝ ինչպիսիք են, օրինակ, միջազգային դատական ատյանների կողմից կայացվող ակտերը:

Այսպիսով, եթե նախկինում Սահմանադրությամբ երաշխավորվող հիմնական իրավունքները մեկնաբանելիս իրավակիրառողները կարող էին շրջանցել Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ համարելով, որ դրանք ոչ միջազգային իրավունքի սկզբունքներ են, ըստ էության, և ոչ էլ միջազգային իրավունքի նորմ, ապա 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը լուծել է խնդիրը՝ հարցի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

առնչությամբ տարակարծությունների առաջացման տեղ չթողնելով:

Անվիճարկելի է իրավունքի զարգացման հարցում միջազգային դատական ատյանների և հատկապես Եվրոպական դատարանի դերը: Եվրոպական դատարանի դերի առանձնահատուկ շեշտադրումը պայմանավորված է վերջինիս վճիռների *res interpretata* բնույթով: Եվրոպական դատարանը, մեկնաբանելով իր վճիռների *res interpretata* բնույթը, արձանագրել է, որ «վճիռները ոչ միայն Դատարանի քննությանը հանձնված գործերի լուծման, այլ նաև ընդհանուր առմամբ Կոնվենցիայով սահմանված դրույթները մեկնաբանելու և դրանց բովանդակության մասնավորեցման միջոց են՝ դրանով իսկ նպաստելով պետությունների կողմից որպես Պայմանավորվող կողմ իրենց ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմանը»<sup>1</sup>: «Թեև Կոնվենցիոն համակարգի առաջնային նպատակն է ապահովել իրավունքների անհատական պաշտպանության արդյունավետ գործիքակազմ, այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի առաքելությունն է նաև որոշել ընդհանուր շահերից բխող հասարակական-քաղաքական հարցերի իրավական հիմունքները՝ դրանով իսկ զարգացնելով մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշները ու պրակտիկան Կոնվենցիայի անդամ պետություններում»<sup>2</sup>:

Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի կարգավորումները սույն հոդվածի շրջանակներում մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում հատկապես Եվրոպական դատարանի վճիռների կիրառելիության տեսանկյունից, այդ պատճառով մենք կանդրադառնանք միայն Եվրոպական դատարանի՝ որպես ՀՀ վավերացված միջազգային պայմանագրի, այն է՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիման վրա գործող մարմնի պրակտիկայի ազդեցությանը:

<sup>1</sup> Ireland v. United Kingdom, app no 5310/71, Karner v. Austria, app no40016/98.

<sup>2</sup> Rantsev v. Cyprus and Russia, app no. 25965/04.

Հիրավի, ներպետական մարմինների կողմից Կոնվենցիայի կիրառումն անխուսափելիորեն հանգեցնում է նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կիրառմանը: Եվրոպական դատարանի վճիռները, որպես Եվրոպական կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանություններ, ուղղորդիչ նշանակություն ունեն կոնվենցիոն դրույթներով երաշխավորված իրավունքների և ազատությունների բովանդակության համալիր և ամբողջական բացահայտման համար: Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոփոխված Սահմանադրության մեջ ամրագրված մի շարք նոր հիմնական իրավունքներ արտացոլում են, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի դրույթները և դրա հիման վրա գործող Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան, քննարկվող հոդվածի կարևոր նշանակությունն ավելի է ընդգծվում:

Մասնավորապես, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն առաջին անգամ ամրագրում է այնպիսի հիմնական իրավունքներ, ինչպիսիք են՝ մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը (հոդված 25), մարմնական պատիժների արգելքը (հոդված 26), կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդված 30), պատվի և բարի համբավի անձեռնմխելիությունը (հոդված 31), անձնական տվյալների պաշտպանությունը (հոդված 34), արտաքսման արգելքը (հոդված 55, մաս 1), մեղքի սկզբունքը և պատժի նշանակման ժամանակ համաչափության սկզբունքը (հոդված 71): Թեև այս իրավունքները համարվում են նորություն ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության շրջանակներում, այնուամենայնիվ դրանց առնչությամբ Եվրոպական դատարանի կողմից արդեն իսկ ձևավորվել է մեծածավալ նախադեպային իրավունք և այս առնչությամբ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներն ուղղորդիչ նշանակություն կարող են ունենալ խնդրո առարկա իրավունքների պաշտպանության

ՍԱՀՄԱՆԱՊՐԱՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

առումով առավել կատարելագործված իրավական պրակտիկայի ձևավորման համար:

Քանի որ 81-րդ հոդվածի պահանջն է միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի առնելը, հարկ ենք համարում անդրադառնալ նաև նշված դրույթների մեկնաբանման առնչությամբ առաջացող հարաբերությունների յուրահատուկ իրավաբանական բնույթին:

Իրավական ակտերի մեկնաբանմանն առնչվող հարաբերությունները կարգավորված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածով, համաձայն որի՝ *նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:*

Ի տարբերություն նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանման ինստիտուտի, որի պարագայում օրենսդիրը հստակ սահմանում է պարզաբանման իրավասու մարմինները, իրավական ակտերի մեկնաբանման ինստիտուտը իրավասու մարմինների շրջանակով սահմանափակված չէ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն պարագայում մեկնաբանման ենթակա իրավական ակտը Սահմանադրությունն է և, մասնավորապես, սահմանադրական դրույթը, հարկ է անդրադառնալ սահմանադրաիրավական նորմերի մեկնաբանման գործընթացի առանձնահատկություններին և այս համատեքստում Հայաստանի Հանրապետության

սահմանադրական դատարանին վերապահված բացառիկ դերակատարությանը: ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: **Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունն էլ սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար**»<sup>1</sup> (ընդգծումը մերն է՝ Ա.Ա.): Հետևաբար, թեև Սահմանադրական դատարանին վերապահված չէ հիմնական օրենքի պաշտոնական վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորություն, սակայն իր լիազորությունների իրականացման ընթացքում նա, փաստացի, մեկնաբանում է ՀՀ սահմանադրությունը: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված հիմնական իրավունքներն ու ազատությունները երաշխավորող դրույթները մեկնաբանելիս Սահմանադրական դատարանին վերապահվում է առանցքային դերակատարություն՝ խնդրո առարկա դրույթի կապակցությամբ տալու, ի թիվս այլնի, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանություն, որը հետագայում պարտադիր պետք է համարվի ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ մարմինների համար:

ՀՀ սահմանադրության 81-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները*: Միջազգային իրավունքում և մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված ունիվերսալ փաստաթղթերում, ինչպիսիք են օրինակ Քաղաքացիական և քաղա-

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարանի 18 հոկտեմբերի 2006թ. թիվ ՍԴՈ-652 որոշում:

քական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագիրը, Եվրոպական կոնվենցիան սահմանում են մարդու իրավունքների սահմանափակումների հստակ հիմքերն ու սահմանները: Ավելին, Եվրոպական կոնվենցիայով նախատեսված հիմնական իրավունքների սահմանափակումների իրավաչափությունը, անհրաժեշտությունը և համաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը զարգացրել է իր նախադեպային իրավունքը՝ սահմանափակման ենթակա իրավունքներից յուրաքանչյուրի սահմանափակման առանձին հիմքերի կապակցությամբ ներդնելով իր «գնահատման կանոնները», որոնք կարող են հարմարեցվել ներպետական իրավական համակարգին և իրավամտաճողությանը՝ հնարավորինս բացառելով հիմնական իրավունքների սահմանափակումների գործընթացում մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումները:

Այսպիսով, 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 81-րդ հոդվածը ստեղծել է բավարար սահմանադրաիրավական հիմքեր իրավակիրառողների համար Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքներն ու ազատությունները երաշխավորող դրույթները մեկնաբանելիս Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները հաշվի առնելու և դրանք որպես քննարկվող իրավահարաբերության կարգավորման առնչությամբ ուղղորդիչ նշանակություն ունեցող չափորոշիչներ ու իրավունքի հետագա զարգացումը կանխորոշող ուղենիշներ ընդունելու համար:

**РЕШЕНИЯ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ  
ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ УКРЕПЛЕНИЯ  
КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ ГАРАНТИЙ ЗАЩИТЫ  
ПРАВ ЧЕЛОВЕКА**

**Аннотация**

В результате конституционных реформ 2015 года укрепились конституционно-правовые гарантии защиты прав

человека. Преследуя цель выявить соотношение гарантируемых действующей Конституцией основных прав и свобод и международной правовой практики, в рамках данной статьи была проанализирована статья 81 Конституции. Результаты исследования создали достаточную основу для вывода:

- решения Европейского суда как органа, действующего на основании ратифицированного Арменией международного договора, учитываются при толковании закрепленных в Конституции положений об основных правах и свободах;
- в этом процессе, *inter alia*, проявляется *resinterpretata* характер решений Европейского суда;
- при толковании положений, гарантирующих основные права и свободы, ключевая роль отведена Конституционному Суду РА как гаранта конституционного правосудия в РА.

**Ключевые слова:** конституционные реформы, статья 81 Конституции, *resinterpretata* характер, международная правовая практика, решения Европейского суда.

**JUDGMENTS OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS IN THE CONTEXT OF STRENGTHENING CONSTITUTIONAL GUARANTEES FOR HUMAN RIGHTS PROTECTION**

**Annotation**

As a result of constitutional amendments which took place in 2015, constitutional guarantees for human rights protection were strengthened. Having the aim to reveal the correlation between the fundamental human rights and freedoms prescribed by the Constitution in force and international legal practice, Article 81 of the Constitution of the Republic of Armenia has been analyzed in



the framework of this article. The results of the study served as a base for the following conclusions:

- as an international body operating on the basis of international treaty ratified by the Republic of Armenia on human rights, judgments of the European court are being taken into account when interpreting the provisions concerning fundamental rights and freedoms enshrined in the Constitution;
- this process, *inter alia*, reveals the *res interpretata* nature of the judgments of the European Court;
- while interpreting the provisions concerning fundamental rights and freedoms, the key role is given to the Constitutional Court of the Republic of Armenia as a guarantor of constitutional justice in the Republic of Armenia.

**Keywords:** constitutional amendments, Article 81 of the Constitution, *res interpretata* nature, international legal practice, judgments of the European Court.



**ԴԱՎԻԹ ՀԱԿՈՔՅԱՆ**

*Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության  
առաջին աստիճանի դատարանի դատավոր,  
Արցախի պետական համալսարանի հայցորդ*

Աղքատության հաղթահարումը  
քաղաքավարական ժեստ չէ,  
դա արդարության գործողություն է,  
մարդու հիմնարար իրավունքների,  
արժանապատվության և արժանապատիվ կյանքի  
իրավունքի պաշտպանություն:

**Նելսոն Մանդելա**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**Ամփոփագիր.** Սույն հետազոտության հիմնական նպատակը սոցիալական ոլորտում պետության միջազգային և սահմանադրական պարտավորությունների բացահայտումն է՝ սոցիալական պետության գաղափարի լույսի ներքո: Սոցիալական ոլորտում պետության պարտականությունները գնահատելիս հաշվի են առնվել դրանց միջազգային իրավական ծավալը և փորձ է արվել այդ ծավալը համադրել Արցախի Հանրապետության՝ այդ ոլորտում ունեցած սահմանադրական պարտականությունների հետ:

Կարևոր է նաև գնահատել պետության սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ Սահմանադրությունում դրանց ամրագրման համատեքստում:

1(105)2022



ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Հողվածում փորձ է արվել վերլուծել նաև արտասահմանյան երկրների Սահմանադրություններում սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի ամրագրումը, իսկ ամրագրման դրական փորձը համադրել այդ սկզբունքի և միջազգային իրավական փաստաթղթերում պետությունների՝ այդ ոլորտում ունեցած պարտականությունների ծավալի հետ: Միջազգային պարտականություններն իրենց բնույթով ուղենիշ են և հանդիսանում են ելակետային Սահմանադրությամբ ու օրենքներով այդ ոլորտում մարդու իրավունքների ամրագրման համար:

**Հիմնաբառեր.** սոցիալական պետություն, Սահմանադրություն, միազգային պարտականություն, սկզբունք, երաշխիք, պահանջմունք:

Սոցիալական պետության և այդ ոլորտում անձանց ու քաղաքացիների իրավունքների օրենսդրական ամրագրումը բխում է Արցախի Հանրապետության սահմանադրության 1-ին հոդվածից, համաձայն որի՝ Արցախի Հանրապետությունն իրեն հռչակում է որպես սոցիալական պետություն: Պետք է հաշվի առնել, որ պետության սոցիալական խնդիրների ոլորտը շատ բազմազան է և ընդգրկում է հասարական հարաբերությունների լայն շրջանակ՝ մասնավորապես ընդգրկելով առողջապահության, կրթության, աշխատանքի և մի շարք այլ ոլորտներ:

Հարկ է նշել, որ անդրադառնալով սոցիալական ապահովության իրավունքի բովանդակային տարր հանդիսացող կենսաթոշակի իրավունքին՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է, որ «/.../ սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ /հոդվ. 1/, խտրականությունը բացառող հանգամանք /հոդվ. 14.1/, աշխատողի շահի դրսևորում /հոդվ. 32/, սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ /հոդվ. 37/, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ /հոդվ. 48/, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ /հոդվ. 89/:

Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հոչակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ<sup>1</sup>»:

Պետության խնդիրների սոցիալական ոլորտն ընդգրկում է սոցիալական հարաբերությունների ամբողջ համակարգը և քաղաքացիական հասարակության համարյա բոլոր հիմնական էլեմենտները, ինստիտուտներն ու հարաբերությունները:

Ժամանակակից պետության սոցիալական գործունեությունը, որը հիմնականում ուղղված է հասարակության մեջ առկա սոցիալական անհավասարության և շուկայի ազդեցության այլ բացասական հետևանքները մեղմելուն, հասկացության առումով ենթարկվել է էական փոփոխությունների՝ նեղ մեկնաբանությունից միջև այդ հասկացության լայն ընկալման, որպես սոցիալական հարաբերությունների ամբողջ համակարգի վրա պետության ազդեցության համալիր միջոցառումներ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է կրթության, առողջապահության համակարգերի, գիտության և մշակույթի ոլորտների, կոմունալ տնտեսության, չունևոր խավի սոցիալական աջակցության, հիվանդության, հաշմանդամության, գործազրկության և այլնի դեպքում ապահովագրության համակարգի առկայության, բնակչության կենսամակարդակի բարձրացման, աղքատության, ակոհոլամոլության և թմրամոլության դեմ պայքարի, սոցիալական գործընկերության ոգով՝ աշխատանքի և կապիտալի միջև հարաբերությունների կարգավորման, շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների համակարգի, ժողովրդագրական գործընթացների վրա ազդեցությանը և այլնին:

Այս առումով ժամանակակից «սոցիալական պետությունը» կամ «բարեկեցիկ պետությունը» ինստիտուտների, հարաբերությունների, արժեքների և նորմերի ամբողջություն է, որը հանդիսանում է ժամանակակից սոցիալ-տնտեսական համակարգի

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142 որոշում:

սոցիալական ենթակառուցվածքների հիմնական բաղադրիչը: Անդրադառնալով սոցիալական պետության խնդրին՝ կարող ենք նշել, որ ամենից առաջ այդ խնդիրը պետության կողմից յուրաքանչյուր քաղաքացու համար մարդու արժանավայել նվազագույն կենսապայմանների ապահովումն է<sup>1</sup>:

Հայրենական գրականության մեջ սոցիալական պետությունը բնութագրվում է որպես սոցիալական արդարության, իր քաղաքացիների բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության մասին հոգ տանող ու մարդու համար արժանավայել կյանքի պայմաններ ապահովողի<sup>2</sup>:

Ժամանակակից կապիտալիստական պետությունների իրական սոցիալական քաղաքականությունը թույլ է տալիս խոսել «ժամանակակից սոցիալական կապիտալիզմի» պետությունների մասին:

Այս առումով Վ. Չիրկինը նշում է սոցիալական պետության այնպիսի հիմնական հատկանիշների մասին, ինչպիսիք են, մասնավորապես՝

1) սոցիալական բնույթի իրական լինելը, դա իրական, այլ ոչ թե անհրաժեշտ սոցիալական պետություն է ( արդեն իրականում գործող, այլ ոչ թե ապագային ուղղված, զարգացող), այսինքն պետություն, որը մարդու համար ապահովում է արժանավայել կյանք և ազատ զարգացում,

2) պետություն, որը հասարակությունում իրականացնում է սոցիալ-քաղաքական արբիտրի դեր,

3) պետությունն ինչ-որ կողմերով մոտենում է հասարակությանը, կոլեկտիվներին՝ այսպիսով վերադառնալով հասարակություն և այլն<sup>3</sup>:

Կարևոր ենք համարում նշել, որ ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունը բավականաչափ սոցիալականացված

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, խմբ. **Ն.Վ. Այվազյան**, Երևան, 2016, էջ 134:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս **Чиркин В.Е.** Государство социального капитализма // Государство и право. 2005. № 5. - С. 54-60:

և կոլեկտիվացված է, ինչը դրսևորվում է շուկայական տնտեսության սոցիալական ուղղվածությամբ, այդ ոլորտում պետության աճող դերով, որտեղ արդարության սկզբունքն ընկալվում է ոչ միայն որպես ձևական-իրավական կատեգորիա, այլև որպես սոցիալ-քաղաքական իրողություն, որի միջոցով ապահովվում է անհատական, կոլեկտիվ և հասարակական իրավունքների, պահանջմունքների ու հետաքրքրությունների ներդաշնակ համադրումը: Նման մոտեցումը համապատասխանում է արևմտյան երկրների իրավաբանների և քաղաքագետների պատկերացումներին<sup>1</sup>, միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին և սկզբունքներին, ինչպես նաև ժողովրդավարական երկրների սահմանադրություններին:

Ուստի այս առումով կարևոր է սոցիալական ոլորտում պետությունների պարտականությունների ամրագրումը, ինչպես միջազգային-իրավական, այնպես էլ սահմանադրաիրավական տեսանկյունից:

***Սոցիալական ոլորտում պետության պարտականությունների միջազգային-իրավական և սահմանադրաիրավական ամրագրումը***

Մարդու և քաղաքացու սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքները և դրանք ապահովելու պետությունների պարտավորություններն ամրագրվել են միջազգային կարևորագույն այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են՝ 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ինչպես նաև՝ Պետությունների տնտեսական պատասխանատվության 1974 թվականի խարտիան, Սովի և թերսնման վերացման 1974 թվականի համընդհանուր հռչակագիրը, Հաշմանդամություն ունեցող անձանց

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Borgetto M., Lafore R.** La République Social. Contribution a l'itude de la question démocratique en France. P. 2000; **Berman H.J.** The Faith and Order. The Reconciliation of Law and Religion. Atlanta. 1993, էջ 221, **Каслс Ф.Дж.** Собака, которая не залаяла: Экономическое развитие и послевоенное государство благосостояния // Proet Contra. Человек в социальном государстве. - 2001. - № 3. - էջ 161:

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ

իրավունքների 1975 թվականի հռչակագիրը, Մայրության պաշտպանության 1952 թվականի կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին 1959 թվականի հռչակագիրը, Երեխայի իրավունքների մասին 1989 թվականի կոնվենցիան և այլն<sup>1</sup>:

Միջազգային իրավական նորմերին համապատասխան՝ սոցիալական պետության գաղափարներն ու սկզբունքը ամրագրվել են նաև ժողովրդավարական պետությունների Սահմանադրություններում: Մասնավորապես, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների Սահմանադրությունները, տվյալ պետությունները բնութագրում են որպես սոցիալական: Հարկ է նկատել, որ սահմանադրական մակարդակում քաղաքացիների սոցիալ-տնտեսական երաշխավորված իրավունքների համակարգն առաջին անգամ ամրագրվել է 1936 թվականի Խորհրդային Սահմանադրությամբ (118-121 հոդվածներ): 1946 թվականի Ֆրանսիայի սահմանադրության նախաբանը ներառում էր սոցիալ-տնտեսական իրավունքների լայն շրջանակ, իսկ սոցիալ-տնտեսական ոլորտի իրավունքներ ամրագրված են Ժամանակակից բոլոր սահմանադրություններում: Մասնավորապես, Իտալիայի սահմանադրության 41-րդ հոդվածում ամրագրված է, որ օրենքը սահմանում է միջոցառումներ և վերահսկողական ծրագրեր, որոնց օգնությամբ պետական և մասնավոր տնտեսական գործունեությունը կարող է ուղղորդվել և համակարգվել սոցիալական նպատակներով: Անհրաժեշտ է նշել, որ Շվեյցարիայի սահմանադրությունում առկա է «Սոցիալական նպատակները» անվանումով հատուկ գլուխ, իսկ Իսպանիայի սահմանադրությունում՝ «Սոցիալական և տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները» գլուխը<sup>2</sup>, որոնցում ամրագրված են պետության պարտականությունները սոցիալական ոլորտում:

<sup>1</sup> Տե՛ս Международное гуманитарное право в документах. - М., 1996. - էջ 23-39; Международное право в документах: Учебное пособие / Сост. **Н.Т. Блатова, Г.М. Мелков.** - М., 1997. - էջ 15-22, 267-272; Право Европейского союза: Сб. документов / Сост. **П.Н. Бирюков.** - Воронеж, 2001. - էջ 256-260:

<sup>2</sup> Տե՛ս Правовая библиотека legalns.com, **Маклаков В.В.** Конституции зарубежных государств. - М., 2009. - էջ 234:

Անցյալ դարի 70-80-ական թվականներին ընդունված արտասահմանյան երկրների մի շարք սահմանադրություններում, ինչպես նաև նորագույն ժամանակաշրջանի սահմանադրություններում նույնպես նկատելի է սոցիալական ոլորտում պետության պարտականությունների ու այդ ոլորտում պետական քաղաքականության խնդիրների հետևողական ամրագրում: Հարկ է նկատել, որ ԽՍՀՄ 1977 թվականին ընդունված և մինչև 1993 թվականը գործող Սահմանադրության «Սոցիալական զարգացումը և մշակույթը» հատուկ գլխում ամրագրված են եղել պետության պարտականությունները՝ աշխատանքի պայմանների կատարելագործման, դրա՝ գիտական հիմքի վրա կազմակերպման, աշխատանքի վարձատրության մակարդակի բարձրացման, առողջապահության պետական համակարգի զարգացման, սոցիալական ապահովության, կրթության, գիտության, մշակույթի, հոգևոր արժեքների զարգացման և այլ ոլորտներում: Պետության նշված պարտականությունների իրականացումը հիշյալ Սահմանադրությամբ դիտվել է որպես սոցիալական ոլորտում պետության գլխավոր խնդիրն հասնելու անհրաժեշտ պայման. «իրական հնարավորությունների ընդլայնում քաղաքացու ստեղծագործական ուժի, ընդունակությունների և շնորհների կիրառման, անհատի համընդհանուր զարգացման համար» (հոդված 20)<sup>1</sup>: Բացի դրանից, ԽՍՀՄ սահմանադրությամբ ամրագրվել էր սոցիալ-տնտեսական իրավունքների ու ազատությունների ընդլայնված համակարգ:

Արցախի Հանրապետությունը, հետևելով սոցիալական պետության վերաբերյալ միջազգային իրավական սկզբունքներին ու մոտեցումներին, հռչակվում է որպես սոցիալական պետություն (ԱՀ սահմանադրություն, հոդված 1): Նշված մոտեցման ամրագրումն առավելապես համապատասխանում է արտասահմանյան երկրների ժամանակակից ժողովրդավարական սահմանադրությունների գաղափարներին և սկզբունքներին, ինչպես նաև

<sup>1</sup> ԽՍՀՄ Սահմանադրություն, Մ., 1977թ.:

մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային-իրավական չափանիշներին: Պետության սոցիալական ուղղվածության վերաբերյալ առանձին դրույթներ առկա են եղել նաև, օրինակ, ԼՂՀ սահմանադրության<sup>1</sup> 34-րդ հոդվածում, որտեղ ամրագրված էր օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձ ստանալու յուրաքանչյուր աշխատողի իրավունքը: Հարկ է նկատել, որ ԱՀ սահմանադրությամբ<sup>2</sup> ուղղակիորեն չի ամրագրվել աշխատողի նման իրավունքը: Մեր կարծիքով նախորդ կարգավորումը խնդրո առարկա հարցում ավելի առաջադիմական էր: Այդ առումով կարծում ենք՝ ընդունելի կլիներ նախորդ Սահմանադրության դրական օրինակով նմանատիպ ձևակերպում ամրագրվել նաև ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքի (ԱՀ սահմանադրություն, հոդված 82) իրացման դեպքում, Սահմանադրությամբ 82-րդ հոդվածը լրացնելով «սահմանված կենսաապահովման նվազագույն զաբյուղից ոչ ցածր սոցիալական օգնության չափով» ձևակերպմամբ: Նշվածի համատեքստում և հաշվի առնելով, որ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն Արցախի Հանրապետությունը հանդիսանում է սոցիալական պետություն, հետևաբար վերջինիս քաղաքականությունն այդ ոլորտում պետք է ուղղված լինի այնպիսի պայմանների ստեժմանը, որոնք կապահովեն արժանավայել կյանք և մարդու(անհատի) ազատ զարգացման հնարավորություն:

Ժամանակակից պետությունների սոցիալական քաղաքականությունն իրենից ներկայացնում է միջոցառումների համալիր, որոնք պետության կողմից ընդունվում և իրագործվում են հասարակության լայն շերտերի բարեկեցության ապահովման

<sup>1</sup> ԼՂՀ սահմանադրություն, ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 10-ին, ԼՂՀ ՊՏ 2006.12.15/32(41)

<sup>2</sup> ԱՀ սահմանադրություն, ընդունվել է 2017 թվականի փետրվարի 2-ին, ԼՂՀ ՊՏ 2017.02.28/04(318)



նպատակով: Ժամանակակից ժողովրդավարական երկրների սոցիալական գործունեության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում նաև եկամուտների սոցիալ-արդարացի բաշխման ապահովումը: Մեր կարծիքով շուկայի ինքնակարգավորման մեխանիզմը պետք է ապահովի սոցիալական արդարություն հասարակության մեջ, այլ ոչ թե նպաստի սոցիալական անհավասարության խորացմանը՝ դրանով իսկ մեծացնելով հարուստ և աղքատ խավերի միջև գոյություն ունեցող բևեռացումը: Գտնում ենք, որ այս առումով խնդիրն այն է, որպեսզի իրականության մեջ թույլ չտրվեն իրավաբանական և «փաստացի սահմանադրություններ»-ի անհամապատասխանություններ, ապահովվի երկրի հիմնական օրենքի և միջազգային նորմերի պահանջներին համապատասխան պետության սոցիալական քաղաքականության իրականացումը: Սրանք այն անհրաժեշտ պահանջներն են, որոնք մեր կարծիքով պետք է պահպանվեն նաև սոցիալական պետության **արցախյան մոդելի ձևավորման հարցում**: Կարծում ենք, որ Արցախի Հանրապետության համար ընդունելի սոցիալական մոդելի ընտրության հարցում առաջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ սոցիալական պետության տարբեր տեսություններն ու մոդելները, որոնք իրագործվել են այս կամ այն պետությունում: Թեև անհրաժեշտ է նշել, որ մաքուր վիճակում նման մոդելներ գոյություն չունեն և յուրաքանչյուր պետություն ներդնում է իր համար ընդունելի մոդելը՝ որոշակի տարրերի փոփոխություններով: Մեր գնահատմամբ՝ կոնկրետ մոդելի ընտրությունը կապված է տվյալ պետության պատմական, սոցիալ-մշակույթային և տնտեսական պայմանների հետ, պայմանավորված է ինչպես ազգային, այնպես էլ տվյալ պատմական ժամանակաշրջանի առանձնահատկություններով: Խոսելով Արցախի Հանրապետության մասին՝ անհրաժեշտ է ընդգծել երկրում առկա բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակը և սոցիալական ոլորտում պետության սահմանափակ տնտեսական հնարավորությունները: Նման իրավիճակի վրա իր բացասական ազդեցությունն են ունեցել առկա աշխարհա-

քաղաքական իրողությունները՝ պայմանավորված պատերազմական իրավիճակով և այդ ճանապարհին պետության առջև ծառայած անվտանգային ու մի շարք այլ սոցիալական խնդիրներով: Միևնույն ժամանակ, բնակչության եկամուտների գոյություն ունեցող տարբերությունները վերացնելու և հասարակության սոցիալական բևեռացումը հաղթահարելու, սոցիալական արդարության և սոցիալական բարեկեցության ապահովման նպատակով, գործնական հետաքրքրություն է ներկայացնում պետության բարեկեցության սոցիալ-դեմոկրատական մոդելը, որը պետք է հաշվի առնի պետության սոցիալական ծախսերը, որպես մարդկային կապիտալի ներդրում, որն ինքնին ոչ միայն բարձրագույն արժեք է, այլև տնտեսական աճի կայուն և հիմնական պայման: Կարծում ենք, որ որպես սոցիալական պետության մոդել կարելի է հիմք ընդունել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող մոդելը, որտեղ գիտնական-տնտեսագետ Լ. Էրհարդի ղեկավարությամբ իրականացված տնտեսական բարեփոխումների իրականացման արդյունքում ստեղծվել է արդյունավետ սոցիալ-տնտեսական մեխանիզմներից մեկը, ըստ որի՝ տնտեսական արդյունավետությունը պետք է լինի ոչ թե ինքնանպատակ, այլ հանդիսանա պետության քաղաքացիների նյութական և հոգևոր կարիքները բավարարելու միջոցներից մեկը<sup>1</sup>: Գտնում ենք, որ պետության սոցիալական մոդելի ընտրության հարցում պետք է ելնել նաև այն իրողությունից, որ պետության կողմից սոցիալական «բարեգործությունը» ժամանակավոր երևույթ է, որը կապված է բնակչության այն խավի սոցիալական պահանջմունքները բավարարելու հետ, ովքեր չեն կարողանում ապահովել սեփական բարեկեցությունը, հատկապես Արցախյան 2020 թվականի սեպտեմբերի 27-ի պատերազմից հետո: Հետևաբար, հասարակության և քաղաքացիների բարեկեցու-

<sup>1</sup> St'u Механизм регулирования экономики в Германии: как он функционирует и чему учит? / խմբ. **В.П. Гутника**. - М., 1995. - էջ 4; **Антропов В.В.** Социальная рыночная экономика: Путь Германии. - М., 2003. - էջ 223:

թյան պայմաններում սոցիալական աջակցության չափն աստիճանաբար պետք է կրճատվի: Մեր կարծիքով՝ պետության սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունը պետք է միտված լինի սոցիալական արժեքների բաշխման մեխանիզմում անհատի հասարակական կարգավիճակի ամրապնդմանը, որպեսզի յուրաքանչյուր մարդ կարողանա հասնել նյութական բարեկեցության ցանկալի մակարդակի՝ ունենալու կրթություն, լավ վարձատրվող աշխատանք, որը թույլ կտա նրան ստեղծել իր համար կենսապայմանների բավարար մակարդակ ու որակ և հնարավորինս անկախ լինել պետության «սոցիալական խնամակալությունից»՝ դրանով իսկ հիմք դնելով նաև ուժեղ և զարգացած պետություն ունենալու գաղափարին: Խնդրո առարկա հարցում հատուկ հետաքրքրություն է ներկայացնում 1974 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված Պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների խարտիայի 7-րդ հոդվածը, որում ասվում է. «Յուրաքանչյուր պետություն առաջնային պատասխանատվություն է կրում իր ժողովրդի տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար: Այդ նպատակով յուրաքանչյուր պետություն իրավունք և պատասխանատվություն ունի ընտրելու զարգացման նպատակներն ու միջոցները, լիարժեք մոբիլիզացնելու և օգտագործելու իր ռեսուրսները, իրականացնելու առաջադիմական տնտեսական և սոցիալական բարեփոխումներ և ապահովելու ժողովրդի լիարժեք մասնակցությունն այդ գործընթացին և օգուտներին»: Կարծում ենք, որ հենց այս նշված տեսանկյունից պետք է գնահատել Արցախի Հանրապետությունում իրականացվող և մշակվող բոլոր սոցիալական բարեփոխումները: Անկասկած, սոցիալական ոլորտում պետության քաղաքականությունը և որպես դրա բաղադրիչ

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
 ◆ 1(105)2022

<sup>1</sup> 1975 թ. «Զարգացման և տնտեսական համագործակցության մասին» ՄԱԿ-ի ԳԱ No. 3362 (S-VII) բանաձևի նախաբանում նշվում է, որ Միջազգային տնտեսական նոր կարգի ծրագիրը և 1974 թ. Խարտիան «դնում են Միջազգային տնտեսական նոր կարգի հիմքերը»:

հանդիսացող սոցիալական աջակցության ծավալը, չեն կարող գերազանցել երկրի համախմբված բյուջեի կրկնապատիկը: Սակայն սոցիալական ոլորտին պետական հատկացումների ծավալի նվազեցումը, ինչպես նաև նվազագույն սոցիալական երաշխիքների սահմանումը, չի կարող տեղի ունենալ ի վնաս մարդու իրավունքների միջազգային չափանիշների: Առաջին հերթին խոսքը վերաբերում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին, որը պարունակում է մասնակից պետությունների համար պարտադիր վարքագծի նորմեր, այսինքն՝ այնպիսի նորմեր, որոնք պարտադիր են երկրի կողմից կիրառելու համար: Դաշնագիրը, մասնավորապես, ամրագրում է յուրաքանչյուրի համար և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը (հոդված 11, 1-ին մաս), յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը (հոդված 12, 1-ին մաս), կրթության՝ յուրաքանչյուր մարդու իրավունքը (հոդված 13, 1-ին մաս)<sup>1</sup> և այլն:

Սոցիալական իրավունքների կարևորության տեսանկյունից ուշադրության է արժանի նաև Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (այսուհետ նաև՝ Խարտիա), որը Եվրոպայի խորհրդի հիմնարար փաստաթղթերից է: Այն սոցիալական իրավունքների վերաբերյալ միջազգային ստանդարտների և պետությունների կողմից դրանց կատարման մշտադիտարկման մեխանիզմների համախումբ է: Խարտիան նաև անվանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)<sup>2</sup>: Ցանկանում ենք ընդգծել, որ Խարտիայի և դրանով սահմանված

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501>

<sup>2</sup> Տե՛ս FUNDAMENTAL SOCIAL RIGHTS IN EUROPE, EUROPEAN PARLIAMENT, Directorate General for Research, WORKING PAPER, 2-2000, էջ 10:

իրավունքների համար հատկանշական է այն հանգամանքը, որ Խարտիան մեկնաբանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ինչպես նաև համապատասխան այլ կոնվենցիոն փաստաթղթերի լույսի ներքո, որոնք կիրառելի են Խարտիայով երաշխավորված իրավունքների նկատմամբ, ինչպես նաև այդ կոնվենցիաներին վերջիններիս մշտադիտարկման մարմինների կողմից տրված մեկնաբանությունների ներքո<sup>1</sup>:

Կարևոր ենք համարում նշել, որ Արցախի Հանրապետությունը սկսել է միջազգային պայմանագրերին միակողմանի միանալու գործընթաց<sup>2</sup>:

Այսպիսով կարող ենք եզրահանգել, որ պետության բնութագրիչներից է նաև վերջինիս սոցիալական լինելը, որն ամրագրվում է պետությունների սահմանադրություններում: Պետության սոցիալական բնույթը և այդ ոլորտում վերջինիս սահմանադրական պարտականություններն ուղղակիորեն կապի մեջ են գտնվում նրա ստանձնած միջազգային պարտականությունների հետ: Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրված իրավական ակտերի (ներպետական և միջազգային) և դրանց վերաբերյալ իրավասու մարմինների մեկնաբանությունների, առանձին հեղինակների կարծիքների ու տեսակետների, ինչպես նաև մասնագիտական գրականության հիման վրա եզրահանգում ենք, որ սոցիալական ոլորտում պետության խնդիրները, այդ ոլորտում անձանց իրավունքներն այլ հիմնարար իրավունքների համեմատությամբ նվազ կարևոր և ստորադասված իրավունքներ չեն:

Հարկ է նկատել, որ սոցիալական պետությունը բնութագրվում է որպես սոցիալական արդարության, իր քաղաքացիների բարե-

<sup>1</sup> St’u European committee of social rights, The relationship between European Union law and the European Social Charter, Working Document, 15 July 2014, էջ 5-6:

<sup>2</sup> St’u ԱՀ Գերագույն դատարանի 2020 թվականի մայիսի 7-ի ԳԴՈ-22 որոշումը:

կեցության և սոցիալական պաշտպանվածության մասին հոգ տանող ու մարդու համար արժանավայել կյանքի պայմաններ ապահովողի:

Սոցիալական պետության սահմանադրական սկզբունքը, այդ հասկացության բովանդակային իմաստով պետք է ուղենիշ հանդիսանա համապատասխան իրավական նորմերի մեկնաբանման և պետության պարտավորությունների ծավալի հստակեցման հարցում:

## КОНСТИТУЦИОННЫЙ ПРИНЦИП СОЦИАЛЬНОГО ГОСУДАРСТВА И ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВА В СОЦИАЛЬНОЙ СФЕРЕ

### Аннотация

Основная цель данной работы – выявление международных и конституционных обязательств государства в свете идеи социального государства. Оценивая обязанности государства в социальной сфере был учтен их международно-правовой объем, также была сделана попытка сравнения этого объема с конституционными обязанностями Республики Арцах в этой сфере.

Мы посчитали также важным оценить основные направления социальной политики государства в рамках их конституционного закрепления.

В работе была сделана попытка анализа закрепления конституционного принципа социального государства в конституциях зарубежных стран, а позитивный опыт сопоставлен с этим принципом и объемом обязательств государств в этой сфере, отраженных в международно-правовых документах. Международные обязанности по существу являются

ориентиром и имеют исходное значение для закрепления прав человека в этой сфере в Конституции и законах.

**Ключевые слова:** социальное государство, конституция, международные обязательства, принцип, гарантия, требование, объем обязательств.

## THE CONSTITUTIONAL PRINCIPLE OF THE WELFARE STATE AND THE PROBLEMS OF THE STATE IN THE SOCIAL SPHERE

### Annotation

The main purpose of this research is to reveal the international and constitutional obligations of the state in the social sphere in the frames of the idea of a welfare state. The responsibilities of the state in the social sphere were assessed by taking into account their international legal scope, which was compared to the constitutional responsibilities of the Republic of Artsakh in that sphere.

We have also considered the importance of evaluating the main directions of the state's social policy in the context of their constitutional enshrinement.

In the article, the author also analyzed the enshrinement of the principle of the welfare state in the constitutions of foreign countries, and combined the positive experience of enshrinement with that principle and with the scope of the responsibilities of states in this field provided in international legal documents. International obligations are, by their very nature, guidelines and a starting point for the enshrinement of human rights in the Constitution and laws.

**Keywords:** welfare state, Constitution, international obligation, principle, guarantee, requirement, scope of obligations.



**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*«Իրավունքների պաշտպանություն  
առանց սահմանների»*

*ՀԿ իրավական հարցերով  
փորձագետ,*

*Դատավորների ընդհանուր ժողովի  
ուսումնական հարցերով  
հանձնաժողովի անդամ,*

*ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի հայցորդ*

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ՈՒ  
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ամփոփագիր.** Դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտը դատական իշխանության անկախության եւ արդյունավետության ապահովման կարևորագույն գործոններից մեկն է, ինչը մանրամասն կարգավորում է ստացել ինչպես ներպետական օրենսդրություններում, այնպես էլ միջազգային չափանիշներով: Այդ կարգավորումներում առանձնակի կարևորություն ստանում են կարգապահական պատասխանատվության հիմքերը, պատասխանատվության ենթարկող մարմիններն ու վերջիններիս ձևավորման կարգը, իրավասությունների շրջանակը, կայացվող որոշումների հիմնավորվածությունն ու ողջ գործընթացի օրինականությունը:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի նպատակներն ու գործառնական նշանակությունը՝ միջազգային չափանիշների ու Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրական կարգավորումների համեմատական վերլու-

1(105)2022  
◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ  
◆ ՍԱՅՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



ծության համատեքստում: Դա թույլ կտա վեր հանել ներպետական օրենսդրության բացերն ու խնդրահարույց կարգավորումները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի խնդիրները:

**Հիմնաբառեր.** դատական իշխանություն, դատավորի կարգապահական պատասխանատվություն, դատավորի անկախություն, պատասխանատվության հիմքերի հստակություն, պատասխանատվության համաչափության սկզբունք:

Դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտն ու վերջիններիս անկախությունը ուղղակիորեն միմյանց առնչվող հարցեր են, ինչի կապակցությամբ հատկապես կարևոր նշանակություն ունեն կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակությունն ու կանխատեսելիությունը:

Այս հարցի առնչությամբ միջազգային կարգավորումներում ձևավորվել են հստակ սկզբունքներ: Այսպես, Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից բազմիցս նշվել է, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կանոններն ուղղակիորեն ազդում են դատավորների անկախության վրա: Լայն և ոչ բավարար հստակություն ունեցող սահմանումներն ու հիմքերը, օրինակ, մեծացնում են դրանց պրակտիկ մեկնաբանության չարաշահման հնարավորությունները, ինչը, բնականաբար, բացասական ազդեցություն կարող է թողնել դատավորների անկախության վրա<sup>1</sup>:

Այս հարցի առնչությամբ գործում է ևս մեկ կարևոր կանոն՝ համաձայն որի դատավորները անձնական պատասխանատվություն չեն կրում իրենց կայացրած որոշումները բեկանվելու կամ փոխվելու համար: Ավելին, դատավորները չպետք է պատաս-

<sup>1</sup> Opinion no 841/2016 on Republic of Kazakhstan on the draft Code of Judicial Ethics.

ՍԱԳՍԱՆԱՐԴՐՎԱՆ ՂԱՏՐՈՒՄ 1(105)2022

խանատվության ենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների կամ դատարանների քննադատության համար<sup>1</sup>: Վենետիկի հանձնաժողովի կողմից առանձնակի կարևորություն տրվել է կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակության հարցին<sup>2</sup>: Մասնավորապես, լայն և ոչ հստակ սահմանումները մեծացնում են դրանց մեկնաբանության և չարաշահման հնարավորությունները, ինչը կարող է վտանգավոր լինել դատավորների անկախության համար: Հետևաբար, խորհուրդ է տրվում սահմանել առավել կոնկրետ հիմքեր կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Մինևույն ժամանակ, անհնար է ակնկալել, որ օրենսդիր մարմինը կկարողանա հստակ և սպառիչ թվարկել անընդունելի վարքագծի բոլոր դրսևորումները: Մակեդոնիայի դատական ոլորտի բարեփոխումների վերաբերյալ և հատկապես կարգապահական պատասխանատվության հիմքերի առնչությամբ Հանձնաժողովը գտել է, որ մանր կարգապահական խախտումները, ինչպիսիք են, օրինակ, դատական գործառույթների վրա ազդեցություն թողնող անկարգությունը, Արդարադատության խորհրդի կամ Բարձրագույն դատարանի կոչով չգործելը ոչ հստակ հիմքեր են և կարող են կարգապահական վարույթի մեջ սուբյեկտիվ ընկալման տարր մտցնել:

Որպես կոպիտ կարգապահական խախտում են սահմանվել դատավարական ժամկետների տարբեր խախտումները, ինչը կրկին պրակտիկայում կարող է հանգեցնել անորոշության: Ոչ հստակ է նաև դատավորին՝ կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունք ապահովելու առնչությամբ դրսևորած կողմնա-

<sup>1</sup> CDL-AD(2013)035, Opinion on the draft Code on Judicial Ethics of the Republic of Tajikistan

European Charter on the statute for judges, <https://rm.coe.int/16807473ef>

Magna Carta Of Judges ,<https://rm.coe.int/16807482c6>.

<sup>2</sup> Venice Commission, Opinion No. 893/2017, on the draft judicial Code of Armenia, 2017.

պահության համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը: Քանի որ այդ հիմքի դրսևորումը սովորաբար հանգեցնում է որոշման բեկանման՝ արդար դատաքնության իրավունքի խախտման հիմքով:

Որպես կոպիտ խախտում է դիտարկվում նաև վերջնական չհամարվող դատական գործերով տեղեկատվության հանրայնացումը, ինչի կապակցությամբ Հանձնաժողովը նշել է, որ դատավորների կողմից իրենց պարտականություններն իրականացնելիս որևէ տեղեկատվության հանրայնացման արգելքը չափազանց ծայրահեղ սահմանափակում է<sup>1</sup>: Նույն կարծիքի մեջ Վենետիկի հանձնաժողովը նշել է նաեւ, որ «արդարադատության հեղինակություն» կամ «դատավորի արժանապատվություն» տերմինների նախատեսումն ընդհանուր առմամբ չափազանց լայն հասկացություններ են և սուբյեկտիվ ընկալման ենթակա:

Առանձնակի կարգավորում եւ կարևորություն ստացել է նաեւ դատավորների քաղաքականացվածության ու քաղաքական գործունեության մեջ ներգրավվածության արգելքը: Վերջինս ամրագրվում է որպես պարտավորություն եւ սահմանում, որ դատավորը չպետք է հանդիսանա քաղաքական կուսակցության անդամ կամ հրապարակային արտահայտի քաղաքական բնույթի մտքեր կամ մասնակցի քաղաքական բնույթի հանդիպումների<sup>2</sup>:

Կարգապահական պատասխանատվության հարցի շրջանակներում դատավորի իրավունքների պաշտպանության համար էական նշանակում ունի կարգապահական պատասխանատվության միջոցի համաչափության սկզբունքի պահպանումն ու կայացված որոշման բողոքարկման համար մեխանիզմների առկայությունը: Եվրոպական դատավորների խորհրդատվական խումբը սահմանում է, որ բոլոր դեպքերում պատասխանատվության միջոցը սահմանելիս պետք է պահպանվի պատասխանատվության միջոցի ու թույլ տրված խախտման համաչափության

<sup>1</sup> Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015.

<sup>2</sup> Տե՛ս հղում 1:

սկզբունքը<sup>1</sup>: Որոշումների բողոքարկման առնչությամբ ընդունված է, որ բողոքարկման մարմինը օրենքով սահմանված լինի: Որոշումները պետք է այնպիսի մարմնի կողմից վերանայվեն, որն անկախ է և ապահովում է դատական գործընթացների/արդար դատաքննության բոլոր երաշխիքները<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է պատասխանատվության ենթարկող մարմնին, ապա որպես ընդհանուր մոտեցում ընդունված է, որ պատասխանատվության ենթարկելու իրավասությունը պետք է դրվի հատուկ մարմնի վրա, որը կունենա բողոքները լսելու և քննելու լիազորություն, իսկ վերջնական որոշումը կկայացվի անկախ մարմնի կողմից:

Կիլյան սկզբունքների համաձայն՝ պետք է գոյություն ունենա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող հատուկ անկախ մարմին<sup>3</sup>: Դատավորների կարգապահությանն առնչվող խնդիրներով որոշումներ կայացնող մարմինները չպետք է կարգապահական վարույթներ հարուցելու իրավունք ունենան: Դատավորների եվրոպական ասոցացիան իր հերթին սահմանել է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելը պետք է իրականացվի այնպիսի մարմնի կողմից, որի կազմում կան դատական իշխանության ներկայացուցիչներ և որը կգործի սահմանված ընթացակարգային կանոններին համապատասխան<sup>4</sup>:

Առանձին հետաքրքրության առարկա է հանդիսանում դատավորների կարգապահական պատասխանատվության գործում գործադիր իշխանության ներգրավվածության հարցը: Վենետիկի հանձնաժողովն այս առնչությամբ նշել է, որ կարգապահական պատասխանատվության գործընթացում արդարադատության

<sup>1</sup> Consultative Council of European Judges (CCJE), CCJE (2002) Op. N° 3.

<sup>2</sup> Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015.

<sup>3</sup> KYIV RECOMMENDATIONS ON JUDICIAL INDEPENDENCE IN EASTERN EUROPE, SOUTH CAUCASUS AND CENTRAL ASIA

<https://www.osce.org/files/f/documents/a/3/73487.pdf>.

<sup>4</sup> Judges' Charter in Europe (European Association of Judges) (1997).

նախարարի ներգրավվածությունը խնդրահարույց չէ, եթե այդ գործընթացում կան այլ դերակատարներ ևս<sup>1</sup>: Հանձնաժողովը գտել է նաեւ, որ մարմինը, որը նախաձեռնում է կարգապահական վարույթը, չպետք է նաև որոշում կայացնի կարգապահական պատասխանատվության մասին:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմնի լավագույն օրինակ, որպես այդպիսին, հանդիսանում են դատական խորհուրդները, որոնք դատավորների անկախության ապահովման, միևնույն ժամանակ նրանց հաշվետվողականության ապահովման մեխանիզմներն են: Դատական խորհուրդները կենտրոնական դերակատարում ունեն դատավորներին պաշտոնի նշանակման, պաշտոնից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերում:

Անդրադառնալով թեմայի առնչությամբ ՀՀ ներպետական կարգավորումներին՝ պետք է հղում կատարել Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքին: Վերջինիս 19-րդ գլուխը սահմանում է դատավորի կարգապահական պատասխանատվության կարգավորումները:

Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածը նախատեսում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

<sup>1</sup> Opinion No905/2017, on the former Yugoslav Republic of Macedonia.

Արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Էական կարգապահական խախտում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման.

2) հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-րդ և 9-րդ, 11-րդ և 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-րդ և 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.

3) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը:

Իսկ ահա օրենսգրքի 146-րդ հոդվածով սահմանված են կարգապահական պատասխանատվության առիթները: Այսպես, որպես առիթ նախատեսված են՝

1) անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը.

2) կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները.

3) վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման

հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը.

4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգապահական պատասխանատվության վերոնշյալ հիմքերը պրակտիկ մեկնաբանության տեսանկյունից խնդրահարույց են, քանի որ ունակ են տարընկալման եւ տարմեկնաբանության տեղիք տալ: Օրինակ, ըստ օրենքի արարքը կարող է որակվել որպես դիտավորությամբ կատարված, եթե վարույթի ընթացքում հաստատվի, որ դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Այն հաստատելն իր մեջ պարունակում է սուբյեկտիվ ընկալման որոշակի տարրեր, ինչը պրակտիկայում կարող է ենթարկվել տարաբնույթ վերլուծությունների ու բացատրությունների՝ ըստ այդմ կիրառվել ի վնաս դատավորի, կամ ի վնաս կարգապահական պատասխանատվության ինստիտուտի բուն նպատակի: Մեկ այլ օրինակ է օրենսգրքով սահմանված կոպիտ անփութության հիմքը, ինչը բացատրվում է որպես դատավորի կողմից վարքագծի ոչ իրավաչափ բնույթի չգիտակցում, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել: Նման կարգավորումը բովանդակային առումով եւ մեկնաբանության հնարավորություններով լայն է եւ կրկին կարող է ռիսկային մեկնաբանության եւ հետևանքների հանգեցնել:

Կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմնի առնչությամբ պետք է արձանագրել, որ կենտրոնական դերակատարումը եւ վերջնական որոշում կայացնելու լիազորությունը տրված է Բարձրագույն դատական խորհրդին: Վեր-

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ 1(105)2022

ջինս դատական համակարգի ինքնակառավարման մարմին է, որին ՀՀ սահմանադրությամբ եւ Դատական օրենսգրքով տրված է դատարանների և դատավորների անկախությունն ապահովելու իրավասություն<sup>1</sup>: Խորհուրդը կազմված է 10 անդամից՝ 5 դատավոր անդամներ, որոնք ընտրվում են Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, եւ 5 իրավաբան-գիտնականներ, որոնք ընտրվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից<sup>2</sup>:

Կարգապահական պատասխանատվության վարույթի հարուցման իրավասություն, մինչ վերջնական որոշման կայացումը, տրված է՝

- Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովին
- Արդարադատության նախարարին
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ օրենսգրքով սահմանված դեպքերում<sup>3</sup>:

Արդարադատության նախարարության դերակատարման առնչությամբ, ինչպես արդեն ներկայացվեց, հաստատվել է, որ կարգապահական պատասխանատվության գործընթացում արդարադատության նախարարի ներգրավվածությունը խնդրահարույց չէ, եթե այդ գործընթացում կան այլ դերակատարներ եւ: ՀՀ-ին ուղղված 2019թ.-ի կարծիքի մեջ Վենետիկի հանձնաժողովը, վկայակոչելով Մոնտենեգրոյի համանման կարգավորումները, նշել է, որ նախարարը կարգապահական վարույթներ հարուցում է էթիկայի ու կարգապահական հարցերով հանձնաժողովին հավասար հիմունքներով, և քանի դեռ նախարարը վերջնական որոշում կայացնելու գործում որևէ դերակատարում չունի, վերջինիս ներգրավվածությունը կարգապահական վարույթի հարուցման փուլին վիճելի չէ<sup>4</sup>:

<sup>1</sup> ՀՀ սահմանադրություն 2015 թվականի փոփոխություններով:

<sup>2</sup> Նույն տեղում, հոդված 174:

<sup>3</sup> ՀՀ Դատական օրենսգրք, հոդված 145:

<sup>4</sup> JOINT OPINION OF THE VENICE COMMISSION AND THE DIRECTORATE OF HUMAN RIGHTS (DHR) OF THE DIRECTORATE GENERAL OF HUMAN RIGHTS AND RULE OF LAW (DGI) OF THE COUNCIL OF EUROPE ON THE AMENDMENTS TO THE JUDICIAL CODE



Այսինքն, գործադիրի ներգրավվածությունը վարույթի հարուցմանը խնդրահարույց չէ: Խնդրահարույց չէ նաեւ վերջնական որոշում կայացնող մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմը, քանի որ վերջինիս կազմի կեսը հանդիսանում են դատավորներ:

Այստեղ առկա է սակայն մեկ այլ խնդիր՝ կապված Բարձրագույն դատական խորհրդի ակտերի եւ դրանց ընդունման կարգի հետ: Մասնավորապես, Դատական օրենսգրքի 2022 թվականի փետրվարի 9-ի փոփոխություններով հողված 94-ով նախատեսվում է, որ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը<sup>1</sup>: Մինչդեռ, Դատական օրենսգրքի գործող կարգավորումներով 92-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ. «2. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում»: Փաստորեն, Օրենքի նախագծով էականորեն իջեցվում է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, և կարևորը՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորի նկատմամբ քրեական

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏՄՈՒԿ ԴՆՏՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1(105)2022

AND SOME OTHER LAWS Adopted by the Venice Commission at its 120th Plenary Session (Venice, 11 - 12 October 2019).

<sup>1</sup> ՀՀ դատական օրենսգրք, հոդված 94:

հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին ԲԴԽ որոշումների կայացման շեմը: Ավելին, որևէ տարբերակում Օրենքի նախագծով այլևս նախատեսված չէ այնպիսի լուրջ կարգապահական միջոցի, ինչպիսին է լիազորությունների դադարեցումը, ինչպես նաև դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու համաձայնություն տալու որոշումների համար, ինչպես սահմանված է Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի գործող իրավակարգավորումներով: Դատական օրենսգրքով այս որոշումների կայացման նման բարձր չափանիշի սահմանումը էական երաշխիք էր դատավորների անկախության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման համատեքստում, ինչն ունակ էր բացառելու ցանկացած դեպքում դատավորի լիազորությունների դադարեցման և նրա նկատմամբ քրեական հետապնդման հարուցման վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշում կայացնելու դեպքերը<sup>1</sup>:

Կարևոր է նաեւ դիտարկել ՀՀ պրակտիկայում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում համաչափության սկզբունքի պահպանումը: Այսպես, Դատական օրենսգրքով նախատեսվում է, որ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության ու խտրականության արգելքի սկզբունքների հիման վրա:

Կարգապահական պատասխանատվության գործերի ուսումնասիրությունն այս առնչությամբ վեր է հանել, որ Բարձրագույն

<sup>1</sup> Կարծիք ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի փոփոխությունների վերաբերյալ՝ պատրաստված «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից <https://prwb.am/wp-content/uploads/2022/02/%D4%BF%D5%A1% D6%80%D5%AE%D5%AB%D6%84.pdf>:

դատական խորհրդի կողմից մեծամասամբ դեպքերում սուկ կատարվում է հղում օրենսգրքի համապատասխան դրույթին և որոշում կայացվում այս կամ այն պատասխանատվության միջոցն ընտրելու վերաբերյալ: Հավելյալ հիմնավորում, սակայն, և այդ սկզբունքի տեղայնացում կոնկրետ գործի հանգամանքների հետ չի իրականացվում, որևէ հիմնավորում ընտրված պատասխանատվության կոնկրետ տեսակի առնչությամբ կրկին չի ներկայացվում<sup>1</sup>:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում ԲԴԽ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորությունը, ինչի առնչությամբ ներպետական օրենսդրությամբ արդյունավետ մեխանիզմ սահմանված չէ: Արդյունքում, պատասխանատվության ենթարկվող դատավորը զրկվում է որոշման իրավաչափությունը ստուգելու եւ վերանայելու արդյունավետ միջոցի հնարավորությունից, ինչը հակասում է կարգապահական պատասխանատվության վերաբերյալ միջազգային չափանիշներին:

Ի մի բերելով վերը ներկայացված՝ ՀՀ ներպետական օրենսդրության կարգավորումների եւ միջազգային չափանիշների համեմատական ներկայացումը՝ կարող ենք արձանագրել, որ դեռևս առկա են խնդրահարույց հարցեր օրենսդրության մեջ եւ պրակտիկայում: Մասնավորապես, առավել հստակեցման կարիք ունեն կարգապահական պատասխանատվության հիմքերը, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել տարընկալումներն ու

<sup>1</sup> Դատավորների կարգապահական պատասխանատվության պրակտիկայի ուսումնասիրություն, 1-ին մաս, 2-րդ մաս, կատարված «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից, <https://prwb.am/hy/2021/10/12/%d5%a4%d5%a1%d5%bf%d5%a1%d5%be%d5%b8%d6%80%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%af%d5%a1%d6%80%d5%a3%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b0%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ba%d5%a1%d5%bf%d5%a1%d5%bd%d5%ad%d5%a1%d5%b6%d5%a1%d5%bf/>

սուբյեկտիվ մեկնաբանությունները պրակտիկայում: Անհրաժեշտ է Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացվող որոշումներում ապահովել պատասխանատվության միջոցի եւ թույլ տրված խախտման միջև համաչափության սկզբունքը: Նմանապես, բարելավման կարիք ունեն նաև պրակտիկայում ԲԴԽ կողմից ընտրված միջոցների վերաբերյալ տրված պարզաբանումներն ու հիմնավորումները: Օրենսդրական մակարդակում լուրջ բաց է կայացված կարգապահական պատասխանատվության որոշման բողոքարկման արդյունավետ մեխանիզմի հարցը, ինչը հանգեցնում է դատավորի արդար դատաքննության իրավունքի խախտման: Այս հարցերի և պրակտիկայի բարելավման արդյունքում միայն կարգապահական պատասխանատվության ինստիտուտն իրապես կարող է ծառայել իր նպատակային նշանակությանն ու նպաստել դատական իշխանության արդյունավետության ու անկախության բարձրացմանը:

## ВОПРОСЫ ДИСЦИПЛИНАРНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ СУДЕЙ И ЕЁ ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ

### Аннотация

Институт судейской дисциплины является одним из важнейших факторов обеспечения независимости и эффективности судебной власти, который регулируется как внутригосударственным, так и международным правом. В этих регулированиях особое значение имеют основания привлечения к дисциплинарной ответственности, ответственные органы, привлекающие к дисциплинарной ответственности, и порядок их формирования, круг их полномочий, обоснованность принимаемых решений и законность всего процесса. Целью данной статьи является изучение целей и

практического значения института дисциплинарной ответственности судей в контексте сравнительного анализа международных стандартов и внутреннего законодательства Республики Армения, что позволит выявить пробелы и спорные нормы отечественного законодательства, а также проблемы правоприменительной практики.

**Ключевые слова:** судебная власть, дисциплинарная ответственность судьи, независимость судьи, четкость оснований ответственности, принцип соразмерности ответственности.

## ISSUES OF DISCIPLINARY RESPONSIBILITY OF JUDGES AND ITS PRACTICAL IMPORTANCE

### Annotation

The institution of judicial discipline is one of the most important issues in ensuring the independence and efficiency of the judiciary, which is regulated in detail in both domestic and international law. Of particular importance in these regulations are the grounds for disciplinary liability, the bodies responsible and the order in which they are enacted, the scope of their powers, the validity of the decisions made and the legitimacy of the whole process. The purpose of this article is to study the goals and operational significance of the Institute of Judicial Discipline in the context of a comparative analysis of international standards and domestic legislation of the Republic of Armenia. Which will allow to identify gaps and problematic regulations in the domestic legislation, as well as issues of law enforcement practice.

**Keywords:** judiciary, disciplinary responsibility of a judge, independence of a judge, clarity of grounds for responsibility, principle of proportionality of responsibility.

**ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀՀ դատական դեպարտամենտի  
գլխավոր մասնագետ,  
ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայի ասպիրանտ

**ՄԵՂՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Ամփոփագիր.** Աշխատանքում փորձ է արվել հնարավորինս բացահայտել մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի մեկնաբանման գործընթացում սահմանադրական արդարադատության դերը, ինչպես նաև վերջնարդյունքում դրա ազդեցությունն իրավական համակարգի զարգացման գործում:

Հոդվածում փորձ է արվել նաև հարցը քննարկել եվրոպական մի շարք մարմինների և նրանց կողմից ընդունված իրավական փաստաթղթերի համատեքստում, ինչը թույլ է տալիս ընդգծել Եվրոպական Միության իրավունքի խորքերում ներդրված և Եվրոպական միության մարմինների կողմից ձևավորած հստակ իրավական վերաբերմունքը քննարկվող հարցի կապակցությամբ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ արդյունքում առաջ են քաշվել մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի առնչությամբ մի քանի եվրոպական իրավական չափորոշիչներ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(105)2022

**Հիմնաբառեր.** մեղքի սկզբունք, պատժի համաչափության սկզբունք, սահմանադրական արդարադատություն, ինտերպրետացիա, եվրոպական իրավական չափորոշիչներ:

Իրավական սկզբունքների կենսագործման համար նախևառաջ կարևոր նշանակություն ունի դրանց էության և դերի բացահայտումը տեսական մակարդակում: Սակայն դա բավարար չէ այս կամ այն իրավական սկզբունքի «արդյունավետության» մակարդակի ամբողջական պատկերը հստակեցնելու համար:

Հարցը հատկապես հետաքրքրական է, երբ իրավական սկզբունքը փոխում է իր տեղը և դերը իրավական համակարգում: Այդպիսով այն ստանում է այլ բնույթ և կոչված է լինում լուծելու իրավական այնպիսի խնդիրներ, որոնք նախկինում դուրս են եղել այդ իրավական սկզբունքի տիրույթից:

Բայցևայնպես, իրավական սկզբունքների էության բացահայտման տեսանկյունից դրանց կիրառումն ունի երկակի նշանակություն: Մի կողմից դրանք ի սկզբանե լուծում են որոշակի իրավական խնդիրներ, մյուս կողմից՝ պրակտիկայում գործածվելու արդյունքում կարող են բացահայտվել սրանց մի շարք այնպիսի հատկություններ, որոնք հետագայում կկարողանան լուծել այլ իրավական խնդիրներ ևս:

Այս առումով հատկապես կարևոր է իրավակիրառ պրակտիկայում այդ իրավական սկզբունքների իրավական նշանակության բացահայտումը և դրանց հղում կատարելը: Պայմանավորված իրավահարաբերության տեսակով և բնույթով՝ իրավական սկզբունքները կարող են կիրառվել տարբեր իրավասու մարմինների կողմից՝ Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորություններն իրականացնելիս:

Հատկանշական է, մասնավորապես, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերն այս հարցում: Ասվածի համատեքստում անհրաժեշտ է ընդգծել Սահմանադրական դատարանի տարբեր որոշում-



ներում արտահայտած իրավական դիրքորոշումները, դրանցում տրված մեկնաբանություններն ու դրանց իրացումը:

Մեկնաբանությունը Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից է, և նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է վերջինիս զարգացումն ապահովել հիշատակված եղանակի միջոցով<sup>1</sup>:

Վերոնշյալից հետևում է, որ մեկնաբանությունը, որպես ինտերպրետացիայի դրսևորում, հանդիսանում է իրավական նորմի բովանդակության բացահայտման առանձնահատուկ միջոց, ինչը գործնականում կարող է տեղի ունենալ քննարկման առարկա սահմանադրական սկզբունքների պարագայում, որն էլ իր հերթին կհանգեցնի նաև Սահմանադրության որոշակի զարգացման:

Սահմանադրական դատարանը, իր կողմից կայացվող ակտերում այս կամ այն իրավունքի սկզբունքը մեկնաբանելով, նպաստում է իրավական համակարգում դրանց տեղի և դերի հստակեցմանն ու ողջ ազդեցության բացահայտմանը:

Կարծում ենք՝ այս իմաստով Սահմանադրական դատարանին կարելի է տալ իրավունքի ոլորտի ինտերպրետատորի դեր՝ պայմանավորված իր կողմից իրավունքի որևէ սկզբունքը կամ նորմը մեկնաբանելու լիազորությունով՝ սկսած Սահմանադրության դրույթներից:

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ հենց ինտերպրետացիայից և դրա արդյունքում արված հետևություններից է կախված նաև իրավունքի կոնկրետ սկզբունքների իրավաընկալումը իրավունքի տարբեր ճյուղերում: Այսինքն, իրավունքի սկզբունքների իրավաընկալումը պայմանավորված է նաև ինտերպրետացիայի արդյունքում վեր հանված իմաստից և նշանակությունից: Բացառություն չեն նաև ուսումնասիրության առարկա հանդիսացող մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունք-

<sup>1</sup> Տես. **Մանասյան Ա.** «Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը՝ որպես սահմանադրական կայունության կարևորագույն երաշխիք», «Պետություն և իրավունք», թիվ 1 (83) 2019թ., Երևան, էջ 9:

ները: Իհարկե, թե՛ տեսական, թե՛ գործնական մակարդակներում նախապատվությունը պետք է տալ պաշտոնական մեկնաբանությանը, այսինքն մեր կողմից, այսպես կոչված, իրավունքի ոլորտի ինտերպրետատորի, այն է՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով տրված պաշտոնական մեկնաբանություններին:

Հատկանշական է նաև եռաստիճան դատարանների կողմից կոնկրետ իրավահարաբերությունների շրջանակներում նորմատիվ իրավական ակտերի տարբեր դրույթների, այդ թվում՝ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների իրավաընկալման հարցը:

Միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակում տարբեր երկրներում ընդունված պրակտիկայի համաձայն դատավորը կարող է կասեցնել գործի վարույթը և դիմել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին՝ այս կամ այն դրույթի վերաբերյալ այդ մարմնի մեկնաբանությունը ստանալու համար: Իհարկե, այդ գործընթացը տեղի է ունենում տարբեր առանձնահատկություններով՝ կախված տվյալ երկրի օրենսդրությամբ այդ գործընթացի վերաբերյալ առկա կարգավորումներից:

Թերևս, որոշակի իրավադրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դատավորների կասկածների փարատումը սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կողմից, ինքնին հանդիսանում է դատարանների կողմից դրանց իրավաընկալման վրա էական ազդեցություն ունեցող գործոն: Ընդ որում, դրանք կարող են լինել իրավունքի տարբեր ոլորտներում արդարադատություն իրականացնող դատարաններ: Օրինակ՝ շատ երկրներում սահմանադրական արդարադատությունը գործում է պատժի համաչափության սկզբունքով, չնայած դա պաշտոնապես չի հիշատակվում սահմանադրության մեջ կամ համապատասխան պետության որևէ օրենքում:

Սահմանադրական դատարանը՝ իր 2010 թվականի փետրվարի 5-ի թիվ ՍԴՈ-864 որոշմամբ, ի թիվս այլնի, մասնավոր-

րապես նշել է, որ իրավակարգավորման բացը պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը Ազգային ժողովի իրավասության հարցն է: Միաժամանակ, Սահմանադրական դատարանի նույն որոշմամբ արձանագրվել է, որ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Այդ հիմնավորման հիման վրա արձանագրվել է, որ Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: (...):

Կատարված վերլուծությունների հիման վրա Սահմանադրական դատարանը կատարել է հետևյալ արձանագրումը. «... ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործուն կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար և այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը, Երևան, 2016, Հատ. 1, էջ 719:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՆՏԵԿՎՈՐ 1(105)2022

Հաշվի առնելով հիշատակված իրավական դիրքորոշման նշանակությունը՝ անհրաժեշտ է նկատել, որ եթե իրավունքի կամ օրենքի բացի լրացման պարտականությունը կրող հիմնական սուբյեկտը երկրի օրենսդիր մարմինն է, ապա կարծում ենք, որ սահմանադրական սկզբունքները Սահմանադրական դատարանի կողմից ինտերպրետացիայի կամ մեկնաբանման արդյունքում, ինչը մեծապես հանդիսանում է վերջինիս լիազորությունը, կարող են հանդիսանալ արդյունավետ գործիք իրավունքի կամ օրենքի բացի լրացման համար կամ, նվազագույնը, այդ բացի պատճառով առաջացած իրավական, առավել ևս հնարավոր սահմանադրականության խնդրի վերացման համար:

Հետաքրքրական է նաև հարցի քննարկումը միջազգային իրավական ակտերի համատեքստում: Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի<sup>1</sup>, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի<sup>2</sup>, Միջազգային քրեական դատարանի կանոնադրության<sup>3</sup> առանձին կարգավորումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել քրեական իրավունքի համար գերակա նշանակություն ունեցող հետևյալ միջազգային իրավական սկզբունքները՝ ա) օրինականություն (Nullum crimen sine lege, Nulla poena sine lege); բ) օրենքի առջև հավասարություն, գ) մեղքի՝ որպես պատասխանատվության պայման, դ) նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության արգելք (Non bis in idem), ե) դաժան, անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և պատժի արգելք (հումանիզմի սկզբունքը) և այլն:

<sup>1</sup> ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված հիմնարար փաստաթուղթն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի երրորդ նստաշրջանի ընթացքում՝ (բանաձևի դասիչը՝ 217 A (III)) 1948 թ. դեկտեմբերի 10-ին Փարիզի Շայո պալատում:

<sup>2</sup> ՄԱԿ-ի դաշնագիր՝ հիմնված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի վրա: Ընդունվել է 1966 թվականի դեկտեմբերի 16-ին:

<sup>3</sup> Ստորագրվել է 1998 թվականի հուլիսի 17-ին՝ Հռոմում:

Ընդ որում, հետազոտման առարկա իրավական սկզբունքների վերաբերյալ միջազգային իրավական չափորոշիչների բացահայտման համար միանշանակ հարկ է անրադառնալ նաև Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայում<sup>1</sup> տեղ գտած դրույթներին: Թեև հիշատակված խարտիայի 49-րդ հոդվածն ունի հետևյալ վերտառությունը՝ «Քրեական իրավախախտումների և պատիժների օրինականության և համաչափության սկզբունքները», այնուամենայնիվ կարծում ենք, որ այն վերաբերում է նաև հետազոտման առարկա սկզբունքներին:

Մասնավորապես, նույն խարտիայի 49-րդ հոդվածի մեկնաբանությունների 1-ին մասով ընդգծվում է, որ ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ քրեական իրավախախտման համար որևէ արարքի կամ բացթողման պատժառով, որը կատարման պահին ազգային օրենսդրությամբ կամ միջազգային իրավունքով քրեական հանցագործություն չի հանդիսացել: Նաև չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն պատիժը, որը կիրառելի էր քրեական հանցագործության կատարման պահին: Եթե քրեական հանցագործության կատարումից հետո օրենքը նախատեսում է ավելի մեղմ պատիժ, ապա պետք է կիրառվի այդ պատիժը:

Նշվածի առաջին նախադասությամբ հարցը դիտարկվում է քրեաիրավական ասպեկտով, քանի որ այն վերաբերում է քրեական պատասխանատվությանը: Այսինքն, անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե կա որևէ արարք, գործողություն կամ անգործություն, որը համապատասխան իրավական ակտերով նախատեսված է: Այդ իրավական ակտը կարող է լինել թե՛ ազգային օրենսդրության շրջանակում գործող նորմատիվ իրավական ակտ (քննարկվող դեպքում, որպես կանոն՝ քրեական օրենսգիրք), թե՛ միջազգային որևէ պայմանագիր, որն իհարկե անցել է

<sup>1</sup> Խարտիան հռչակվել է 2000թ., ուժի մեջ է մտել 2009թ. դեկտեմբերին՝ Լիսաբոնի պայմանագրի հետ միասին:

իրավական համապատասխան գործընթաց (վավերացվել է օրենսդիր մարմնի կողմից):

Հատկանշական է արարքի (հանցագործության) կատարման պահը: Նշված մեկնաբանությունում այն հստակ շեշտադրվել է, որից էլ հետևում է, որ արարքը (հանցագործությունը) դրա կատարման պահին պետք է արդեն իսկ նախատեսված լինի ազգային օրենսդրությամբ կամ միջազգային իրավունքով, միջազգային իրավունքի համընդհանուր նորմերով: Այլապես անձին չի կարելի ենթարկել քրեական պատասխանատվության այնպիսի արարքի, գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի համարվել:

Ելնելով վերոշարադրյալի տրամաբանությունից՝ կարծում ենք, որ, ի թիվս այլնի, արարքը չի կարող դրսևորվել մեղքի որևէ ձևով՝ լինի դա դիտավորություն թե անզգուշություն, քանի որ արարքի կատարման պահին մեղքը առհասարակ բացակայել է, և նման պարագայում անձը չի էլ կարող ունենալ օբյեկտիվ հնարավորություն գիտակցելու այդ արարքի հանրային վտանգավորությունը (եթե անգամ ինքնին արարքն այդ պահին իր մեջ պարունակել է որոշակի հանրային վտանգավորություն) կամ առավել ևս կանխատեսելու, որ ապագայում այն կարող է դիտարկվել որպես հանցագործություն:

Վերոնշյալի համատեքստում կարելի է արձանագրել, որ մեղքի սկզբունքի դրսևորումը մեղքի առկայության պահանջն է: Նշված մեկնաբանության առաջին մասի բովանդակությունից հետևում է նաև, որ անձի նկատմամբ չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն պատիժը, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

Այստեղ ևս կարևորվում է կատարման պահը: Այսինքն, եթե ի տարբերություն վերոշարադրյալ իրավիճակի, արարքի կատարման պահին այն համարվել է քրեական պատասխանատվության ենթակա արարք, հանցանք, սակայն ապագայում՝ պատժի նշանակման պահին, այդ արարքի համար նախատեսված է ավելի ծանր պատիժ, միևնույն է, պետք է նշանակվի այն պատիժը, որը

նախատեսված է եղել արարքի կատարման պահին: Մինչդեռ, հակառակ պարագում, եթե արարքի կատարման պահին նախատեսված է եղել ավելի մեղմ պատիժ, քան պատժի նշանակման պահին, ապա պետք է կիրառվի արարքի կատարման պահին նախատեսված ավելի մեղմ պատիժը:

Միաժամանակ, Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայի 49-րդ հոդվածի մեկնաբանությունների 2-րդ մասում սահմանվում է, որ այդ հոդվածի կարգավորումները չեն խոչընդոտում որևէ անձի դատավարությանը և պատժին ցանկացած արարքի կամ բացթողման համար, որը կատարման պահին հանցագործություն է համարվել՝ համաձայն ազգերի համայնքի կողմից ճանաչված ընդհանուր սկզբունքների: **Այստեղից**, փորձ է արվում շեշտադրել, որ սույն հոդվածի էությունը միտված չէ անձի պատասխանատվությունից խուսափելուն, եթե իհարկե առկա է անձի մեղքը, հատկապես եթե արարքը կատարման պահին համարվել է հանցագործություն: Իսկ նույն հոդվածի մեկնաբանությունների 3-րդ մասում նշված է, որ տույժերի խստությունը չպետք է անհամաչափ լինի քրեական հանցագործության հետ:

Նշվածի համատեքստում կարծում ենք, որ տույժը կարելի է հասկանալ ավելի լայն իմաստով, քան օրենսդրությամբ նախատեսված տույժերը, այսինքն, այն կարելի է ընկալել նաև որպես հարկադրանքի յուրաքանչյուր միջոց, այդ թվում՝ տուգանք, տուժանք, և առավել ևս՝ պատիժ, քանի որ նույն խարտիայի 49-րդ հոդվածի ընդհանուր էությունն ավելի շատ միտված է դեպի հարցի քրեաիրավական տիրույթ: Ավելին, մեկնաբանության նույն նախադասության մեջ նշվում է հենց «քրեական հանցագործություն» բառակապակցությունը:

Հարցն ավելի լայն պրիզմայով դիտարկելիս տույժերի խստությունն ասելով, ի թիվս այլնի, կարելի է հասկանալ նաև պատժատեսակ, պատժաչափ, քանզի դրանք հարկադրանքի միջոցի խստության չափի արտահայտման հիմնական ատրիբուտներից են:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ակնհայտ է, որ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայի 49-րդ հոդվածի մեկնաբանությունների 3-րդ մասում արված պնդումն ուղղակիորեն վերաբերում է պատժի համաչափության սկզբունքին և դրա պահպանմանը, քանի որ դրա բովանդակությունից ենթադրվում է, որ ինչքան բարձր է կատարված քրեական հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այնքան բարձր պետք է լինի նշանակված պատժի խստության աստիճանը և հակառակը:

Ներկայացված հետազոտության արդյունքների ամփոփմամբ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքների, դրանց պահպանման, փոխգործակցության, առաջինի բացահայտման արդյունքում երկրորդի սահմանման և այլնի վերջնարդյունքից է նաև կախված ոչ իրավաչափ այս կամ այն արարքն այս կամ այն օրենքով նախատեսելը: Այսինքն, պետությունը, մասնավորապես օրենսդիր մարմինը, օրինակ՝ որոշում է թե որ ոչ իրավաչափ արարքը պետք է սահմանվի քրեական օրենսդրությամբ, որը՝ վարչական, և կարծում ենք, որ այդ գործընթացի ժամանակ պետք է հնարավորինս բացահայտվի այդ ոչ իրավաչափ արարքի հիմքում ընկած մեղքը, դրա բնույթն ու էությունը, ինչից հետո սահմանվի այնպիսի օրենսդրությամբ, որին բնորոշ պատիժների նախատեսումը համահունչ կլինի տվյալ իրավախախտման բնույթին: Իհարկե, արարքը որպես հանցանք կամ վարչական իրավախախտում՝ զանցանք, դիտարկելուց հետո օրենսդիրը սահմանում է հստակ սանկցիա, որն էլ պետք է համաչափ լինի կոնկրետ արարքի հետ:

Վերոգրյալի համատեքստում կարծում ենք, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանման շրջանակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումները ևս հիմնավորում են մեր պնդումների հավաստիությունը:



Այս առումով հատկանշական է «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն արձանագրումը, որ. «Դատարանը նախ և առաջ կրկնում է, որ հարկային վեճերը գտնվում են 6-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական իրավունքների և պարտականությունների շրջանակից դուրս, չնայած այն նյութական հետևանքներին, որոնք դրանք անխուսափելիորեն առաջացնում են հարկատուի համար (տե՛ս այլ նախադեպերի շարքում Ֆերացինին ընդդեմ Իտալիայի (Ferrazzini v. Italy) [GC], թիվ 44759/98, պարբ. 29, ECHR 2001-VII): Այնուամենայնիվ, երբ նման դատավարությունը ներառում է տույժերի և տուգանքների նշանակում, այն կարող է որոշակի հանգամանքներում գրավել 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները վերջինիս «քրեական» մասի ներքո (տե՛ս Բենդենունն ընդդեմ Ֆրանսիայի (Bendenoun v. France), 1994թ. փետրվարի 24-ի վճիռը, սերիա Ա թիվ 284, էջ 20, պարբ. 47, Յանոշևիչն ընդդեմ Շվեդիայի (Janosevic v. Sweden), թիվ 34619/97, պարբ. 71, ECHR 2002- VII, Յուսիլան ընդդեմ Ֆինլանդիայի (Jussila v. Finland) [GC], թիվ 73053/01, պարբ. 38, ECHR 2006-...): Սույն գործը վերաբերում է մի դատավարության, որտեղ դիմումատու ընկերությանը պարտավորեցվել է վճարել շահութահարկ, ավելացված արժեքի հարկ և պարզեցված հարկ և դրա հետ մեկտեղ լրացուցիչ տույժեր և տուգանքներ: Հետևաբար մնում է պարզել՝ արդյոք Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի 6-րդ հոդվածը կարող է կիրառելի լինել քննարկվող դատավարության նկատմամբ իր «քրեական» մասի ներքո, թե՛ ոչ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկ անգամ ևս նշում է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը 6-րդ հոդվածի իմաստով ինքնավար բնույթ ունի (տե՛ս վերը վկայակոչված Յանոշևիչ, պարբ. 65): Որոշելիս, թե արդյոք հանցանքը որակվում է «քրեական», երեք չափանիշ պետք է կիրառվեն՝ հանցանքի իրավական

դասակարգումը ներպետական օրենսդրությունում, հանցանքի բնույթը և **հնարավոր պատժի խստության աստիճանը** (տե՛ս Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Engel and others v. the Netherlands), 1976թ. հունիսի 8-ի վճիռը, Սերիա Ա թիվ 22, էջեր 34-35, պարբ. 82, Օզթյուրքն ընդդեմ Գերմանիայի (Oztürk v. Germany), 1984թ. փետրվարի 21-ի վճիռը, Սերիա Ա թիվ 73, էջ 18, պարբ. 50, Էզեհնու Քոնորզն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ezeh and Connors v. the United Kingdom) [GC], թիվ 39665/98 և 40086/98, պարբ. 82, ECHR 2003-X): Երկրորդ և երրորդ չափանիշներն այլընտրանքային են և ոչ անհրաժեշտաբար միասնական. «քրեական մեղադրանք» բառերի միջոցով 6-րդ հոդվածը կիրառելու համար բավարար է, որ տվյալ հանցանքն իր բնույթով լինի «քրեական» Կոնվենցիայի իմաստով կամ համապատասխան անձին դատապարտած լինի պատժի, որն իր բնույթով և խստության աստիճանով ընդհանուր առմամբ պատկանում է «քրեական» ոլորտին (տե՛ս վերը վկայակոչված Յանոշևիչ, պարբ. 67): Հարկային վեճերի կամ այլ դեպքերում պատժի ցածր աստիճանը որոշիչ չէ, այլապես քրեական բնույթ ունեցող հանցանքը 6-րդ հոդվածի շրջանակից դուրս բերելու համար (տե՛ս վերը վկայակոչված Յուսիլա, պարբ. 35, որտեղ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ 6-րդ հոդվածը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ նշանակված տույժը հավասար էր հարկային պարտավորության միայն 10 տոկոսին):

Անդրադառնալով առաջին չափանիշին՝ տույժերն ու տուգանքները տվյալ դեպքում նշանակվել են տարբեր հարկային օրենքներին համապատասխան և չեն դասակարգվում որպես քրեական: Այս փաստը սակայն որոշիչ չէ (տե՛ս նույն տեղում, պարբ. 37):

Ինչ վերաբերում է **երկրորդ չափանիշին**, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ

օրենքի համապատասխան դրույթները կիրառելի են բոլոր անձանց նկատմամբ՝ և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական, որոնք պարտավոր են հարկ վճարել և ուղղված չեն որոշակի խմբին: Բացի այդ, տույժերի ու տուգանքների նպատակը հարկատուի վարքագծի արդյունքում հնարավոր առաջացած ծախսերի նյութական հատուցումը չէ: Այս միջոցառումների նպատակը հարկատուների նկատմամբ ճնշում գործադրելն է, որպեսզի վերջիններս կատարեն իրենց իրավական պարտավորությունները և այդ պարտավորությունները խախտելու համար նրանց պատժելը: Այսպիսով, պատժամիջոցները և՛ կանխարգելիչ են, և՛ պատժիչ:

Դատարանը գտնում է, որ վերը նշվածը բավարար է իրավախախտման քրեական բնույթը հաստատելու համար (տե՛ս նույն տեղում, պարբ. 38): Այնուամենայնիվ, պետք է նաև նշել, որ տվյալ դեպքում դիմումատու ընկերության նկատմամբ նշանակվել էին բավական զգալի պատժամիջոցներ՝ տուգանքներ 10-ից 50 տոկոսի սահմաններում և տույժեր վճարման ուշացման ժամանակահատվածի համար՝ ընդհանուր մոտավորապես հարկային պարտավորության գումարի 5-ից 43 տոկոսի չափով:

Վերոգրյալի լույսի ներքո Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի մասնակցությամբ դատավարությունը կարող է դասակարգվել որպես «քրեական» Կոնվենցիայի իմաստով, հետևաբար 6-րդ հոդվածը կիրառելի է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այնուհետև նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ակնհայտորեն անհիմն չէ: Դատարանը նաև գտնում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Այդ պատճառով այն պետք է հայտարարվի ընդունելի»:

Վերոգրյալից կարելի է արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակում որոշել, թե հակաիրավական արարքը, այսպես

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ 1(105)2022

ասած, քրեական է, թե ոչ՝ անհրաժեշ է հաշվի առնել ոչ միայն իրավախախտման իրավական դասակարգումը ներպետական օրենսդրությունում, այլ նաև բուն իրավախախտման բնույթը և հնարավոր պատժի խստության աստիճանը: Արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը, որ **պատժի համաչափության որոշման գործում կարևոր դերակատարություն պետք է ունենա նաև հակաիրավական արարքի որակումը, բուն էության բացահայտումը և արդյունքում՝ այս կամ այն օրենսդրությամբ նախատեսելը:**

Քննարկվող սկզբունքների դրսևորման և սահմանադրականացման Եվրոպական իրավական չափորոշիչների առավել խորը բացահայտման գործընթացում հարկավոր է անդրադարձ կատարել նաև Եվրոպական իրավունքի և Եվրոպական միության իրավունքի հիմնարար սկզբունքներին, դրա մարմինների կողմից ընդունված համապատասխան փաստաթղթերին: Դրանց շարքում ուշագրավ է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի N R(87)18 հանձնարարականը, որի 2-րդ բաժնի՝ «Մանր գործերով պարզեցված ընթացակարգերը՝ ելնելով գործի հանգամանքներից» ենթաբաժնի 3-րդ կետը մասնավորապես բովանդակում է, որ քրեական կարգի համաձայն՝ մանր գործերով պատիժները պետք է սահմանափակվեն դրամական պատիժներով և իրավունքների զրկմամբ՝ նույնիսկ բացառելով որևէ բանտային պատիժ: Այսինքն, ըստ էության, փոքր հանրային վտանգավորության աստիճան ունեցող արարքների դեպքում պետք է բացառվի ազատազրկումը՝ որպես պատժի տեսակ:

Վերոնշյալը թերևս արտացոլում է Եվրոպական միության մարմինների կողմից տարվող քրեաիրավական քաղաքականության ողջ էությունն ու տրամաբանությունը, ինչը միանշանակ միտված է փոքր հանրային վտանգավորություն ունեցող արարքների դեպքում, ազատազրկման ձևով պատժատեսակների բացառմամբ, պատժի համաչափության պահպան-

մանը և, արդյունքում, մարդու իրավունքների պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին նվիրված հետազոտություններից մեկում արձանագրվել է, որ Սահմանադրությունն առնվազն պետք է ամրագրի այն պահանջները, որոնք համընդհանուր ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում, ինչպես նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասում<sup>1</sup>: Խոսքը, մասնավորապես, իրավունքի էության անխախտելիության և, հատկապես, համաչափության սկզբունքի հստակ ամրագրման անհրաժեշտության մասին է:

Նույն՝ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների խարտիայի վերոնշյալ դրույթով մասնավորապես նշվում է հետևյալը. «Սույն Կանոնադրությամբ ճանաչված իրավունքների և ազատությունների իրականացման ցանկացած սահմանափակում պետք է նախատեսվի օրենքով և հարգի այդ իրավունքների և ազատությունների էությունը: Հաշվի առնելով համաչափության սկզբունքը՝ սահմանափակումները կարող են դրվել միայն այն դեպքում, եթե դրանք անհրաժեշտ են և իսկապես համապատասխանում են Եվրոպական միության կողմից ճանաչված ընդհանուր հետաքրքրության նպատակներին կամ այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու անհրաժեշտությանը»:

Վերոնշյալից ակնհայտ է, որ Եվրոպական միությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության տեսանկյունից չափազանց կարևորում է դրանց սահմանափակման համաչափությունը: Իհարկե, այստեղ խոսք կարող է լինել համաչափության ընդհանուր սկզբունքի պահ-

<sup>1</sup> Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ փաստաթուղթն ընդունվել է 2000 թվականին, Եվրոպական միության խորհրդի կողմից, պաշտոնական անվանումը՝ Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիա:

պանության մասին, սակայն կարծում ենք, որ քննարկվող պատժի համաչափության սկզբունքի առանցքային բաղադրիչներից մեկը հենց համաչափության գաղափարն է, իսկ պատիժն ինքնին ենթադրում է որոշակի կամ ինչ-որ սահմանափակում: Այսինքն, Եվրոպական միության նշված դիրքորոշումը կարելի է իմպլեմենտացնել պատժի համաչափության սկզբունքի համատեքստում:

Ուշագրավ է, որ մատնանշված Խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասի վերջում, որպես մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման նախապայման դիտարկվում է այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու անհրաժեշտությունը: Եվ եթե մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն ընդհանուր իրավաընկալմամբ դիտարկենք որպես որոշակի հիմքերի պայմաններում մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանափակող կատեգորիա, ապա այն՝ ըստ Եվրոպական միության կողմից դրսևորած տրամաբանության, կարող է և պետք է միտված լինի այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը: Սա, թերևս ևս մեկ անգամ հիմնավորում է այն փաստարկը, որ մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների իրավափիլիսոփայական տրամաբանությունն ուղղված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման և պահպանության երաշխավորմանը:

**Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ անհրաժեշտ է առանձնացնել մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների կիրառման ու նշանակության վերաբերյալ մասնավորապես հետևյալ իրավական չափորոշիչները.**

ա) անձին կարելի է քրեական պատասխանատվության ենթարկել միայն արարքը համապատասխան իրավական ակտով նախատեսված լինելու պայմաններում.

բ) մեղքը՝ արարքի կատարման պահով փոխապայմանավորվելը.

գ) թույլ տրված հակաիրավական արարքի և պատժի միջև համաչափության ապահովման պարտադիրությունը.

դ) պահպանելով պատժի համաչափությունը՝ հնարավորինս անազատության հետ չկապված պատիժների կիրառմանը ձգտելը.

ե) ի սկզբանե հակաիրավական արարքը դասակարգելիս՝ բուն իրավախախտման բնույթը բացահայտելու և դրա հիմքով համապատասխան իրավական ակտով նախատեսելու անհրաժեշտությունը:

**ПРИНЦИП ВИНЫ И ПРИНЦИП СОРАЗМЕРНОСТИ  
НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ  
КОНСТИТУЦИОННОГО ПРАВОСУДИЯ  
И ЕВРОПЕЙСКИХ ПРАВОВЫХ СТАНДАРТОВ**

**Аннотация**

В статье предпринята попытка по возможности раскрыть роль конституционного правосудия в процессе интерпретации принципа вины и принципа соразмерности наказания, а также вследствие этого его влияние на развитие правовой системы.

В статье также делается попытка рассмотреть данный вопрос в контексте ряда европейских органов и принятых ими правовых документов, что позволяет отметить заложенную в основу права Европейского Союза и сформированную органами Европейского Союза четкую правовую позицию в связи с рассматриваемым вопросом.

Примечательно, что в результате было выдвинуто несколько европейских правовых стандартов относительно принципа вины и принципа соразмерности наказания.

**Ключевые слова:** принцип вины, принцип соразмерности наказания, конституционное правосудие, интерпретация, европейские правовые стандарты.

**THE PRINCIPLE OF GUILT AND THE PRINCIPLE OF PROPORTIONALITY OF PUNISHMENT IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL JUSTICE AND EUROPEAN LEGAL STANDARDS**

**Annotation**

The paper attempts to reveal as much as possible the role of constitutional justice in the process of interpretation of the principle of guilt and the principle of proportionality of punishment, as well as its impact on the development of the legal system in the end.

The article also attempts to discuss the issue in the context of a number of European Union bodies and the legal documents adopted by them, which allows to emphasize the clear legal position included in the depths of European Union law and formed by the European Union bodies on the issue under discussion.

It is noteworthy that, as a result, several European legal standards have been put forward in relation to the principle of guilt and the principle of proportionality of punishment.

**Keywords:**the principle of guilt, the principle of proportionality of punishment, constitutional justice, interpretation, European legal standards.





*ДАВИД МИНАСЯН*

*Студент 3-го курса  
Института права и политики  
Российско-армянского  
университета*

## ПРАВОВАЯ ОЦЕНКА ДОПУСТИМОСТИ ПРИМЕНЕНИЯ ЭВТАНАЗИИ

**Аннотация:** В данной статье рассмотрено понятие «Эвтаназия», для чего, наряду с мнениями ученых, использован ряд примеров и фактов, достаточных для раскрытия сущности и содержания вышеупомянутого явления. В наше время во многих либерально-демократических странах вследствие закрепления позитивным образом возможности практикования эвтаназии в сфере права и медицины появилось много вопросов в связи с данным явлением. Многие научные деятели и теоретики конституционного права, а также специалисты в сфере прав человека обратились к изучению понятия «эвтаназия», и в настоящее время уже есть несколько десятков статей и монографий, посвященных данной теме. С точки зрения медицинской практики, можно утверждать, что бывают ситуации, доказывающие, что практикующие эвтаназию страны нуждаются в более глубоком регулировании данного вопроса как на уровне медицины, так и на уровне закона. Для такой страны, как Армения, эвтаназия является

новым явлением, а в России она запрещена уже на уровне закона. Следовательно, можно констатировать, что эвтаназия является достаточно малоизученным и спорным явлением. Исходя из всего сказанного, можно констатировать, что целью данного исследования является изучение явления эвтаназии и на основании этого получение ее полной картины, включая все аспекты эвтаназии, ее положительные и отрицательные стороны как в правовом, так и медицинском аспектах.

**Ключевые слова:** эвтаназия, практика эвтаназии, эвтаназия как право человека, право на смерть.

*Слово “эвтаназия”* произошло от греческих слов “εὖ” - в переводе означает благой, хороший, и “θάνατος” - в переводе означает смерть.

Встает вопрос: совпадает ли возникновение данного явления в истории человечества с формированием понятия «эвтаназия»?

Делая историческое отступление, следует вспомнить Древнюю Спарту (XI век до н. э.), где новорожденные с явными физическими недостатками считались негодными для того, чтобы в будущем стать частью здорового спартанского общества, и их сбрасывали в пропасть. В некоторых племенах была устоявшаяся практика убивать стариков для избавления от лишних хлопот.

В средние века было принято добивать раненых, чтобы избавить их от смертных мук. Для этого использовали кинжал милосердия (фр. *misericorde* — «милосердие», «пощада», XII в.). Это деяние в те времена считалось актом доблести и милосердия<sup>1</sup>. Если провести параллель между приведенными

<sup>1</sup> **Абрамян С.К., Пилипенко Д.А.** Эвтаназия в свете неотъемлемого права человека на жизнь // Журнал Гуманитарные, социально-экономические и общественные науки.- 2015. - №11. - С. 238.

примерами и общепринятым определением эвтаназии, то увидим, что они в основном совпадают.

Понятие эвтаназии человечеству впервые стало известно из работ английского философа и политика Фрэнсиса Бекона. Он впервые употребил это слово в своем произведении «Instauratio Magna» для указания на то, что лечащему врачу остается только принять решение об избавлении от сильных болей и страданий тяжелобольного путем «благородной смерти». Однако складывается противоречивая ситуация. Если целью данного акта является безболезненный уход из жизни смертельно больного и неизлечимого человека, то почему эвтаназия не распространена на практике как проявление «гуманного отношения к умирающему, а, наоборот, запрещается, а в некоторых странах, как, например, Россия, даже преследуется уголовным законом? На этот вопрос специалисты отвечают по-разному: 1) многие считают, что разрешение эвтаназии законом станет тормозом прогресса и совершенствования медицины; 2) эвтаназия станет причиной демографического кризиса, все больше людей прибегнут к данному способу прекращения жизни, снизится уровень человеческих ресурсов; 3) религии, например христианство, в своих догматических учениях запрещают добровольный уход из жизни, считая это деяние антирелигиозным: «церковь говорит об обреченности самоубийцы на вечную гибель, отказывает ему в погребении по христианскому обряду»<sup>1</sup>; 4) эвтаназия по своей природе противоречит целям существования человека. Вышеперечисленные доводы обоснованы и весьма убедительны, но, абстрагируясь от всего

<sup>1</sup> Морозов В.И., Попова А.С. Правовое регулирование эвтаназии: какой должна быть позиция России?// Юридическая наука и правоохранительная практика 1 (27) /. 2014. Раздел 3. Уголовный закон. - С. 50.

этого, можно увидеть, что все не так уж и однозначно. Эвтаназию признают в Бельгии, Канаде, Голландии, Люксембурге, в некоторых штатах Америки и т.д. Например, в Швейцарии, где законом допускается применение эвтаназии, широко распространены суицидальный туризм или эвтаназийный туризм, а в Нидерландах актуально движение «Right-to-die» (право на смерть), которое насчитывает около двухсот тысяч участников<sup>1</sup>. Из сказанного можно выделить следующие факты: первые шаги к признанию эвтаназии делают ведущие государства мира, вследствие разрешения применения эвтаназии сформировалось понятие «суицидальный туризм», что свидетельствует об актуальности вопроса «благородной смерти». В наше время прибегнуть к эвтаназии решил такой известный французский актер, как Ален Делон. 86-летний актер высказался об эвтаназии следующим образом: «Я только за (имеет в виду процедуру эвтаназии) «...» Во-первых, потому, что я живу в Швейцарии, где эвтаназия возможна, и еще потому, что считаю это самым логичным и естественным выходом. Начиная с определенного возраста, с определенного момента, мы все имеем право на такой тихий уход без всяких там больниц, уколов и прочего»<sup>2</sup>. Данное беспрецедентное оправдание практики эвтаназии на мировом уровне, бесспорно, способствует ее популяризации, и, к сожалению, сейчас невозможно предугадать, каким образом это повлияет на дальнейшие события в связи с решением вопроса оправданности практикования эвтаназии.

<sup>1</sup> См. подробнее **Симонова Ж. Г.** Эвтаназийный туризм: этические аспекты легального ухода из жизни // Манускрипт. 2021. Том 14. Выпуск 4. - С. 729-730.

<sup>2</sup> Ален Делон хочет в будущем уйти в мир иной с помощью эвтаназии // BBC РУССКАЯ СЛУЖБА [Электронный ресурс]: <https://www.bbc.com/russian/news-60794648>

Отступая от простой фактологии, обратим внимание на правовой и медицинский аспекты применения эвтаназии. История врачебной деятельности начинается с древних времен. Но определяющим сущность данного рода миссии стало изречение философа Гиппократ (V-IV века до н.э.), которое век спустя люди назвали «Клятвой Гиппократ». В клятве, которую произносят все врачи мира, есть обещание такого содержания: «Я не дам никому просимого у меня смертельного средства и не покажу пути для подобного замысла...». Из этого следует, что, в соответствии с «кодексом врача», лечащему врачу прямо запрещается по просьбе больного применять средства, безболезненно убивающие человека. Однако можно ли считать в этом случае бездействие по сути справедливым и нормальным? Как известно, врач должен любой ценой спасти жизнь пациента, но всегда ли это возможно? Таких вопросов множество. Многие, как отмечалось ранее, обосновывают запрет эвтаназии тем, что она препятствует развитию медицины и поиску новых методов лечения болезней. Эвтаназию можно сравнить также со смертной казнью, когда казнят невиновного человека. В случае эвтаназии таким примером может служить неправильная оценка состояния здоровья человека, у которого была возможность излечиться. Но по этому поводу есть и иное мнение: «Если процесс умирания затягивается на долгие месяцы и даже годы, по меньшей мере, для врача это не гуманно, а для пациента мучительно и болезненно. Более того, возникает новая проблема – проблема понимания действительного блага человека»<sup>1</sup>. На самом деле, если врач долгое время пытается излечить находящегося в тяжелом состоянии пациента, однако нет какой-либо положительной

<sup>1</sup> Чернышева Ю.А. Легализация эвтаназии в России // Общество и право. 2008. №2(20). - С. 160.

динамики в лечении, то имеет место обратный эффект: фактически врач не лечит, а причиняет излишние страдания больному и его родственникам.

Несмотря на факт табуирования темы эвтаназии в мире, во многих странах все-таки признают некоторые виды эвтаназии, например, пассивную эвтаназию. В статье 45 Федерального закона «Об основах охраны здоровья граждан Российской Федерации» прямо запрещается ускорение смерти больного, то есть активная эвтаназия, но в то же время статья 20 того же Закона предусматривает право на добровольный отказ от медицинской помощи, что можно рассматривать как проявление пассивной эвтаназии. Примером пассивной эвтаназии на практике является случай, произошедший в Брюсселе, когда вследствие пожара девушка попала в реанимацию с 90 % ожогами тела. Врач, понимая, что у нее нет шансов выжить, с согласия родственников приостановил лечебную терапию и отключил аппарат жизнеобеспечения<sup>1</sup>. Еще один интересный случай произошел в Великобритании. Годовалый ребенок по имени Алфи был госпитализирован из-за проблем с функционированием головного мозга. Он был помещен в детскую больницу в Ливерпуле. По мнению врачей, у мальчика была проблема с функциями мозга, которая, в конце концов, привела бы к полной утрате функций головного мозга. Родители хотели перевезти сына за границу, но врачи не разрешили, обосновав свой отказ тем, что дальнейшее лечение будет только вредить ребенку. Врачи, обратившись в Высокий суд, заявили, что поддержание жизни ребенка на аппаратах искусственной вентиляции легких не просто бессмысленно, но и бесчеловечно. Высокий

<sup>1</sup> См. подробнее **Полиди А.А.** Нужна ли России эвтаназия? // Международный научный журнал «СИМВОЛ НАУКИ». № 3/2015. - С. 165.

суд согласился с позицией врачей и 20 февраля 2018 года признал, что дальнейшее искусственное поддержание жизни ребенка более не имеет смысла и врачи могут прекратить действия, направленные на сохранение его жизни. Это еще один пример того, что бывают случаи, когда многие страны вынуждены прибегнуть к применению эвтаназии без ее признания на законодательном уровне. Необходимо также рассмотреть вопрос о моменте смерти человека и связанные с этим проблемы. Группа юристов утверждает, что отключение аппаратов жизнеобеспечения в момент церебральной смерти пациента (смерти головного мозга) является актом пассивной эвтаназии. Однако это неверная позиция, так как смерть головного мозга и есть момент смерти человека, следовательно, тут нет оснований говорить о пассивной эвтаназии. Что же касается активной эвтаназии, когда предпринимаются активные действия, то тут проблема заключается в несовершенстве медицинских препаратов и негативных последствиях данной процедуры.

◆ Проблемным является также вопрос легализации эвтаназии. В этом аспекте важным является решение Федерального Конституционного суда Германии от 26.02.2020 г., в котором Суд ссылается на ценность прав на автономию и свободное развитие личности, которые не могут быть несоразмерно (несоразмерно строго) ограничены даже в целях обеспечения других законных интересов. Это общее право личности, закрепленное в статье 2 Основного закона, по мнению судей Конституционного суда, включает право на самостоятельный выбор смерти как выражение личной автономии (переведено мною)<sup>1</sup>. Из изложенной позиции

<sup>1</sup> Debatte um eine gesetzliche Neuregelung der Beihilfe zur Selbsttötung in Deutschland // Электронный ресурс: <https://www.drze.de/im-blickpunkt/sterbehilfe/rechtliche-regelungen>

Конституционного суда ФРГ можно заключить, что в Германии есть конкретный прогресс в правовом подходе к пониманию эвтаназии в качестве права человека.

Как известно, в статье 20 Конституции РФ закреплено право на жизнь. Что нужно понимать под данным правом? Конституция как акт, ограничивающий действия государства, устанавливает также обязанность уважать права и свободы человека и гражданина, а также обеспечивать право на жизнь, так как жизнь человека - это высшая ценность. Если у человека есть право на жизнь, то из этого следует, что должно быть и другое, противоположное ему право - право на смерть. Можно утверждать, что право на жизнь - это право без каких-либо исключений, однако для того, чтобы право на жизнь было именно таковым, нужны следующие условия: 1) медицина, которая может обеспечить лечение всех болезней, или создание так называемого эликсира бессмертия; 2) обеспечение государством стопроцентного правопорядка, когда отсутствуют такие преступные деяния, вследствие которых человеку причиняется смерть; 3) отсутствие вооруженных конфликтов. Следовательно, государство в силу многих объективных факторов на практике не может обеспечить полноценное действие права на жизнь. Из этого следует, что это неполноценно действующее право человека. О неполноценности действия этого конституционного права свидетельствует также вышеупомянутая статья 20 Федерального закона РФ «Об основах охраны здоровья граждан Российской Федерации», которая дает возможность человеку добровольно отказаться от дальнейшего лечения. Однако даже если предположить, что в настоящее время появится возможность закрепить данное право, нужно заметить, что в связи с определенными факторами, как, например,



в связи с посвященной правам и свободам человека главой Конституции РФ, это право невозможно будет реализовать. Проблема состоит в том, что для осуществления изменений в упомянутой главе необходимо создать Конституционный комитет, а в настоящий момент в РФ нет закона, устанавливающего порядок создания и деятельности данного Комитета.

Подытоживая все сказанное, можно сделать следующее заключение, что эвтаназия как явление имеет свои положительные и отрицательные стороны. Многие подходят к вопросу легализации эвтаназии скептически, но и ее сторонников немало. Для принятия эвтаназии в связи с ее неизученностью во всем мире потребуется много времени, а для изучения эвтаназии прежде всего надо раскрыть те основополагающие вопросы, решение которых способствует легализации «легкой смерти».

**ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**Ամփոփագիր**

Այս հոդվածում վերլուծության է ենթարկվում «Էվթանազիա» հասկացությունը, որի համար, գիտնականների կարծիքների հետ մեկտեղ, օգտագործվում են մի շարք օրինակներ և փաստեր, որոնց ամբողջությունը բավարար կլինի վերը նշված երևույթի էությունն ու բովանդակությունը հասկանալու համար: Մեր իրականություն մեջ, լիբերալ-դեմոկրատական շատ երկրներում էվթանազիայի կիրառման հնարավորության դրական ամրապնդման արդյունքում, այս երևույթի հետ կապված բազմաթիվ հարցեր են ծագել իրավունքի և բժշկության ոլորտում: Սահմանադրական իրավունքի շատ գիտնա-

1(105)2022

ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆

ՍԱՀՄԱՆԱՂՈՎԱԿԱՆ ՂԱՏՈՐԱԿ

կաններ և տեսաբաններ, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտի գործիչներ իրենց ուշադրությունը սևեռել են «Էվթանազիայի» հասկացության ուսումնասիրմանը, և ներկայումս արդեն կարելի է գտնել այդ թեմային նվիրված մի քանի տասնյակ հոդվածներ և մենագրություններ: Բժշկական պրակտիկայի տեսանկյունից կարող ենք վստահորեն պնդել, որ կան իրավիճակներ, որոնք ապացուցում են այն փաստը, որ էվթանազիա կիրառող երկրներում այս հարցի առավել խորը կարգավորման անհրաժեշտություն կա ինչպես բժշկության, այնպես էլ իրավունքի մակարդակով: Այնպիսի երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, էվթանազիան նորություն է, բայց Ռուսաստանում այն արդեն արգելված է օրենքի մակարդակով: Հետևաբար, կարելի է փաստել, որ էվթանազիայի ոլորտը քիչ է ուսումնասիրված, և որ այն շատ հակասական երևույթ է: Ելնելով վերոգրյալից՝ այս հոդվածով նպատակ է դրվում ուսումնասիրել և արդյունքում ստանալ էֆթանազիայի բոլոր ասպեկտները, իրավական և բժշկական առումներով դրա դրական և բացասական հատկանիշներն ընդգրկող ամբողջական պատկեր:

**Հիմնաբառեր.** էվթանազիա, էվթանազիայի պրակտիկա, էվթանազիան որպես մարդու իրավունք, մահանալու իրավունք:

## LEGAL ASSESSMENT OF ADMISSIBILITY OF THE APPLICATION OF EUTHANASIA

### Annotation

This article aims to analyze the concept of "Euthanasia" using a number of examples and facts along with the opinions of scientists, the totality of which will be sufficient to understand the essence and content of the above-mentioned phenomenon. In

the realities of our time, the admissibility of the application of euthanasia in many liberal democratic countries has raised many questions in the field of law and medicine. Many scientists and theorists of constitutional law, as well as individuals in the field of human rights have focused on the study of the concept of "euthanasia" and currently several dozen articles and monographs on this topic are already available. From the perspective of medical practice, it can be confidently asserted that there are situations that prove the fact that countries practicing euthanasia need deeper regulation of this issue at both the level of medicine and the law. For countries like Armenia, euthanasia is something new, while in Russia the law already prohibits euthanasia. Therefore, it can be stated that euthanasia is poorly understood and is a very controversial phenomenon. Based on the foregoing, this article aims to study and obtain a complete picture that includes all aspects of euthanasia, as well as its positive and negative features in legal and medical terms.

**Keywords:** euthanasia, practicing euthanasia, euthanasia as a human right, the right to die.





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ  
ԱԶԱԿՑԵԼՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունվարի 2022 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1677-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի հոկտեմբերի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի մայիսի 28-ին Մինսկ քաղաքում՝ աշխատանքի ընդհանուր շուկա ձևավորելիս խնդիրների լուծման ու արգելքների վերացման՝

համաձայնեցված մոտեցումների մշակման, Կողմերի կողմից աշխատաշուկաներում իրականացվող և Համաձայնագրի մասնակից պետություններում բնակչության զբաղվածությանն աջակցելուն ու գործազրկության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցների, ծրագրերի և ծառայությունների մշակման ու արդյունավետության բարձրացման ժամանակ համագործակցության ու փոխօգնության, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների՝ ազատ տեղաշարժման և աշխատանքային գործունեության իրականացման իրավունքների ապահովման նպատակով (Հոդվ.1):

2. Համաձայնագրով կարգավորվում են զբաղվածության բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքներին առնչվող հարաբերությունները: Համաձայնագիրը մշակվել է ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, զբաղվածության և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի կողմից՝ համաձայն ԱՊՀ տնտեսական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի «ԱՊՀ մասնակից պետությունների ընդհանուր աշխատաշուկայի փուլային ձևավորման և աշխատուժի միգրացիայի կանոնակարգման հայեցակարգի մասին» որոշմամբ հաստատված «Ընդհանուր աշխատաշուկայի փուլային ձևավորման և աշխատուժի միգրացիայի կանոնակարգման 2017-2020 թթ. գերակա միջոցառումների ծրագրի»:

3. Համաձայնագրի շրջանակներում Կողմերը համագործակցում են աշխատանքի ընդհանուր շուկայի ձևավորման համար պայմանների ստեղծման, բնակչության զբաղվածությանն աջակցելու հարցերով լիազորված կազմակերպությունների ու մարմինների կողմից իրականացվող՝ բնակչության զբաղվածության խնդիրների լուծմանն ու աշխատանքային միգրացիայի կարգավորմանն ուղղված միջոցների, ծրագրերի և ծառայությունների արդյունավետության բարձրացման, հաղորդակ-

1(105)/2022  
 ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ  
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ցական արգելքների վերացման, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից պետությունների աշխատավոր միգրանտներին աշխատանքի տեղավորման, պետության լեզվի, պատմության, մշակույթի և իրավունքի հիմունքների ու առանձնահատկությունների ուսուցման ծրագրեր մշակելու միջոցով, ինչպես նաև միջազգային, այդ թվում՝ «Ուորլդսքիլս» (WorldSkills) ստանդարտներով գործնական կողմնորոշմամբ կարճատև ուսուցման ծրագրերի մշակման և իրականացման, միջազգային, այդ թվում՝ «Ուորլդսքիլս» մեթոդիկաներով իրավասության անկախ գնահատման արդյունքներով իրավասությունների փոխադարձ ճանաչման համակարգի ստեղծման, աշխատանքի որոնման հետ կապված դժվարություններ ունեցող բնակչության առանձին խմբերին, այդ թվում՝ երիտասարդներին, սահմանափակ հնարավորություններով անձանց, կանանց, նախակենսաթոշակային տարիքի անձանց, ազատագրկման վայրերից ազատված անձանց աշխատանքի տեղավորման համար հնարավորությունների ընդլայնման, աշխատանքային ռեսուրսների շարժունության բարձրացման, տեղեկատվական համակարգերի զարգացման և ինտեգրման, ոչ ֆորմալ զբաղվածության նվազեցման, և ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում ժամանակավոր աշխատանքային գործունեություն իրականացնելու համար ԱՊՀ մասնակից պետություններից աշխատավոր միգրանտների կազմակերպված հավաքագրման ու ներգրավման համակարգի զարգացման և ներդնման ու անօրինական, այդ թվում՝ աշխատավոր միգրանտների կողմից իրականացվող աշխատանքային գործունեությանը հակազդեցության ուղղություններով (Հոդվ. 4):

**4.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

**4.1.** Համաձայնագրի շրջանակներում փոխգործակցության ժամանակ առաջնորդվել մարդու և քաղաքացու իրավունքներն

ու ազատությունները հարգելու, դրանք պահպանելու և պաշտպանելու, օրինականության, հավասարության, վստահության, օբյեկտիվության, անկախության և հրապարակայնության սկզբունքներով, ինչպես նաև Կողմերի՝ բնակչության զբաղվածությանն աջակցելու հարցերով լիազորված կազմակերպությունների և մարմինների գործողությունների համակարգման, համաձայնեցվածության ու պլանայնության սկզբունքներով (Հոդվ. 3),

**4.2.** Կողմերի հետ համագործակցել Համաձայնագրով շարադրված հիմնական ձևերով՝ մասնավորապես, Համաձայնագրի առարկային վերաբերող հարցերով փոխադարձ խորհրդատվությունների անցկացմամբ և տեղեկատվության փոխադարձ փոխանակմամբ, Համաձայնագրի առարկային վերաբերող հարցերով խորհրդակցությունների, համաժողովների և այլ համատեղ միջոցառումների պլանավորմամբ և անցկացմամբ, Համաձայնագրի շրջանակներում Կողմերի փոխգործակցության արդյունավետությունն ու զարգացումն ապահովող Հայաստանի Հանրապետության տեղեկատվական համակարգերի, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների աշխատանքի տեղավորմանը և զբաղվածությանն աջակցելու հարցերով տեղեկատվական պորտալների ստեղծմամբ և զարգացմամբ, Կողմերի կողմից ստեղծվող աշխատանքային խմբերին (հանձնաժողովներին) մասնակցությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ ձևերով, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ (Հոդվ. 5, պարբերություն 1),

**4.3.** Համաձայնագիրն իրականացնելիս պահպանել գործնական շփումները և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Կողմերի փոխգործակցության արդյունավետությունն ու զարգացումն ապահովելու համար (Հոդվ. 5, պարբերություն 3),

**4.4.** Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակումը և փոխանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ձեռ-



նարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները օրենքով պահպանվող գաղտնիքը պաշտպանելու համար (պետական, ծառայողական, առևտրային և այլն), որը Հայաստանի Հանրապետությանը հայտնի է դարձել իր լիազորությունները կատարելիս, իսկ Համաձայնագրի դրույթների իրականացման հարցերի վերաբերյալ նամակագրությունը կատարել ռուսերենով (Հոդվ. 6),

**4.5.** ապահովել, որ Համաձայնագրի իրականացմանն ուղղված միջոցառումների ֆինանսական ապահովումը Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից իրականացվի սեփական միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավվող միջոցների հաշվին (Հոդվ. 7) և այլն:

**5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**1.** 2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

◆ 1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի  
ՍԴՈ-1622

### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1622 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1622 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1622 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառության մեջ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1622 որոշմամբ 2021 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների բնակչության զբաղվածությանն աջակցելու ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաեւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմա-

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

նադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա

են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի

անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ ◆ 1(105)2022



տության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵԴԵՎՈՒԹՅՈՒՆ ◆ 1(105)2022

համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկ-

տրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ**՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն**՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 1(105)2022

պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ ◆ 1(105)2022

անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«18» հունվարի 2022թ.**

ՍԱԽՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1(105)/2022 ◆ ՏԵՂԵԿՎԵԳԻՐ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի «ԱՀԱՐԵԿԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

18 հունվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ Ս. Հայրապետյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ՏԵՂԵԿՎՈՐ  
1(105)2022

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1763-Ա որոշմամբ հավանություն է տվել 2015 թվականի հոկտեմբերի 22-ի՝ «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 22-ին՝ 2005 թվականի մայիսի 16-ին Վարշավայում ստորագրված «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթներում լրացումներ կատարելու նպատակով: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2016 թվականի հունիսի 17-ին Ազգային ժողովի ԱԺՈ-232-Ն որոշմամբ (Կոնվեն-

1(105)/2022  
 ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ  
 ♦ ՍԵՂԵՎՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ



ցիայի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության կողմից կատարված հայտարարության դեմ ներկայացված առարկությանը), իսկ Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2018 թվականի հունվարի 24-ին:

2. Արձանագրությամբ Կոնվենցիայի դրույթներում լրացումներ են կատարվել՝ կապված հիշյալ Արձանագրության 2-6-րդ հոդվածներում նկարագրված գործողությունները քրեականացնելու հետ՝ այդպիսով ամրապնդելով Կողմերի՝ ահաբեկչության կանխարգելմանը և մարդու իրավունքներից, մասնավորապես՝ կյանքի իրավունքից լիարժեք օգտվելու վրա դրա ունեցած բացասական ազդեցությանն ուղղված ջանքերը՝ թե՛ ազգային մակարդակով ձեռնարկվող միջոցներով, թե՛ միջազգային համագործակցության միջոցով՝ համաձայն Կողմերի միջև գործող կիրառելի բազմակողմ կամ երկկողմ համաձայնագրերի կամ պայմանագրերի (Հոդվ. 1):

3. Արձանագրությամբ սահմանվում է. «ահաբեկչության նպատակով որևէ միավորման կամ խմբի մասնակցել» նշանակում է միավորման կամ խմբի կողմից մեկ կամ ավելի ահաբեկչական հանցագործություններ կատարելու կամ դրան օժանդակելու նպատակով որևէ միավորման կամ խմբի գործունեությանը մասնակցելը (Հոդվ. 2, կետ 1): Միաժամանակ, նույն արձանագրության նպատակներով սահմանվում է, որ «ահաբեկչության նպատակով ուսուցում ստանալ» նշանակում է պայթուցիկ նյութերի, հրազենի կամ այլ զենքերի կամ թունավոր կամ վտանգավոր նյութերի պատրաստման կամ օգտագործման կամ այլ հատուկ մեթոդների կամ միջոցների վերաբերյալ այլ անձից հրահանգներ, այդ թվում՝ գիտելիքներ կամ գործնական հմտություններ ձեռք բերելը՝ ահաբեկչական հանցագործություն կատարելու կամ դրան օժանդակելու նպատակով (Հոդվ. 3, կետ 1):

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մասնավորապես հետևյալ պարտավորությունները.

4.1. ընդունել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված՝ «ահաբեկչության նպատակով որևէ միավորման կամ խմբի մասնակցելը» իր ներպետական օրենսդրությամբ հանցագործություն ճանաչելու համար, եթե այն կատարվել է ապօրինի և միտումնավոր կերպով (Հոդվ. 2, կետ 2),

4.2. ընդունել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Արձանագրության 3-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված՝ «ահաբեկչության նպատակով ուսուցում ստանալը» իր ներպետական օրենսդրությամբ հանցագործություն ճանաչելու համար, եթե այն կատարվել է ապօրինի և միտումնավոր կերպով (Հոդվ. 3, կետ 2),

4.3. ընդունել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներպետական օրենսդրությամբ հանցագործություն ճանաչելու համար Արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված՝ «ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնելը» Հայաստանի Հանրապետության տարածքից կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից, եթե այն կատարվել է ապօրինի և միտումնավոր կերպով (Հոդվ. 4, կետ 2),

4.4. ընդունել նաև այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներպետական օրենսդրությամբ և դրան համապատասխան՝ Արձանագրության 4-րդ հոդվածով սահմանված հանցագործության կատարման փորձը հանցագործություն ճանաչելու համար (Հոդվ. 4, կետ 3),

4.5. ընդունել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներպետական օրենսդրությամբ Արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված՝ «ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնելը ֆինանսավորելը» հանցագործություն ճանաչելու համար, եթե այն կատարվել է ապօրինի և միտումնավոր կերպով (Հոդվ. 5, կետ 2),

**4.6.** ընդունել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներպետական օրենսդրությամբ Արձանագրության 6-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված՝ «ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնումը կազմակերպելը կամ այլ կերպ դրան օժանդակելը» հանցագործություն ճանաչելու համար, եթե այն կատարվել է ապօրինի և միտումնավոր կերպով (Հոդվ. 6, կետ 2),

**4.7.** չհակասելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներին, ինչպես նաև իր ներպետական օրենսդրությանն ու գործող միջազգային պարտավորություններին համապատասխան՝ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Արձանագրության 4-րդ հոդվածով սահմանված՝ ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնող անձի վերաբերյալ համապատասխան առկա տեղեկությունների՝ Կողմերի միջև ժամանակին փոխանակմանը նպաստելու համար՝ այս նպատակով նշանակելով կոնտակտային մարմին, որը հասանելի է օրը 24 ժամ, շաբաթական յոթ օր՝ ունենալով մեկ այլ Կողմի կոնտակտային մարմնի հետ հաղորդակցումն արագ կերպով իրականացնելու կարողություն (Հոդվ. 7, կետեր 1 և 3),

**4.8.** ապահովել, որ Արձանագրության կատարումը, այդ թվում՝ Արձանագրության 2-6-րդ հոդվածներով սահմանված՝ արարքների քրեականացման սահմանումը, իրականացումը և կիրառումը կատարվեն մարդու իրավունքներին առնչվող պարտավորությունների, մասնավորապես՝ ազատ տեղաշարժվելու, ազատ արտահայտվելու, այլոց հետ միավորվելու և կրոնի ազատության իրավունքների հարգմամբ (Հայաստանի Հանրապետության համար կիրառելիության դեպքում)՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. միջազգային դաշնագրով, ինչպես նաև միջազգային իրավունքին համապատասխան այլ պարտավորություններով սահմանված կարգով (Հոդվ. 8, կետ 1),

**4.9.** ապահովել, որ Արձանագրության 2-6-րդ հոդվածներով սահմանված՝ արարքների քրեականացման սահմանումը, իրականացումը և կիրառումը համապատասխանեն համամասնության սկզբունքին՝ հետապնդվող օրինական նպատակների և ժողովրդավարական հասարակությունում դրանց անհրաժեշտ լինելու առումով՝ բացառելով կամայականության, խտրական կամ ռասիստական վերաբերմունքի ցանկացած դրսևորում (Հոդվ. 8, կետ 2):

5. Արձանագրությամբ սահմանվում է, որ Արձանագրությունում կիրառվող բառերն ու արտահայտությունները պետք է մեկնաբանվեն Կոնվենցիայի իմաստով, ինչպես նաև սահմանվում է, որ Կոնվենցիայի բոլոր դրույթները Կողմերի միջև կիրառվում են համապատասխանաբար՝ բացառությամբ 9-րդ հոդվածի՝ «Օժանդակ հանցագործություններ» (Հոդվ. 9):

**6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի

լրացուցիչ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի

ՍԴՈ-1623

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1623 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1623 որոշմամբ որոշել է, որ 2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1623 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված

1(105)/2022  
 ◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ  
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 221

կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1623 որոշմամբ 2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:



**Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵԴԵՎՈՒԹՅՈՒՆ ◆ 1(105)2022

եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվաճի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոց-

ների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործար-

կումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում

էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ**՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն**՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն

1(105)2022  
 ՏԵՂԵԿՎՈՐ  
 ՆԱԽԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ ◆ 1(105)2022

հողվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում են, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների

միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման



փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«18» հունվարի 2022թ.**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմայյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

◆ 1(105)/2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 1850-Ա որոշմամբ 2019 թվականի մայիսի 31-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի նոյեմբերի 15-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի մայիսի 31-ին Աշխաբադ քաղաքում՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև թանգարանացուցահանդեսային փոխանակման զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

2. Համաձայնագիրը ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության կառավարության (վերապահումով), Հայաստանի Հանրապետության կառավարության (հատուկ կարծիքով), Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության, Ղրղզստանի Հանրապետության կառավարության, Ռուսաստանի Դաշնության կառավարության, Տաջիկստանի Հանրապետության կառավարության, Թուրքմենստանի կառավարության և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության միջև (այսուհետ՝ Կողմեր):

Համաձայնագրի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության կողմից վերապահում ներկայացնելու առնչությամբ Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել հատուկ կարծիքով, որում նշված է. «Ադրբեջանի Հանրապետության կողմից՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի վերապահում ներկայացնելու առնչությամբ, որում Լեռնային Ղարաբաղի հակամարտության էությունն աղավաղված է, հայկական կողմն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ էթնիկական գտումների քաղաքականության իրականացման և ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետության) դեմ ռազմական ագրեսիայի սանձազերծման արդյունք է: Ադրբեջանի Հանրապետությունը կրում է ամբողջ պատասխանատվությունը հայկական մշակութային ժառանգության ամբողջական վերացմանն ուղղված՝ տասնամյակներ շարունակ իրականացվող քաղաքականության համար, որի արդյունքներից մեկն էլ Հին Ջուղայի (Նախիջևան) հայկական գերեզմանոցի հազարավոր եզակի խաչքարերի ու տապանաքարերի վերացումն է: Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ չի կիրառի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարա-

նային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի դրույթները՝ մինչև Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջնական կարգավորումը»:

3. Համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմին է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2019 թվականի նոյեմբերի 17-ին. այն ուժի մեջ է Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության համար:

5. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ստեղծել բարենպաստ պայմաններ ԱՊՀ մասնակից պետությունների միջև թանգարանացուցահանդեսային փոխանակման զարգացման համար (Հոդված 1),

- երաշխավորել Համաձայնագրի մասնակից պետություններից մեկի կողմից Հայաստանի Հանրապետությանը թանգարանացուցահանդեսային փոխանակման շրջանակներում ուղարկվող թանգարանային առարկաների պահպանվածության և ժամանակին վերադարձի, ինչպես նաև դատական անձեռնմխելիության, հայցի ապահովմանն ուղղված միջոցների նկատմամբ անձեռնմխելիության և դատարանի որոշումը կատարելու մասով անձեռնմխելիության ապահովումը (Հոդված 2),

- խրախուսել Համաձայնագրի մասնակից պետությունների պատմությանը, մշակույթին և արվեստին նվիրված համատեղ ցուցահանդեսային նախագծերի նախապատրաստումն ու իրագործումը, այդ թվում՝ համացանցի օգտագործմամբ (Հոդված 3),

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԾ ՂԱՏՄՈՒՄ 1(105)2022

- նպաստել Համաձայնագրի մասնակից պետությունների թանգարանների համատեղ գիտական ծրագրերի կազմակերպմանն ու իրագործմանը՝ հնագիտության, ռեստավրացիայի, փորձաքննության և ատրիբուցիայի, բնական ժառանգության ուսումնասիրության բնագավառում (հոդված 4),

- Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մշակութային համագործակցության խորհրդի շրջանակներում Կողմերի հետ պարբերաբար անցկացնել խորհրդակցություններ թանգարանային գործի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների գերակա ուղղությունները որոշելու վերաբերյալ, կազմակերպել գիտական տեղեկատվության միջթանգարանային փոխանակում, աջակցել թանգարանագիտության վերաբերյալ տեղեկատվական տեղեկագրերի և գիտական ժողովածուների պատրաստմանն ու թողարկմանը (Հոդված 5),

- խրախուսել թանգարանային գործի բնագավառում արդիական խնդիրների շուրջ համատեղ գիտական, գիտագործնական համաժողովների ու սեմինարների, կլոր սեղանների անցկացումը, ինչպես նաև նպաստել մասնագետների փոխադարձ մասնակցությանը Համաձայնագրի մասնակից պետություններում անցկացվող նույնանման միջոցառումներին (Հոդված 6),

- իրականացնել համագործակցություն թանգարանային աշխատողների, այդ թվում՝ հաշվառման և պահպանման գործունեության, էքսպոզիցիոն-ցուցահանդեսային գործունեության, էքսկուրսիոն, մշակութային ու լուսաբանման գործունեության գծով մասնագետների՝ թանգարանային առարկաների ռեստավրացիայի և պահպանման ոլորտում վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև միջթանգարանային ստաժավորումների, թանգարանային գործունեության հիմնական ուղղություններով վարպետության դասերի կազմակերպման, Համաձայնագրի մասնակից պետությունների առաջատար թանգարանային կենտրոններում հեռավար ուսուցման

համար պայմանների ու տեխնիկական հնարավորությունների ստեղծման գործում (Հոդված 7),

- Կողմերի հետ իրականացնել փորձի փոխանակում ցուցահանդեսների կազմակերպման ժամանակ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև թանգարանային առարկաների պահպանման, ռեստավրացիայի և կոնսերվացման բնագավառում (Հոդված 8),

- Կողմերի հետ իրականացնել ներառական թանգարանային նախագծերի ու ծրագրերի իրագործմանն ուղղված թանգարանների աշխատանքի փորձի փոխանակում (Հոդված 9),

- սատարել ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության կողմից ԱՊՀ մասնակից պետություններում թանգարանային գործի մասսայականացմանն ուղղված՝ «թանգարանային գործ» ուղղվածությամբ ինտերնետ-ռեսուրսի ստեղծմանն ու զարգացմանը (Հոդված 10),

- ցուցաբերել փոխադարձ աջակցություն թանգարանային առարկաների պատկերների թվային պատճենների պատրաստման ու փոխանակման գործում՝ գիտական ու մշակութային գործունեության մեջ դրանք օգտագործելու նպատակով (Հոդված 11),

- Կողմերի հետ միավորել ջանքերը ԱՊՀ մասնակից պետությունների ազգային թանգարանների հավաքածուներից կազմված մշակութային ժառանգության քարոզչության գործում (Հոդված 12):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պար-

տավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի  
ՍԴՈ-1624



### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1624 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈ-1624 որոշմամբ որոշել է, որ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈ-1624 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառու-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԾ ՂԱՏԱՐԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԸՆԴՈՒՄ 1(105)2022

թյամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1624 որոշմամբ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող

պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ ◆ 1(105)2022

են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարա-

վորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ

ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵԴԵԿՎԱԿԻՐ ◆ 1(105)2022

դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.



**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային

ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի

աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«18» հունվարի 2022թ.**

ՍԱՅՄԱՆԱՊՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(105)2022



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**1957 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ  
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱ-  
ԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱ-  
ՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈ-  
ՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԾ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ 1(105)2022

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1767-Ա որոշմամբ հավանություն է տվել 1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի նոյեմբերի 1-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի նոյեմբերի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 1957 թվականի սեպտեմբերի 30-ին՝ վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով՝ սահմանելով վտանգավոր նյութերի

դասակարգման և պիտակավորման միասնական համակարգեր, ներդաշնակեցնելու այդ նյութերի փաթեթավորման, պիտակավորման և դրանց փոխադրման պահանջները, կանխելու վտանգավոր բեռների փոխադրումների ընթացքում մարդկանց կյանքին ու առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին վնաս հասցնելը:

2. Համաձայնագրով սահմանվում են վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների, սարքավորումների կառուցվածքի և շահագործման վերաբերյալ պահանջներ, սահմանվում են անվտանգության ստանդարտներ, որոնցով ապահովվում է ռադիոակտիվ նյութերի փոխադրման հետ կապված՝ ճառագայթման, մարդկանց, գույքին և շրջակա միջավայրին սպառնացող ջերմային վտանգի կամ կրիտիկականության վերահսկողության պատշաճ մակարդակը:

3. 2019 թվականի օգոստոսի 14-ի դրությամբ Համաձայնագրին անդամակցում է 51 պետություն: Այն ուժի մեջ է մտել 1968 թվականի հունվարի 29-ին: Համաձայնագիրը փոփոխվել է 1975 թվականի օգոստոսի 21-ին Նյու Յորքում մշակված 14(3) հոդվածում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտել 1985 թվականի ապրիլի 19-ին:

4. Համաձայնագիրն ունի Ա և Բ Հավելվածներ, որոնք կազմում են դրա անբաժանելի մասը: Համաձայնագրի Ա և Բ Հավելվածները խմբավորված են ինը մասերում: Ա Հավելվածը բաղկացած է 1-7 մասերից, Բ Հավելվածը՝ 8-9 մասերից:

Համաձայնագրի 2-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ Ա Հավելվածով սահմանվում են այն վտանգավոր բեռները, որոնց միջազգային փոխադրումն արգելված է, այն վտանգավոր բեռները, որոնց միջազգային փոխադրումը թույլատրված է և որոնց նկատմամբ որոշակի պայմաններ են դրվում (ներառյալ բացառությունները), մասնավորապես՝ բեռների դասակարգման՝

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ՂԱՏՄԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

ներառյալ դասակարգման չափորոշիչները և համապատասխան փորձարկման մեթոդները, փաթեթվածքների օգտագործում (ներառյալ խառը փաթեթավորումը), ցիստեոնների օգտագործման (ներառյալ լցնելը), մատակարարման ընթացակարգերի (ներառյալ փաթեթների մակնշումը և պիտակավորումը, տրանսպորտային միջոցների մասին տեղեկություններ փակցնելը և մակնշելը, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները), շինարարության, փաթեթվածքների և ցիստեոնների փորձարկմանն ու հաստատման մասին դրույթների, տրանսպորտային միջոցների օգտագործման (ներառյալ բեռնավորումը, խառը բեռնավորումը և բեռնաթափումը) առումով (Հավելված «Ա» կետ 1.1.2.1.):

Ա հավելվածը պարունակում է որոշակի դրույթներ, որոնք, Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն, պատկանում են Բ Հավելվածին կամ Ա ու Բ Հավելվածներին (Հավելված «Ա» կետ 1.1.2.2.):

Համաձայնագրի 2-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ Բ Հավելվածով սահմանվում է թույլատրված վտանգավոր բեռները փոխադրող փոխադրամիջոցների կառուցվածքի, սարքավորումների և շահագործման պայմանները՝ փոխադրամիջոցների աշխատակազմի, սարքավորումների, շահագործման և փաստաթղթերի վերաբերյալ պայմանները, փոխադրամիջոցների կառուցման և հաստատման մասին պահանջներ (Հավելված «Ա» կետ 1.1.2.3.):

Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս համարվող Ստորագրման արձանագրություն, որն ունի նույն ուժը, նշանակությունը և գործողության ժամկետը, ինչ որ Համաձայնագիրը: Համաձայնագրի դրույթների նկատմամբ վերապահումներ չեն թույլատրվում՝ բացառությամբ Ստորագրման արձանագրությունում նշված և Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն կատարված վերապահումների:

Համաձայնագրի «Ա» Հավելվածի 1.1.3. կետում սահմանվում են Համաձայնագրով սահմանված դրույթների կիրառման բացա-



ռությանները, որոնք, ի թիվս այլնի, վերաբերում են տրանսպորտային գործունեության բնույթի վերաբերյալ բացառություններին (Հավելված «Ա» կետ 1.1.3.1.), գազերի փոխադրմանը վերաբերող բացառություններին (Հավելված «Ա» կետ 1.1.3.2.), հեղուկ վառելիքի փոխադրմանը վերաբերող բացառություններին (Հավելված «Ա» կետ 1.1.3.3.), էլեկտրաէներգիայի կուտակման և արտադրման համակարգերի փոխադրմանը վերաբերող բացառություններին (Հավելված «Ա» կետ 1.1.3.7.):

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ, եթե փոխադրամիջոցը, որը Համաձայնագրի պահանջներին համապատասխան փոխադրումներ է իրականացնում, ուղերթի որևէ հատվածում փոխադրվում է ավտոճանապարհայինից բացի այլ եղանակով, ապա ճանապարհի այդ հատվածում կիրառվի միայն ազգային կամ միջազգային այն օրենսդրությունը, որը կարգավորում է վտանգավոր բեռների փոխադրումը տրանսպորտային միջոցներով, որոնք օգտագործվում են ճանապարհային փոխադրամիջոցի տեղափոխման համար (Հավելված «Ա» կետ 1.1.4.5.1.),

- վտանգավոր բեռներ փոխադրելիս ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ելնելով կանխատեսելի վտանգի բնույթից ու աստիճանից, նյութական և մարմնական վնասներից խուսափելու կամ վթարի դեպքում վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար, ինչպես նաև ապահովել, որ բոլոր դեպքերում բավարարվեն Համաձայնագրի պահանջները համապատասխան ոլորտներում (Հավելված «Ա» կետ 1.4.1.1.),

- «Ա» Հավելվածի 1.4.1.3. կետի 2-րդ մասում սահմանված դեպքերում՝ ՀՀ օրենսդրությամբ մասնակիցներից որևէ մեկի պարտավորությունները մեկ կամ մի քանի ուրիշ մասնակիցների փոխանցելու պարագայում, եթե կատարվում են «Ա» Հավելվածի 1.4.2. և 1.4.3. կետերով նախատեսված պարտավորությունները,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

այս շեղումների մասին տեղյակ պահել Եվրոպայի հարցերով ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի քարտուղարությանը, որն իր հերթին դրանք կներկայացնի պայմանավորվող կողմերի ուշադրությանը (Հավելված «Ա» կետ 1.4.1.3.),

- այն բեռները, որոնց դեպքում ռադիոակտիվ նյութերի նկատմամբ կիրառվող որևէ դրույթի հետ համապատասխանությունը գործնականում անհնար է իրականացնել, ապահովել, որ դրանք փոխադրվեն միայն հատուկ պայմաններով (Հավելված «Ա» կետ 1.7.4.2.),

- շահագործման հատուկ միջոցների կիրառման պարագայում, որոնք նպատակ ունեն նվազեցնելու ռիսկերը և վերաբերում են թունելներից օգտվող բոլոր կամ մի քանի փոխադրամիջոցների, ինչպես, օրինակ՝ պաշտոնական հայտարարություն ներկայացնելն այն մասին, որ թունել մտնելուց կամ անցնելուց փոխադրամիջոցներին կուղեկցեն այլ փոխադրամիջոցներ, նման շահագործման միջոցները պաշտոնապես հրապարակել և դարձնել հանրության համար հասանելի (Հավելված «Ա» կետ 1.9.5.3.8.),

- ապահովել, որ ժամանակավոր պահեստավորման տերմինալներում, ժամանակավոր պահեստներում, փոխադրամիջոցների դեպոներում, կառանատեղերում և տեսակավորման կայաններում, որոնք օգտագործվում են որպես ժամանակավոր պահեստներ՝ վտանգավոր բեռները փոխադրելու համար, պահպանվեն անվտանգության պայմանները, լինեն լավ լուսավորված, իսկ հնարավորության և հարկ եղած դեպքերում՝ փակ լինեն հանրության համար (Հավելված «Ա» կետ 1.10.1.3.),

- արգելել այն պայթյունավտանգ նյութերի փոխադրումը, որոնց զգայունությունը չափազանց բարձր է՝ «Փորձարկումների և չափորոշիչների ձեռնարկի» 1-ին մասի չափորոշիչների համաձայն, կամ որոնք կարող են ինքնուրույն մտնել ռեակցիայի մեջ, ինչպես նաև արգելել այն պայթյունավտանգ նյութերի ու պատրաստվածքների փոխադրումը, որոնք չեն ներառվել Համաձայնագրի «Ա» Հավելվածի 3.2 գլխի «Ա» աղյուսակի որևէ

1(105)/2022  
 ՏԵՂԵԿՎՈՒՄ  
 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

անվանման մեջ կամ «այլ կերպ չնշված» որևէ դիրքում (Հավելված «Ա» կետ 2.2.1.2.1.),

- չթույլատրել Համաձայնագրի «Ա» Հավելվածի 2.2.41.2.3. կետում նշված նյութերի փոխադրումը (Հավելված «Ա» կետ 2.2.41.2.3.),

- արգելել Համաձայնագրի «Ա» Հավելվածի 2.2.61.2.2. կետում նշված նյութերի և խառնուրդների փոխադրումը (Հավելված «Ա» կետ 2.2.61.2.2.),

- դասակարգել նյութերը որպես «շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր (ջրային միջավայր)», երբ դրանք Համաձայնագրի «Ա» Հավելվածի 2.2.9.1.10.3.1. աղյուսակի համաձայն բավարարում են սուր թունավորության 1-ին, քրոնիկ թունավորության 1-ին և 2-րդ կատեգորիաների չափորոշիչները (Հավելված «Ա» կետ 2.2.9.1.10.3.1.),

- Համաձայնագիրը չտարածել լուծույթի կամ խառնուրդի վրա, եթե դրանց բնութագրերը, հատկությունները, ձևը, ֆիզիկական վիճակն այնպիսին են, որ այն չի համապատասխանում որևէ դասի մեջ ներառվելու չափորոշիչներին, այդ թվում՝ մարդկային փորձի հետ կապված չափորոշիչներին (Հավելված «Ա» կետ 3.1.3.1.),

- ապահովել, որ մինչև փոխադրումը սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռներ առաքողները փոխադրողին գրավոր հայտենեն փոխադրման ենթակա այդ բեռների ընդհանուր անգուտ քաշը (Հավելված «Ա» կետ 3.4.12.),

- ապահովել, որ վտանգավոր բեռները չփաթեթավորվեն միևնույն արտաքին փաթեթվածքում կամ խոշոր փաթեթվածքներում վտանգավոր կամ այլ բեռների հետ միասին, եթե դրանք միմյանց հետ կարող են վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել և առաջացնել բռնկում կամ զգալի քանակությամբ ջերմության առաջացում, դյուրավառ, հեղձուցիչ, օքսիդացնող կամ թունավոր գազերի առաջացում, կոռոզիոն նյութերի գոյացում կամ անկայուն նյութերի գոյացում (Հավելված «Ա» կետ 4.1.1.6.),

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

▪ ապահովել, որ ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ վթարային փաթեթվածքի կամ խոշոր վթարային փաթեթվածքի ներսում վնասված կամ արտահոսած փաթեթների՝ թույլատրելիից ավելի տեղաշարժվելը կանխելու համար, իսկ եթե վթարային փաթեթվածքը կամ խոշոր վթարային փաթեթվածքը հեղուկ է պարունակում, դրանում տեղադրվի բավականաչափ չեզոք կլանիչ նյութ՝ ազատ հեղուկը հեռացնելու համար (Հավելված «Ա» կետ 4.1.1.19.2.),

▪ ապահովել, որ սննդամթերքները չփոխադրվեն վտանգավոր նյութերի համար օգտագործվող ցիստեռններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել՝ հանրության առողջությանը սպառնացող ցանկացած վտանգ կանխելու համար (Հավելված «Ա» կետ 4.3.2.1.6.),

▪ ապահովել, որ վտանգավոր բեռներով յուրաքանչյուր փաթեթ, որն ընդգրկված է տրանսպորտային կապոցի մեջ, համապատասխանի Համաձայնագրի բոլոր կիրառելի դրույթներին, և այդ կապոցը վնաս չհասցնի յուրաքանչյուր փաթեթի այն գործառույթին, որի համար վերջինս նախատեսված է (Հավելված «Ա» կետ 5.1.2.2.),

▪ ապահովել, որ վտանգավոր բեռներով բեռնված տրանսպորտային միավորը ոչ մի դեպքում չունենա մեկից ավելի կցորդ (կամ կիսակցորդ) (Հավելված «Բ» կետ 8.1.1.),

▪ ապահովել, որ իրականացվի Համաձայնագրի 8.2.2. կետով նախատեսված վարորդների վերապատրաստմանը ներկայացվող հատուկ պահանջների կատարումը (Հավելված «Բ» կետ 8.2.2.),

▪ ապահովել, որ թափքի պատրաստման համար չօգտագործվեն այնպիսի նյութեր, որոնք կարող են վտանգավոր միացություններ կազմել փոխադրվող պայթյունավտանգ նյութերի հետ (Հավելված «Բ» կետ 9.3.1.):

**6.** Սահմանադրական դատարանը նշում է, որ Կառավարության դիմումի հիման վրա նույն Համաձայնագրում ամրագրված

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ դիմում էր ներկայացվել նաև 24.01.2020թ., որը քննության էր ընդունվել Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 7-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ: Այդ գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում ի հայտ էին եկել Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության և դրա բնօրինակ տեքստերի միջև թարգմանչական էական, բովանդակային անհամապատասխանություններ: Սահմանադրական դատարանի 2020 թվականի ապրիլի 14-ի ՍԴԱՌ-85 աշխատակարգային որոշմամբ նշված գործի վարույթը կասեցվել էր՝ մինչև Կառավարության կողմից Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տեքստը ստանալը: 2020 թվականի ապրիլի 2-ին Սահմանադրական դատարան էր մուտքագրվել Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տարբերակը, որի ուսումնասիրության արդյունքներով պարզվել էր, որ բովանդակային անհամապատասխանություններն ամբողջությամբ վերացված չեն եղել: Այլ կերպ՝ խնդրո առարկա գործով չէին վերացել գործի վարույթը կասեցնելու համար հիմք հանդիսացած հանգամանքները, ուստի այդ գործի վարույթը Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴԱՌ-87 աշխատակարգային որոշմամբ կարճվել էր՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Սույն գործով ներկայացված Համաձայնագրի պաշտոնական հայերեն թարգմանության և դրա բնօրինակ տեքստերի միջև ևս առկա են մի շարք թարգմանչական անհամապատասխանություններ ու անճշտություններ (մասնավորապես, Համաձայնագրի 3.3.1. կետի 236 հատուկ դրույթի 2-րդ նախադասություն, «Ա» Հավելվածի 3.1.2.8.1 կետ, 4.2.1.13.6. կետի 2-րդ նախադասություն, 7.3.2.10.4. կետ, 1.7.4.1. կետ, 1.4.3.7.1. կետի «գ» ենթակետ և այլն) **որոնք թեև բովանդակային առումով խնդիր չեն հարուցում Համաձայնագրում ամրագրված պար-**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

**տավորությունների սահմանադրականության բացահայտման տեսանկյունից, այդուհանդերձ, կարող են որոշակի խնդիրներ առաջացնել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում:**

Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները վերաբերելի են Ազգային ժողովի ու Կառավարության լիազորություններին, և Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը գտնվում է հիշյալ մարմինների լիազորությունների տիրույթում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի  
ՍԴՈ-1625

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ ◆ 1(105)/2022

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «1957 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1625 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1625 որոշմամբ որոշել է, որ 1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1625 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ 1(105)2022

ռությանը 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1625 որոշմամբ 1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող



պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում,

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵԼԵՎԻԶՈՐ  
 ◆ 1(105)2022

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական

ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարա-

վորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ

ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային

ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:



ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լինեի Սահմանադրական

դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«18» հունվարի 2022թ.**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1(105)/2022 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ «ՀՈՐԻՋՈՆ ԵՎՐՈՊԱ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունվարի 2022 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վ. Դումանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական

◆ 1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 2025-Ա որոշմամբ 2021 թվականի նոյեմբերի 12-ին Բյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի դեկտեմբերի 10-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 12-ին

Բրյուսելում՝ ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության նպատակով:

2. 2021 թվականի նոյեմբերի 22-ին Եվրոպական միության կողմից ստացվել է ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

3. Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող երեք Հավելված՝ **Հավելված I.** «Հորիզոն Եվրոպա» Ծրագրում (2021-2027 թթ.) Հայաստանի ֆինանսական ներդրումները կարգավորող կանոնները», **Հավելված II.** «Հայաստանում գործող համարժեք ծրագրերի ցանկ» և **Հավելված III.** «Հուսալի ֆինանսական կառավարում»՝ Ֆինանսական շահերի պաշտպանություն և վերականգնում:

I հավելվածն ունի 3 մաս՝ **I. Հայաստանի ֆինանսական ներդրման հաշվարկը, II. Հայաստանի գործառնական ներդրման ինքնաբերաբար ուղղումը, III. Հայաստանի ֆինանսական ներդրման վճարումը, Հայաստանի գործառնական ներդրման մեջ կատարված ճշգրտումների վճարումը և Հայաստանի գործառնական ներդրման համար կիրառվող ինքնաբերաբար ուղղված գումարի վճարումը:**

4. Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար դիմումին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության եզրակացության համաձայն՝ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիրը, որը նախատեսված է 2021-2027 թթ. համար, հանդիսանում է 2014-2020 թթ. իրականացվող «Հորիզոն-2020» շրջանակային ծրագրի շարունակությունը: Վերջինիս Հայաստանի Հանրապետության մասնակցությունն սկսվել է 2016 թվականից՝

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1(105)2022

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի ստորագրմամբ (ստորագրվել է 2016 թվականի մայիսի 19-ին, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2016 թվականի հոկտեմբերի 19-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-240-Ն որոշմամբ (ՍԴՈ-1297), ուժի մեջ է մտել՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ին):

Ըստ եզրակացության՝ «Հորիզոն 2020» ծրագիրը մեծ ներդրում է ունեցել Հայաստանի գիտական ոլորտի զարգացման մեջ և նշյալ ոլորտի ներկայացուցիչներին տարբեր դրամաշնորհային նախաձեռնություններին մասնակցելու բազում հնարավորություններ է ընձեռել: «Հորիզոն 2020» ծրագրի ասոցացված երկրների շարքում Հայաստանի Հանրապետության մասնակցության հաջողության գործակիցը կազմել է 11,81 տոկոս (ծրագրի շրջանակներում հայաստանյան գիտական խմբերի մասնակցությամբ ներկայացվել է 312 հայտ, որոնցից վավեր են ճանաչվել 271-ը, իսկ ֆինանսավորման երաշխավորվել է 35 հայտ):

Համաձայնագրով Հայաստանի գիտական շրջանակների ներկայացուցիչներն իրավունք են ստանում օգտվելու 95,5 մլրդ Եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ Եվրոպական միության ամենամեծ գիտական համագործակցության ծրագրի ընձեռած լայն հնարավորություններից:

Համաձայն եզրակացության՝ ակնկալվում է, որ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին մասնակցությունը հավելյալ խթան կհանդիսանա Հայաստանի ազգային գիտահետազոտական համակարգի զարգացման համար, կնպաստի Եվրոպական գիտական տարածքում հայ գիտնականների հետագա ինտեգրմանը, կընդլայնի Եվրոպական միության երկրների գիտական ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունները:

5. Համաձայնագրի 2-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված է, որ Հայաստանի ներկայացուցիչներին թույլատրվում է որպես դիտորդներ մասնակցել 2021/764/ԵՄ որոշման 14-րդ հոդվածում նշված կոմիտեում՝ առանց քվեարկելու իրավունքի և այն դեպքերում, երբ քննարկվող հարցերը վերաբերում են Հայաստանին: Քվեարկության ժամանակ կոմիտեները նիստերը կանցկացնեն առանց Հայաստանի ներկայացուցչի ներկայության: Հայաստանը կտեղեկացվի արդյունքների մասին:

Համաձայնագրի 2-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված է, որ 2021/764/ԵՄ որոշման 14-րդ հոդվածում նշված կոմիտեի աշխատանքներին կամ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի իրականացմանն առնչվող այլ հանդիպումներին որպես դիտորդներ մասնակցող Հայաստանի ներկայացուցիչների և փորձագետների ճանապարհածախսն ու կեցության ծախսերը կփոխհատուցվեն Եվրոպական միության կողմից՝ համաձայն Եվրոպական միության անդամ պետությունների ներկայացուցիչների համար գործող ընթացակարգերի:

◆ 6. «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի կամ հայաստանյան իրավաբանական կազմավորումների մասնակցությունը կախված է Եվրոպական միության ընդհանուր բյուջեի (այսուհետ՝ Միության բյուջե) շրջանակներում Ծրագրին և դրա կառավարման, իրականացման և գործառնական ծախսերի ուղղությամբ Հայաստանի կատարած ֆինանսական ներդրումից (Հոդված 3, կետ 1):

7. Հայաստանի կողմից Միությունում հիմնադրված իրավաբանական կազմավորումների ֆինանսավորումը կիրականացվի Հայաստանի՝ հետազոտությունների և նորարարության ծրագրերի իրականացումն ապահովող օրենսդրության համաձայն: Այն դեպքերում, երբ ֆինանսավորում նախատեսված չէ,

Միությունում հիմնադրված իրավաբանական կազմավորումները կմասնակցեն իրենց միջոցներով (Հոդված 5, կետ 3):

**8.** Չշոշափելով Ծրագրի մշտադիտարկման և գնահատման առնչությամբ Հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի և Աուդիտորների եվրոպական դատարանի պատասխանատվության շրջանակը՝ Հայաստանի մասնակցությունը Ծրագրին մշտապես կենթարկվի մշտադիտարկման՝ գործընկերության հիմքով՝ ընդգրկելով Հայաստանին և Հանձնաժողովին (Հոդված 7, կետ 1):

**9.** Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հիմնադրվում է «Հետազոտությունների և նորարարության հարցերով Հայաստան-ԵՄ համատեղ կոմիտեն, որի գործառույթները սահմանված են Համաձայնագրի 8-րդ հոդվածում:

**10.** Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- որպես ասոցացված պետություն, մասնակցել «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին («Հորիզոն Եվրոպա» ծրագիր) և աջակցել դրա բոլոր բաղադրիչներին, որին հղում է տրվում 2021/695/ԵՄ կանոնակարգի Հոդված 4-ում, և որը ներդրվել է 2021/764/ԵՄ որոշմամբ ստեղծված հատուկ ծրագրով՝ վերջիններիս ամենավերջին լրամշակված տեքստերի համաձայն և Նորարարությունների և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտին ֆինանսական հատկացումներ ուղղելու միջոցով (Հոդված 1, կետ 1).

- մասնակցել «Հորիզոն Եվրոպա» ծրագրին՝ «Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև գործընկերության և համագործակցության մասին» համաձայնա-



գրի՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության ծրագրերին Հայաստանի մասնակցության ընդհանուր սկզբունքների մասին շրջանակային համաձայնագրի մասին» Արձանագրությամբ սահմանված կարգի, ինչպես նաև Համաձայնագրով սահմանվող կարգի և պայմանների, Համաձայնագրի Հոդված 1-ում թվարկված իրավական ակտերի, ինչպես նաև «Հորիզոն Եվրոպա» ծրագրի իրականացմանն առնչվող ցանկացած այլ կանոնների համաձայն՝ հիմք ընդունելով դրանց ամենավերջին լրամշակված տեքստերը (Հոդված 2, կետ 1)։

- նախքան 2021/695/ԵՄ կանոնակարգի 22-րդ հոդվածի 5-րդ կետի շրջանակներում Եվրոպական միության ռազմավարական ակտիվներին, շահերին, ինքնավարությանը կամ անվտանգությանն առնչող գործողություններին Հայաստանում հիմնադրված իրավաբանական կազմավորումների մասնակցության հնարավորության հարցի վերաբերյալ որոշում կայացնելը, Հանձնաժողովի պահանջի դեպքում տրամադրել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված հատուկ տեղեկատվությունը կամ հավաստիացումները, մասնավորապես՝ տեղեկատվություն առ այն, թե արդյոք Եվրոպական միությունում հիմնադրված իրավաբանական կազմավորումները փոխադարձ հասանելիություն ունեն կամ կունենան Հայաստանում գործող «Հորիզոն Եվրոպա» գործողությանը համարժեք և նախատեսվող ծրագրերին, տեղեկատվություն առ այն, թե արդյոք Հայաստանն ունի ներդրումների ուսումնասիրման ազգային մեխանիզմ և հավաստիացում առ այն, որ Հայաստանի իշխանությունները կզեկուցեն և կխորհրդակցեն Հանձնաժողովի հետ այն բոլոր հնարավոր դեպքերի մասին, երբ այդպիսի մեխանիզմի կիրառմամբ տեղեկացել են նախատեսվող օտարերկրյա ներդրումների կամ դրանց տնօրինման մասին այնպիսի կազմավորման կողմից, որը հիմնադրվել կամ կառավարվում է Հայաստանից դուրս գտնվող հայաստանյան իրավաբանական կազմավորման կողմից, որն ստացել է «Հորիզոն Եվրոպայի»

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

Ֆինանսավորում Եվրոպական միության ռազմավարական ակտիվների, շահերի, ինքնավարության կամ անվտանգության հետ կապված գործողությունների համար, այն պայմանով, որ Հանձնաժողովը Հայաստանին կտրամադրի Հայաստանում հիմնադրված համապատասխան իրավաբանական անձանց ցանկը՝ այդ կազմավորումների հետ դրամաշնորհային պայմանագրերի ստորագրումից հետո և հավաստիացումներ առ այն, որ Հայաստանում հիմնադրված կազմավորումների կողմից վերոնշյալ գործողությունների արդյունքում մշակված որևէ արդյունք, տեխնոլոգիա, ծառայություն և ապրանք չի ենթարկվի սահմանափակումների ԵՄ անդամ պետություններ արտահանման համար՝ գործողության ընթացքում և գործողության ավարտից չորս տարի հետո՝ տարեկան կտրվածքով, գործողության ընթացքում և գործողության ավարտից հետո չորս տարի շարունակ տրամադրելով արտահանման համար ազգային սահմանափակումների ենթակա օբյեկտների լրամշակված ցանկը (Հոդված 2, կետ 3)։

- գործող կանոնակարգերի շրջանակներում ներդնել բոլոր ջանքերը Համաձայնագրով նախատեսված գործողություններին մասնակցող գիտնականների ազատ տեղաշարժը և կեցությունն ապահովելու, ինչպես նաև այդ գործողությունների համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների միջսահմանային տեղաշարժը հեշտացնելու համար (Հոդված 2, կետ 11)։

- անհրաժեշտության դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի Հայաստանում գնված կամ Հայաստան ներմուծված ապրանքներն ու ծառայությունները, որոնք մասամբ կամ ամբողջությամբ ֆինանսավորվում են Համաձայնագրի դրամաշնորհային համաձայնագրերի և (կամ) գործունեության իրականացման համար կնքված պայմանագրերով, ազատվեն Հայաստանում գործող մաքսատուրքերից, ներմուծման տուրքերից և այլ հարկային վճարներից, ներառյալ՝ ԱԱՀ-ից (Հոդված 2, կետ 12)։

- «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի կամ հայաստանյան իրավաբանական կազմավորումների մասնակցության համար, որը կախված է Միության բյուջեի շրջանակներում Ծրագրին և դրա կառավարմանը, իրականացմանը և գործառնական ծախսերի ուղղությամբ Հայաստանի կատարած ֆինանսական ներդրումից, տարեկան երկու վճարումների միջոցով՝ ոչ ուշ, քան մայիս և հուլիս ամիսներին՝ եվրոյով կատարել ֆինանսական ներդրում, որը հետևյալ երկու վճարումների գումարն է՝ գործառնական ներդրում (հաշվարկվում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգին համապատասխան) և մասնակցության վճար (կազմում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն հաշվարկված տարեկան սկզբնական գործառնական ներդրման 4%-ը), որը մարել փուլային կերպով, ինչպես սահմանված է Հավելված I-ում (2021՝ 0,5%, 2022՝ 1%, 2023՝ 1,5%, 2024՝ 2%, 2025՝ 2,5%, 2026՝ 3%, 2027՝ 4%)։ մասնակցության վճարը ենթակա չէ հետադարձ ճշգրտումների կամ ուղղումների, իսկ մասնակցության համար վճարվելիք գործառնական ներդրման չափը հաշվարկվում է համապատասխան ֆինանսական տարիների համար՝ կիրառելով ճշգրտում ներդրման բանալու նկատմամբ այնպես, ինչպես սահմանված է Համաձայնագրի I հավելվածի 1-ին մասի 3-րդ կետում (Հոդված 3, կետեր 1, 2, 3, 5, 7 և 10, Հավելված I, մաս 1, կետեր 2 և 3)։

- խթանել և խրախուսել բաց գիտության սկզբունքները՝ Հայաստանի Հանրապետության ծրագրերում՝ համաձայն «Հորիզոն Եվրոպա» ծրագրի կանոնների և Հայաստանի Հանրապետության օրենսդրության (Հոդված 6)։

- եթե Համաձայնագիրը դադարեցվում է Համաձայնագրի 9-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն, ապա համաձայնել, որ նախագծերը և (կամ) գործողությունները (կամ դրանց մասերը), որոնց մասով ստանձնվել են իրավական պարտավորություններ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, և մինչև Համա-

ձայնագրի գործողության դադարեցումը կամ գործողության ավարտը, կշարունակվեն մինչ դրանց ավարտը՝ Համաձայնագրով սահմանված պայմաններով, ինչպես նաև համաձայնել, որ N տարվա տարեկան ֆինանսական ներդրումը, որի ընթացքում Համաձայնագիրը դադարում է գործել, կվճարվի ամբողջությամբ՝ համաձայն Համաձայնագրի Հոդված 3-ի. N տարվա գործառնական ներդրումը կճշգրտվի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն և կուղղվի Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան, իսկ N տարվա համար վճարված մասնակցության վճարը ճշգրտման կամ ուղղման ենթակա չէ, ինչպես նաև համաձայնել, որ Համաձայնագրի գործողության դադարեցման տարվանից հետո սկզբնական գործառնական վճարները, որոնք վճարվել են Համաձայնագրի ուժի մեջ լինելու տարիների համար, կճշգրտվեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն և ինքնաբերաբար (ինքնաբերաբար ուղղման հաշվարկի համար կիրառվելիք պայմանները սահմանված են Համաձայնագրի I հավելվածի II մասում) կուղղվեն՝ համաձայն Համաձայնագրի 4-րդ հոդվածի (Հոդված 9, կետ 5).

- Հանձնաժողովի կողմից ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ապրիլ և հունիս ամիսները, Համաձայնագրով ստանձնած ներդրման չափի Հայաստանի պարտավորությունների կատարման պարտավորագրի հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան հրապարակման օրվանից 30-րդ օրը, վճարել սահմանված վճարը, որը կազմում է Հայաստանի ներդրման վեց տասներկուերորդական մասը. վճարի կատարման ցանկացած ուշացում կհանգեցնի չվճարված գումարի նկատմամբ տույժերի կիրառման, որը կգործի վճարում կատարելու սահմանված վերջնաժամկետի օրվանից, և որը հաշվարկվում է Եվրոպական կենտրոնական բանկի կողմից Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» հատորում հրապարակված վերաֆինանսավորման հիմնական գործառույթների համար Եվրոպական կենտրոնական բանկի կողմից կիրառվող տոկոսադրույքի

համապատասխան, որն ուժի մեջ է վճարում կատարելու ամսվա առաջին օրացուցային օրվանից՝ ավելացված 1.5 տոկոսային կետով (Հավելված I, մաս III, կետ 2, պարբերություններ 1, 2 և կետ 4, պարբերություններ 2, 3)։

- Եվրոպական միությանը՝ Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կամ մարմինների գործող ակտերով և համապատասխան համաձայնագրերով և (կամ) պայմանագրերով տալ իրավունք՝ իրականացնելու տեխնիկական, գիտական, ֆինանսական կամ այլ տեսակի ստուգումներ և աուդիտ՝ ԵՄ ֆինանսական միջոցների հաշվին ֆինանսավորվող՝ Հայաստանում բնակվող ցանկացած ֆիզիկական անձի կամ Հայաստանում հիմնադրված ցանկացած իրավաբանական կազմավորման նկատմամբ, ինչպես նաև ցանկացած այլ երրորդ կողմի նկատմամբ, որը բնակվում կամ հիմնադրված է Հայաստանում և ներգրավված է Միության ֆինանսական միջոցների իրացման գործում. նման ստուգումն ու աուդիտը կարող են իրականացվել Եվրոպական միության ինստիտուտների և մարմինների գործակալների, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի և Աուդիտորների եվրոպական դատարանի կամ Եվրոպական հանձնաժողովի կողմից լիազորված այլ անձանց կողմից (Հավելված III, Հոդված 1, կետ 1)։

- ապահովել, որ Եվրոպական միության ինստիտուտների և մարմինների գործակալները, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովը և Աուդիտորների եվրոպական դատարանը և Հանձնաժողովի կողմից լիազորված այլ անձինք ունենան պատշաճ հասանելիություն տեղանքին, աշխատանքներին և փաստաթղթերին (և՛ էլեկտրոնային, և՛ թղթային), ինչպես նաև աուդիտ իրականացնելու համար ողջ տեղեկատվությանը, ներառյալ աուդիտի ենթակա ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ երրորդ կողմի մոտ պահվող փաստաթղթերի ֆիզիկական կամ էլեկտրոնային կրկնօրինակներին, դրանց որևէ մասին և ցանկացած տեղեկատվական կրիչի բովանդակությանը հասանելիության իրավունքը (Հավելված III, Հոդված 1, կետ 2)։

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԼ ՂԱՏՄԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

- չարգելել և չխոչընդոտել գործակալների և Համաձայնագրի III հավելվածի 1-ին հոդվածի 2-րդ կետում նշված այլ անձանց՝ Համաձայնագրի III Հավելվածի 1-ին Հոդվածով սահմանված պարտականությունների կատարման հիմքով Հայաստան մուտքը և անհրաժեշտ միջոցներին հասանելիության իրավունքները (Հավելված III, Հոդված 1, կետ 3)։

- ընդունել Եվրոպական հանձնաժողովի և Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (OLAF) Հայաստանի տարածքում վարչական հետաքննություններ իրականացնելու լիազորությունը՝ ներառյալ ստուգումներ և տեղազննումներ. այդ հետաքննությունները կիրականացվեն Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կիրառելի ակտերով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան (Հավելված III, Հոդված 2, կետ 1)։

- ապահովել, որ Հայաստանի իրավասու մարմինները ողջամիտ ժամկետում Եվրոպական հանձնաժողովին կամ OLAF-ին տեղեկացնեն Միության ֆինանսական շահերի վրա ազդող անկանոնությունների, խարդախության կամ այլ անօրինական գործունեության առնչությամբ իրենց հայտնի դարձած ցանկացած փաստի կամ կասկածի մասին (Հավելված III, Հոդված 2, կետ 2)։

- ապահովել, որ Համաձայնագրի III հավելվածի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն նշանակված Հայաստանի իրավասու մարմինը նախապես, ողջամիտ ժամկետներում տեղեկացվի ստուգումների առարկայի, նպատակի և իրավական հիմքերի մասին, որպեսզի կարողանա ապահովել աջակցություն (Հավելված III, Հոդված 2, կետ 4)։

- ապահովել, որ Հանձնաժողովի գործակալներին և OLAF-ի աշխատակիցներին հասանելի լինեն համապատասխան տեղեկատվությունն ու փաստաթղթերը, ներառյալ՝ համակարգչային տվյալները՝ համապատասխան գործարքների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են ստուգումների և տեղազննումների պատ-

շաճ անցկացման համար, վերջիններս կարող են նաև պատճենել անհրաժեշտ փաստաթղթերը (Հավելված III, Հոդված 2, կետ 6) .

- այն դեպքում, երբ անձը, իրավաբանական կազմավորումը կամ այլ երրորդ կողմը կխոչընդոտեն ստուգումների կամ տեղազննումների իրականացումը՝ գործելով ՀՀ օրենքների և կանոնակարգերի համաձայն, հնարավորության սահմաններում աջակցել Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի ներկայացուցիչներին իրենց լիազորությունների շրջանակներում ստուգում կամ տեղազննում իրականացնելու համար: Աջակցությունը պետք է ներառի ազգային օրենսդրությամբ նախատեսված համապատասխան նախազգուշական միջոցների ձեռնարկումը, մասնավորապես՝ ապացույցները պաշտպանելու նպատակով (Հավելված III, Հոդված 2, կետ 7) .

- ապահովել, որ Համաձայնագրի III Հավելվածի 2-րդ հոդվածի պատշաճ իրականացման նպատակով հայաստանյան իրավասու մարմինները Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի հետ պարբերաբար փոխանակեն տեղեկատվություն և Համաձայնագրի կողմերից մեկի խնդրանքով խորհրդակցեն միմյանց հետ (Հավելված III, Հոդված 2, կետ 10) .

- OLAF-ի հետ արդյունավետ համագործակցության և տեղեկատվության փոխանակման նպատակով նշանակել կոնտակտային անձ (Հավելված III, Հոդված 2, կետ 11) .

- համագործակցել Եվրոպական դատախազության գրասենյակի հետ՝ ՀՀ լիազորությունների շրջանակներում հետաքննություն կատարելու, Եվրոպական միության ֆինանսական շահերին առնչվող հանցագործություններ կատարողներին և հանցակիցներին՝ գործող օրենսդրությանը համապատասխան, հետապնդելու և դատական գործ հարուցելու համար (Հավելված III, Հոդված 2, կետ 13) .

- ապահովել, որ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի կայացրած որոշումները, որոնք դրամական պարտավորություններ են սահմանում անձանց համար, այլ ոչ թե պետությունների, ՀՀ տարածքում ենթակա

լինեն հարկադիր կատարման, որը կիրականացվի ՀՀ օրենսդրությանը և ընթացակարգի կանոններին համապատասխան, և այդ նպատակով նշանակված մարմնի մասին ծանուցել Եվրոպական հանձնաժողովին և Եվրոպական միության արդարադատության պալատին (Հավելված III, Հոդված 3, կետ 1)։

- Եվրոպական միության արդարադատության պալատի վճիռներն ու կարգադրությունները, որոնք կայացվել են Միության ծրագրերի, գործունեության, գործողությունների կամ նախագծերի պայմանագրում կամ համաձայնագրում պարունակվող արբիտրաժային կետի կիրառման նպատակով, Հայաստանում կիրառել նույն կերպ, ինչպես Եվրոպական հանձնաժողովի 1-ին կետով նշված որոշումները (Հավելված III, Հոդված 3, կետ 2)։

- երաշխավորել Եվրոպական միության կառույցների ու մարմինների, որոնք ներգրավված են «Հորիզոն Եվրոպա» ծրագրի իրականացման կամ վերահսկողության մեջ, ուղիղ, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության համակարգերով, շփվելու իրավունքը Հայաստանում բնակվող ֆիզիկական անձի կամ Հայաստանում ստեղծված իրավաբանական կազմավորման հետ, որը ֆինանսավորվում է Միության ֆինանսական աղբյուրներից, ինչպես նաև ցանկացած երրորդ կողմի հետ, որը բնակվում կամ հիմնադրված է Հայաստանում և ներգրավված է Միության ֆինանսական միջոցների իրացման մեջ (Հավելված III, Հոդված 4)։

**11.** Համաձայնագրի III Հավելվածի 2-րդ հոդվածով սահմանված ստուգումները և տեղազննումները կարող են իրականացվել Միության կողմից ֆինանսավորում ստացած՝ Հայաստանում բնակվող ֆիզիկական անձի կամ Հայաստանում հիմնադրված իրավաբանական կազմավորման, ինչպես նաև Միության ֆինանսական միջոցների իրացման գործում ներգրավված Հայաստանում բնակվող կամ ստեղծված ցանկացած երրորդ

1(105)2022  
 ՏԵՂԵԿՎՈՒՄ  
 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



կողմի տարածքում: Ստուգումներն ու տեղազննումները կկազմակերպվեն և կանցկացվեն Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի կողմից՝ ՀՀ կառավարության կողմից նշանակված հայաստանյան իրավասու մարմինների հետ սերտ համագործակցությամբ (Հավելված III, Հոդված 2, կետեր 3, 4):

**12.** Համաձայնագրով սահմանված ստուգումներն ու աուդիտը կարող են անցկացվել նաև Համաձայնագրի գործողության կասեցումից հետո՝ համաձայն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 5-րդ կետի կամ գործողության դադարեցումից հետո՝ Եվրոպական միության մեկ կամ մի քանի ինստիտուտների կամ մարմինների գործող ակտերով սահմանված պայմաններով, և ինչպես նախատեսված են համապատասխան համաձայնագրերով և (կամ) պայմանագրերով՝ մինչև Համաձայնագրի 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն Համաձայնագրի կիրառման կասեցումը կամ գործողության դադարեցումն ուժի մեջ մտնելը Եվրոպական միության բյուջեով կատարված ցանկացած իրավական պարտավորության առնչությամբ (Հավելված III, Հոդված 1, կետ 4):

**13.** Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի և հայաստանյան իրավասու մարմինների միջև տեղեկատվությունը կփոխանակվի՝ հաշվի առնելով գաղտնիության պահանջները: Փոխանակվող տեղեկատվության մեջ ներառված անձնական տվյալները պետք է պաշտպանված լինեն գործող կանոնների համապատասխան:

**14.** Համաձայն Համաձայնագրի 9-րդ հոդվածի՝ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Կողմերը միմյանց ծանուցում են անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտի մասին:

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի  
ՍԴՈ - 1626

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՄԻՈՒԹՅԱՆ «ՀՈՐԻՉՈՆ ԵՎՐՈՊԱ»  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ  
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1626  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1626 որոշմամբ որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴՈՒ-1626 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ 1(105)2022

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1626 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական

ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵԼԵՎԻԶՈՐ ◆ 1(105)2022

նային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահ-



մանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորա-

գրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված

էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն

հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը*


ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1(105)/2022 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

*«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«18» հունվարի 2022թ.**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 3-ՐԴ ՄԱՍԻ, 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի

1(105)2022

◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի, 4-րդ մասի և 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի մայիսի 18-ից:

Օրենքի՝ «Ազգային ժողովի նիստը նախագահողի լիազորությունները» վերտառությամբ 52-րդ հոդվածի վիճարկվող դրույթներով սահմանված են.

«2. Նիստը նախագահողի օրինական պահանջը չկատարելու, քննարկվող հարցից ելույթում շեղվելու, վիրավորական արտահայտություն անելու, բացակա պատգամավորի փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու, պատգամավորի քվեարկությանը խոչընդոտելու, Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու դեպքում նախագահողն իրավունք ունի պատգամավորի նկատմամբ կիրառելու կարգապահական միջոցներ, իսկ նիստին ներկա գտնվող այլ անձին՝ նախազգուշացնելու կամ հեռացնելու նիստերի դահլիճից:

3. Պատգամավորի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական միջոցները.

1) նախազգուշացում՝ անունը, ազգանունը հրապարակելով.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

2) խոսափողի անջատում.

3) մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում.

4) հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից.

5) Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում:

4. Կարգապահական միջոցը, որպես կանոն, պետք է կիրառվի մեղմից դեպի խիստը, համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու նիստի բնականոն ընթացքը: Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական միջոցը կարող է կիրառվել, եթե մինչ այդ պատգամավորի նկատմամբ կիրառվել է սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգապահական միջոցը, և պատգամավորն ինքնակամ դա չի կատարել:

(...)

7. Նիստից հեռացման պահանջին չենթարկվելու դեպքում նախագահողը հանձնարարում է Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայությանը իրականացնել պահանջը»:

Ընդունումից ի վեր Օրենքի վերոնշյալ հոդվածում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի օգոստոսի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, հետազոտելով սույն գործին առնչվող նյութերը, վերլուծելով վերաբերելի փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, մասնավորապես, գտնում է, որ «(...) Սահմանադիրը օգտագործել է առհասարակ պատգամավորի «պատասխանատվության» ենթարկվել եզրույթը, որն իր մեջ ներառում է ոչ միայն քրեական այլ նաև ցանկացած այլ պատասխանատվության միջոց՝ հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համատեքստում: Նշվածը ինքնին երաշխավորում և բխում է ՀՀ ԱԺ պատգամավորի ներկայացուցչական մանդատի երաշխիքից ամրագրված ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածում: Ինքնին նշվածից բխում է, որ ՀՀ ԱԺ պատգամավորի կարծիքը, խոսքը կարող է լինել նաև սուր և խիստ քննադատող:

Դրա հետ մեկտեղ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածը փաստացի վերաձվել է մի գործիքի, որի միջոցով հնարավոր է ՀՀ ԱԺ պատգամավորի խոսքի նկատմամբ սառեցնող էֆեկտ իրականացնել կարգապահական միջոցի կիրառման միջոցով»:

Դիմողը նշում է, որ Օրենքի վիճարկվող դրույթներն Ազգային ժողովի նիստը նախագահողին վերապահում են ծայրահեղ լայն հայեցողություն և այն կիրառելու կամայական մոտեցում: Դրանք չեն համապատասխանում որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական պահանջներին, մասնավորապես՝ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված մի շարք անորոշ ձևակերպումներ հնարավորություն են տալիս նիստը նախագահողին միջամտել պատգամավորի ներկայացուցչական մանդատի իրացմանը:

Դիմողի կարծիքով՝ Օրենքի 52-րդ հոդվածով նախատեսված լիազորություններն իրացվում են ընտրողաբար և հայեցողաբար, ինչը պայմանավորված է օրենսդրական ձևակերպումների որոշակիության որակի ցածր մակարդակով: Նշված լիազորությունների իրացումն ինքնին խնդիր է առաջացնում խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ այն վերաժվում է քաղաքական մեծամասնությանը տրված գործիքի:

Դիմողը նշում է, որ «(...) Բարձր դատարանը պետք է գնահատի նաև առհասարակ ՀՀ ԱԺ պատգամավորի ելույթի նկատմամբ նիստը նախագահողի կողմից փաստացի գրաքննության բացառման հանգամանքը և դրանով Պատգամավորին կաշկանդելու բացառումը: Այսինքն եթե ինքնին ելույթում հնչեցված ակնհայտ Պատգամավորի վարքագծի տեսանկյունից պատգամավորական էթիկային առնչվող հարցեր առաջանան նման դեպքերի համար առկա է լրիվ այլ գործիքակազմ համապատասխան ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու միջոցով»:

Դիմումի շրջանակներում դիմողն առաջադրել է նաև հետևյալ հարցադրումը. «... Արդյո՞ք ՀՀ ԱԺ պատգամավորի նկատմամբ նույն արարքի համար կարող է միաժամանակ երկու կարգապահական միջոց կիրառվել»: Դիմողը, մասնավորապես, նշել է. «(...) վիճարկվող դրույթները չեն բացառում նաև առհասարակ նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության հնարավորությունը և նշվածը նաև փաստացի (...) իրացվել է գործնականում»: Այդ առնչությամբ, դիմողը վկայակոչել է Սահմանադրության 68-րդ հոդվածը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը՝ նշելով, որ «(...) նշված երաշխիքը ՄԻԵԴ կայուն նախադեպային իրավունքի համաձայն դիտարկվում և մեկնաբանվում է ավելի լայն քան միայն քրեաիրավական տիրույթում ներգործության հարցը»: Դիմողը վկայակոչել է նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1139 որոշմամբ արտացոլված մոտեցումները:

Վերոնշյալի համատեքստում դիմողն առաջադրել է նաև հետևյալ հարցադրումը. «(...) արդյոք վիճարկվող դրույթների մեկ նիստի ընթացքում ենթադրենք կարգապահական միջոց «նախագգուշացում» կիրառումը նիստի ավարտին չի մարվում, թե պահպանվում է և հաջորդ անգամ կարգապահական միջոցի կիրառման դեպքում դիտարկվում է որպես «ձանրացուցիչ հանգամանք»:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը գտնում է, որ Օրենքի 52-րդ հոդվածի 2, 3, 4 և 7-րդ մասերը և դրանց վերաբերյալ ձևավորված խորհրդարանական պրակտիկան հակասում են Սահմանադրության 94, 96 և 104-րդ հոդվածներին, որոշակիության դեֆիցիտի առումով՝ նաև Սահմանադրության 79-րդ հոդվածին:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը գտնում է, որ «(...) պատգամավորի՝ Սահմանադրությամբ երաշխավորված անձեռնմխելիությունը որևէ կերպ չի բացառում Ազգային ժողովի նախագահի կողմից վերջինիս նկատմամբ կարգապահական միջոցների կիրառումը, որոնց նպատակն է ապահովել սահմանված կանոնակարգը և բացառել դրան չհամապատասխանող գործողությունները»:

Պատասխանողի կարծիքով՝ Սահմանադրության 96-րդ հոդվածը չի բացառում Ազգային ժողովի կողմից պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցների կիրառումը. հակառակ մոտեցման պարագայում կիմաստազրկվի Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Ազգային ժողովի՝ իր կանոնակարգին համապատասխան գործելու պահանջը, որի առաջին երաշխավորն Ազգային ժողովի նախագահն է՝ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

Անդրադառնալով դիմողի պնդմանն առ այն, որ վիճարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական պահանջներին, պատասխանողը նշում է, որ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանված են Օրենքով և դրան համապատասխան ընդունված Աշխատակարգով, որոնցով մանրամասն կարգավորված են նաև Ազգային ժողովի նիստերի անցկացման ընթացակարգերը, ուստի՝ ցանկացած գործողություն, որը հակասում է սահմանված ընթացակարգին, խախտում է նիստի կարգը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ՂԱՏՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՒՐ ◆ 1(105)2022

Ազգային ժողովի նիստը նախագահողի հայեցողության շրջանակների հարցի առնչությամբ պատասխանողը նշում է, որ Օրենքով սահմանված են որոշակի կանոններ, որոնցով նիստը նախագահողը պետք է առաջնորդվի կարգապահական միջոցն ընտրելիս: Օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործված «որպես կանոն» եզրույթը նշանակում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ կարգապահական միջոցը պետք է կիրառվի մեղմից դեպի խիստը, սակայն հնարավոր են նաև ընդհանուր կանոնից բացառություններ՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակը: Եթե մեղմ կարգապահական միջոցն օբյեկտիվորեն չի կարող ապահովել նիստի բնականոն ընթացքը, ապա թույլատրելի է կիրառել ավելի խիստ միջոցը:

Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից մի քանի կարգապահական միջոցի կիրառման հարցի առնչությամբ պատասխանողը գտնում է, որ այն դեպքերում, երբ նիստը նախագահողի կողմից պատգամավորի նկատմամբ կիրառվում է կարգապահական միջոց, սակայն պատգամավորը շարունակում է խախտել նիստի բնականոն ընթացքը, չենթարկվել նախագահողի օրինական պահանջներին, հնչեցնել վիրավորական արտահայտություններ, ապա այդ դեպքում միանգամայն ողջամիտ է կիրառել այնպիսի կարգապահական միջոց, որը կապահովի նիստի բնականոն ընթացքը:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ պատասխանողը եզրահանգում է, որ Օրենքի 52-րդ հոդվածի 2, 3, 4 և 7-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

### **3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրումներին.

- արդյո՞ք Ազգային ժողովի նիստում պատգամավորի կողմից՝ իր պատգամավորական գործունեության շրջանակներում կարծիք հայտնելու համատեքստում, խորհրդարանի բնականոն գործունեությունը խաթարող վարքագիծ դրսևորելու առնչությամբ պատգամավորի նկատմամբ Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոց կիրառելու վերաբերյալ վիճարկվող կարգավորումները համահունչ են Սահմանադրությանը,

- արդյո՞ք պատգամավորի կողմից՝ իր պատգամավորական գործունեության շրջանակներում կարծիք հայտնելու համատեքստում, համապատասխան արարքի (գործողության) համար Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից նրա նկատմամբ կարող է կիրառվել մի քանի կարգապահական միջոց (արարքի շարունակականության և կարգապահական միջոցների կիրառման պարբերականության առումով). հարցին դրական պատասխանի դեպքում՝ արդյո՞ք Օրենքի վիճարկվող կարգավորումները սահմանադրականության առումով խնդրահարույց չեն:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատել, մասնավորապես, Սահմանադրության 94-րդ հոդվածի, 96-րդ հոդվածի 1-ին մասի և 104-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

Հայաստանի Հանրապետությունում պատգամավորն օժտված է ազատ մանդատով. նա կաշկանդված չէ ընտրողների հրահանգներով/պատվիրաններով և իր պատգամավորական գոր-

ծունեությունն իրականացնում է սեփական համոզմունքներին համապատասխան՝ որպես ամբողջ ժողովրդի ներկայացուցիչ և ի շահ ամբողջ ժողովրդի:

Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար: Սահմանադրության հիշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

Պատգամավորներին՝ որպես հանրային իշխանության բնագավառում առանցքային դերակատարում ունեցող պաշտոնատար անձանց, Սահմանադրությունն օժտել է անձեռնմխելիության երաշխիքով, որը դարձել է ժողովրդավարական պետությունների սահմանադրական մշակույթի անբաժանելի տարր: Դրա հիմնական նպատակն է ապահովել ժողովրդի կողմից ընտրված պետության բարձրագույն օրենսդիր ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի անդամների լիազորությունների անխափան իրականացումը՝ բացառելով քաղաքական հակառակորդների/ընդդիմախոսների, գործադիր և դատական իշխանության ներկայացուցիչների անհիմն միջամտությունը:

Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշման մեջ նշված է. «(...) պաշտոնատար անձանց հավելյալ սահմանադրական պաշտպանության տրամադրումը պայմանավորված է նրանց սահմանադրական հատուկ կարգավիճակով, դրանից բխող նրանց գործառույթների բովանդակությամբ (այսուհետ՝ գործառույթային անձեռնմխելիություն): Դրան զուգահեռ Սահմանադրությունը նախատեսում է



անձեռնմխելիության ևս մեկ երաշխիք, որը որոշակի պաշտոնատար անձանց պաշտպանում է նաև նրանց կարգավիճակի կամ գործունեության հետ չկապված հետապնդումներից (այսուհետ՝ անձնական անձեռնմխելիություն)»:

Սահմանադրությամբ ամրագրված գործառությանին (ինդեմնիտետ) և անձնական (իմունիտետ) անձեռնմխելիությունը կոչված է երաշխավորելու օրենսդիր մարմնի անկախությունը և բնականոն գործունեությունը: Մասնավորապես, անձնական անձեռնմխելիությունը երաշխավորում է պատգամավորի պաշտպանությունն անհիմն հետապնդումներից, իսկ գործառությանին անձեռնմխելիությունն ապահովում է պատգամավորի խոսքի ազատության իրավունքի իրացումը, ուղղված է օրենսդիր մարմնի շահերի պաշտպանությանը և չպետք է ընկալվի որպես բացառապես անհատ պատգամավորին շնորհված արտոնություն: Գործառությանին անձեռնմխելիությունը (ինդեմնիտետ, հաճախ անվանվում է նաև խոսքի ազատություն) ապահովում է ժողովրդավարական մանդատի ազատ իրացման ընթացքում հայտնած կարծիքի, քվեարկության համար միջամտության բացառումը: Այն գործում է պատգամավորի ինչպես լիազորությունների ժամկետում, այնպես էլ դրանից հետո, ինչը հնարավորություն է տալիս նրան գործել անկաշկանդ:

«Խորհրդարանը կարող է իր դերը կատարել միայն այն ժամանակ, երբ դրա անդամներն օգտվում են կարծիքի արտահայտման ազատությունից, որն անհրաժեշտ է իրենց կողմից ներկայացվող ժողովրդի անունից հանդես գալու համար: Խորհրդարանի անդամները պետք է կարողանան ազատորեն փնտրել, ստանալ և տարածել տեղեկատվություն և գաղափարներ՝ առանց հետապնդման վախի: Այդ պատճառով նրանց սովորաբար տրվում է հատուկ կարգավիճակ, որն ուղղված է նրանց անկախության ապահովմանը. նրանք օգտվում են խորհրդարանական արտոնությունից կամ անձեռնմխելիությունից՝ խորհրդարանի նիստերի ընթացքում կարծիքի արտահայտման ազատության առնչությամբ» (Մարդու իրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

վունքներ. ձեռնարկ պատգամավորների համար, Միավորված ազգերի կազմակերպության Միջխորհրդարանական միություն, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի վարչություն, թիվ 26, 2016):

*Խորհրդարանի անդամների խոսքի ազատության իրավունքի իրացման համար եքսպրտում նրանց ելույթների բովանդակության կանոնակարգման առումով թույլատրելի ներգործության սահմանները չափազանց նեղ են. առանձին բառերի/արտահայտությունների մասով առաջ է գալիս կանոնակարգման անհրաժեշտություն: Օրենսդիր մարմնի անդամի խոսքը չի կարող առհասարակ չկանոնակարգվել:* **Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի** անդամների կարգապահության վերաբերյալ 1965 (2013) բանաձևով սահմանված է. «Վեհաժողովը վերահաստատում է իր հանձնառությունն ազատ արտահայտման իրավունքի իրացման հարցում, որը հանդիսանում է պատգամավորական կարևորագույն արտոնությունն ու ընտրված ներկայացուցիչների անկախության նախապայմանը: Գոյություն ունեն քաղաքական երկխոսության ընթացքում սեփական դիրքորոշումն արտահայտելու բազմաթիվ եղանակներ, այդ թվում՝ ցուցադրելով խորհրդանիշներ կամ պատկերներ կամ կրելով որոշակի հագուստ, որոնք պաշտպանված են կարծիքի ազատ արտահայտման իրավունքով: Այնուամենայնիվ, անձը, որն իրացնում է իր ազատ արտահայտման իրավունքը, ունի նաև պարտականություններ և պատասխանատվություն (...)»:

**Եվրոպական խորհրդարանի կանոնակարգի** 10-րդ կանոնի 4-րդ կետով սահմանված է, որ խորհրդարանական քննարկումների ժամանակ խորհրդարանի անդամները պետք է զերծ մնան վիրավորական արտահայտություններ հնչեցնելուց: Որպես օրինակ՝ զրպարտչական արտահայտությունները, ատելության խոսքը, խտրականության հրահրումը՝ Հիմնարար իրավունքների խարտիայի 21-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմքով, սույն դրույթի իմաստով, «վիրավորական բռնապաշարի» կիրառման դեպքեր են: Այս դրույթի կիրառումը որևէ կերպ չպետք է

խաթարի խորհրդարանական բանավեճերի կենդանությունը կամ խորհրդարանի անդամների խոսքի ազատությունը (կետ 8): Համապատասխան չափանիշներն ու կանոնները չպահպանելը կարող է հանգեցնել Կանոնակարգի 175 և 176-րդ կանոններով նախատեսված միջոցների կիրառման:

Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 66-րդ հոդվածի 2-րդ մասով պատգամավորի գործառույթային անձեռնմխելիության առնչությամբ սահմանված էր. «Պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն գրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում»:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասում պատգամավորի անձեռնմխելիության սահմաններն ուրվագծելիս «պատգամավորի կարգավիճակից բխող գործողություններ» բառակապակցությունը չի գործածվում: Փոխարենը գործում է «պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար» բառակապակցությունը, որն առավել հստակ է արտահայտում պատգամավորի անձեռնմխելիության սահմանները: Միաժամանակ, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ անձեռնմխելիության իրավունքից ուղղակի բացառություն վիրավորանքի կամ գրպարտության համար նախատեսված չէ: Նույնական դրույթ է բովանդակվում Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասում: Նշված դրույթն ընկալվում էր որպես պատգամավորի կողմից հնչեցված ցանկացած արտահայտության համար պատասխանատվության բացարձակ արգելք: Այդ առնչությամբ *Իտալիայի Հանրապետության Սահմանադրական դատարանը 1998 թվականի հուլիսի 18-ին ընդունած թիվ 289 որոշմամբ արձանագրել է, որ «խորհր-*

դարանական գործառույթ» (*funzione parlamentare*) արտահայտությունը չի կարող վերագրվել խորհրդարանի անդամի ցանկացած գործողության: Նման լայն մեկնաբանությունը պարզամավորի գործունեության երաշխիք հանդիսացող անձեռնմխելիությունը վերջինիս արտոնությունը դարձնելու լուրջ ռիսկեր է բովանդակում: Պետք է արձանագրել պարզամավորի գործողությունների և նրա կարգավիճակի միջև հստակ և ուղղակի կապը. հակառակ պարագայում ստացվում է, որ պարզամավորը պարասխանաբար չէ իր գործունեության ընթացքում հնչեցրած զրպարտչական կամ վիրավորական արտահայտությունների համար:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) ընդգծել է, որ այն երկրներում, որտեղ գործառութային անձեռնմխելիությունից բացառություն չի նախատեսվում որոշակի վիրավորական արտահայտությունների համար, անհրաժեշտ է նախատեսել խորհրդարանի կողմից կարգապահական միջոցներով պարասխանաբարություն կիրառելու հնարավորություն՝ երաշխավորելու հանրության և անհատների շահերն ու միջազգային պարավորությունների կատարումը:

Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ գործառութային անձեռնմխելիության կարգավորմանն ուղղված կանոնները պետք է տարբերակել խորհրդարանի ներսում ներքին կարգապահական միջոցներից, որոնք այլ բնույթի են և սովորաբար չեն ընդգրկվում խորհրդարանական անձեռնմխելիության հայեցակարգում:

Խորհրդարանների մեծ մասի աշխատակարգերին կամ կանոնագրքերին համապատասխան՝ նախատեսվող կարգապահական միջոցները խիստ բազմազան են՝ նախազգուշացում, ելույթի իրավունքից զրկում, վարձատրության կրճատում և այլն: Ինչևէ, կան նաև երկրներ, որտեղ գործառութային անձեռնմխելիության (խոսքի ազատություն) երաշխիքն ապահովում է պաշտպանություն նույնիսկ խորհրդարանի կողմից կիրառվող ներքին կարգապահական միջոցներից (Վենետիկի հանձնա-

ժողովի՝ «խորհրդարանական անձեռնմխելիության ծավալը և հաղթահարումը» վերտառությամբ 14.05.2014թ. զեկույցը, CDL-AD(2014)011, պար. 55, 93):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից կատարված համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ճնշող մեծամասնության խորհրդարանների ընթացակարգային նորմերով նախատեսված է խորհրդարանի բնականոն աշխատանքին խոչընդոտող պատգամավորների նկատմամբ տարատեսակ կարգապահական միջոցների կիրառում: *ՄԻԵԴ-ը նշել է, որ պատգամավորական անձեռնմխելիությանը վերաբերող հարցերը կարգավորվում են խորհրդարանական ընթացակարգային նորմերով, և այդ հարցում անդամ պետություններն օգտվում են լայն հայեցողությունից: Այդ առումով, պետությունն ավելի լավ, քան ցանկացած միջազգային արյանի դատավոր, կարող է գնահատել խորհրդարանի կանոնակարգը խախտող պատգամավորի նկատմամբ սահմանափակող միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը և ապահովել օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունը ժողովրդավարական պետությունում (Case of Karácsony and others v. Hungary, գանգատ թիվ 42461/13 և 44357/13, 17.05.2016թ. վճիռ, կետ 143, Case of Kart v. Turkey, գանգատ թիվ 8917/05, 03.12.2009թ. վճիռ, կետ 99):*

Պատգամավորների ազատ խոսքը երաշխավորված է ցանկացած արտաքին ներգործությունից և հետապնդումներից հանրային նշանակություն ունեցող հարցերի քննարկման ժամանակ: Հակառակ պարագայում դա սառեցնող ազդեցություն (chilling effect) կունենար խորհրդարանական քննարկումների վրա: Որպես հակակշիռ պետք է գոյություն ունենա խորհրդարանական կարգապահության համակարգ, որի շրջանակներում պատգամավորների վարքագիծը վերահսկվում է հենց խորհրդարանի կողմից, որպեսզի բացառվի դրա անդամների կողմից խոսքի ազատության իրավունքի չարաշահումը և երաշխավորվի օրենսդիր մարմնի արդյունավետ գործունեությունը: Հիշյալ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

սկզբունքներն արտացոլվել են նաև ՄԻԵԴ պրակտիկայում (Case of Karácsony and others v. Hungary, գանգատ թիվ 42461/13 և 44357/13, 17.05.2016թ. վճիռ, կետ 116):

Վերոնշյալի առնչությամբ Հունգարիայի սահմանադրական դատարանը նշել է, որ *խորհրդարանի պատգամավորն իր կարծիքն արտահայտում է որպես երկրի գերագույն ներկայացուցչական մարմնի անդամ, այլ ոչ՝ որպես մասնավոր անձ: Այդ հանգամանքի ուժով՝ մի կողմից՝ շնորհիվ պատգամավորական անձեռնմխելիության՝ պատգամավորի ազատ արտահայտվելու իրավունքի շրջանակներն առավել լայն են, մյուս կողմից՝ պատգամավորական կարգապահությանն առնչվող նորմերի ազդեցությամբ այդ շրջանակները նեղանում են: Հունգարիայի սահմանադրական դատարանը նշել է, որ պատգամավորական լիազորությունների իրականացման համար տրամադրված բավականին ընդգրկուն անձեռնմխելիության երաշխիքով պայմանավորված՝ պատգամավորի արտահայտվելու ազատության իրացումը որոշակի չափով կանոնակարգվում է խորհրդարանի սահմանած նորմերով: Ուստի՝ արդարացված է, որ խորհրդարանի նախագահը որոշակի դեպքերում ունենա արտոնություններ, որոնք հնարավորություն կտան կանխելու պատգամավորների կողմից արտահայտվելու ազատության չարաշահումը: Բացի դրանից, Հունգարիայի սահմանադրական դատարանը նշել է, որ *խորհրդարանում հանդես գալու իրավունքը ոչ միայն պատգամավորին վերապահված անձնական արտոնություն է, այլև խորհրդարանական քննարկումների հիմնական տարրը, որը պետք է կանոնակարգվի խորհրդարանի արդյունավետ գործունեության ապահովման նպատակով: Սահմանադրական դատարանը եկել է այն եզրահանգման, որ պատգամավորների արտահայտման ազատության կարգավորման համար հիմք է հանդիսացել առանձին պատգամավորների իրավունքների և արդյունավետ խորհրդարանական գործունեության միջև պատշաճ հավասարակշռություն երաշ-**

խավորելու անհրաժեշտությունը (թիվ 3207/2013 (XI.18) AB 04.11.2013թ. որոշումը):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Ազգային ժողովի նախագահն ապահովում է Ազգային ժողովի բնականոն գործունեությունը: Այդ առնչությամբ, Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովումը բովանդակային առումով ավելի ընդգրկուն է, քան Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքն ապահովելը և ենթադրում է Ազգային ժողովի նախագահի կողմից Օրենքով սահմանված մի շարք լիազորությունների իրականացում ինչպես Ազգային ժողովի նստաշրջանների/նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, այնպես էլ դրանց ընթացքում:

Ազգային ժողովի նիստերի բնականոն ընթացքի ապահովման հարցում առանցքային է նիստը նախագահողի (Ազգային ժողովի նախագահ կամ փոխնախագահ) դերակատարությունը: Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Ազգային ժողովի նախագահը, մասնավորապես, նախագահում է Ազգային ժողովի նիստերը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին համապատասխան՝ կարող է Ազգային ժողովի նախագահի տեղակալին տալ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված հանձնարարություններ: Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալն Ազգային ժողովի նախագահի հանձնարարությամբ նախագահում է Ազգային ժողովի նիստերը, իսկ 2-րդ մասի 3-րդ կետին համապատասխան՝ փոխարինում է Ազգային ժողովի նախագահին կամ իրականացնում է Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ հանձնարարություններ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ եթե վարչապետի ընտրության հարցի քննարկման ժամանակ խոչընդոտվում է Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ ◆ 1(105)2022

և նիստը վարողի ձեռնարկած միջոցառումների ընթացքում այն հնարավոր չի լինում վերականգնել, ինչպես նաև երբ խոչընդոտվում է պատգամավորների մասնակցությունն Ազգային ժողովի նիստին, այդ թվում՝ սպառնալիքի միջոցով, ապա Ազգային ժողովի նիստը համարվում է ընդհատված, որի վերաբերյալ Ազգային ժողովի նախագահը հանդես է գալիս հայտարարությամբ: Օրենքի 52-րդ հոդվածի 8 և 9-րդ մասերին համապատասխան՝ եթե նիստում անկարգություն է առաջանում, և նախագահողն ի վիճակի չէ վերականգնել նիստի բնականոն ընթացքը, ապա նա կարող է մինչև կես ժամով ընդհատել նիստը: Եթե նիստի վերսկսվելուց հետո անկարգությունը շարունակվում է, ապա նախագահողը նիստը հայտարարում է ավարտված:

Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են Ազգային ժողովի նիստը նախագահողի լիազորությունները, այդ թվում՝ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով ելույթներն ընդմիջելը (8-րդ կետ):

Օրենքի 52-րդ հոդվածի 2 և 3-րդ մասերով ամրագրված՝ վիճարկվող կարգավորումների առնչությամբ, որոնք միտված են ապահովելու/վերականգնելու Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը, հարկ է նկատի ունենալ, որ նախ՝ խոսքը վերաբերում է օրենսդիր և ժողովրդի ներկայացուցչական մարմնի անդամի (պատգամավորի մասով) խոսքի ազատության իրավունքի իրացմանը, որն առաջնային նշանակություն ունի ժողովրդավարության կայացման/զարգացման գործընթացում, երկրորդ՝ հանրային նշանակություն ունեցող հարցերի քննարկման պարագայում պատգամավորի խոսքի ազատության իրավունքը ենթակա է առավել լայն պաշտպանության, երրորդ՝ խորհրդարանը կարևորագույն հարցերի քննարկման հարթակ է. քաղաքական բանավեճի ընթացքում պատգամավորների խոսքի ազատության երաշխավորումը հաստատում է արդարացի հավասարակշռություն խորհրդարանական փոքրամասնության և մեծամասնության միջև:



Վերոնշյալի լույսի ներքո՝ պատգամավորների խոսքի ազատությանը ցանկացած միջամտություն պետք է լինի որոշակի և համաչափ: Անկախ պատգամավորի նկատմամբ ընտրված ներգործության միջոցից՝ պատգամավորի խոսքի ազատության էությունը չպետք է խաթարվի:

Դիմողի կողմից բարձրացված՝ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված մի շարք ձևակերպումների՝ որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական պահանջներին ենթադրյալ անհամապատասխանության հարցի վերաբերյալ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը՝ արձանագրելով, մասնավորապես, ներքոնշյալը.

ա) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՍԴՈ-753),

բ) «(...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (02.12.2014թ. ՍԴՈ-1176),

գ) «(...) իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորում-

ները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (09.06.2015թ. ՍԴՈ-1213),

դ) «(...) իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝** հստակ են, կանխատեսելի, մատչելի» (03.05.2016թ. ՍԴՈ-1270),

ե) «(...) *իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,*

*(...) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,*

(...)

*(...) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ*

մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը» (15.11.2019թ. ՍԴՈ-1488),

զ) «(...) իրավական որոշակիության սկզբունքի ապահովման առումով ընդհանուր տրամաբանությունը հանգում է այն գաղափարին, որ թեև իրավական որոշակիությունն անհրաժեշտ է, այնուամենայնիվ, այդ սկզբունքը չի բացառում իրավական ակտերում այնպիսի ձևակերպումների կամ եզրույթների առկայությունը, որոնք գնահատողական բնույթ ունեն և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավել հստակեցվում են իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում» (04.05.2021թ. ՍԴՈ-1592):

Ըստ ՄԻԵԴ-ի՝ օրենքի որոշակիությունն ու կանխատեսելիությունը հաճախ կախված են այն ոլորտից, որն այն կարգավորում է և այն անձանց շրջանակից, որոնց հասցեագրված է (Case of Delfi AS v. Estonia, գանգատ թիվ 64569/09, 16.06.2015թ. վճիռ, կետ 122): ՄԻԵԴ-ը նշել է, որ անձինք, որոնց մասնագիտական գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, պետք է հատուկ ուշադրություն դարձնեն իրենց վարքագծի արդյունքում հնարավոր հետևանքների գնահատմանը և կանխատեսմանը: **ՄԻԵԴ-ն ընդգծել է**, որ խորհրդարանի կանոնակարգը կոչված է կարգավորելու պատգամավորների վարքագիծը: **Համապատասխան կանոններն անխուսափելիորեն անորոշություն են պարունակում և ենթակա են մեկնաբանման խորհրդարանի կողմից կիրառման ընթացքում:** Մի շարք երկրներում գործող կարգավորումների պայմաններում առկա են անորոշ հասկացություններ, որոնց օրինակները բազմաթիվ են: Պատգամավորական հատուկ կարգավիճակի ուժով պատգամավորները պետք է իրազեկված լինեն խորհրդարանում գործող կարգապահական նորմերի վերաբերյալ, որոնք կոչված են երաշխավորելու խորհրդարանի արդյունավետ աշխատանքը: ՄԻԵԴ-ը նշել է, որ հաշվի առնելով դիմումատուների հատուկ կարգավիճակը՝ վերջիններս պետք է ողջամտորեն կանխատեսեին իրենց վարքագծի հնարավոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

**հետևանքները՝ անգամ վիճարկվող դրույթի կիրառման պրակտիկայի բացակայության պայմաններում** (Case of Karácsony and others v. Hungary, գանգատ թիվ 42461/13 և 44357/13, 17.05.2016թ. վճիռ, կետ 126):

Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան: Խորհրդարանի բնականոն գործունեությունն առանցքային նշանակություն ունեցող արժեք է ժողովրդավարական հասարակությունում, ուստի՝ պատգամավորի խոսքի ազատության իրավունքը խորհրդարանում կարող է սահմանափակվել խորհրդարանական գործունեության կանոնակարգման շրջանակում՝ խորհրդարանի նիստի բնականոն ընթացքի ապահովման/վերականգնման, ինչպես նաև խորհրդարանի մյուս անդամների (այլոց) իրավունքների պաշտպանության նկատառումով: Համապատասխան օրենսդրական կարգավորման գլխավոր նպատակն անհատ պատգամավորի իրավական կարգավիճակի տարր հանդիսացող երաշխիքների և խորհրդարանի պատշաճ կազմակերպված գործունեության միջև հավասարակշռության հաստատումն է:

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «(...) ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի՝ իր պատգամավորական գործունեության արդյունավետ իրականացումը՝ բացառելով պատգամավորի գործունեությունից բխող հայտնած կարծիքի կամ Ազգային ժողովում քվեարկության համար քրեական պատասխանատվությունն ընդհանրապես, հետևաբար նաև և քրեական հետապնդումը: Սակայն պատգամավորի՝ իր գործունեության շրջանակներում, իր գործունեությունից բխող կարծիքի համար «արտաքին» պատասխանատվության բացառումն ամենևին չի ենթադրում պատասխանատվության բացառում ընդհանրապես, և հատկապես՝ չի բացառում «ներքին» պատասխանատվու-

թյունը՝ կարգապահական պատասխանատվությունը տարատեսակ սանկցիաների տեսքով»:

Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված կարգավորման համալրեքստում պարզամավորի գործառույթային անձեռնմխելիությունը չպետք է դիտարկվի որպես անձնական արտոնություն: Չնայած ժողովրդավարական հասարակությունում պարզամավորի խոսքի ազատության հատուկ նշանակությանը, այն չի կարող իր բնույթով բացարձակ լինել: Գործառույթային անձեռնմխելիությունը պարզամավորին օժտում է խոսքի ազատության լայն, սակայն ոչ անսահմանափակ իրավունքով:

Խորհրդարանի կանոնակարգին համապատասխան՝ խորհրդարանի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոցների կիրառումը հնարավորություն է տալիս արագ և արդյունավետ կերպով արձագանքել խորհրդարանի կողմից իր իրավասության իրացմանը, գործունեության իրականացմանը խոչընդոտող գործողություններին/երևույթներին: Դրա նպատակը, պարզամավորի խոսքի ազատությունը հարգելու հետ մեկտեղ, ժողովրդավարական գործընթացների արդյունավետ իրացումը երաշխավորելն է:

**4.2.** Պատգամավորի կողմից՝ իր պատգամավորական գործունեության շրջանակներում կարծիք հայտնելու համատեքստում համապատասխան արարքի (գործողության) համար Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից նրա նկատմամբ մի քանի կարգապահական միջոց կիրառելու՝ դիմողի կողմից առաջադրված հարցադրման առնչությամբ, նախ՝ հարկ է արձանագրել, որ Օրենքի 52-րդ հոդվածով օրենսդիրը փորձել է հնարավորինս սահմանափակել նիստը նախագահողի հայեցողությունը պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելիս: Այսպես՝ Օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կարգապահական միջոցը, որպես կանոն, պետք է կիրառվի մեղմից դեպի խիստը, համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու նիստի

բնականոն ընթացքը: Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական միջոցը (Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում) կարող է կիրառվել, եթե մինչ այդ պատգամավորի նկատմամբ կիրառվել է Օրենքի հիշյալ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգապահական միջոցը (հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից), և պատգամավորն ինքնական դա չի կատարել:

Օրենքի 52-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ խմբակցության հիմնավորված միջնորդությամբ Ազգային ժողովի խորհուրդն իրավունք ունի մինչև կարգապահական միջոցի կիրառման ժամկետի լրանալը վերականգնելու հեռացված պատգամավորի մասնակցությունն Ազգային ժողովի նիստին:

*Օրենքի վերոնշյալ դրույթներն ընթացակարգային երաշխիքներ են այն պատգամավորի համար, որի նկատմամբ կիրառվել է կարգապահական միջոց:*

Օրենքի 52-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նիստից հեռացման պահանջին չենթարկվելու դեպքում նախագահողը հանձնարարում է Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայությանն իրականացնել պահանջը:

Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքին խոչընդոտող վարքագիծ (արտահայտվելու ազատության/կարծիք հայտնելու համատեքստում) դրսևորող պատգամավորի նկատմամբ կիրառվող միջոցը պետք է համաչափ ու պիտանի լինի հետապնդվող նպատակին: Որպես կանոն, համապատասխան պատգամավորի նկատմամբ սկզբնապես կիրառվում են առավել մեղմ կարգապահական միջոցները, սակայն չի բացառվում, որ պատգամավորի վարքագիծն ինքնին վկայի, որ մեղմ միջոցների կիրառումն արդյունավետ չէ, քանի որ դրանք չեն կարող ապահովել նիստի ընթացքում կարգուկանոնի հաստատումը: Այդ

պարագայում նիստը նախագահողը կարող է կիրառել առավել խիստ միջոց:

*Պատգամավորի նկատմամբ կարգապահական այլ միջոցի (միջոցների) կիրառումը թույլատրելի է այն պարագայում, երբ պատգամավորի համապատասխան արարքը շարունակական բնույթ է կրում, ինչով պայմանավորված՝ նրա նկատմամբ կիրառված նախորդ կարգապահական միջոցը չի հանգեցրել նիստի բնականոն ընթացքն ապահովելուն/վերականգնելուն: Մինևույն ժամանակ, եթե համապատասխան միջոցի կիրառումից հետո պատգամավորը դադարեցրել է խորհրդարանի նիստի բնականոն ընթացքը/կարգը խախտող գործողությունները, նրա նկատմամբ նոր միջոցի կիրառումն արդարացված չէ և հակասում է համաչափության սկզբունքին:*

Համաչափության սկզբունքը ենթադրում է ողջամիտ փոխկապակցվածություն կոնկրետ նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործվող միջոցների միջև: Թեև սույն գործով խոսքը վերաբերում է ոչ թե Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների/ազատությունների սահմանափակման, այլ պատգամավորի՝ որպես «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան՝ պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գործառույթային անձեռնմխելիության համատեքստում պատգամավորական գործունեության շրջանակներում խոսքի ազատության (կարծիք հայտնելու իրավունքի) իրացման առնչությամբ նրա նկատմամբ կարգապահական միջոց կիրառելու և, ըստ այդմ, նրա՝ պատգամավորական գործունեության շրջանակներում խոսքի ազատության սահմանափակման հարցին, Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաչափության սկզբունքի առանձին տարրերի բովանդակության առնչությամբ Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ արտացոլված մոտեցումները կիրառելի են նաև սույն գործով՝ հաշվի առնելով, մասնավորապես, սույն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

գործի համատեքստում՝ պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները և նրա համար սահմանված համապատասխան սահմանադրաիրավական երաշխիքները: Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:

(...) այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով օրենսդիրն ի զորու է հասնել հետապնդվող նպատակին, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի *անհրաժեշտությունն է*, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը (...) իրավունքին կամ ազատությանը (...):

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված *պիտանի և անհրաժեշտ միջոցը* համեմատի սահմանափակվող (...) իրավունքի կամ ազատության *սահմանադրական նշանակության* հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող (...) իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ *չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի* նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ **որևէ (...) իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն**, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում»:

Տվյալ դեպքում միջամտության համաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև *պատասխանատվության*



միջոցների բնույթն ու խստությունը (Case of Tammer v. Estonia, գանգատ թիվ 41205/98, 06.02.2001թ. որոշում, կետ 69):

ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ պատգամավորի նկատմամբ կիրառված միջոցը պետք է համապատասխանի կարգապահական խախտման ծանրությանը (Case of Karácsony and others v. Hungary, գանգատ թիվ 42461/13 և 44357/13, 17.05.2016թ. վճիռ, կետ 152): Օրենսդիր մարմինը (Ազգային ժողովը)/ նիստը նախագահողը, ղեկավարվելով համաչափության սկզբունքով, կարգապահական միջոց կիրառելիս պետք է արդարացի հավասարակշռություն հաստատի մրցակցող շահերի միջև, այն է՝ պատգամավորի խոսքի ազատությունը և օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունը:

Եվրոպական խորհրդարանի կանոնակարգի 10-րդ կանոնի 4-րդ կետին համապատասխան՝ խորհրդարանական քննարկումների ժամանակ խորհրդարանի անդամների հնչեցրած արտահայտությունների բնույթը գնահատելիս հաշվի են առնվում ելույթ ունեցողի մտադրությունը, հանրության կողմից այդ արտահայտությունների ընկալումը, խորհրդարանի հեղինակությանը պատճառվող վնասի աստիճանը և պատգամավորի խոսքի ազատությունը:

**Վենետիկի հանձնաժողովը, կարևորելով քաղաքական փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը, հատուկ ընդգծել է, որ գործառույթային անձեռնմխելիությունը չպետք է բացառի խորհրդարանում պատգամավորի նկատմամբ ներքին կարգապահական միջոցների կիրառումը, եթե դրանք որոշակի են և համաչափ ու խորհրդարանական մեծամասնության կողմից չեն չարաշահվում (Վենետիկի հանձնաժողովի՝ «խորհրդարանական անձեռնմխելիության ծավալը և հաղթահարումը» վերտառությամբ 14.05.2014թ. զեկույցը, CDL-AD(2014)011, պար. 183):**

Վենետիկի հանձնաժողովն «Ընդդիմության դերը ժողովրդավարական խորհրդարանում» վերտառությամբ զեկույցում նշել է, որ խոսքի ազատության երաշխիքը կոչված է ապահովելու ոչ

◆ 1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

միայն խորհրդարանի՝ որպես օրենսդիր մարմնի անկախությունը, այլև քաղաքական փոքրամասնության անխաթար գործունեությունը՝ հաշվի առնելով վերջինիս դերով պայմանավորված հատուկ պաշտպանության անհրաժեշտությունը քաղաքական ընդդիմախոսների ավելորդ ճնշումներից: Ըստ Հանձնաժողովի՝ քաղաքական ընդդիմության հիմնական պարտականությունն է կատարել իր գործառույթներն օրենքի շրջանակներում, մասնավորապես՝ Սահմանադրությանը, ներպետական օրենքներին, խորհրդարանի ընթացակարգային կանոններին համապատասխան: Պարզամավորական անձեռնմխելիության հաղթահարման պայմանով ընդդիմության ներկայացուցիչը կարող է պարասխանավորության ենթարկվել անօրինական գործունեության համար, ինչպես ցանկացած այլ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ: Բացի դրանից, անդամ պետությունների խորհրդարանների մեծ մասում ներքին կարգապահական միջոցներ են նախատեսված ընթացակարգային կանոնները խախտող կուսակցական խմբերի և պարզամավորների համար: Հանձնաժողովն այս հանգամանքը համարում է ընդունելի, եթե այդ միջոցներն օրինական նպատակ են հետապնդում ու համաչափ են:

Ժողովրդավարական պետությունում մեծամասնության և փոքրամասնության միջև գոյություն ունի կայուն հավասարակշռություն, ինչը փոխգործակցության հնարավորություն է ստեղծում՝ ապահովելով արդյունավետ, ժողովրդավարական և օրինական կառավարում: (...) Հանձնաժողովը հորդորում է ընդդիմադիր (նաև իշխող) կուսակցություններին զերծ մնալ այնպիսի վարքագծից, որը կարող է խաթարել խորհրդարանական քննարկումները և, ի վերջո, խաթարել քաղաքացիների վստահությունը քաղաքական գործիչների և կուսակցությունների հանդեպ (15.11.2010թ. զեկույցը, CDL-AD(2010)025, պար. 142, 147, 153):

ՄԻԵԴ-ը նշել է, որ խոսքի ազատությունն առանձնահատուկ նշանակություն ունի ժողովրդի կողմից ընտրված ներկայա-

ցուցիչների համար: Վերջիններս ներկայացնում են իրենց ընտրազանգվածը, ուշադրություն հրավիրում նրանց խնդիրների վրա և պաշտպանում նրանց շահերը: Ուստի՝ հատկապես ընդդիմադիր գործիչների խոսքի ազատության իրավունքի սահմանափակման հարցում Դատարանի կողմից հատուկ ուշադրություն է պահանջվում (Case of Castells v. Spain, գանգատ թիվ 11798/85, 23.04.1992թ. որոշում, կետ 42):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ դիմողի կողմից առաջադրված՝ «արդյո՞ք ՀՀ ԱԺ պատգամավորի նկատմամբ նույն արարքի համար կարող է միաժամանակ երկու կարգապահական միջոց կիրառվել» և այդ համատեքստում «(...) արդյո՞ք վիճարկվող դրույթների մեկ նիստի ընթացքում ենթադրենք կարգապահական միջոց «նախազգուշացում» կիրառումը նիստի ավարտին չի մարվում, թե պահպանվում է և հաջորդ անգամ կարգապահական միջոցի կիրառման դեպքում դիտարկվում է որպես «ծանրացուցիչ հանգամանք» հարցադրումների առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտող պատգամավորի նկատմամբ Օրենքով նախատեսված կարգապահական միջոցների կիրառումն իրավաչափ է՝ պատգամավորի խոսքի ազատության իրավունքին միջամտության համաչափության փորձերի պահպանվածության պարագայում: Այն դեպքերում, երբ պատգամավորական գործունեության շրջանակներում կարծիք հայտնելու համարեքստում պատգամավորի համապատասխան գործողությունները շարունակական բնույթ են կրում, Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքն ապահովելու/վերականգնելու նպատակով նիստը նախագահողը կարող է (այդ թվում՝ հաջորդաբար) կիրառել Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգապահական միջոցները (որպես կանոն, մեղմից դեպի խիստը): ընդ որում, Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական միջոցի կիրառմանը **պարտադիր պետք է նախորդի Օրենքի հիշյալ հոդվածի 3-րդ**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

մասի 4-րդ կետով սահմանված միջոցի կիրառումը, որը պարզամավորն ինքնական չի կատարել:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 52-րդ հոդվածում օրենսդրի կողմից «կարգապահական միջոց» (այլ ոչ «կարգապահական տույժ») բառակապակցության գործածումը պարահական չէ: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է պետության օրենսդիր ներկայացուցչական մարմնի անդամին՝ Ազգային ժողովի պարզամավորին (պետական քաղաքական ընտրովի պաշտոն զբաղեցնող անձին), որը չունի վերադաս (անմիջական ղեկավար): Պարզամավորի նկատմամբ կիրառված կարգապահական միջոցների մարման ժամկետի վերաբերյալ հարցի առնչությամբ, Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հինգ կարգապահական միջոցներից երեքի մասով, ժամանակային/տևողության առումով առկա է հստակեցում՝ **մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում, հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից, Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում** (52-րդ հոդվածի 3-րդ մասի 3-5 կետեր): Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված մյուս երկու կարգապահական միջոցները՝ նախազգուշացումը՝ անունը, ազգանունը հրապարակելով, և խոսափողի անջատումն առավել մեղմ կարգապահական միջոցներ են, և նախազգուշացումը, որպես կանոն, պետք է նախորդի խոսափողն անջատելուն: Կարգապահական միջոցը, որպես կանոն, մեղմից դեպի խիստը կիրառելու կարգավորումը վերաբերելի է նաև «մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում» կարգապահական միջոցին, իսկ «հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից» կարգապահական միջոցի կիրառումը պարտադիր պետք է նախորդի «Ազգային ժողովի

նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում» կարգապահական միջոցի կիրառմանը: Ընդ որում, վերջինիս կիրառման համար անհրաժեշտ պայման է պատգամավորի նկատմամբ կիրառված նախորդող միջոցի (հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից) ինքնակամ չկատարելը:

Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունների իրականացումը պետք է շարունակվի մինչև Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը կամ Սահմանադրության 98-րդ հոդվածով նախատեսված որևէ այլ հիմքով պատգամավորի լիազորությունների դադարումը/դադարեցումը: Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված կարգապահական միջոցների կիրառման համարեքստում պատգամավորի լիազորությունների իրականացումը որոշ ծավալով և որոշակի ժամանակահատվածով սահմանափակվում է, սակայն հաշվի առնելով պատգամավորի առաքելությունը Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին մասի և 94-րդ հոդվածի համարեքստում՝ կարգապահական միջոցի կիրառումը պատգամավորին չի կարող զրկել Ազգային ժողովի նիստերի դահլիճում քվեարկությանը մասնակցելու, ըստ այդմ՝ իր կամահայրնությունը դրսևորելու հնարավորությունից: Սահմանադրական դատարանն՝ իր 2013 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1081 որոշմամբ արձանագրել է. «(...) պատգամավորների, այդ թվում՝ պատգամավորական փոքրամասնության իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներ են հանդիսանում, մասնավորապես. (...) /բ/ մշտական հիմունքներով ու ազատ մանդատի հիման վրա պատգամավորի լիազորությունների կատարման երաշխավորումը (...):»:

Սահմանադրական դատարանը, շեշտելով Օրենքով նախատեսված բոլոր ընթացակարգերին պատգամավորի մասնակցության կարևորությունը, այնուհանդերձ, ընդգծում է բոլոր դեպ-

քերում քվեարկությանը պատգամավորի մասնակցության անկյունաքարային դերը, որի միջոցով է պատգամավորն իրականացնում իր առաքելությունը, արտահայտում իր կամքը՝ որպես ժողովրդի ներկայացուցիչ: Ուստի՝ ժողովրդավարական, իրավական պետությունում քվեարկությանը պատգամավորի մասնակցությունը՝ որպես մշտական հիմունքներով և ազատ մանդատով պատգամավորական լիազորությունների երաշխավորում, գերակա է կարգապահական միջոցի կիրառման արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի նկատմամբ: Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ արձանագրել է. «Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ Սահմանադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ: Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Ազգային ժողովի որոշումները, ինչպես նաև Ազգային ժողովի այլ ակտերը (օրենքներ, հայտարարություններ, ուղերձներ), բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության 103-րդ հոդվածը կոչված է ապահովելու Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր և ժողովրդի ներկայացուցչական մարմնի, սահմանադրական առաքելությամբ պայմանավորված լիազորությունների արդյունավետ իրականացումը»: Զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 103-րդ հոդվածով նաև երաշխավորվում է այդ հոդվածով սահմանված ակտերի ընդունմանը պատգամավորի մասնակցությունը, որի շրջանակում որոշիչ է քվեարկությանը մասնակցությունը:

Վերոգրյալի հիման վրա, Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված կարգապահական միջոցների կիրառման հարցի համատեքստում Սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ դրանցով սահմանված ժամկետներում պատգամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար:

*Սահմանադրական դատարանը ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ Օրենքի 52-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված է Ազգային ժողովի խորհրդի իրավունքը խմբակցության հիմնավորված միջնորդությամբ մինչև կարգապահական միջոցի կիրառման ժամկետի լրանալը վերականգնելու հեռացված պատգամավորի մասնակցությունն Ազգային ժողովի նիստին: Այլ խոսքերով՝ Օրենքով նախատեսված է մինչև կարգապահական միջոցի կիրառման ժամկետի լրանալն Ազգային ժողովի նիստին հեռացված պատգամավորի մասնակցությունը վերականգնելու հնարավորությունն Ազգային ժողովի խորհրդի կողմից՝ խմբակցության հիմնավորված միջնորդությամբ: Նշվածը վկայում է Ազգային ժողովի նիստը նախագահողի՝ Ազգային ժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ որպես Ազգային ժողովի մարմինների, պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոց կիրառելու լիազորությանն հակակշռող լիազորության (ոչ բոլոր կարգապահական միջոցների մասով)՝ Օրենքով ամրագրված լինելու մասին, որն օրենսդիրը վերապահել է Ազգային ժողովի մեկ այլ մարմնին՝ Ազգային ժողովի խորհրդին:*

Վերոնշյալի համատեքստում Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված է, որ նիստերի դահլիճից հիմնական զեկուցողի հեռացման դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է կարգապահական միջոցի կիրառման ժամկետով: Եթե նիստից

հեռացված զեկուցողը պատգամավոր է, ապա հարցի քննարկումը վերսկսվում է նրա մասնակցությունն Ազգային ժողովի նիստին ժամկետից շուտ վերականգնվելու դեպքում:

Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասում կարգապահական միջոցները թվարկված են «մեղմից դեպի խիստ» տրամաբանությամբ և դրանց կիրառումը, որպես կանոն, նշված տրամաբանության շրջանակում ինքնանպատակ չէ: Յուրաքանչյուր դեպքում կարգապահական միջոցի կիրառման առնչությամբ Ազգային ժողովի նիստը նախագահողի հայեցողության սահմանափակումները պետք է տեղավորվեն ողջամտության սահմաններում այն առումով, որ հնարավոր չէ օրենսդրորեն հստակ կանխորոշել/ամրագրել Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը վտանգող, այն խաթարող հանգամանքները, ինչով պայմանավորված՝ նիստը նախագահողը պետք է արձագանքի կոնկրետ իրավիճակին (կարգապահական միջոց կիրառելու առումով)՝ գնահատելով ստեղծված իրավիճակը և, ըստ այդմ, կիրառելով այն հանգուցալուծելուն ուղղված՝ Օրենքով իրեն վերապահված գործիքակազմը: Մյուս կողմից, կիրառվող կարգապահական միջոցը պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու նիստի բնականոն ընթացքը, ինչով պայմանավորված, նիստը նախագահողի հայեցողությունը բացարձակ չէ:

**4.3.** Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև պատգամավորական էթիկայի կանոնների հարցին՝ Ազգային ժողովի բնականոն գործունեության երաշխավորման և այդ առնչությամբ՝ Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքի ապահովման համատեքստում՝ նկատի առնելով նաև դիմողի դիրքորոշումն առ այն, որ «(...) Բարձր դատարանը պետք է գնահատի նաև առհասարակ ՀՀ ԱԺ պատգամավորի ելույթի նկատմամբ նիստը նախագահողի կողմից փաստացի գրաքննության բացառման հանգամանքը և դրանով Պատգամավորին կաշկանդելու բացառումը: Այսինքն եթե ինքնին ելույթում



հնչեցված ակնհայտ Պատգամավորի վարքագծի տեսանկյունից պատգամավորական էթիկային առնչվող հարցեր առաջանան նման դեպքերի համար առկա է լրիվ այլ գործիքակազմ համապատասխան ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու միջոցով»:

Պատգամավորների վարքագիծը կանոնակարգելու նպատակով մի շարք պետություններում ընդունվել են վարքագծի կանոնագրքեր/կանոններ, որոնք բովանդակում են որոշակի պահանջներ և սովորաբար վերաբերում են ինչպես պատգամավորի լիազորությունների իրականացմանը, այնպես էլ նրա ամենօրյա վարքագծին: Այդ կանոնները կարող են բովանդակել ընդհանուր բնույթի դրույթներ, որոնք պարտավորեցնում են պատգամավորներին իրենց ելույթների ժամանակ խուսափել հակաօրինական կամ հակաբարոյական բնույթի արտահայտություններից, որոնք վիրավորական կամ զրպարտչական են, բովանդակում են ատելության խոսք կամ բռնության կոչեր (օրինակ՝ Իռլանդիայի Հանրապետության օրենսդիր մարմնի ներկայացուցիչների 30.05.2012թ. Կանոնագրքի առաջին դրույթը սահմանում է, որ պատգամավորները պետք է ձգտեն պահպանել իրենց նկատմամբ հանրային վստահությունը (...), իսկ երկրորդ դրույթի համաձայն՝ պատգամավորները պետք է գործեն Կանոնագրքի դրույթներին համապատասխան, և նրանց վարքագիծը չպետք է խաթարի խորհրդարանի կամ անհատ պատգամավորի ինստիտուտի հեղինակությունը): Նշված կանոններն ուղղված են նաև շահերի բախման, պատգամավորի գործունեության թափանցիկության հետ կապված հարցերը կարգավորելուն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված է պատգամավորի՝ պատգամավորական էթիկայի կանոնները պահպանելու պարտականությունը: Այդ կանոնները թվարկված են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում (վերոնշյալ օրենքները բովանդակում են

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

նաև շահերի բախման հարցի առնչությամբ որոշ կարգավորումներ):

Սահմանադրության 107-րդ հոդվածին համապատասխան՝ պատգամավորական էթիկային առնչվող հարցի քննարկման և դրա վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություն ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող է ստեղծվել ժամանակավոր հանձնաժողով: Մանրամասները սահմանված են Օրենքով:

Վերոնշյալի համատեքստում անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ Օրենքի վիճարկվող դրույթով նախատեսված կարգապահական միջոցները պետք է կիրառվեն էթիկայի հանձնաժողովի կողմից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը կարող է ձևավորվել Ազգային ժողովի որոշմամբ՝ կոնկրետ պատգամավորի վարքագծին առնչվող հարցերը քննարկելու համար: Օրենքին համապատասխան՝ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքը պատկանում է Ազգային ժողովի խմբակցությանը: Հանձնաժողովի գործունեության ժամկետը մինչև երկու ամիս է, որը կարող է հարցի քննարկումն ավարտելու նպատակով մինչև մեկ ամսով երկարաձգվել հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ: Մինչև հանձնաժողովի ստեղծումը պատգամավորական էթիկային առնչվող դիմումներն ուսումնասիրում և դրանց վերաբերյալ խմբակցություններին եզրակացություն է ներկայացնում Ազգային ժողովի աշխատակազմի իրավասու փորձագետը:

**Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև պատգամավորական էթիկայի, այդ հարցերով ժամանակավոր հանձնաժողովի վերաբերյալ սահմանադրական և օրենսդրական կարգավորումները/կառուցակարգերը միտված են պատգամավորի էթիկական վարքագիծն ապահովելուն, նրա առերևույթ ոչ էթիկական վարքագիծը քննության առնելուն և**

վերջինիս գնահատական տալուն, սակայն դրանք չեն կարող ապահովել Ազգային ժողովի նիստի ընթացքում կարգուկանոնի պահպանումը՝ երաշխավորելով օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունը: Թեև քննարկվող իրավիճակներում խոսքը վերաբերում է պատգամավորի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելուն, որը կարող է դիտարկվել/գնահատվել որպես ոչ էթիկական, հարկ է նկատի ունենալ, որ Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքի ապահովումը ենթադրում է նաև արագ և համարժեք արձագանք նիստի բնականոն ընթացքը խաթարող գործողություններին, և այդ հարցում հապաղումը (գործուն միջոցներ չձեռնարկելը) կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ (ՄԻԵԴ-ը նշել է, որ պատգամավորի կողմից նիստի բնականոն ընթացքը խախտելու դեպքում, նրա նկատմամբ անմիջապես կիրառվում է կարգապահական միջոց (Immediate sanctions) (...), այս համատեքստում պատգամավորի ակնհայտ վիրավորական արտահայտությունները կամ վարքագիծը իմաստազրկում են նրա՝ խոսքի ազատության իրավունքի պաշտպանությունը կամ դրսևորվում են որպես այդ իրավունքի չարաշահում (Case of Karácsony and others v. Hungary, գանգատ թիվ 42461/13 և 44357/13, 17.05.2016թ. վճիռ, կետ 155)՝ **ընդհուպ մինչև Ազգային ժողովի աշխատանքների կազմալուծումը: Հենց նվաճ հանգամանքով է պայմանավորված Օրենքում պատգամավորական էթիկային առնչվող և Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքն ապահովելուն միտված տարբեր իրավակարգավորումների/կառուցակարգերի ամրագրումը:**

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը, 4-րդ մասը և 7-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դրանցով սահմանված ժամկետներում պատգամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

1 փետրվարի 2022 թվականի  
ՍԴՈ-1627

### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ  
ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ  
52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 3-ՐԴ ՄԱՍԻ, 4-ՐԴ ՄԱՍԻ  
ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1627 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի, 4-րդ մասի և 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1627 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1627 որոշում) վերաբերյալ:

Մեր այն առաջարկությունը, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված ժամկետներում պատգամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար, ընդունվել և ամրագրվել է ՍԴՈ-1627 որոշման մեջ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ ՍԴՈ-1627 որոշման մեջ ամրագրված վիճարկվող դրույթների սահմանադրականության բացահայտման հարցադրումները, դրանց շրջանակ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

ներում արտահայտված դիրքորոշումները և եզրահանգումները ցույց են տալիս, որ **չի ապահովվել գործի բազմակողմանի և լրիվ քննությունը, ըստ այդմ՝ խաթարվել է նաև Սահմանադրական դատարանում վարույթի առանցքային սկզբունքներից մեկի՝ գործի հանգամանքների ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Ուստի և սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականության բացահայտումը, մասնավորապես՝ Սահմանադրության 94-րդ հոդվածի, 96-րդ հոդվածի 1-ին մասի և 104-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունների առումով, աղճատված և հատվածական է:**

Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ապահովելու համար Սահմանադրության գերակայությունը և այս առումով չունի ինքնասահմանափակվելու լիազորություն, որի հակառակը սահմանադրական արդարադատության իրականացումից հրաժարումն է, ինչպես նաև չի կարող իրեն վերագրել այնպիսի լիազորություններ, որոնք Սահմանադրությամբ սահմանված չեն:

Վիճարկվող դրույթների սահմանադրականության բացահայտմանն ուղղված Սահմանադրական դատարանի հարցադրումները չեն կարող գնահատողական լինել (տես՝ ՍԴՈ-1627 որոշման 3-րդ կետը), այլապես փաստացի ստացվում է, որ Սահմանադրական դատարանը, մինչև վիճարկվող դրույթների կոնկրետ վերլուծություն իրականացնելն ու այդ դրույթների սահմանադրական բովանդակությունը բացահայտելը, պատգամավորի կողմից դրսևորվող վարքագիծը, ըստ էության, ի սկզբանե որակում է որպես խորհրդարանի բնականոն գործունեությունը խաթարող, որի համար կարգապահական միջոց կիրառելը, ինքնաբերաբար համարվելու է իրավաչափ: Նման իրավիճակը կարող է անկախ դիտորդի մոտ ստեղծել Սահմանադրական դատարանի կողմից կանխակալ և սուբյեկտիվ նախատրամադրվածություն ունենալու ողջամիտ կասկածներ:

Նկատի ունենալով, որ սույն գործով բարձրացված սահմանադրական վեճը վերաբերում է կառավարման խորհրդարանական համակարգի պայմաններում խորհրդարանական մշակույթի (այդ թվում՝ էթիկայի), խորհրդարանական մեծամասնության (կառավարող խմբակցության) և խորհրդարանական փոքրամասնության (ընդդիմադիր խմբակցության) փոխհարաբերությունների կարևորագույն հարցերին, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այս համատեքստում **ընդունելի չենք համարում, մասնավորապես, այն մոտեցումները համաձայն որոնց՝**

ա) սահմանադրական արդարադատությունն ամբողջ ծավալով չի կարող իրականացվել, քանի որ ներկայում խորհրդարանական մշակույթի մակարդակը ցածր է:

**Մեր դիրքորոշումն է՝** վիճարկվող դրույթների սահմանադրական բովանդակության լիարժեք բացահայտումը և մեկնաբանությունները, ինչպես նաև անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների սահմանադրականության շրջանակները և չափորոշիչները նախանշելն անհրաժեշտություն է,

բ) վիճարկվող դրույթները, ըստ էության, վերաբերում են Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության և քաղաքական փոքրամասնության փոխհարաբերությունների ներքին հարցերին, և դատական իշխանությունը, տվյալ դեպքում՝ Սահմանադրական դատարանը, իրավունք չունի միջամտելու օրենսդիր իշխանության՝ Ազգային ժողովի ներքին հարցերի լուծմանը, որով կխախտվի իշխանությունների տարանջատման սկզբունքը:

**Մեր դիրքորոշումն է՝** «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը ամբողջ ծավալով սահմանադրական վերահսկողության օբյեկտ է, և դրա սահմանադրականության գնահատման առումով Սահմանադրությունը որևէ բացառություն չի նախատեսել,

գ) պատգամավորական գործունեության շրջանակներում պատգամավորի հայտնած կարծիքը, խոսքը գնահատելով որպես վիրավորական արտահայտություն, ինչպես նաև Ազգային

ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ՝ Ազգային ժողովի կանոնակարգով կոնկրետ չսահմանված գործողություն կատարելու դեպքում Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոց կիրառելն իրավաչափ է, սահմանադրականության առումով խնդրահարույց չէ նաև այն պատճառաբանությամբ, որ այդ միջոցն ուղղված է Ազգային ժողովի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակի իրականացմանը:

**Մեր դիրքորոշումն է՝** սույն գործով վիճարկվող՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, մասնավորապես, «վիրավորական արտահայտություն» և «Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու» դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը ՍԴՈ-1627 որոշմամբ բացահայտված չէ, փաստված չէ, որ այդ դրույթների մասով առկա չէ կոնկրետ և որոշակի օրենսդրական կարգավորում, ինչը սահմանադրականության առումով խնդրահարույց է: Հիշյալ դրույթների իրավական որոշակիության ապահովումը պատգամավորի համար ողջամիտ կերպով կանխատեսելի կդարձնել իր վարքագծի հետևանքները, ինչպես նաև Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոցի կիրառումը չէր գնահատվի, մասնավորապես, պատգամավորի կարծիք հայտնելու ազատության կամայական սահմանափակում՝ կատարված քաղաքական նպատակահարմարությունից ելնելով: Նշվածով հանդերձ պատգամավորական գործունեության շրջանակներում պատգամավորի կարծիք հայտնելու ազատությունը, ըստ էության, ստորադասված է Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն այն դեպքում, երբ Սահմանադրության 94-րդ հոդվածի, 96-րդ հոդվածի 1-ին մասի և 104-րդ հոդվածի 2-րդ մասի ամբողջական մեկնաբանություններով պետք է ապահովվել հիշյալ երկու սահմանադրական կարգավորումների արդարացի հավասարակշռությունը՝ ի

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ ◆ 1(105)2022



նպաստ խորհրդարանական մշակույթի զարգացման, խորհրդարանական ուժերի ինքնադրսևորման լիարժեք հնարավորությունների ստեղծման, խորհրդարանի սահմանադրական առաքելության արդյունավետ իրականացման:

Բացի դրանից, «խորհրդարանի բնականոն գործունեություն» և «նիստի բնականոն ընթացք» հասկացությունները չափազանց վերացական են, որպեսզի ավտոմատ հանգեցնեն պատգամավորի կարծիք հայտնելու սահմանադրական երաշխիքի սահմանափակմանը: Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար վիրավորական արտահայտությունների և քաղաքական գնահատականների տարանջատման խնդրին, ուստի և՛ իրավակիրառ պրակտիկային: Դա ոչ միայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջն է, այլև միակ հնարավորությունն էր Ազգային ժողովում ապահովելու քաղաքական գրաքննության բացառումը, ինչից Սահմանադրական դատարանը խուսափել է:

Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից, ի շահ քաղաքական մեծամասնության, իր լիազորությունների չարաշահումը նույնքան վտանգավոր է ժողովրդավարության տեսանկյունից, որքան Ազգային ժողովում վիրավորական արտահայտություններ թույլ տալը: Սահմանադրական դատարանի խնդիրն էր նաև սուր քննադատության և վիրավորանքի միջև հստակ տարանջատման շրջանակները սահմանադրական մեկնաբանություններով կամ չափորոշիչներով նախանշելը, ինչից ևս Սահմանադրական դատարանը խուսափել է, որն անկախ դիտորդի մոտ կարող է ստեղծել տպավորություն, որ դրանով իսկ լեգիտիմացվել է Ազգային ժողովում էթիկայի կանոնների պահպանման անվան տակ քաղաքական գրաքննության ներմուծումը, այսինքն՝ Ազգային ժողովում քաղաքական կամքի ձևավորման սահմանադրական գործընթացի նենգափոխումը,

դ) պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու հարցերի կոնկրետ կանոնակարգված չլինելը սահմանադրականության առումով խնդրահարույց չէ, քանզի այն

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(105)2022

կարող է լուծվել պրակտիկայի և մեկնաբանության շրջանակներում:

**Մեր դիրքորոշումն է՝** խորհրդարանական մեծամասնության և խորհրդարանական փոքրամասնության փոխհարաբերությունների կարևորագույն հարցերը, առավել ևս խորհրդարանական մշակույթի մակարդակը ցածր գնահատելու պայմաններում, պետք է հստակ կանոնակարգված լինեն՝ բացառելու համար ցանկացած քաղաքական չարաշահում և շահարկում: Հստակ (կոնկրետ) կանոնակարգումների բացակայության պայմաններում Սահմանադրական դատարանն առավել ևս չի կարող չանդրադառնալ վիճարկվող դրույթների իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությանը, տրված մեկնաբանություններին՝ դրանց սահմանադրականության խնդիրները վեր հանելու և համապատասխան դիրքորոշումներով սահմանադրական կարգավորումների լիարժեք իրացումը օրենսդրության մեջ նախանշելու առումով, ինչը ՍԴՈ-1627 որոշմամբ կատարված չէ: Ի դեպ, հենց ՍԴՈ-1627 որոշմամբ վկայակոչված միջազգային փորձը, միջազգային խորհրդատվական եզրակացություններն ու միջազգային դատական ակտերը վկայում են, որ պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու հարցերը պետք է լուծվեն ոչ միայն պրակտիկայի և մեկնաբանությունների շրջանակներում, այլև պետք է լինեն կանոնակարգված:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՍԴՈ-1627 որոշմամբ ամբողջական անդրադարձ չի կատարվել պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու ընթացակարգերին, ի մասնավորի՝ Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոցը միանձնյա որոշմամբ կիրառելու և այդ որոշման իրավաչափությունը (համաչափությունը, կամայականության արգելքի սկզբունքի պահպանվածությունը) ստուգելու կառուցակարգերի բացակայության սահմանադրականության հարցերին: Այս առումով ՍԴՈ-1627 որոշմամբ միայն արձանագրված է, որ «Ազգային ժողովի կանոնա-

կարգ» սահմանադրական օրենքով Ազգային ժողովի խորհուրդն ունի, խմբակցության հիմնավորված միջնորդության հիման վրա, մինչև կարգապահական միջոցի կիրառման ժամկետի լրանալն Ազգային ժողովի նիստից հեռացված պատգամավորի մասնակցությունը վերականգնելու հնարավորություն, ինչը Սահմանադրական դատարանը գնահատել է որպես Ազգային ժողովի խորհրդի հակակշռող լիազորություն՝ Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոց կիրառելու լիազորության նկատմամբ: Սակայն հարկ է նշել, որ այս լիազորությունը բնավ ուղղված չէ Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոց կիրառելու իրավաչափության ստուգմանը, այլ այն յուրօրինակ «համաներման» ինստիտուտ է: Եթե անգամ ընդունենք, որ այն կարգապահական միջոց կիրառելու իրավաչափությունը ստուգելու միջոց է, ապա պատգամավորի նկատմամբ այլ կարգապահական միջոցներ կիրառելու իրավաչափության ստուգման մասով հարցը բաց է մնացել: Իսկ այդ բացի լրացումը, մեր կարծիքով, մեծապես նպաստելու էր թե՛ խորհրդարանական և թե՛ սահմանադրական մշակույթի զարգացմանը:

ՍԴՈ-1627 որոշմամբ անդրադարձ չի կատարվել մեկ կարևոր հարցի ևս. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վիճարկվող՝ 52-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է նաև, որ Ազգային ժողովի նիստը նախագահողն իրավունք ունի նիստին ներկա գտնվող այլ անձին հեռացնելու նիստերի դահլիճից: Քանի որ հիշյալ դրույթով Ազգային ժողովի նիստերի դահլիճից հեռացվող անձանց կոնկրետ շրջանակը սահմանված չէ, հետևաբար՝ այդ անձանց շրջանակը ներառում է նաև վարչապետին ու կառավարության մյուս անդամներին:

Սահմանադրության համաձայն՝ կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Եվ եթե Ազգային ժողովի նիստը նախագահողը համապատասխան նիստից վարչապետին և կառավարության մյուս անդամներին հեռացնում է նիստերի դահլիճից, ապա արգելա-

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱՆ ՂԱՏՄՈՒՄ 1(105)2022

փակվում է վերջիններիս հարցեր տալու՝ պատգամավորների սահմանադրական իրավունքը: Այլ կերպ՝ գործնականում պատգամավորը կարող է գրկվել իր սահմանադրական իրավունքի իրականացումից մեկ այլ անձի՝ Ազգային ժողովի նիստը նախագահողի կամ կառավարության անդամի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու արդյունքում: Նշվածը խորհրդարանական վերահսկողության իրականացման լրջագույն խնդիր է, ուստի և այդ հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանը, մեր կարծիքով, պետք է առնվազն արտահայտեր համապատասխան իրավական դիրքորոշումներ՝ նախանշելով նաև անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների սահմանադրականության շրջանակները և չափորոշիչները, ինչը չի կատարել:

Սահմանադրական դատարանը չի անդրադարձել նաև պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցների ընտրողաբար կիրառման խնդրին, ինչը նույնպես կարող է խաթարել խորհրդարանական փոքրամասնության սահմանադրական գործառույթները՝ թույլ չտալով արտահայտել, ներկայացնել իր ընտրողների կամքը և պահանջները:

ՍԴՈ-1627 որոշման մեջ նշվում է, որ գործառույթային անձեռնմխելիությունն ապահովում է պատգամավորի խոսքի ազատության իրավունքի իրացումը: Խոսքի, կարծիքի արտահայտման ազատությունը հիմնական իրավունք է բոլորի համար՝ անկախ նրանից՝ նրանք օժտված են անձեռնմխելիությամբ, թե՛ ոչ: Հարկ է նշել, որ պատգամավորի խոսքի ազատությունն առաջին հերթին բխում է նրա ազատ մանդատից և ներկայացուցչական կարգավիճակից, այլ ոչ թե անձեռնմխելիությունից:

Ամփոփելով հարկ ենք համարում ընդգծել, որ ոչ միայն սույն քննության առարկա սահմանադրական վեճով, այլև ընդհանրապես, սահմանադրական արդարադատությունն իրապես իր նպատակին ծառայում է, երբ գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կայացրած որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները խիստ որոշակի են, իրավակարգավորումների և

միջազգային փորձի վերլուծությունը, Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումների վկայակոչումները վերաբերելի են ու անհրաժեշտ շրջանակով, սահմանադրական խնդիրը լուծված է ամբողջ ծավալով, և, իհարկե, այդ որոշումն իրացվում է:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

**Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

10 փետրվարի 2022թ.

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 3-ՐԴ ՄԱՍԻ, 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ՍԴՈ-1627 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի, 4-րդ մասի և 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1627 որոշմամբ (հրապարակվել է 2022 թվականի փետրվարի 4-ին) որոշել է.

«1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը, 4-րդ մասը և 7-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դրանցով սահմանված ժամկետներում պարզամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պարզամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար (...):»:

1(105)/2022  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1627 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Ազգային ժողովն անմիջականորեն ժողովրդի կողմից ձևավորվող, ներկայացուցչական մարմին է, որում խմբակցությունների և Ազգային ժողովի այլ մարմինների հետ մեկտեղ կարևոր դերակատարում ունեն նաև առանձին պատգամավորները: Վերջինիս իրավունքների և գործունեության երաշխիքների ամրագրումն առանցքային նշանակություն ունի պատգամավորների կողմից իրենց առաքելության իրականացման հնարավորություն ապահովելու հարցում: Առանձին պատգամավորների լիազորությունների պաշտոնական ճանաչման և երաշխավորման սկզբունքի կարևորությունն ընդգծել է նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով)՝ այն համարելով ժողովրդավարական խորհրդարանական գործընթացների անկյունաքարը<sup>1</sup>:

Հարկ է ընդգծել, որ Ազգային ժողովի պատգամավորները Սահմանադրությամբ օժտված են միասնական իրավական կարգավիճակով՝ անկախ Ազգային ժողովի այս կամ այն խմբակցությանը (կառավարող կամ ընդդիմադիր) անդամակցության հանգամանքից: Հետևաբար նրանց համար պետք է ապահովվեն միևնույն իրավունքները և գործունեության երաշխիքները (խոսքը չի վերաբերում պատգամավորի լիազորություններից բացի նաև այլ լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, օրինակ, վարձատրության ավելի բարձր դրույքաչափի սահմանմանը և այլն): Մասնավորապես՝ անձեռնմխելիությունը (Սահմանա-

<sup>1</sup> European Commission for Democracy through Law (Venice Commission), Report on the role of the opposition in a democratic parliament, CDL-AD(2010)025, 15-16 October 2010, § 60.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՈՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

դրության 96-րդ հոդված), օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունմանը մասնակցելու իրավունքը (Սահմանադրության 103-րդ հոդված)), օրենսդրական նախաձեռնության իրավունքը (Սահմանադրության 109-րդ հոդված), Կառավարության անդամներին բանավոր և գրավոր հարցեր ուղղելու իրավունքը (Սահմանադրության 112-րդ հոդված), հրատապ թեմայով քննարկումներին մասնակցելու իրավունքը (Սահմանադրության 114-րդ հոդված) հավասարապես ճանաչվում են բոլոր պատգամավորների համար:

Բոլոր պատգամավորներն օժտված են նաև ազատ մանդատով, ինչն ամրագրում է ստացել Սահմանադրության 94-րդ հոդվածում: Նշված դրույթը սահմանում է, որ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

Ազատ մանդատի սկզբունքին Սահմանադրական դատարանն անդրադարձել է 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴՈ-810 որոշմամբ՝ արձանագրելով, որ ազատ մանդատի ուժով պատգամավորը կաշկանդված չէ անգամ ընտրողների կամքով, նա ազատ է իր պատգամավորական գործունեության մեջ, ներառյալ քվեարկությունը խորհրդարանում: Ազատ մանդատի սկզբունքը պատգամավորի սահմանադրական կարգավիճակը պայմանավորող այլ առանցքային երաշխիքների հետ մեկտեղ (*ինդեմնիտետ*՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 66-րդ հոդվածի 2-րդ մաս, *անձեռնմխելիություն*՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր) հնարավորություն է տալիս ձևավորելու այլ իշխանության ճյուղերից **անկախ օրենսդիր իշխանություն**՝ Ազգային ժողով, և պատգամավորներին դիտարկել որպես **ամբողջ ժողովրդի**, այլ ոչ թե իրենց ընտրողների կամ թեկուզև ամբողջ ընտրազանգվածի ներկայացուցիչներ, ապահովելով խորհրդարանի համախմբող գործառույթը: Ազատ մանդատի սկզբունքը՝ որպես **ներկայացուցչական ժողովրդավարության** հիմքերից մեկը, հնարավոր է դարձնում կարծիքների բախումը խորհրդա-



րանում և ապահովում Ազգային ժողովի՝ փոխհամաձայնության հանգելու ունակությունը: Հետևապես, ազատ մանդատի շնորհիվ է խորհրդարանում ապահովվում հավասարակշռությունը տարբեր մասնակի (քաղաքական) շահերի միջև, որով պայմանավորված է բարձրագույն սահմանադրական մարմիններից մեկի գործունակությունը՝ ընդունելու օրենքներ, կայացնելու որոշումներ և իրականացնելու իր այլ լիազորությունները:

Հարկ են համարում նշել, որ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին՝ ի թիվս այլնի, մասնակցելով խորհրդարանում տեղի ունեցող քննարկումներին, բանավեճերին, մտքերի փոխանակումներին, առաջարկելով այլընտրանքային մոտեցումներ և լուծումներ, մասնակցելով կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությանը: Սահմանադրության 94-րդ հոդվածով ամրագրված՝ պատգամավորի՝ ամբողջ ժողովրդին ներկայացնելու, հրամայական մանդատով կաշկանդված չլինելու և իր խղճով ու համոզմունքներով առաջնորդվելու սկզբունքից բխում է պատգամավորի խոսքի ազատությունը: Ակնհայտ է, որ խորհրդարանում ներկայացվում են տարբեր դիրքորոշումներ և հայացքներ, ուստի խորհրդարանի գործունեության անբաժան մասն են կազմում քննարկումները, բանավեճերը և քննադատությունները: Պատգամավորն իր գործառույթները կարող է արդյունավետորեն իրականացնել միայն այն դեպքում, երբ գործնականում ունի սահմանված եղանակներով իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Ավելին, հանրությունն իրավունք ունի իմանալ, թե երկրում կառավարումն ինչպես է իրականացվում, որոնք են քաղաքականության ուղղությունները և դրանց կապակցությամբ որդեգրված մոտեցումները: Այս տեսանկյունից պատահական չէ, որ Ազգային ժողովի նիստերը հրապարակային են, իսկ փակ նիստում քվեարկությունն արգելված է (Սահմանադրության 101-րդ հոդված): Նիստերի հրապարակայնությունը նաև առանձին հարցերի վերաբերյալ պատգամավորի դիրքորոշումը հանրությանը

հասանելի դարձնելու գործիք է, որի միջոցով է նաև ապահովվում քաղաքական գործընթացներում թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Բնականաբար, պատգամավորի դիրքորոշման ներկայացումը կարող է ուղեկցվել նաև սուր քննադատությամբ, սակայն վերջինս պետք է զերծ մնա այնպիսի արտահայտություններից և գործողություններից, որոնք չեն տեղավորվում քաղաքակիրթ բանավեճի սահմաններում՝ խաթարելով պատգամավորների և խորհրդարանի նկատմամբ հանրային վստահությունը: Պատգամավորի դիրքորոշման ներկայացումը չպետք է ընկալվի որպես խորհրդարանի աշխատանքներին խոչընդոտելու գործիք, այլ պետք է ուղղված լինի դրանց արդյունավետության բարձրացմանը՝ նպաստելով խորհրդարանի կողմից որոշումների կայացման գործընթացի որակի բարձրացմանը:

Հարկ եմ համարում ընդգծել, որ թե՛ կառավարող և թե՛ ընդդիմադիր խմբակցություններում ընդգրկված պատգամավորները պետք է իրենց վարքագծով դրական օրինակ ծառայեն հանրությանը: Խորհրդարանում պատգամավորների խոսքն ու գործողությունները չպետք է ուղեկցվեն ատելության խոսքով, վիրավորական արտահայտություններով և ոչ պատշաճ վարքագծի այլ դրսևորումներով: Պատգամավորի ցանկացած գործունեության վերջնական գնահատականը տալիս է ժողովուրդը՝ ընտրությունների միջոցով, իսկ յուրաքանչյուր խմբակցություն պետք է մտահոգ լինի իր կազմում ընդգրկված պատգամավորի՝ ոչ պատշաճ, հասարակության կողմից պարսավելի վարքագծով, քանի որ պատգամավորի նման վարքագիծն ազդեցություն է ունենում նաև խմբակցության նկատմամբ հանրային վստահության վրա:

Պատգամավորի խոսքի ազատության կարևորությանը և դրա սահմաններին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), որն իր որոշումներում արտահայտել է, ի թիվս այլնի, հետևյալ դիրքորոշումները.

- թեև խոսքի ազատությունը կարևոր է բոլորի համար, այն հատկապես կարևոր է ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչի համար: (...) Համապատասխանաբար, նրա խոսքի ազատությանը միջամտությունները (...) պահանջում են Եվրոպական դատարանի կողմից առավելագույն ուսումնասիրություն» (*case of Piermont v. France, app. nos. 15773/89 and 15774/89, 27.04.1995, § 76*).

- կասկած չկա, որ խորհրդարանում խոսքը պաշտպանվածության բարձր մակարդակ է վայելում: Խորհրդարանը ժողովրդավարական հասարակությունում բանավեճի եզակի ֆորում է, որը հիմնարար նշանակություն ունի: (...) Այդուհանդերձ, թեև խորհրդարանական բանավեճերի ազատությունը ժողովրդավարական հասարակությունում հիմնարար նշանակություն ունի, այն իր բնույթով բացարձակ չէ: (...) Խորհրդարաններն իրավունք ունեն արձագանքել այն դեպքերում, երբ նրանց անդամները դրսևորում են օրենսդիր մարմնի բնականոն գործունեությունը խաթարող կարգազանց վարք: Ճիշտ այնպես, ինչպես խորհրդարանական անձեռնմխելիության ընդհանուր ճանաչված կանոնն է առաջարկում խորհրդարանում խոսքի համար ընդլայնված, բայց ոչ անսահմանափակ պաշտպանություն, այնպես էլ խորհրդարանում խոսքի որոշ սահմանափակումներ, որոնք պատճառաբանված են խորհրդարանական գործերը կարգապահորեն վարելու անհրաժեշտությամբ, նույնպես պետք է համարվեն հիմնավորված (*case of Karácsony and others v. Hungary, app. nos. 42461/13 and 44357/13, 17.05.2016, §§ 138, 139*).

- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան սերտ կապ է հաստատում արդյունավետ քաղաքական ժողովրդավարության և խորհրդարանի արդյունավետ գործունեության միջև: Համապատասխանաբար, կասկած չկա, որ խորհրդարանի արդյունավետ գործունեությունը ժողովրդավարական հասարակության համար առանցքային նշանակություն ունի, հետևաբար ազատ

խոսքի կիրառումը խորհրդարանում կարող է երբեմն ստիպված լինել զիջել խորհրդարանական գործերը կարգապահորեն վարելը պաշտպանելու լեգիտիմ շահերին, ինչպես նաև մյուս պատգամավորների իրավունքների պաշտպանությանը: Խորհրդարանում կարգապահ բանավեճը, ի վերջո, ծառայում է քաղաքական և օրենսդրական գործընթացին, օրենսդիր մարմնի բոլոր անդամների շահերին՝ հնարավորություն տալով նրանց հավասար պայմաններով մասնակցել խորհրդարանական գործընթացներին, և ընդհանուր առմամբ հասարակության շահերին (*case of Karácsony and others v. Hungary, app. nos. 42461/13 and 44357/13, 17.05.2016, § 141*):

Պատգամավորների վարքագծին և խորհրդարանում կարգապահությանն անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը՝ նշելով, որ առկա է խորհրդարանում կարգուկանոն պահպանելու և առանձին պատգամավորների կամ նրանց խմբերի իրավունքների և վարքագծի հետ կապված վեճերը լուծելու անհրաժեշտություն: Նույնիսկ եթե պատգամավորները պաշտպանված են արտաքին իրավական գործողություններից իրենց կարծիքների և դիտողությունների համար, նրանք դեռ կարող են ենթարկվել ներքին կարգապահական տույժերի (CDL-AD(2014)011, § 100), որոնք մշակվում և կիրառվում են խորհրդարանի ներսում: Միևնույն ժամանակ, կարգապահական և այլ ընթացակարգային հարցերով զբաղվող ներքին մարմինները չպետք է դառնան քաղաքական շահարկումների գործիք մեծամասնության ձեռքում<sup>1</sup>:

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ եմ համարում նշել, որ պատգամավորի խոսքի ազատությունը վերջինիս տրամադրում է խորհրդարանում իր դիրքորոշումը ներկայացնելու լայն, սակայն ոչ անսահմանափակ հնարավորություն: Պատգամավորի խոսքը

<sup>1</sup> European Commission for Democracy through Law (Venice Commission), Parameters on the relationship between the parliamentary majority and the opposition in a democracy: a Checklist, CDL-AD(2019)015, 21-22 June 2019, endorsed by the Committee of Ministers (5 February 2020), § 153.

կարող է կառուցվել նաև սուր քննադատությունների վրա, ուստի անհրաժեշտ է այնպիսի քաղաքական մշակույթի ձևավորում և ամրապնդում, որում ապահովվում է հակադրվող տեսակետների և սուր քննադատության նկատմամբ հանդուրժողականության մթնոլորտ: Միաժամանակ պատգամավորն իր խոսքում պետք է առաջնորդվի ժողովրդավարական կայունությունը, համագործակցությունը և փոխադարձ հանդուրժողականությունը խթանելու անհրաժեշտությամբ: Ընդ որում, պատգամավորի խոսքի ազատությունը կարող է սահմանափակվել, ինչը յուրաքանչյուր դեպքում ենթակա է գնահատման՝ հաշվի առնելով կոնկրետ դեպքի հանգամանքները:

2. Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ կիսում եմ ՍԴՈ-1627 որոշմամբ Սահմանադրական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, որ «(...) Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովումը բովանդակային առումով ավելի ընդգրկուն է, քան Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքն ապահովելը և ենթադրում է Ազգային ժողովի նախագահի կողմից [«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական] օրենքով սահմանված մի շարք լիազորությունների իրականացում ինչպես Ազգային ժողովի նստաշրջանների/նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, այնպես էլ դրանց ընթացքում: Ազգային ժողովի նիստերի բնականոն ընթացքի ապահովման հարցում առանցքային է նիստը նախագահողի (Ազգային ժողովի նախագահ կամ փոխնախագահ) դերակատարությունը»: **Այդուհանդերձ, չեմ կարող համաձայնել պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու Ազգային ժողովի նախագահի (նիստը նախագահողի) լիազորությունների կապակցությամբ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումներին:**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏՄՈՒՄ 1(105)2022

Այսպես՝ Ազգային ժողովի կանոնակարգով Ազգային ժողովի նախագահի համար պետք է նախատեսվեն Ազգային ժողովի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ լիազորություններ: Այդուհանդերձ, դրանք պետք է համատեղելի լինեն պատգամավորների կողմից իրենց գործառույթների իրականացման հետ: Այսինքն՝ Ազգային ժողովի բնականոն գործունեությունն ապահովելու սահմանադրական գործառույթի անվան ներքո Ազգային ժողովի նախագահին չեն կարող վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք անհամաչափորեն կմիջամտեն պատգամավորների՝ Սահմանադրության 94-րդ հոդվածից բխող խոսքի ազատությանը՝ խաթարելով նրանց լիազորությունների իրականացումը:

Հաշվի առնելով պատգամավորների կողմից անթույլատրելի վարքագիծ դրսևորվելու դեպքում արագ և արդյունավետ կերպով արձագանքելու և կարգուկանոնը վերականգնելու անհրաժեշտությունը՝ կարծում եմ, որ Ազգային ժողովի նախագահին կարող է վերապահվել ներգործության միջոցներ կիրառելու լիազորություն: Սակայն օրենսդրի կողմից այդ միջոցների ընտրությունը պետք է հիմնված լինի միայն կոնկրետ իրավիճակում կարգուկանոնը, նիստի բնականոն ընթացքը վերականգնելու անհրաժեշտության վրա: Ըստ այդմ, Ազգային ժողովի նախագահին չի կարող վերապահվել պատգամավորի նկատմամբ շարունակական բնույթի ներգործության միջոցներ կիրառելու լիազորություն: Նշված եզրահանգումը հիմնված է այն իրողության վրա, որ շարունակական բնույթի ներգործության միջոցների կիրառումը կարող է առաջացնել պատգամավորի նկատմամբ «պատժիչ» միջոցներ գործադրելու տպավորություն, ինչը չի բխում սահմանադրի կողմից ինչպես պատգամավորին տրված իրավական կարգավիճակից, այնպես էլ Ազգային ժողովի նախագահի գործառույթներից: **Ավելին, խորհրդարանական ժողովրդավարության պայմաններում Ազգային ժողովի նախագահը չպետք է միանձնյա որոշի, թե տևական ժամանակի ընթացքում որ պատգամավորները պետք է հնարավորություն**

**չունենան Ազգային ժողովում իրենց դիրքորոշումը ներկայացնելու՝ արգելելով այդ պատգամավորների կողմից իրենց դիրքորոշումն արտահայտելը:**

Անդրադառնալով խորհրդարանի նախագահի լիազորություններին՝ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ խոսնակը պետք է հնարավորություն ունենա կարգավորելու առանձին պատգամավորների խոսելու իրավունքն օրակարգով նախատեսված սահմաններում, սահմանափակելու ոչ վերաբերելի կամ չափազանց երկար ելույթները, վիրավորական խոսքը և այլն: Այնուամենայնիվ, այդ լիազորությունը կարող է հեշտությամբ չարաշահվել մեծնամասնությանը հարող խոսնակի կողմից՝ ընդդիմադիր պատգամավորների կողմից արտահայտված լեզվատիմ քննադատությունը լռեցնելու նպատակով: Հետևաբար պետք է լինի խոսնակի որոշումները (կապված ելույթի ժամանակի և, ընդհանրապես, խորհրդարանում ընթացակարգերի իրականացման հետ) բողոքարկելու հնարավորություն կոլեկտիվ մարմին, որտեղ ընդդիմությունը պատշաճ կերպով ներկայացված է (օրինակ՝ խորհուրդ, որը կազմված է հանձնաժողովների նախագահներից՝ պայմանով, որ նախագահությունները բաշխված են համաչափորեն)<sup>1</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ պատգամավորների նկատմամբ Ազգային ժողովի նախագահի կողմից ներգործության միջոցներ կիրառելու հնարավորություն նախատեսող իրավակարգավորումների սահմանադրականությունը պետք է քննարկվի՝ հաշվի առնելով սահմանված միջոցի բնույթը և դրա համատեղելիությունը պատգամավորի կարգավիճակի, դրանից բխող նրա խոսքի ազատության և Ազգային ժողովի նախագահի սահմանադրական գործառույթների հետ:

<sup>1</sup> European Commission for Democracy through Law (Venice Commission), Parameters on the relationship between the parliamentary majority and the opposition in a democracy: a Checklist, CDL-AD(2019)015, 21-22 June 2019, endorsed by the Committee of Ministers (5 February 2020), para. 103.

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ 1(105)2022

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նիստը նախագահողի օրինական պահանջը չկատարելու, քննարկվող հարցից ելույթում շեղվելու, վիրավորական արտահայտություն անելու, բացակա պատգամավորի փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու, պատգամավորի քվեարկությանը խոչընդոտելու, Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու դեպքում նախագահողն իրավունք ունի պատգամավորի նկատմամբ կիրառելու կարգապահական միջոցներ, իսկ նիստին ներկա գտնվող այլ անձին՝ նախազգուշացնելու կամ հեռացնելու նիստերի դահլիճից:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական միջոցները.

- 1) նախազգուշացում՝ անունը, ազգանունը հրապարակելով.
- 2) խոսափողի անջատում.
- 3) մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում.
- 4) հեռացում մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից.
- 5) Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1627 որոշմամբ նշել է, որ *«խորհրդարանի կանոնակարգին համապատասխան՝ խորհրդարանի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոցների կիրառումը հնարավորություն է տալիս արագ և արդյունավետ կերպով արձագանքել խորհրդարանի կողմից իր իրավասության իրացմանը, գործունեության իրականացմանը խոչընդոտող գործողություններին/երևույթներին: Դրա նպատակը, պատգամավորի խոսքի ազատությունը հարգելու հետք*



մեկտեղ, ժողովրդավարական գործընթացների արդյունավետ իրացումը երաշխավորելն է: (...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտող պատգամավորի նկատմամբ [«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական] օրենքով նախատեսված կարգապահական միջոցների կիրառումն իրավաչափ է՝ պատգամավորի խոսքի ազատության իրավունքին միջամտության համաչափության տարրերի պահպանվածության պարագայում»:

Փաստորեն, Սահմանադրական դատարանն Ազգային ժողովի նախագահի (նիստը նախագահողի) կողմից պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու՝ Սահմանադրությանը համապատասխանությունը հիմնավորել է միայն «խորհրդարանի իրավասության իրացմանը, գործունեության իրականացմանը խոչընդոտող գործողություններին/երևույթներին արագ և արդյունավետ կերպով արձագանքելու» անհրաժեշտությամբ: Մինչդեռ գտնում են, որ միայն նշված հանգամանքը չի կարող հիմնավորել օրենսդրի կողմից Ազգային ժողովի նախագահին պատգամավորի նկատմամբ ցանկացած կարգապահական միջոց կիրառելու լիազորություն վերապահելը: Ինչպես նշվեց, պատգամավորի կարգավիճակի, դրանից բխող նրա խոսքի ազատության և Ազգային ժողովի նախագահի սահմանադրական գործառույթների հետ կարող է համատեղելի լինել Ազգային ժողովի նախագահի (նիստը նախագահողի) կողմից պատգամավորի նկատմամբ ներգործության միայն այնպիսի միջոցների կիրառումը, որոնք չեն կրում շարունակական բնույթ և ուղղված են կոնկրետ իրավիճակում կարգուկանոնի, նիստի բնականոն ընթացքի վերականգնմանը:

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգապահական միջոցները՝ կարծում են, որ դրանք անհրաժեշտ է տարանջատել երկու խմբի, որոնցից առաջին խումբն ընդգրկում է «Ազգային ժողովի կանոնակարգ»

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏՈՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ամրագրված կարգապահական միջոցները, որոնք Ազգային ժողովի նախագահին (նիստը նախագահողին) հնարավորություն են տալիս պատգամավորին նախազգուշացնելու կամ համապատասխան խոսափողն անջատելու միջոցով դադարեցնել նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտումները՝ դրանով իսկ վերականգնելով նիստի բնականոն ընթացքը:

Երկրորդ խմբում ներառվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 3-5-րդ կետերով նախատեսված կարգապահական միջոցները: Վիճարկվող իրավակարգավորումներն Ազգային ժողովի նախագահին (նիստը նախագահողին) հնարավորություն են տալիս միանձնյա որոշել, թե, ի թիվս այլնի, արդյոք պատգամավորը ելույթում շեղվում է քննարկվող հարցից, կամ ո՞ր արտահայտություններն են, իր կարծիքով, վիրավորական, և դրա հիման վրա պատգամավորների նկատմամբ կիրառել ընդհուպ մինչև այնպիսի խիստ կարգապահական միջոցներ, ինչպիսիք են մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկելը, մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից հեռացնելը՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից, ինչպես նաև Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկելը: Ավելին, Ազգային ժողովի նիստերում կարող են քննարկվել բազմաթիվ հարցեր, և գործող իրավակարգավորումներից հետևում է, որ որոշակի պահի Ազգային ժողովի նախագահի (նիստը նախագահողի) գնահատմամբ Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու համար պատգամավորը կարող է Ազգային ժողովի նախագահի (նիստը նախագահողի) միանձնյա որոշմամբ զրկվել նաև այլ հարցերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու հնարավորությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում են, որ մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկելը, մինչև տվյալ օրվա ավարտը կայանալիք նիստերից հեռացնելը՝ զրկելով այդ ընթացքում դահլիճում ներկա լինելու իրավունքից, ինչպես նաև Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկելն իրենց բնույթով այնպիսի միջոցներ են, որոնք ըստ էության առավելապես ոչ թե ուղղված են կոնկրետ իրավիճակում կարգուկանոնի, նիստի բնականոն ընթացքի վերականգնմանը, այլ, կրելով շարունակական բնույթ, ստեղծում են պատգամավորին իր խոսքի կամ դրսևորած վարքագծի համար «պատժելու» տպավորություն: **Նման պայմաններում վերը նշված միջոցների կիրառումն Ազգային ժողովի նախագահի (նիստը նախագահողի) կողմից միանձյա կայացված որոշման արդյունքում համահունչ չէ պատգամավորի կարգավիճակին, դրանից բխող նրա խոսքի ազատությանը և Ազգային ժողովի նախագահի սահմանադրական գործառույթներին:**

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում են, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 3-5-րդ կետերն անհրաժեշտ էր ճանաչել Սահմանադրության 94-րդ հոդվածին և 104-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

Միաժամանակ հարկ են համարում գործող իրավակարգավորումների պայմաններում (հաշվի առնելով նաև սույն հատուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները) անդրադառնալ այն իրավիճակներին, երբ որևէ խմբակցության գնահատմամբ, պատգամավորի կողմից թույլ է տրվել պատգամավորական էթիկայի կանոնների խախտում:

Նման իրավիճակներում կարող է գործադրվել խմբակցության (խմբակցությունների) կողմից **պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողով** ստեղծելու նախագծով հանդես գալու, Ազգային ժողովի որոշմամբ այդպիսի հանձնաժողով ձևավորելու գործիքակազմը

(Սահմանադրության 107-րդ հոդված, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 6-րդ գլուխ): Ընդ որում, նշված հանձնաժողովի ստեղծման հնարավորությունն այնքան է կարևորվել սահմանադրի կողմից, որ վերջինս Սահմանադրության 107-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրել է, որ պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող է ստեղծվել ժամանակավոր հանձնաժողով:

Հատկանշական է նաև, որ այդ հանձնաժողովը ոչ միայն իր իրավասության շրջանակում քննարկում է պատգամավորական էթիկային առնչվող հարցեր և դրանց վերաբերյալ եզրակացություններ է ներկայացնում Ազգային ժողովին («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), այլև այդ **եզրակացությունները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում**, ինչի միջոցով պատգամավորի կողմից պատգամավորական էթիկայի կանոնների ենթադրյալ խախտում թույլ տրված լինելու կապակցությամբ պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողովի եզրահանգումները հասանելի են դառնում հանրությանը: Վերը նշվածն իր հերթին կարող է պատգամավորի համար իր վարքագիծը վերանայելու ազդակ լինել, ինչպես նաև համապատասխան խմբակցության (որին այդ պատգամավորն անդամակցում է) և ընտրողների ուշադրությունը հրավիրել առանձին պատգամավորի խոսքի և գործողությունների վրա:

4. Բացի այդ, հարկ եմ համարում անդրադառնալ նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերին Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությանը:

*Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1627 որոշմամբ վերը նշված դրույթները Սահմանադրությանը համապատասխանող է*

ճանաչել այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դրանցով սահմանված ժամկետներում պատգամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ «(...) շեշտելով [«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական] օրենքով նախատեսված բոլոր ընթացակարգերին պատգամավորի մասնակցության կարևորությունը, այնուհանդերձ, ընդգծում է բոլոր դեպքերում քվեարկությանը պատգամավորի մասնակցության անկյունաքարային դերը, որի միջոցով է պատգամավորն իրականացնում իր առաքելությունը, արտահայտում իր կամքը՝ որպես ժողովրդի ներկայացուցիչ»:

Փաստորեն, Սահմանադրական դատարանն առանձնացրել է միայն պատգամավորի կողմից քվեարկությանը մասնակցելը, սակայն, **իմ գնահատմամբ, պատգամավորի լիազորությունները փոխկապակցված են, և քննարկվող հարցի վերաբերյալ կարծիքի ձևավորումը և իր խղճով ու համոզմունքներով առաջնորդվելով քվեարկությանը մասնակցությունը սերտորեն կապված են նիստի շրջանակում տեղի ունեցող քննարկումներին և բանավեճերին մասնակցելու պատգամավորի իրավունքի իրականացման հետ:** Հետևաբար նիստերի դահլիճից հեռացված պատգամավորի համար քվեարկությանը մասնակցելու իրավունքի ապահովումը որոշ դեպքերում կարող է կրել ձևական բնույթ կամ չժառայել իր՝ պատգամավորի գործառույթների իրականացումն ապահովելու նպատակին, քանի որ վերջինս, հնարավորություն չունենալով մասնակցել նիստի շրջանակում տեղի ունեցող քննարկումներին և բանավեճերին, կարող է չունենալ քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու լիարժեք հնարավորություն:

Ավելին, բոլոր իրավիճակներում բացարձակ ճշմարտություն չէ, որ պատգամավորի իրավունքների շարքում ամենակարևորը

քվեարկությանը մասնակցելու իրավունքն է: Օրինակ՝ եթե որոշակի հարցի վերաբերյալ առանձին պատգամավորի գաղափարները կիսում են քիչ թվով պատգամավորներ, նրա քվեն կարող է նշանակություն չունենալ քվեարկության գործընթացում: Այդ դեպքում հնարավոր է կոնկրետ իրավիճակում առավել կարևորվի այդ պատգամավորի կողմից ելույթով հանդես գալու, հարցերի և պատասխանների միջոցով իր դիրքորոշումը հրապարակայնորեն ներկայացնելու հնարավորության իրացումը՝ հատկապես հաշվի առնելով, որ խորհրդարանի նիստերը հրապարակային են (Սահմանադրության 101-րդ հոդված), ըստ այդմ, դրանց շրջանակում տեղի ունեցող քննարկումները, որպես կանոն, հասանելի են հանրությանը, իսկ հանրության համար պատգամավորի դիրքորոշումը ներկայացնելը չի կարող սահմանափակվել միայն որևէ քվեարկության ժամանակ դեմ կամ կողմ քվեարկելով:

5. Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրական դատարանը սույն գործով բարձրացված հարցերը դիտարկել է Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում՝ վերլուծելով նշված դրույթը և արձանագրելով, որ սույն գործով խոսքը վերաբերում է «(...) պատգամավորի՝ որպես «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան՝ պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գործառույթային անձեռնմխելիության համատեքստում պատգամավորական գործունեության շրջանակներում խոսքի ազատության (կարծիք հայտնելու իրավունքի) իրացման առնչությամբ նրա նկատմամբ կարգապահական միջոց կիրառելու և, ըստ այդմ, նրա՝ պատգամավորական գործունեության շրջանակներում խոսքի ազատության սահմանափակման հարցին»:

Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո պատգամավորին հետապնդել և պատասխանատվության ենթարկել

պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար (պատգամավորի ինդեմնիտետ (անպատասխանատվություն (non-liability))): Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ նշել է, որ «(...) ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի՝ իր պատգամավորական գործունեության արդյունավետ իրականացումը՝ բացառելով պատգամավորի գործունեությունից բխող հայտնաձև կարծիքի կամ Ազգային ժողովում քվեարկության համար քրեական պատասխանատվությունն ընդհանրապես, հետևաբար նաև և քրեական հետապնդումը: **Սակայն պատգամավորի՝ իր գործունեության շրջանակներում, իր գործունեությունից բխող կարծիքի համար «արտաքին» պատասխանատվության բացառումն ամենևին չի ենթադրում պատասխանատվության բացառում ընդհանրապես, և հատկապես՝ չի բացառում «ներքին» պատասխանատվությունը՝ կարգապահական պատասխանատվությունը տարատեսակ սանկցիաների տեսքով»:**

Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասն ուղղված է պատգամավորին արտաքին ներգործությունից պատշպանելուն (ինչն արձանագրել է նաև Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ), մինչդեռ սույն գործով վիճարկվող դրույթները վերաբերում են Ազգային ժողովի նախագահի կողմից պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցների կիրառմանը, որը տեղի է ունենում Ազգային ժողովի ներքին գործընթացների արդյունքում և չի առչնվում պատգամավորի «արտաքին» պատասխանատվությանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում են, որ սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը չպետք է քննարկվեր Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում:

**6. Ամփոփելով սույն հարուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները՝ կարծում են, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի**

**3-րդ մասի 3-5-րդ կետերը հակասում են Սահմանադրության 94-րդ հոդվածին և 104-րդ հոդվածի 2-րդ մասին: Ավելին, իմ գնահատմամբ, Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, առանց բավարար հիմնավորումների առանձնացրել է պարզամտության քվեարկությանը մասնակցելու իրավունքի իրականացման հնարավորություն ապահովելու անհրաժեշտությունը՝ առանց հաշվի առնելու Ազգային ժողովի նիստի շրջանակում տեղի ունեցող քննարկումներին և բանավեճերին մասնակցելու կարևորությունը:**

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**11 փետրվարի 2022թ.**



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ  
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի՝ «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌԵՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 3-ՐԴ ՄԱՍԻ, 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈՒ-1627 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵՎՈՒՄ  
◆ 1(105)2022

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի, 4-րդ մասի և 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈՒ-1627 որոշմամբ որոշել է.

«1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը, 4-րդ մասը և 7-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դրանցով սահմանված ժամկետներում պարզամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում

ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1627 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ հատուկ կարծիք:

1. Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1627 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1627 որոշում) 3-րդ կետում վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անդրադարձել է այն հարցադրումներին, թե՛ ա) արդյո՞ք Ազգային ժողովի նիստում պատգամավորի կողմից՝ իր պատգամավորական գործունեության շրջանակներում կարծիք հայտնելու համատեքստում, խորհրդարանի բնականոն գործունեությունը խաթարող վարքագիծ դրսևորելու առնչությամբ պատգամավորի նկատմամբ Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից կարգապահական միջոց կիրառելու վերաբերյալ վիճարկվող կարգավորումները համահունչ են Սահմանադրությանը, և բ) արդյո՞ք պատգամավորի կողմից՝ իր պատգամավորական գործունեության շրջանակներում կարծիք հայտնելու համատեքստում, համապատասխան արարքի (գործողության) համար Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից նրա նկատմամբ կարող է կիրառվել մի քանի կարգապահական միջոց (ՍԴՈ-1627 որոշման 3-րդ կետ, էջ 6-7):

Անհրաժեշտ է նշել, որ դիմողը դիմումի քննության շրջանակում ևս անդրադարձել է գրեթե նույնաբովանդակ հարցադրումներին: Սակայն կատարված եզրահանգումներով պայմանավորված՝ դիմողը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմա-

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ ◆ 1(105)2022

նադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) վիճարկվող դրույթների սահմանադրականության հիմնավորման նպատակով ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև կապի հարցը քննարկման առարկա էր դիտարկել տարբեր տեսանկյուններից:

Չժխտելով պատգամավորի նկատմամբ օրենքով նախատեսված դեպքերում որոշակի կարգապահական միջոցների կիրառման անհրաժեշտությունը՝ այդուհանդերձ կարևոր է միաժամանակ արձանագրել, որ Ազգային ժողովի նիստում խոսափողից հանդես գալու կամ նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելու միջոցով պատգամավորական լիազորությունների միջամտության հետ կապված հարաբերությունները կարգավորելիս սահմանադիրն առաջնորդվել է ընդհանուր սկզբունքներով, դրանք են՝ ա) պատգամավորն օժտված է ազատ և ներկայացուցչական մանդատով, քանի որ ներկայացնում է ամբողջ ժողովրդին (Սահմանադրության 94-րդ հոդվ.), և բ) օժտված է նաև պատգամավորի անձեռնմխելիությամբ, քանի որ հայտնած կարծիքի կամ քվեարկության համար պատգամավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել (Սահմանադրության 96-րդ հոդվ., մաս 1): Նշվածի համատեքստում անհրաժեշտ է միաժամանակ նկատել, որ պատգամավորի խոսքի ազատությունն առավելապես երաշխավորվում է նրա ազատ մանդատի և ներկայացուցչական կարգավիճակի միջոցով:

Վերաբար՝ հիմնավորելու համար, որ վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականության քննության շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները պետք է հանգեին ոչ թե տվյալ նորմերի տառացի մեկնաբանմանը, այդ թվում՝ կարգապահական («ներքին» պատասխանատվության) և կարգապահական պատասխանատվության («արտաքին» պատասխանատվության) միջոցների տարան-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

ջատման ու հարաբերակցության շրջանակում, այլ դրանց սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության ու նշանակության սահմանմանը, որ Ազգային ժողովի սահմանադրական գործառույթների և պատգամավորի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ ցանկացած իրավական ներգործության միջոցի կիրառումն ինքնին չպետք է խոչընդոտի պատգամավորի սահմանադրական լիազորությունների արդյունավետ իրականացմանը:

Այդ նկատառումներից ելնելով և հաշվի առնելով, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, հետևաբար՝ Օրենքի վիճարկվող դրույթների հնարավոր սահմանադրականությունը գնահատելու և պատգամավորական լիազորությունների իրականացմանն անհամաչափ միջամտության վերաբերյալ սահմանադրաիրավական խնդրի լուծման նպատակով, կարծում եմ՝ Սահմանադրական դատարանը գործի ելքի համար պետք է պարզեր, մասնավորապես՝

ա) արդյո՞ք Ազգային ժողովի նիստը նախագահողն ունի լիազորություն պատգամավորի նկատմամբ միանձնյա կիրառելու պատասխանատվության միջոց՝ վերջինիս հայտնած կարծիքի համար, և դրա համատեքստում՝ ինչպե՞ս է գնահատում, որ

պատգամավորն իր ելույթում հարցից շեղվել է կամ վիրավորական արտահայտություն կատարել կամ օրենքի վիճարկվող դրույթներով նախատեսված այլ գործողություններ կատարել,

բ) Ազգային ժողովի նիստը նախագահողի կողմից պատգամավորին նիստերի դահլիճից հեռացնելը, այսինքն՝ վերջինիս սահմանադրական լիազորություններն ուղղակի սահմանափակելը բխում է արդյոք պատգամավորի սահմանադրական լիազորությունների բովանդակությունից:

Սահմանադրական դատարանը հիշյալ հարցադրումների շրջանակում վիճարկվող դրույթների սահմանադրականությունը պետք է գնահատեր ոչ միայն Սահմանադրության 94-րդ հոդվածի, 96-րդ հոդվածի 1-ին մասի, այլև պատգամավորի՝ Ազգային ժողովի նիստերին պարտադիր մասնակցությամբ Ազգային ժողովի լիազորություններ սահմանող սահմանադրական այլ հոդվածների շրջանակում:

Այնուհետև, անհրաժեշտ էր նաև դիտարկել վիճարկվող իրավակարգավորումների հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի սահմանադրականությունը՝ պատգամավորի նկատմամբ կարգապահական միջոցների կիրառման իրավաչափության և Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքի արդյունավետ իրականացման անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի ու ընթացակարգերի ապահովման համատեքստում:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատգամավորական էթիկայի կանոնների խախտումների իրավական բովանդակությունը գրեթե նույնականացվում է վիճարկվող հոդվածով նախատեսված արարքներին, ուստի անհրաժեշտ էր նաև վիճարկվող դրույթների սահմանադրականությունը

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 1(105)2022

դիտարկել նույն օրենքի 17-րդ հոդվածի հիման վրա պատգամավորական էթիկայի կանոնների խախտումների գնահատման իրավասությամբ օժտված Ազգային ժողովի պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի և Ազգային ժողովի նիստը նախագահողի լիազորությունների հարաբերակցության հարցը:

Բացի դրանից, ՍԴՈ-1627 որոշման 4.2-րդ կետում Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված կարգապահական միջոցների կիրառման հարցի համատեքստում Սահմանադրական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ դրանցով սահմանված ժամկետներում պատգամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար (էջ 26):

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ պատգամավորը քվեարկությանը մասնակցում է միայն Ազգային ժողովի նիստերի դահլիճում: Կարգապահական նման միջոցի կիրառման պարագայում անհասկանալի է, թե ինչպես կարող է պատգամավորն իր լիազորություններն իրականացնել որոշ ծավալով և որոշակի ժամանակահատվածում, երբ նա զրկվել է Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա գտնվելու իրավունքից:

Ավելին, հասարակության առջև Ազգային ժողովի պատգամավորների պատասխանատվության և նրանց նկատմամբ ընտրողի վստահության պահպանումն Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովման շրջանակում երաշխավորվում է հենց պատգամավորների վարքագծի կարգավորման և պատգամավորական էթիկայի նորմերի առաջնահերթությամբ, ինչը վկայում է նույն պատգամավորի խորհրդարանական պատշաճ մշակույթի դրսևորման և ինքնակազմակերպվածության անհրաժեշտության մասին:

Հետևաբար՝ հաշվի առնելով քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ Սահմանադրության տրամաբանությանը հակասող հարցադրումների նշանակությունը՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը սույն գործի համար էական նշանակություն ունեցող հարցադրումների շրջանակում առաջնորդվել է ոչ թե Օրենքի նորմերի սահմանադրականության որոշման սկզբունքով, այլ Օրենքի վիճարկվող նորմերի հիմնավորվածության կանխավարկածով:

Ելնելով նշվածից՝ կարծում եմ, որ բովանդակային առումով և նշանակությամբ հենց այս խնդրահարույց հարցադրումների հիման վրա է կառուցվել Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1627 որոշման իրավավերլուծական շարադրանքը:

2. Վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականության հարցը, կարծում եմ, անհրաժեշտ է նաև քննել Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչ՝ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Այդ առումով ակներև է, որ վիճարկվող դրույթներում օգտագործվող «նիստից հեռացնելը», «Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը», «վիրավորական արտահայտություն անելը», «քննարկվող հարցից ելույթում շեղվելը», «նիստը նախագահողի օրինական պահանջը չկատարելը», «նիստից հեռացման պահանջին չենթարկվելը», «պատգամավորի քվեարկությանը խոչընդոտելը», «Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելը», «Ազգային ժողովի նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելը» արտահայտությունների պահանջներն իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

Ակնհայտ է, որ այդ եզրույթների գնահատման անհրաժեշտ իրավական չափորոշիչներ չեն սահմանվել, սակայն դրանց սահմանադրաիրավական բովանդակության բացակայության պարագայում դրանք ինքնին խնդրահարույց են դառնում նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի, ինչպես նաև Սահմանադրության 102-րդ հոդվածով ամրագրված՝ Ազգային ժողովի նիստերի իրավագործության ապահովման և 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանված՝ սահմանադրական օրենքին ներկայացվող պահանջների պահպանման տեսանկյունից:

Միաժամանակ, վիճարկվող նույն հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների վերաբերյալ անհրաժեշտ է փաստել, որ բացակա պատգամավորի փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու, պատգամավորի քվեարկությանը խոչընդոտելու, Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու գնահատման ենթակա հանգամանքները բազմազան են, և դրանց կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում առանձին պատգամավորների կամ նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ:

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (Case of Hilda Hafsteinsdottir v. Iceland, application no. 40905/98, 08.06.2004), կարծում եմ, որ վիճարկվող իրավակարգավորումների տրամաբանության ներքո այնպիսի հանգամանքների վկայակոչումը, որ Ազգային ժողովի նիստը նախագահողի համար սուբյեկտիվ գնահատման հնարավորության պայման-



ներում՝ պատգամավորի խոսքի ազատության իրավունքի սահմանափակելը կամ նիստերի դափնիքում ներկա լինելու կամ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկելը բավականին խնդրահարույց է նաև պատգամավորական լիազորությունների իրավական հիմքերի համադրման տրամաբանության շրջանակում իրական հակասության առկայությունը պարզելու և դրա լուծման իրավական հնարավորությունը գնահատելու առումներով:

Ավելին, վիճահարույց են նաև այն հարցերը, թե ինչպես կարող է Ազգային ժողովի նիստը նախագահողը միանձնյա և սուբյեկտիվ պատկերացումների հիման վրա գնահատել պատգամավորի կամ նիստին ներկա գտնվող այլ անձանց կողմից իր օրինական պահանջը չկատարելու, քննարկվող հարցից ելույթում շեղվելու, վիրավորական արտահայտություն անելու, բացակա պատգամավորի փոխարեն գրանցվելու կամ քվեարկելու, պատգամավորի քվեարկությանը խոչընդոտելու, Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու փաստի պատճառները:

Իսկ որպես ընդհանրական մոտեցում անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ քննության առարկա օրենսդրական կարգավորումների շրջանակում նման իրավիճակային լուծումները չեն բխում հենց պետության պոզիտիվ պարտավորության բովանդակությունից՝ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանության շրջանակում երաշխավորելու սահմանադրական մարմինների, այդ թվում՝ նաև Ազգային ժողովի բնականոն գործունեությունը՝ հասարակական կարգի ու անվտանգության, ինչպես նաև սահմանադրական կարգի պաշտպանության տեսանկյունից: Բացի դրանից, նման լուծումները չեն բխում նաև հանրային կարևոր նշանակություն

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿ ԴԱՏԱՐԱՆ 1(105)2022

ունեցող հասարակական հարաբերությունների համակարգային կարգավորման տրամաբանությունից:

Այս հիմնավորումներով պայմանավորված՝ կարծում եմ, որ վիճարկվող դրույթներում օգտագործված «վիրավորական արտահայտություն անել», «քննարկվող հարցից ելույթում շեղվել», «նիստը նախագահողի օրինական պահանջը չկատարել», «նիստից հեռացման պահանջին չենթարկվել» եզրույթների գնահատման չափորոշիչներն օրենսդրական կարգավորման մակարդակում չսահմանելն ինքնին խնդրահարույց է ոչ միայն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի իրացման, այլև Ազգային ժողովի նիստերի իրավազորության ապահովման (Սահմանադրության հոդվ. 102), Ազգային ժողովի նիստերում օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների ու ուղերձների նախագծերի քննարկումներին և քվեարկություններին մասնակցելու (Սահմանադրության հոդվ. 103, մաս 1), Սահմանադրության փոփոխությունների նախագծի քննարկումներին և քվեարկություններին մասնակցելու (Սահմանադրության հոդվ. 202), Ազգային ժողովի նիստում պետական բյուջեի մասին օրենքի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկմանն ու քվեարկությանը մասնակցելու (Սահմանադրության հոդվ. 110, 111), բանավոր հարցերով Կառավարության անդամներին դիմելու իրավունքի իրականացման (Սահմանադրության հոդվ. 112), հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ քննարկումներին մասնակցելու (Սահմանադրության հոդվ. 114), Ազգային ժողովի կողմից պաշտոններում ընտրելու կամ ընտրվելու, նշանակելու կամ նշանակվելու, պաշտոնատար անձանց լիազորությունների դադարման, դադարեցման, հետ կանչելու, անվստահություն հայտնելու կամ պաշտոնանկ անելու հարցերի քննարկմանն ու քվեարկությանը մասնակցելու (Սահմանադրության հոդվ. 104,

115, 125 և այլն), պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու, ռազմական կամ արտակարգ դրությունը վերացնելու կամ չեղյալ հայտարարելու որոշումների նախագծերի քննարկումներին ու քվեարկություններին մասնակցելու (Սահմանադրության հոդվ. 118, 119, 120) և սահմանադրական այլ կարգավորումների պահանջների լիարժեք իրացման ռիսկերի առաջացման տեսանկյունից, երբ Ազգային ժողովի նիստերի ժամանակ նիստերի դահլիճում պատգամավորի գտնվելը կամ խոսափողից հանդես գալը անհրաժեշտ ու պարտադիր պայման է Ազգային ժողովի բնականոն գործունեության և պատգամավորի լիազորությունների ամբողջական ու արդյունավետ իրականացման համար:

**3.** ՍԴՈ-1627 որոշման 4.1-րդ կետում անդրադառնալով սահմանադրական անձեռնմխելիության համատեքստում պատգամավորի գործառության անձեռնմխելիության ապահովման հիմնախնդրին՝ արձանագրվել է, որ վերջինս կոչված է երաշխավորելու օրենսդիր մարմնի անկախությունը և բնականոն գործունեությունը (էջ 8):

Սակայն անհրաժեշտ է նկատել, որ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերի ժամանակ կարծիք արտահայտելու համար նրա սահմանադրական կարգավիճակից բխող անպատասխանատվության երաշխիքները հետապնդում են իրավաչափ այլ նպատակ ևս, ինչպիսին է պատգամավորի անկախության ապահովումը: Ընդ որում՝ ներկայացուցչական մանդատի շրջանակում, կաշկանդված չլինելով հրամայական մանդատով, առաջնորդվելով իր խղճով ու համոզմունքներով, պատգամավորի անկախության ապահովումն ինքնին անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում հենց վերջինիս համար իր լիազորություններն արդյունավետ ու ամբողջական իրականացնելու համար՝ զերծ պահելով Ազգային ժողովի

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿ ԴԱՏԱՐՎԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՄ 1(105)2022

նիստը վարողի սուբյեկտիվ և գուցեև քաղաքական նպատակահարմարությունով պայմանավորված ոչ հիմնավոր և գնահատողական նշանակություն ունեցող գործողությունների համար այնպիսի ներգործուն միջոցներ կիրառելու հնարավորությունից, ինչպիսիք են Ազգային ժողովի նիստում խոսափողից հանդես գալու կամ Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը:

Նույն հիմնավորումների տրամաբանության շրջանակում Ազգային ժողովի նիստը վարողը կարող է Ազգային ժողովի նիստերի դահլիճից հեռացնել պարտադիր մասնակցությամբ կամ նիստին պարտադիր ներկա գտնվելու հանգամանքով պայմանավորված անձանց, որոնցից են, օրինակ, Ազգային ժողովի կողմից պաշտոններում ընտրվող կամ նշանակվող թեկնածուն, կամ այն պաշտոնատար անձը, որին անվստահություն հայտնելու կամ պաշտոնանկ անելու վերաբերյալ հարցերը քննարկվում են Ազգային ժողովի այդ նիստում և այլն:

Ինչ վերաբերում է կարգապահական մյուս միջոցների կիրառման խնդրին, ապա անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. ժողովրդավարական հասարակությունում խորհրդարանի բնականոն գործունեության կարևոր ու անհրաժեշտ բաղադրիչներից է պատգամավորի խոսքի ազատության իրավունքի իրացումը, և ցանկացած ձևով այդ իրավունքի սահմանափակումը պետք է լինի համաչափ և հետապնդի օրինական նպատակ:

Սակայն յուրաքանչյուր պատգամավորի սահմանադրական կարգավիճակի տարր բովանդակող լիազորությունների արդյունավետ ու ամբողջական իրականացման, այդ կարգավիճակից բխող երաշխիքների և Ազգային ժողովի պատշաճ ու բնականոն գործունեության միջև հավասարակշռության ապահովման տեսանկյունից պատգամավորի խոսքի ազատության իրավունքի այդպիսի միջամտությունը կարող է հետապնդել

օրինական նպատակ այն դեպքերում, երբ՝ ա) նման միջամտությունը հստակ է և կանխատեսելի, ինչը թույլ է տալիս կանխատեսել պատգամավորի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքները, բ) պատգամավորի կարծիքի ազատ արտահայտման իրավունքի և այլ պատգամավորների իրավունքների պաշտպանության արդյունավետ հարաբերակցության համատեքստում այդպիսի միջամտությունն ուղղված է Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքի ապահովմանը և մյուս պատգամավորների իրավունքների պաշտպանությանը, կամ առանց նման կարգապահական միջոցների կիրառման անհնար է երաշխավորել Ազգային ժողովի նիստի խաթարված ընթացքի վերականգնումը:

Ընդհանրացնելով անհրաժեշտ է արձանագրել, որ Սահմանադրական դատարանի քննության առարկա իրավակարգավորումների շրջանակում՝ արտահայտած կարծիքի, ելույթի, արտահայտության կամ հարցադրման համար պատգամավորին Ազգային ժողովի նիստում խոսափողից հանդես գալու կամ Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը, իմ կարծիքով, չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, քանի որ նման տարբերակված մոտեցումը չի կարող համաչափ լինել հետապնդվող իրավաչափ նպատակին:

4. Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ կառավարման խորհրդարանական համակարգի պայմաններում պատգամավորի խոսքի ազատության ապահովումը՝ ելույթների կամ արված արտահայտությունների բնույթի և այլնի ձևով, ինքնին ընկալվում է որպես խորհրդարանի բնականոն գործունեության ապահովման կարևորագույն մաս, ինչի արժեքանական նշանակությունը՝ հետևաբար դրա սահմանափակումը պետք է ընթանա վերահսկողական նշանակություն ունեցող հետևյալ իրողությունների հաշվառմամբ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(105)2022

ա) ի՞նչ նպատակ է հետապնդում կամ ի՞նչ մտադրություն ունի պատգամավորը նիստում արտահայտած կարծիքի, ելույթի, արտահայտության կամ հարցադրման ժամանակ,

բ) ինչպիսի՞ ընկալում կարող է ունենալ հանրությունը, հետևաբար ընտրազանգվածը՝ Ազգային ժողովի նիստում պատգամավորի արտահայտած նման կարծիքի համար, որը կարելի է ընկալել որպես հանրային վերահսկողության կամ պատգամավորի ու պատգամավորական խմբակցության նկատմամբ քաղաքացիների վստահության տարր,

գ) ինչպիսի՞ն է պատգամավորական խմբակցության վերաբերմունքն այդ խմբակցության անդամ համարվող պատգամավորի արտահայտած կարծիքի, ելույթի, արտահայտության կամ հարցադրման վերաբերյալ, որը կարելի է ընկալել խորհրդարանական մշակույթի գնահատականի համատեքստում, այդ թվում՝ ներկուսակցական կարգապահական կանոնների պահպանման, քաղաքական կուսակցության հեղինակության ապահովման և վարկանիշի բարձրացման տեսանկյունից:

Այս գործոնների կամ դրանցից որևէ մեկի առկայության շրջանակում, կարծում եմ, որ Ազգային ժողովի նիստը վարողն ուղղակիորեն չի կարող միանձնյա որոշել արարքի ոչ իրավաչափ լինելը, ինքնուրույն գնահատել դրանց ծանրության աստիճանը և որպես կարգապահական միջոց զրկել պատգամավորին Ազգային ժողովի նիստում խոսափողից հանդես գալու կամ նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից:

Սակայն վերոնշյալի լույսի ներքո անհրաժեշտ է արձանագրել, որ ՍԴՈ-1627 որոշման պատճառաբանական մասի 4.1-րդ կետում անդրադառնալով այն հանգամանքին, որ պատգամավորների խոսքի ազատությանը ցանկացած միջամտություն պետք է լինի որոշակի և համաչափ, այդուհանդերձ նույն իրավական եզրահանգման շրջանակում Սահմանա-

դրական դատարանը կատարել է հետևյալ եզրահանգումը, որ անկախ պատգամավորի նկատմամբ ընտրված ներգործության միջոցից՝ պատգամավորի խոսքի ազատության էությունը չպետք է խաթարվի (էջ 15):

Այսինքն՝ վիճարկվող նորմերի վերլուծությունից և Սահմանադրական դատարանի հիշյալ եզրահանգումից պարզ չի դառնում, թե պատգամավորին Ազգային ժողովի նիստում խոսափողից հանդես գալու կամ նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելու միջոցով կարգապահական միջոցի կիրառմամբ ինչպես կարող է չխաթարվել պատգամավորի խոսքի ազատությունը, եթե նույն վիճարկվող հոդվածի 3-րդ մասի 3-5-րդ կետերով Ազգային ժողովի նիստը վարողին արդեն իսկ նման լիազորություն վերապահված է:

5. Վիճարկվող դրույթների շրջանակում Սահմանադրական դատարանը քննության առարկա պետք է դիտարկեր նաև այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը՝ պատգամավորի՝ որպես հիմնական զեկուցողի նկատմամբ նիստերի դահլիճից հեռացնելու հետևանքով Ազգային ժողովում հարցի քննարկումը հետաձգելու և խմբակցության հիմնավորված միջնորդությամբ Ազգային ժողովի խորհրդի կողմից հեռացված պատգամավորի մասնակցությունն Ազգային ժողովի նիստին վերականգնելու կարգավորումների մասով:

**Ամփոփելով, կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասի 3-5-րդ կետերը, 4-րդ մասը և 7-րդ մասը ճանաչելու Սահմանադրության 1-ին հոդվածին, 94-րդ հոդվածին, 96-րդ հոդվածի 1-ին մասին, 103-րդ հոդվածին, 104-**

1(105)2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

րդ հոդվածի 2-րդ մասին և պատգամավորի՝ Ազգային ժողովի նիստերին պարտադիր մասնակցությամբ Ազգային ժողովի լիազորություններ սահմանող սահմանադրական այլ հոդվածներին հակասող և անվավեր:

Միաժամանակ, կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ նաև բավարար հիմքեր «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի 3-5-րդ կետերի, 4-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն 52-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը նույնպես ճանաչելու Սահմանադրության 1-ին հոդվածին, 94-րդ հոդվածին, 96-րդ հոդվածի 1-ին մասին, 103-րդ հոդվածին, 104-րդ հոդվածի 2-րդ մասին և պատգամավորի՝ Ազգային ժողովի նիստերին պարտադիր մասնակցությամբ Ազգային ժողովի լիազորություններ սահմանող սահմանադրական այլ հոդվածներին հակասող և անվավեր:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ**

**Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ**

1(105)/2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 372/2-14 որոշմամբ

## Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,  
Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,  
Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Թ., դոցենտ Ա. Փխրիկյան

## Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

Ստորագրված է տպագրության՝ 15.09.2022թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Բաղրամյան 10

Հեռախոս՝ 011-58-81-81 (189)

E-mail: armlaw@concourt.am

<http://www.concourt.am>

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(105)2022

Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(105)2022

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(105)2022